Հ. ԱՐԻՔԵԿՅԱՆ, Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՒՐՎԱԳԾԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՊՐԱԿ

ԵՐԵՎԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ЭЛЬЧИБЕКЯН А. М., АКОПЯН А. М.

ОЧЕРКИ ПО ИСТОРИИ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

ВЫПУСК ПЕРВЫЙ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1954

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9 (47-925)2
Ա-95

ՍՏԱՑՎԱԾ Է 1955

Ա 342946
24246

ԷԼՉԻԲԵԿՅԱՆ Հ. Մ., ՀԱԿՈԲՅԱՆ Ա. Մ.

ՈՒՐՎԱԳԾԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՊՐԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1954

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ ժողովրդի երկարամյա պայքարը իր ազատության ու անկախության համար՝ ռուս մեծ ժողովրդի և Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական օգնությամբ, 1920 թվականի նոյեմբերին պսակվեց պատմական հաղթանակով:

Տապալելով օտարերկրյա իմպերիալիստների կամակատար և ժողովրդի թշնամի դաշնակների բուրժուա-նացիոնալիստական մարիոնետային կառավարությունը, Հայաստանի ապստամբ բանվորներն ու գյուղացիները, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ՝ հաստատեցին սովետական կարգեր: Այդ պատմական հաղթանակով նոր էջ բացվեց հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ: Ձեռք բերելով իր իսկական ազատությունն ու անկախությունը, Սովետական Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքում, ռուս մեծ ժողովրդի ու սովետական մյուս ժողովուրդների օգնությամբ, նրանց հետ միասին, հայ ժողովուրդը ձեռնամուխ եղավ նոր կյանքի կառուցմանը, կոմունիստական հասարակարգի իրականացմանը:

Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան իմաստուն ազգային քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ, իրենց հերոսական աշխատանքով ու պայքարով, Սովետական Հայաստանի բանվորները, գյուղացիները և ինտելիգենցիան Սովետական իշխանության տարիներին, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, պատմական խոշոր .հաջողություններ են ձեռք բերել ռեսպուբլիկայի էկոնոմիկայի և ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացման գործում: Այդ հաջողությունների լուսաբանությանն է նվիրված «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության» աշխատությունը, որը պատրաստել է Ինստիտուտի՝ Սովետական հասարակության պատմության սեկտորի աշխատակիցների կոլեկտիվը:

«Ուրվագծերը» հրատարակվելու է առանձին պրակներով:

Առաջին պրակի առաջին գլուխը՝ «Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում» գրել է պատմական գիտությունների թեկնածու Հ. Մ. Էլչիբեկյանը, երկրորդ և երրորդ գլուխները՝ «Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921 թվականի հաղթական կռիվներում» և «Հայկական ՍՍՌ-ն ժողովրդական տնտեսության վերականգնման խաղաղ աշխատանքի անցնելու ժամանակաշրջանում (1921—1925 թթ.)» գրել է պատմական գիտությունների թեկնածու Ա. Մ. Հակոբյանը:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան նոր դարաշրջան բացեց մարդկության պատմության մեջ։ Այդ նոր դարաշրջանի էությունը բնորոշել է Կոմունիստական պարտիայի հանճարեղ առաջնորդ և Սովետական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինը. «Կապիտալիզմի և նրա հետքերի ոչնչացումը, կոմունիստական հասարակարգի հիմքերի հաստատումը կազմում է համաշխարհային պատմության այժմ սկսված նոր դարաշրջանի բովանդակությունը»[1]։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան սկզբունքորեն տարբերվում է անցյալում տեղի ունեցած բոլոր ռևոլյուցիաներից։ Նրան նախորդող բոլոր ռևոլյուցիաները չէին ոչնչացնում շահագործումը, այլ նրա մի ձևը փոխարինում էին մի ուրիշ ձևով, շահագործողների մի խմբի փոխարեն իշխանության գլուխն էին դնում շահագործողների մի ուրիշ խմբի։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո, Սովետական իշխանությունը հենվելով արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության էկոնոմիկական օրենքի վրա, ժողովրդի սեփականություն դարձրեց արտադրության միջոցները՝ գործարանները, հողը, երկաթուղին, բանկերը և հիմք դրեց նոր՝ սոցիալիստական հասարակարգի կառուցմանը, ստեղծեց նյութական պայմաններ ժողովրդի ունևոր կյանքի համար։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ, նրա անմիջական ազդեցությամբ, բարձրացավ պրոլետարական ռևոլյուցիայի ալիքը Եվրոպայում՝ Գերմանիայում, Իտալիայում,

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 491։

Ֆրանսիայում և այլ երկրներում, ծայր առավ ռևոլյուցիոն շարժումը Մերձավոր Արևելքում, Չինաստանում, Հնդկաստանում և մի շարք գաղութային ու կախյալ երկրներում։ Այն խարխլեց իմպերիալիստական պետությունների տիրապետությունը այդ երկրներում և ոտքի հանեց ճնշված ժողովուրդներին իրենց կեղեքիչների դեմ։

Կապիտալիստական և կախյալ երկրներում ու գաղութներում Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո ստեղծվեցին կոմունիստական պարտիաներ, որոնք սովորելով Սովետական Միության Կոմունիստական մեծ պարտիայից, որին եղբայրական պարտիաների ներկայացուցիչները, ինչպես նշել է Ի. Վ. Ստալինը, շնորհեցին համաշխարհային ռևոլյուցիոն շարժման «Հարվածային բրիգադայի» կոչումը, ղեկավարում են միլիոնավոր աշխատավորների պայքարը կապիտալիստական լծից իրենց ազատագրման համար։ Սհա թե ինչու Հոկտեմբերյան ռևոլյուցիան «...արմատական բեկում է նշանակում մարդկության պատմության մեջ, արմատական բեկում՝ համաշխարհային կապիտալիզմի պատմական ճակատագրի մեջ, արմատական բեկում՝ համաշխարհային պրոլետարական ազատագրական շարժման մեջ, արմատական բեկում՝ ամբողջ աշխարհի շահագործվող մասսաների պայքարի եղանակների և կազմակերպման ձևերի մեջ, կենցաղի և տրադիցիաների մեջ, կուլտուրայի և իդեոլոգիայի մեջ։

Սրանումն է այն բանի հիմքը, որ Հոկտեմբերյան ռևոլյուցիան ինտերնացիոնալ, համաշխարհային կարգի ռևոլյուցիա է»[1]։

Կապիտալիզմի խորտակումը և փոխարինումը սոցիալիստական հասարակարգով պատմականորեն անխուսափելի է։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո սկսվեց կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամը։ «Այժմ արդեն մարդկության մեկ երրորդը փրկված է իմպերիալիզմի ճնշումից, ազատագրված է իմպերիալիստական շահագործման շղթաներից»[2]։ Սովետական Միության՝ ֆաշիզմի վրա տարած պատմական հաղթանակի շնորհիվ արագորեն աճում և ամրապնդվում է դեմոկրատիայի, սոցիալիզմի և խաղաղության լագերը, որին գլխավորում է հզոր Սովետական Միությունը։ Այդ լագերում են գտնվում Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկան, Լեհաստանը, Հունգարիան, Չեխոսլովակիան, Դերմանական Դեմոկրատական

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 10, էջ 272։

[2] Գ. Մալենկով, Հաշվետու զեկուցում պարտիայի XIX համագումարին Համ կ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, 1952, էջ 3։

Ռեսպուբլիկան, Բուլղարիան, Ռումինիան, Ալբանիան, Կորեական Ժողովրդա-դեմոկրատական Ռեսպուբլիկան, Մոնղոլական Ժողովրդական Ռեսպուբլիկան։ Եվ ինչքան էլ որ իմպերիալիստական ռեակցիան ջղաձգական ճիգեր անի, սպառնա մարդկությանը նոր պատերազմով, սոցիալիզմի հաղթանակը ամբողջ աշխարհում անխուսափելի է։

1. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻՑ ՀԵՏՈ (1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ—1918 Թ. ՀՈՒՆԻՍ)

Ռուսաստանի բանվորները և աշխատավոր գյուղացիությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, աշխարհում առաջինը եղան, որ 1917 թ. փետրվարին օգտագործեցին կապիտալիզմի թուլությունը Ռուսաստանում, դահընկեց արին ցարին և ստեղծեցին բանվորների ու զինվորների դեպուտատների Սովետները։ Սակայն փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո իշխանության գլուխ անցավ բուրժուազիան՝ հանձին ժամանակավոր կառավարության։

Ժամանակավոր կառավարությունը չտվեց Ռուսաստանի բանվորներին և գյուղացիներին ոչ ազատություն, ոչ խաղաղություն, ոչ հող և ոչ էլ հաց։ Ֆաբրիկաներն ու գործարանները մնացին կապիտալիստների, իսկ հողը՝ կալվածատերերի ձեռքին։ Իմպերիալիստական ժամանակավոր կառավարությունը չէր մտածում պատերազմը վերջացնելու մասին։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում ու Հայաստանում, ժողովրդական լայն մասսաների դրության մեջ էական փոփոխություններ տեղի չունեցան։ Ի. Վ. Ստալինը իր «Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոներները սոցիալիզմի դիմակի տակ» հոդվածում խոսելով փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո Անդրկովկասում ստեղծված դրության մասին, գրել է.

«Փետրվարյան ռևոլյուցիան էական փոփոխություններ չմտցրեց երկրամասի աշխատավոր դասակարգերի դրության մեջ։ Զինվորները, գյուղի այդ ամենառևոլյուցիոն տարրերը դեռ ռազմաճակատում էին։ Իսկ բանվորները, որոնք ընդհանրապես թույլ են որպես դասակարգ, երկրամասի տնտեսական հետամնացության պատճառով, և որոնք դեռ չեն ամրապնդվել որպես կազմակերպված միավոր, մնում էին ձեռք բերած քաղաքական ազատություններից որ-

բեցած վիճակում, չպատրաստվելով, ըստ երևույթին, ավելի առաջ գնալու։ Ամբողջ իշխանությունը մնում էր ունևոր դասակարգերի ձեռքին։ Վերջինները ամուր կպել էին իշխանությունից ու սպասում էին, հոժարությամբ էսեռա-մենշևիկյան ստրատեգներին թողնելով քնեցնել բանվորներին և գյուղացիներին իմաստուն ճառերով ռուսական ռևոլյուցիայի բուրժուական բնույթի, սոցիալիստական հեղաշրջման անիրագործելիության մասին և այլն»[1]։

Ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասը կառավարելու համար ստեղծում է, այսպես կոչված, Անդրկովկասյան Հատուկ կոմիտե (ՕԶԱԿՕՄ)։ Այդ կոմիտեն կազմված էր Պետական դումայի հինգ անդամներից, որոնցից երեքը Անդրկովկասի ունևոր դասակարգերի ներկայացուցիչներն էին, իսկ երկուսը՝ ռուսական բուրժուազիայի։ Անդրկովկասյան Հատուկ կոմիտեն իր գործունեությունում ղեկավարվում էր Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն պարտիաների՝ մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների ցուցումներով։ Հենվելով նրանց վրա, ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասում ևս վարում էր նույն հակաժողովրդական քաղաքականությունը, ինչ Ռուսաստանում։ Ժողովրդական լայն մասսաների դրությունը Անդրկովկասում ևս գնալով ավելի ծանրանում էր։

Փետրվարյան ռևոլյուցիայից հետո Անդրկովկասում ստեղծված բանվորների, զինվորների և գյուղացիների Սովետները, որոնցում մեծամասնությունը կազմում էին մենշևիկները, էսեռները և դաշնակները, պաշտպանում էին բուրժուական ժամանակավոր կառավարության և Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի կողմից տարվող հակաժողովրդական քաղաքականությունը։ Նույն քաղաքականությունն էին վարում նաև Հայաստանում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում (այժմ Լենինական), Կարսում և մի քանի ուրիշ վայրերում կազմակերպված Սովետները, որոնցում նույնպես էսեռները, դաշնակները և մենշևիկները մեծամասնություն էին կազմում։

Ժամանակավոր կառավարության և անդրկովկասյան բուրժուանացիոնալիստական պարտիաների հակաժողովրդական քաղաքականությունը մի կողմից և Ռուսաստանում աճող ռևոլյուցիոն շարժումը մյուս կողմից, ուրի հանեցին նաև Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի բանվորներին, գյուղացիներին և զինվորներին։ 1917 թ. գարնան և ամռան ամիսներին Բաքվում, Թիֆլիսում, Արևմտյան Վրաստանում և Անդրկովկասի մի շարք այլ վայրերում

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 59—60։

տեղի ունեցան գործադուլներ և գյուղացիական շարժումներ։ Գործադուլներ և ցույցեր տեղի ունեցան նաև Հայաստանում։ Երևանում 1917 թ. գարնանը գործադուլ հայտարարեցին տպարանների, էլեկտրական ընկերության և Շուստովի գինու-կոնյակի գործարանի բանվորները։ Նույն թվականի հուլիսին Երևանում ցույց տեղի ունեցավ Ժամանակավոր կառավարության դեմ։ Գործադուլներ տեղի ունեցան նաև Ալեքսանդրապոլում։ Լոռիում, Ախտալայում, Սևանում և այլ շրջաններում ծավալվեց գյուղացիների պայքարը հողի համար։ Այսպես, օրինակ, Ախտալայի շրջանի Արղաքյանդ գյուղի գյուղացիները խլեցին կալվածատերեր Ծատուրովների հողերը։ Գյուղացիների այդ գործողությունների մասին կալվածքի կառավարիչը 1917 թ. օգոստոսին Անդրկովկասյան Հատուկ կոմիտեին հայտնում էր, որ փետրվարյան ռևոլյուցիայից հետո գյուղացիները խլեցին իրենց հողամասերի մոտ գտնվող Ծատուրովների հողերը, որ գյուղացիները հաշվի չեն առնում իրեն՝ կալվածքի կառավարիչին և սպառնում են հնձել ու հավաքել Ծատուրովների հողամասերի բերքը[1]։

Գյուղացիական ելույթներ տեղի ունեցան նաև Հայաստանի մյուս շրջաններում։ Վեդու շրջանում գտնվող Շերեմետիև ընկերության պատկանող հողերում ապրող գյուղացիները օգոստոսի վերջերին սկսեցին խլել այդ ընկերության պատկանող հողերը և մարգագետինները, իսկ հարևան Դավալու գյուղի բնակիչները սկսեցին վարել ընկերության հողերը ու հնձել խոտը[2]։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո, Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները դուրս գալով ընդհատակից, պարտիայի Կովկասյան երկրային կոմիտեի ղեկավարությամբ եռուն աշխատանք ծավալեցին մասսաների մեջ։ Նուն գործունեություն ծավալեցին նաև Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները։ Փետրվարյան ռևոլյուցիայից հետո նրանք խտացրին իրենց շարքերը Ալավերդում և Լոռիում։ Ուժեղացան և խտացրին իրենց շարքերը կոմունիստական կազմակերպությունները Ալեքսանդրապոլում, Երևանում և Սարիղամիշում։ Վերականգնվեցին Նոր-Բայազետի, Զանգեզուրի, Դիլիջանի, Շամշադինի և մի շարք այլ վայրերի կոմունիստական կազմակերպությունները։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները անդադրում մերկացնում էին բուրժուա-նացիոնալիստական պար-

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 30/103, գ. 73։ թ. 17—19։

[2] Նույն ֆոնդ, գ. 90, թ. 102։

տիանների՝ դաշնակների, էսեռների, մենշևիկների և ուրիշների հակաժողովրդական գործունեությունը և բանվորներին, գյուղացիներին ու զինվորներին համախմբում իրենց շուրջը։ Աշխատավորների մեջ բոլշևիկյան գաղափարների տարածման գործում մեծ դեր կատարեց բոլշևիկյան մամուլը։ 1917 թ. մայիսին Ստ. Շահումյանի և Ա. Միկոյանի խմբագրությամբ Բաքվում սկսեց լույս տեսնել հայերեն լեզվով «Սոցիալ-Դեմոկրատ» թերթը, իսկ նույն թվականի հունիս ամսին Թիֆլիսում Ստ. Շահումյանի, Ա. Միկոյանի և Ա. Մռավյանի նախաձեռնությամբ լույս տեսավ «Բանվորի կռիվ» բոլշևիկյան թերթը, որոնք տարածվում էին Հայաստանում։ 1917 թ. ամռանը Ալեքսանդրապոլում, քաղաքի կոմունիստական կազմակերպության ակտիվ գործիչ Բ. Ղարիբջանյանի խմբագրությամբ լույս տեսավ «Նոր կյանք» թերթը, իսկ ռուսերեն լեզվով «Правда жизни» թերթը։ Մեծ աշխատանք տարվեց բոլշևիկյան մամուլը մասսաների մեջ տարածելու ուղղությամբ։ Պարտիական շատ օրգաններ, այդ թվում «Պրավդան» ու «Կավկազսկիյ ռաբոչին», չնայած գոյություն ունեցող արգելքներին, լայնորեն տարածվում էին Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի աշխատավորների և Կովկասյան ռազմաճակատի զինվորների մեջ։

1917 թ. հոկտեմբերի 2-ից (15) մինչև 7-ը (20) Ստ. Շահումյանի ղեկավարությամբ Թիֆլիսում կայացավ Կովկասի կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարը։ Ելնելով ՌԿ(բ)Պ VI համագումարի դիրեկտիվներից, համագումարը որոշեց լայն աշխատանք ծավալել աշխատավորների մեջ, Անդրկովկասում ևս մասսաներին նախապատրաստելու զինված ապստամբության՝ սոցիալիստական ռևոլյուցիայի համար։ Համագումարին մասնակցում էին Ալեքսանդրապոլի, Ալավերդու, Հաղպատի և Հայաստանի մի շարք այլ շրջանների կոմունիստական կազմակերպությունների դելեգատները։ Հիմնական հարցը համագումարում՝ դա զինված ապստամբության նախապատրաստման հարցն էր, որի մասին զեկուցումով հանդես եկավ Ստ. Շահումյանը։

1917 թ. աշնանը իրադրությունը Ռուսաստանում արմատականորեն փոխվեց։ Կոմունիստները Սովետներում մեծամասնություն շահեցին։ Ժողովրդական լայն մասսաները անցան կոմունիստների կողմը։ Սկսվեց Սովետների բոլշևիկացման շրջանը։

Փոխվեց իրադրությունը նաև Անդրկովկասում և Հայաստանում։ Ուժեղացավ կոմունիստների ազդեցությունը Ալեքսանդրապոլի, ինչպես նաև Սարիղամիշի ու Կարսի Սովետներում։

Կովկասի կոմունիստական կազմակերպությունների համագումարը ավարտվելուց հետո Ստ. Շահումյանը եղավ Ալեքսանդրապոլում և կոնկրետ ցուցումներ տվեց Ալեքսանդրապոլի կոմունիստական կազմակերպության հետագա աշխատանքի համար։ Ստ. Շահումյանի Ալեքսանդրապոլ գալու մասին, այդ ժամանակ Ալեքսանդրապոլում աշխատող բոլշևիկներից մեկը՝ Բ. Լոդյանը իր հիշողություններում պատմում է. «1917 թ. հոկտեմբերի 7-ին Ստ. Շահումյանը Ալեքսանդրապոլ եկավ։ Հոկտեմբերի 8-ը հայտարարվեց «Բոլշևիկների օր» և այդ օրը... մեծ բազմության առաջ... զեկուցեց Պետերբուրգի դեմոկրատական խորհրդակցության և ընթացիկ մոմենտի մասին։ ...Կադետները, դաշնակները, նացիոնալիստական այլ պարտիաների ներկայացուցիչները, չնայած տեղից անհանգստության նշաններ էին անում, բայց սիրտ չարին ելույթ ունենալ...

Ընկեր Ստ. Շահումյանը վերադասավորեց պարտիական ուժերը զորամասերում, կայազորում, բնակչության մեջ, դեպոյում աշխատելու համար, դիրեկտիվ տվեց աշխատանք ծավալել դյուզացիության մեջ»[1]։

Հոկտեմբերի 9-ին Ստ. Շահումյանը ելույթ է ունենում քաղաքի կայազորի զինվորների առջև։ Իր ելույթի արդյունքի մասին նա հայտնեց Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի օրգան «Рабочий путь» թերթին հետևյալը. «Հոկտեմբերի 9-ին Ալեքսանդրապոլում տեղի ունեցավ 2000 զինվորների ժողով։ Լսելով իմ զեկուցումը դեմոկրատական խորհրդակցության մասին, ժողովը բուռն կերպով բողոքեց նախապառլամենտի և կառավարության դեմ։ Քսան հազարանոց կայազորը ամբողջովին բոլշևիկյան է»[2]։

Ստ. Շահումյանի Ալեքսանդրապոլ գալը, նրա ցուցումները բոլշևիկներին՝ նրանց աշխատանքի մասին, շուտով տալիս են իրենց արդյունքը։

Կենսագործելով Ստ. Շահումյանի ցուցումները, կոմունիստները Ալեքսանդրապոլի Սովետի հոկտեմբերի 15-ի (28) նիստում երկու առաջարկ են մտցնում և անցկացնում։ Առաջին առաջարկն էր վերընտրել Սովետը, որովհետև վերջինս իր մեծամասնությամբ կազմված լինելով դաշնակներից, էսեռներից ու մենշևիկներից,

---

[1] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 9, պապկա 1, էջ 3—4։

[2] „Рабочий путь", № 35, 1917.

այլևս չէր արտահայտում կոմունիստների կողմն անցած քաղաքի աշխատավորների և զինվորների ռևոլյուցիոն տրամադրությունը։ Չնայած էսեռների, դաշնակների և մենշևիկների կատաղի դիմադրությանը, Սովետը ընդունում է կոմունիստների առաջարկը և որոշում է կատարել վերընտրություն։ Կոմունիստների երկրորդ առաջարկն էր մասնակցել Սովետների Համառուսական երկրորդ համագումարին։ Այդ առաջարկը բխում էր պարտիայի պահանջից՝ Սովետների Համառուսական երկրորդ համագումար հրավիրելու մասին։

Ալեքսանդրապոլի Սովետի այդ նիստում երկու հարցերի շուրջը ելույթ է ունենում Բ. Ղարիբջանյանը։ Նա կոմունիստին հատուկ կրքոտությամբ մերկացնում է էսեռների, դաշնակների և մենշևիկների կոնտրռևոլյուցիոն քաղաքականությունը։ Կոմունիստական ֆրակցիայի կողմից պահանջելով Սովետի վերընտրություն, նա իր ելույթում հայտարարում է. «Դուք ցանկանում եք իմանալ, թե արդյոք մասսան վստահում է ձեզ, թե ոչ... ապա նշանակեք միտինգ, նշանակեք բոլոր զինվորական մասերի ժողով և դուք կհամոզվեք, որ ընտրողների և ընտրվածների (խոսքը Սովետում գտնվող դաշնակ, էսեռ և մենշևիկ դեպուտատների մասին է— Հ. Է.) միջև ամբողջ անդունդ է ընկած»։

Կոմունիստների առաջարկով Ալեքսանդրապոլի Սովետը որոշում է մասնակցել Սովետների Համառուսական երկրորդ համագումարին և այդ նպատակով Սովետը ընտրում է մի կոմունիստ դելեգատ։ Այնուհետև Սովետը որոշում է իր նախորդ նիստում քաղաքի աշխատավորների և զինվորների ճնշման տակ հրաժարականը ներկայացրած նախագահության փոխարեն Սովետի նախագահի պարտականությունները, մինչև նրա Գործադիր Կոմիտեի վերընտրությունը, դնել Ալեքսանդրապոլի կոմունիստական կազմակերպության ակտիվ գործիչներից մեկի՝ Պ. Արվելաձեի վրա[1]։

* *
*

1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսները հանդիսացան բուրժուազիայի իշխանության դեմ ռևոլյուցիոն մասսաների մոբիլիզացման և վճռական գրոհի նախապատրաստման ժամանակաշրջան։

[1] Ալեքսանդրապոլի Սովետի այդ նիստի և Բ. Ղարիբջանյանի ելույթի մասին տես „Кавказский рабочий" № 181, 24 հոկտեմբերի 1917։

1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7) Ռուսաստանի բանվոր դասակարգը, չքավոր գյուղացիության հետ միասին, զինվորների ու նավաստիների աջակցությամբ, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, խորտակեց բուրժուազիայի ու կալվածատերերի տիրապետությունը, տապալեց բուրժուական ժամանակավոր կառավարությունը և հաստատեց Սովետական իշխանություն։ Հաղթանակեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան։

Հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7) Պետրոգրադում բացվեց Սովետների Համառուսական երկրորդ համագումարը, որը հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 8) պատմական որոշում ընդունեց՝ Ռուսաստանում իշխանությունը Սովետների ձեռքն անցնելու մասին։ Համագումարը հաստատեց Վ. Ի. Լենինի կողմից առաջարկած դեկրետները հաշտության և հողի մասին։ Այնուհետև համագումարը կազմակերպեց առաջին Սովետական կառավարությունը։ Համագումարը Ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ հաստատեց Վլադիմիր Իլյիչ Լենինին, իսկ Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսար՝ Վ. Ի. Լենինի գործի մեծ շարունակող Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին։ Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը մեծ աշխատանք ծավալեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը Ռուսաստանի ծայրամասերում կազմակերպելու համար։ Շուտով այդ կոմիսարիատի ներսում կազմակերպվեցին առանձին ազգային կոմիսարիատներ՝ Լեհական, Բելոռուսական, Լատիշական, Հայկական և այլն։

1917 թ. նոյեմբերի 2-ին (15) Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Սովետը հրատարակեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որն ազդարարում էր Սովետական իշխանության լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության սկզբունքները։

Սովետական իշխանությունը սկզբում հաղթանակելով Ռուսաստանի կենտրոնական մարզերում, այնուհետև հաղթական երթով տարածվեց Ռուսաստանի ծայրամասերը։

* * *

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան հիմնովին փոխեց դրությունը Անդրկովկասում։ Խոսելով Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո Անդրկովկասում ստեղծված դրության մասին, Ի. Վ. Ստալինը գրել է. «Հոկտեմբերյան ռևոլյուցիան սուր կերպով փոխեց դրությունը։ Նա մեկ շարժումով տակնուվրա արեց բոլոր

հարաբերությունները, գնելով իշխանությունը աշխատավոր դասակարգերի ձեռքն անցնելու հարցը։ «Ամբողջ իշխանությունը բանվորներին ու գյուղացիներին» կանչը որոտալից տարածվեց ամբողջ երկրով մեկ, ոտքի հանելով ճնշված մասսաներին։ Եվ երբ Ռուսաստանի հյուսիսում արձակած այդ կանչը սկսեց կենսագործվել այնտեղ, Անդրկովկասի ունևոր դասակարգերը ակնթարթ տեսան, որ Հոկտեմբերյան ռևոլյուցիան և Սովետական իշխանությունը անխուսափելի մահ են բերում նրանց։ Պայքարը Սովետական իշխանության դեմ, այդ պատճառով էլ, դարձավ նրանց համար կյանքի և մահվան հարց։ Իսկ «սոցիալիստական» էսեռա-մենշևիկյան ինտելիգենցիան, որն արդեն ճաշակել էր իշխանության իմացության ծառից և դրված է այժմ այդ իշխանությունը կորցնելու հեռանկարի առաջ, ավտոմատորեն դաշինքի մեջ մտավ ունևոր դասակարգերի հետ։

Այսպես ստեղծվեց հակասովետական կոալիցիան Անդրկովկասում»[1]։

Անդրկովկասի, նույն թվում և Հայաստանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիները Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան ընդունեցին մեծ խանդավառությամբ։ Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Ալավերդում, Ալեքսանդրապոլում և Անդրկովկասի մյուս քաղաքներում, ինչպես և գյուղական վայրերում տեղի ունեցան բազմաթիվ միտինգներ ու ժողովներ, որտեղ բանվորներն ու գյուղացիները ողջունում էին Հոկտեմբերյան ռևոլյուցիան և խոսք տալիս պայքարել նրա հաղթանակի համար նաև Անդրկովկասում։

Անդրկովկասում Սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարում ավանդարդային դերը պատկանում էր Բաքվի հերոսական պրոլետարիատին։ Կոմունիստների ղեկավարությամբ Բաքվի Սովետը 1917 թ. հոկտեմբերի 31-ին քաղաքում և նրա շրջաններում հռչակեց Սովետական իշխանություն։

Թիֆլիսի Արսենալի ռայոնի բանվորները նոյեմբերին իրենց բազմամարդ ժողովում ողջունում են Հոկտեմբերյան ռևոլյուցիան, խոսք տալիս պաշտպանել այն և պահանջում, որ Սովետական իշխանություն հաստատվի նաև Անդրկովկասում։ Նման որոշում են հանում Անդրկովկասյան երկաթուղու գլխավոր արհեստանոցների և Թիֆլիսի ուրիշ ձեռնարկությունների բանվորները։

1917 թ. նոյեմբերի վերջերին Երևանի աշխատավորները քաղաքի զորամասերի հետ միասին, բոլշևիկների ղեկավարությամբ

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 60։

ցույց են կազմակերպում, պահանջելով ճանաչել Սովետների իշխանությունը։ 1918 թ. հունվարին Հաղպատում կայացած կոմունիստների և անպարտիական աշխատավորների ժողովը, լսելով զեկուցում ընթացիկ մոմենտի մասին, որոշում է ճանաչել Սովետական Ռուսաստանի կառավարությունը։ Որոշման մեջ ասված է. «Հանուն սոցիալիստական ռևոլյուցիայի շահերի՝ իշխանությունն ամբողջովին պիտի տրվի Սովետներին, որոնք անողոք պայքար կտանեն կոնտրռևոլյուցիոն տարրերի, բեկերի, աղալարների, խաների և կալվածատերերի դեմ։ Մենք խոսք ենք տալիս այս պայքարում Սովետներին ցույց տալ վճռական օգնություն»[1]։

Սևանի շրջանի գյուղացիները, միացած բանակից զորացրված զինվորների հետ, պայքարում էին սովետական կարգերի հաստատման համար։ Գոմաձորի գյուղացիք կազմակերպել էին Սովետ, ձեռք էին բերել նրա համար կնիք, որի վրա ռուսերեն գրված էր «Գոմաձորի գյուղական Սովետ»[2]։

Դեկտեմբերին Ալեքսանդրապոլի կայազորի զինվորները իրենց բազմամարդ միտինգում որոշում են ընդունում ճանաչել միմիայն Սովետական Ռուսաստանի կառավարությունը, որովհետև միայն նա կարող է տալ ազատություն, հող և հաշտություն։ Միտինգի կողմից ընդունված բանաձևում ասված է. «Միակ իշխանությունը, որը ապահովում է մեզ կայուն խաղաղություն, ամբողջ հողը և լիակատար ազատություն՝ Սովետական իշխանությունն է, որը հանձին բանվորա-գյուղացիական կառավարության, ներկայումս, կյանքում հետևողականորեն, առանց տատանումների կիրառում է ռևոլյուցիոն քաղաքականություն»։ Այնուհետև բանաձևում ասվում էր, որ «Կովկասում ուրիշ իշխանություն չի կարող կազմակերպվել, բացի սովետականից»[3]։ Նման որոշումներ աշխատավորներն ընդունում են Սարիղամիշում, Ջալալ-Օղլիում (այժմ՝ Ստեփանավան) և Հայաստանի այլ վայրերում։

Ջալալ-Օղլու կայազորի զինվորների և բնակիչների միտինգը, որը տեղի ունեցավ 1917 թ. նոյեմբերին, ընդունում է հետևյալ բանաձևը. «Ամբողջ իշխանությունը պիտի անցնի բանվորների, գյուղացիների և զինվորների Սովետների ձեռքը, որպես ժողովրդական շահերի իսկական պաշտպանների։ Ոչ մի հավատք կոնտրռևոլ-

---

[1] „Кавказский рабочий" № 15, 21 հունվարի, 1918։

[2] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսի-Էնգելսի-Լենինի-Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, պապկա 8, գ. 7, էջ 1–14։

[3] „Кавказский рабочий" № 212, 30 նոյեմբերի, 1917։

206–2

А-П 34946
24846

յուցիոն բուրժուազիայի և համաձայնողականների նկատմամբ։ Մենք մեր ողջույնն ենք հղում Պետրոգրադի կայազորին և պրոլետարիատին, որոնք կանգնած են ազատության և ռևոլյուցիայի պաշտպանության պոստում»[1]։ Սարիղամիշի կայազորի միտինգը 1918 թ. հունվարին ընդունում է հետևյալ բանաձևը. «Քննելով ընդհանուր դրությունը Ռուսաստանում և մասնավորապես Կովկասում, մենք որոշեցինք չենթարկվել Անդրկովկասյան Կոմիսարիատի կոնտրռևոլյուցիոն կարգադրություններին»[2]։ Նույն կայազորի մի քանի օր հետո կայացած երկրորդ միտինգի կողմից ընդունված բանաձևում ասվում էր, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը ոչ միայն խոսքով, այլ գործով ցույց տվեց, որ նա ժողովրդին ցանկանում է տալ հաշտություն, դյուղացիներին հող և որ «...մենք, Սարիղամիշի կայազորի զինվորներս, ջերմորեն ողջունում ենք Ժողովրդական Կոմիսարների Սովետին ու մեզ հայտարարում ենք սովետական ռևոլյուցիոն բանակ, որը պատրաստ է բանվորա-դյուղացիական կառավարության առաջին իսկ կոչով հանդես գալ պաշտպանելու համար նրան և ռուսական ռևոլյուցիան»[3]։

Մեծ աշխատանք ծավալեցին կոմունիստները նաև Կովկասյան ռազմաճակատի զինվորների մեջ։ Նրանց ազդեցությունը առանձնապես ուժեղ էր Սարիղամիշի կայազորում։ Այդ ժամանակ այնտեղ եռուն գործունեություն էր ծավալել աննկուն բոլշևիկ Ս. Ալավերդյանը։ Չնայած էսեռների, մենշևիկների և դաշնակների բոլոր փորձերին՝ իրենց ազդեցության տակ պահելու զինվորներին՝ վերջիններն անցան կոմունիստների կողմը։

1917 թ. դեկտեմբերին Թիֆլիսում կայացավ Կովկասյան բանակի երկրորդ երկրամասային համագումարը, որն իր մեծամասնությամբ բոլշևիկյան էր։ Համագումարը որոշեց ճանաչել միայն Սովետական Ռուսաստանի կառավարությունը։ Կովկասյան ռազմաճակատի Սարիղամիշի ռայոնի ռազմառևոլյուցիոն կոմիտեն տեղական աշխատավորների օգնությամբ 1918 թ. հունվարին Սարիղամիշում հայտարարեց Սովետական իշխանություն։

1917 թ. դեկտեմբերին Սովետական Ռուսաստանի կառավարությունը Վ. Ի. Լենինի նախագահությամբ քննելով Կովկասում ստեղծված դրությունը. որոշում է Կոմունիստական պարտիայի

---

[1] „Кавказский рабочий" № 202, 17 նոյեմբերի, 1917։

[2] Նույն տեղում, № 11, 20 հունվարի, 1918։

[3] Նույն տեղում, № 26, 4 փետրվարի, 1918։

Կենտրոնական Կոմիտեի անդամ և Բաքվի Սովետի նախագահ Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի ժամանակավոր Արտակարգ Կոմիսար։ Անցնելով իր պարտականությունների կատարմանը, նա դիմեց Կովկասի բանվորներին ու գյուղացիներին, կոչ անելով նրանց հաստատել Կովկասում Սովետական իշխանություն։ «Սովետական իշխանությունը Կովկասում պետք է ստեղծել անհապաղ,— գրում էր Ստ. Շահումյանը այդ կոչում։— Ռուսաստանում ոչ մի տեղ ռևոլյուցիայի գործն այնպիսի վտանգի մեջ չի գտնվում ներկայումս, ինչպես մեզ մոտ՝ Կովկասում։ Հյուսիսային Կովկասում ծայր առած կոնտրռևոլյուցիայից անմիջապես հետո բացահայտորեն գլուխ է բարձրացրել կոնտրռևոլյուցիան Անդրկովկասում...

Կովկասը կանգնած է անդունդի եզրին։ Փրկեցեք նրան։ Ստեղծեցեք այստեղ ինտերնացիոնալ բանվորա-գյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների և ժողովրդական Կոմիսարների Սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի կոնտրռևոլյուցիային և երկրի բանվոր ու գյուղացի բնակչությանը կառաջնորդի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»[1]։

Հավատարիմ ճնշված ժողովուրդների նկատմամբ իր վարած ազատարար քաղաքականության, Սովետական Ռուսաստանի կառավարությունը 1917 թ. դեկտեմբերի 31-ին (1918 թ. հունվարի 13) հրապարակեց հայ ժողովրդի համար խոշոր նշանակություն ունեցող դեկրետը «Թյուրքահայաստանի» մասին։ Սովետների Համառուսական երրորդ համագումարը, որ տեղի ունեցավ 1918 թ. հունվարին, հաստատեց այն։ Դեկրետը, որ ստորագրված էր Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի կողմից, արևմտահայերին տալիս էր ազգային ինքնորոշման լրիվ իրավունք՝ ընդհուպ մինչև կատարյալ անկախություն։ Այդ դեկրետի առթիվ իր «Թյուրքահայաստանի» մասին հոդվածում Ի. Վ. Ստալինը գրել է. «Այժմ պարզ է ամենքի համար, որ Ռուսաստանի ժողովուրդների բախտը, իսկ առանձնապես հայ ժողովրդի բախտը, սերտորեն կապված է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի բախտի հետ»[2]։

Դեկրետը ազդարարում էր.

«Ժողովրդական Կոմիսարների Սովետը հայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի Բանվորական և Գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպաց-

[1] Ստ. Շահումյան։ Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 529—532։
[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 31։

ված, «Թյուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև կատարյալ անկախություն։

Ժողովրդական Կոմիսարների Սովետը գտնում է, որ այդ իրավունքի իրագործումը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների պայմանով, որոնք բացարձակորեն անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ ռեֆերենդումի համար։

Ժողովրդական Կոմիսարների Սովետը այդպիսի երաշխիքներ է համարում.

1. «Թյուրքահայաստանի» սահմաններից զորքի հեռացումը և անմիջապես հայկական ժողովրդական միլիցիայի կազմակերպումը՝ «Թյուրքահայաստանի» բնակիչների անձի և գույքի ապահովության համար։

2. Փախստական հայերի, ինչպես և զանազան երկրներում ցրված հայ էմիգրանտների անարգել վերադարձը «Թյուրքահայաստանի» սահմանները։

3. Պատերազմի ընթացքում թյուրքական իշխանությունների կողմից բռնությամբ Թյուրքիայի խորքերը քշված հայերի անարգել վերադարձը «Թյուրքահայաստանի» սահմանները, որի վրա Ժողովրդական Կոմիսարների Սովետը պիտի պնդի Թյուրք իշխանությունների հետ հաշտության բանակցություններ վարելիս։

4. «Թյուրքահայաստանի» ժամանակավոր ժողովրդական վարչության կազմումը, որպես Հայ ժողովրդի դեպուտատների Սովետ, ընտրված դեմոկրատական սկզբունքներով։

Կովկասյան գործերի Արտակարգ Կոմիսար Ստեփան Շահումյանին հանձնարարվում է «Թյուրքահայաստանի» բնակչությանը ցույց տալ ամեն տեսակ աջակցություն 2-րդ և 4-րդ կետերի իրականացման գործում, ինչպես և ձեռնարկել խաղաղ հանձնաժողովի կազմակերպելուն՝ որոշելու համար այն ժամանակամիջոցն ու եղանակը, որով դուրս պիտի հանվեն զորքերը «Թյուրքահայաստանի» սահմաններից (կետ 1-ին)։

Ծանոթություն.— «Թյուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները որոշվում են հայ ժողովրդի կողմից դեմոկրատական ձևով ընտրված ներկայացուցիչների կողմից՝ համաձայնության գալով հարակից և վիճելի շրջանների (մահմեդական և ուրիշ) դեմոկրատական ձևով ընտրված ներկայացուցիչների հետ՝ Կովկասի Գործերի Արտակարգ Ժամանակավոր Կոմիսարի հետ միասին»[1]։

---

[1] Ленин—Сталин, Избранные произведения, 1917, 1938, стр. 558.

Հայ ժողովուրդը մեծ գոհունակությամբ ընդունեց այդ դեկրետը, որը ռեալ պայմաններ էր ստեղծում արևմտահայերի ազատագրման համար Թյուրքիայի դարավոր լծից։ Սակայն մի կողմից գերմանա-թյուրքական իմպերիալիստների ավազակային հարձակումը Սովետական Ռուսաստանի ու Անդրկովկասի վրա, և մյուս կողմից՝ անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն ուժերի դավաճանական քաղաքականությունը, հնարավորություն չտվին արևմտահայերին օգտվելու իրենց տրված իրավունքից։

Ռուսաստանում հաղթանակած սոցիալիստական ռևոլյուցիայի նկատմամբ ատելությամբ լցված և Անդրկովկասում Սովետական իշխանության հաստատման սարսափով բռնված, հակասովետական կոալիցիան կանգնեց Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու հակաժողովրդական ուղու վրա և Անդրկովկասը կառավարելու համար ստեղծեց իր կոնտրռևոլյուցիոն մարմինները՝ 1917 թ. նոյեմբերի 15-ին (28), այսպես կոչված, Անդրկովկասյան կոմիսարիատը, որից հետո, 1918 թ. փետրվարի 10-ին (23)՝ Անդրկովկասյան սեյմը։

Այդ օրգանների նպատակն էր կոնսոլիդացիայի ենթարկել անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն ուժերը՝ պայքարի մեջ մտնելու համար Սովետական Ռուսաստանի դեմ և ճնշելու Անդրկովկասի բանվորների և գյուղացիների պայքարը Սովետական իշխանության հաստատման համար։ «Դասակարգերի կոալիցիայի համար ազգային խմբերի ներսում,— գրել է Ի. Վ. Ստալինը,— կազմակերպվում են «ազգային խորհուրդներ»— վրացական, թաթարական, հայկական։ Նրանց ոգեշնչողը մենշևիկ ժորդանիան է։

Անդրկովկասի բոլոր գլխավոր ազգությունների ունևոր խավերի կոալիցիայի համար ստեղծվում է Անդրկովկասյան կոմիսարիատը։ Նրա ղեկավարը մենշևիկ Գեգեչկորին է։

Երկրամասի «ամբողջ բնակչությունը» Սովետական իշխանության դեմ մղվելիք պայքարում միավորելու համար կազմակերպվում է այսպես կոչված «Անդրկովկասյան սեյմը», որ կազմված է Սահմանադիր ժողովի Անդրկովկասից ընտրված էսեռա-մենշևիկա-դաշնակա-խանական անդամներից։ Նրա ղեկորացիան, այն է՝ նախագահը մենշևիկ Չխեիձեն է։

Այստեղ կա և՛ «սոցիալիզմ», և՛ «ազգային ինքնորոշում», և դեռ ինչ-որ ավելի ռեալ բան, քան այդ հին պաճուճանքները, այն է՝ ունևոր խավերի ռեալ դաշինք բանվորա-գյուղացիական իշխա-

նության դեմ»[1]։ Այսպիսով, հանձին Անդրկովկասյան կոմիսարիատի, Սեյմի և «ազգային խորհուրդների», Անդրկովկասի աշխատավորները գործ ունեին իրենց դեմ ուղղված ամենաչարաննենգ կոնտրռևոլյուցիոն բլոկի հետ։

Անդրկովկասյան կոմիսարիատը և Սեյմը փորձում էին դաժան միջոցներով ճնշել Անդրկովկասի բանվորների և գյուղացիների պայքարը Սովետական իշխանության հաստատման համար։ Նրանք կատարեցին բազմաթիվ դնդակահարություններ և բանտարկություններ, փակեցին բոլշևիկյան թերթերը։ Անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն կոմիսարիատի ղեկավարների կարգադրությամբ 1918 թ. հունվարին Շամխոր կայարանում կատարվեց հրեշավոր ոճրագործություն՝ դնդակահարվեցին Կովկասյան ռազմաճակատից կոնտրռևոլյուցիոն գեներալ Կալեդինի դեմ պայքարելու համար Հյուսիսային Կովկաս գնացող հազարավոր ռևոլյուցիոն ռուս զինվորներ։ Հակասովետական կոալիցիայի այդ ոճրագործությունը մեծ զայրույթ ու բողոք առաջացրեց Անդրկովկասի աշխատավորների մեջ։

Փետրվարին դաշնակները փորձում են մի երկրորդ Շամխոր կազմակերպել Ալեքսանդրապոլ կայարանի շրջակայքում Իրանից Հյուսիսային Կովկաս վերադարձող ռուսական զորքերի նկատմամբ։ Սակայն շնորհիվ Ալեքսանդրապոլի կոմունիստների ձեռք առած միջոցների, այդ ոճրագործությունը կանխվում է։ Կոմունիստների հանձնարարությամբ Բ. Ղարիբջանյանը գնում է Բայանդուր կայարանը և զգուշացնում զինվորներին դավադրության մասին[2]։

1918 թ. փետրվարին, դարձյալ հակասովետական կոալիցիայի ղեկավարների կարգադրությամբ, Թիֆլիսում, Ալեքսանդրյան այգում, դաղանաբար գնդակոծվեց աշխատավորների խաղաղ միտինգը, որը կոմունիստների կոչով հավաքվել էր իր բողոքը հայտնելու անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն պարտիաների վարած հակաժողովրդական քաղաքականության դեմ։

Վարելով Սովետական Ռուսաստանի հանդեպ թշնամական, անջատողական քաղաքականություն, հակասովետական կոալիցիան 1918 թ. մարտին ավանտյուրիստական փորձ կատարեց անջատ հաշտություն կնքել Թյուրքիայի հետ Տրապիզոնում։ Այդ փորձը, սակայն, հաջողություն չունեցավ։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 60—61։

[2] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 5, պահպ. 1, թ. 3—4։

Բաքվի հերոսական պրոլետարիատը, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, 1918 թ. մարտի վերջին ջախջախեց մուսավաթական-խանական կոնտրռևոլյուցիան։ Այդ հաղթանակի շնորհիվ Բաքվի Սովետը դարձավ իշխանության տերը քաղաքում։ 1918 թ. ապրիլի 25-ին Բաքվի բանվորական դեպուտատների Սովետը ստեղծեց Ժողովրդական Կոմիսարների Բաքվի Սովետը Ստ. Շահումյանի գլխավորությամբ։

Բաքվում Սովետական իշխանություն հաստատելուց հետո Բաքվի պրոլետարիատը, կոմունիստների ղեկավարությամբ, հերոսական պայքար ծավալեց Սովետական իշխանության հաղթանակի համար նաև ամբողջ Անդրկովկասում։ «Բաքվում Սովետական իշխանություն հաստատելու օրերից ի վեր,— գրել է Ստ. Շահումյանը,— մենք միշտ ասել ենք, որ Բաքուն Սովետական իշխանության բաղան է, որ այստեղ ամրանալով՝ մենք պետք է մտածենք այն մասին, որպեսզի եղբայրական ձեռք մեկնենք Անդրկովկասի վրացի, հայ և մուսուլմանական դյուղացիությանը և նրանց հետ միասին թոթափենք բեկերի, խանների լուծը և Սովետական իշխանություն ստեղծենք Անդրկովկասում»[1]։

1918 թ. հունվարին Կովկասյան ռազմաճակատի թյուրքական հրամանատարությունը խախտեց իր և Անդրկովկասյան կոմիսարիատի միջև կնքված զինադադարը և թյուրքական զորքերն անցան հարձակման։ Առաջանալով դեպի Անդրկովկաս, նրանք վերցրին Կրզնկան, Մամախաթունը, Էրզրումը, իսկ ապրիլին մտան Անդրկովկաս։ Անդրկովկասյան հակառևոլյուցիոն կոալիցիան չէր, որ պիտի պաշտպաներ Անդրկովկասը օտարերկրյա զավթիչներից, որոնց օգնությամբ նա կամենում էր ճնշել ռևոլյուցիոն շարժումը երկրամասում։ Ապրիլին թյուրքական զորքերը վերցրին Բաթումը և Կարսը։ Գերմանա-թյուրքական զավթիչների օգնությամբ ռևոլյուցիոն շարժումը ճնշելու և Սովետական իշխանության հաստատումը Անդրկովկասում կանխելու նպատակով, Սեյմը 1918 թ. ապրիլի 22-ին Անդրկովկասը հայտարարում է «անկախ»։ Այդ «անկախության» մասին Ի. Վ. Ստալինը գրել է. «Անդրկովկասի դրությունն ավելի ու ավելի սպառնալից է դառնում։ Սեյմի կողմից Անդրկովկասի անկախության հայտարարումը (22 ապրիլի), որը պետք է արձակեր Թիֆլիսի «կառավարության» ձեռքերը, փաստորեն նրան գցեց միջազգային գիշատիչների ծուղակը։ Ինչով կվեր-

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 613։

ջանան այսպես կոչված «հաշտության բանակցությունները» Բաթումում, ցույց կտա ամենամոտիկ ապագան։ Մի բան անկասկած է. Թիֆլիսի մենշևիկների ու նրանց կառավարության անկախությունը ռուսաստանյան ռևոլյուցիայից՝ անխուսափելիորեն փոխարկվելու է նրանց ստրկական կախման թյուրք-գերմանական «քաղաքակիրթ» դիշատիչներից»[1]։

Անդրկովկասի աշխատավորները դեմ էին այդ հակաժողովրդական քայլին, գիտակցելով, որ անջատումը Սովետական Ռուսաստանից նրանց համար կորստաբեր հետևանքներ է ունենալու, որ նրանք զրկվելով Սովետական Ռուսաստանի օգնությունից, պիտի ընկնեն իմպերիալիստական պետությունների լծի տակ։ Անդրկովկասի բանվորներն ու աշխատավոր գյուղացիությունը բուռն բողոք հայտնեցին հակասովետական կոալիցիայի այդ կոնտրռևոլյուցիոն քայլի դեմ և ուժեղացրին պայքարը օտարերկրյա զավթիչների և անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն ուժերի դեմ՝ հանուն Սովետական իշխանության հաստատման ամբողջ Անդրկովկասում։ Բաքվի Սովետը և Բաքվի դավառի գյուղացիների համագումարը՝ 1918 թ. մայիսի 29-ին իրենց միացյալ նիստում լսելով Ստ. Շահումյանի զեկուցումը՝ «Սեյմի քաղաքականության և Անդրկովկասի դրության մասին», որոշում են իրենց բողոքը հայտնել անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն պարտիաների այդ քայլի դեմ, պարտիաներ, որոնք Բաթումում գերմանա-թյուրքական ինտերվենտների հետ բանակցություններ են վարում, Բաքվի իշխանության դեմ գերմանա-թյուրքական զորքեր ուղարկելու մասին։ Այնուհետև բանաձևում ասվում էր, որ ամբողջ Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները ոչ մի դեպքում չեն հաշտվի Անդրկովկասը ռևոլյուցիոն Ռուսաստանից անջատելու հետ և վենքը ձեռքներին կպայքարեն թյուրք-գերմանական օկուպանտների և նրանց դաշնակիցների՝ մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների բանդաների դեմ[2]։

Խոսելով Անդրկովկասի բանվորների և գյուղացիների պայքարի մասին Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու հակասովետական կոալիցիայի փորձի դեմ, Ի. Վ. Ստալինը գրել է.

«Ամբողջ Հայաստանը բողոքում է Թիֆլիսի ինքնակոչ «կառավարության» ուղղությամբ ստորության դեմ, պահանջելով սեյմական դեպուտատների հեռացում։ Իսկ մուսուլմանականության կենտրոնը,

---

[1] *Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 107։*

[2] С. Г. Шаумян, Статьи и речи, 1917—1918 гг., Баку, 1929, стр. 303—304.

Բաքուն, Սովետական իշխանության միջնաբերդն Անդրկովկասում, իր շուրջը համախմբելով ամբողջ արևելյան Անդրկովկասը, Լենքորանից ու Կուբայից մինչև Ելիզավետպոլ, պենքը ձեռքին հաստատում է Անդրկովկասի ժողովուրդների իրավունքները, որոնք բոլոր ուժերով աշխատում են պահպանել կապը Սովետական Ռուսաստանի հետ։ Մենք արդեն չենք խոսում հերոսական Աբխազիայի մասին, Սև ծովի ափին, որը միահամուռ կերպով ապստամբել է Թիֆլիսի «կառավարության» սև բանդաների դեմ և զենքը ձեռքին նրանց դեմ պաշտպանում է Սուխումը... Անդրկովկասյան բնակչությունը դեմ է Թիֆլիսի «կառավարությանը»։ Անդրկովկասյան բնակչությունը դեմ է Ռուսաստանից անջատվելուն» [1]։

Ստեղծված դրությունն օգտագործելով, թյուրք-գերմանական զավթիչներն իրենց ավերիչ արշավանքն սկսեցին Անդրկովկասի վրա։

1918 թ. մայիսին թյուրքերը վերսկսեցին հարձակումը Արևելյան Հայաստանի վրա, իրենց զորքերը Ալեքսանդրապոլ-Ջուլֆա գծով Իրան, անգլիացիների դեմ փոխադրելու պատրվակի տակ։ Մայիսի 15-ին, ռմբակոծումից հետո, նրանք գրավեցին Ալեքսանդրապոլը և վերջինս հենակետ դարձնելով՝ մի կողմից շարժվեցին դեպի Երևան, մյուս կողմից՝ Ղարաքիլիսա, նպատակ ունենալով Ղազախի վրայով անցնել Ադրբեջան՝ Բաքվում Սովետական իշխանության վրա հարձակվելու համար, ինչպես և սպառնալ Թիֆլիսին։

Հայ ժողովուրդն իր համար ստեղծված այս բացառիկ ծանր օրերին, հակառակ դաշնակների կապիտուլանտական-դավաճանական քաղաքականության, մի շարք վայրերում համառ դիմադրություն ցույց տվեց թյուրքական զավթիչներին։ Երևանի շրջակա գյուղերի բնակչությունը Սարդարաբադի տակ մայիսի վերջին օրերին պարտության մատնեց Երևանի վրա արշավող թյուրքական դիվիզիային և ստիպեց նրան ետ նահանջել դեպի Ալեքսանդրապոլ։ Նույն օրերին Ղարաքիլիսայի տակ Ղազախ-Դիլիջանի և Փամբակի գյուղերի գյուղացիությունը երեք օր կանգնեցրեց թյուրքական բանակի առաջխաղացումը։

Անդրկովկաս ներխուժելուց հետո թյուրքական զավթիչները շարունակեցին իրենց ջարդարարական քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ։ Թյուրքական օկուպանտները ամենաբարբարոս ձևով կոտորում էին հայ բնակչությանը և հափշտակում նրա գույքը, ավերում երկիրը։ Այդպես եղավ Կարսի մարզում, Ալեքսանդրապոլի գավառում. նույնը կրկնվեց և Փամբակում։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 108—109։

Ալեքսանդրապոլի գյուղերը ավերվեցին։ Արթիկ գյուղը, որ ուներ 400—500 տուն, ենթարկվեց կոտորածի. սպանվեցին բոլոր երիտասարդները։ Ռմբակոծման ենթարկվեց և քար ու քանդ եղավ Մեծ Ղարաքիլիսա գյուղը (այժմ Ախուրյան)[1]։

Ղարաքիլիսայում և Փամբակի մյուս գյուղերում տեղի ունեցած ջարդերի և թալանի մասին մի փաստաթղթում կարդում ենք. «Թյուրքական զորքը ներս է խուժել Փամբակի շրջանը 1918 թ. մայիսի 20-ին... որ թե այս և թե հետո եկած զորամասերի կատարած սպանությունները, բռնությունները... արդյունք են թյուրք կառավարիչների կանխորոշած ծրագրի՝ սա կասկածից դուրս է։ Պարզ է միանգամայն, որ հրահանգված թյուրք հրամանատարությունը նպատակ է ունեցել ուժասպառ անել բարեկամ չհամարվող հայ ազգաբնակչությունը՝ թե՛ ֆիզիկապես, թե՛ տնտեսապես... Ղարաքիլիսայում թե՛ բռնությամբ և թե՛ զանազան խորամանկ միջոցներով հարյուրավոր մարդկանցից բաղկացած խմբեր են հավաքել և գյուղից դուրս հանելով՝ գնդակահարել կամ սվինահարել։ Ղարաքիլիսայում սպանվել են բոլոր հայ սպաներն ու զինվորները, որոնք պարտությունից հետո կամ գերի են ընկել, կամ կամովին ապավինել են հաղթողի մեծահոգությանը։ Նրանք միամտություն են ունեցել կարծելու, որ իրենք կհամարվեն զինվորական գերիներ և դուրս են եկել իրենց թաքստի տեղից և ներկայացել են թյուրք կոմենդանտին։ Նույն տեղում կոտորված են, բացի տեղացիներից, բազմաթիվ գաղթականներ Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններից։ Ընդհանուր առմամբ Ղարաքիլիսայի շրջակայքում գնդակահարված են մի քանի հազար մարդ... Պետք է կարծել, որ այդ թիվը 3000-ից պակաս չէ, թեև ոմանք հաստնում են մինչև 7000-ի։ Այս թվի մեջ չեն մտնում սպանված տեղացիները՝ թվով 1470 հոգի...

Այս ձևի կոտորածներ տեղի են ունեցել նաև Համամլուում, Հաջիղարայում, Դարբասում, Ղշլաղում և Յաղուբլուում... Արևմտյան Փամբակի գյուղերից գերի են տարել հարյուրավոր երիտասարդների, որոնք գրեթե բոլորը ոչնչացել են Էրզրումի շրջանում՝ քաղցից, ծեծից և ուժից վեր աշխատանքներից։ Սակավաթիվ վերադարձողները պատմում են, որ նրանց, բացի այլ և այլ տաժանակիր աշխատանքներից, նաև լծում էին սայլերին և քշում երկաթե ճիպոտներով։ Էրզրումում գտնված 8000 գերուց— Շիրակից և Փամբակից— վերադարձել են միայն 600 հոգի։ Այս թվերը շատ պարզ են խոսում։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Կենտր. Արխիվ, ֆ. 70։202, գ. 1271, թ. 62։

Թե՛ մեր շրջանում (Փամբակի — Հ. Է.) և թե՛ ամենուրեք առանձնապես հետամտել են տաճկահայերին և ճանկ ընկածներից ոչ մեկը չի խուսափել մահից։

Ինչ որ ասվեց Փամբակի մասին, նույնը կարելի է կրկնել Լոռու մասին ավելի փոքրացրած մասշտաբով»[1]։

Փամբակից և Լոռուց օկուպանտները տարան մեծ քանակությամբ անասուններ և հացահատիկ։

Անդրկովկասը հնազանդությամբ նվաճելու և նրա ժողովուրդներին ստրկացնելու նպատակով գերմանա-թյուրքական օկուպանտները որոշում են իրենց գործակալներից՝ մենշևիկներից, մուսավաթականներից և դաշնակներից Անդրկովկասում ստեղծել երեք մարիոնետային բուրժուա-նացիոնալիստական կոնտրռևոլյուցիոն կառավարություններ, որը և շուտով իրականացվում է։ 1918 թ. մայիսի 26-ին, այսպես կոչված Անդրկովկասյան սեյմը իրեն հայտարարում է ցրված և նրա փոխարեն գերմանա-թյուրքական իմպերիալիստները իշխանության գլուխ են դնում մենշևիկներին՝ Վրաստանում, մուսավաթականներին՝ Ադրբեջանում (Գյանջայում) և դաշնակներին՝ Հայաստանում։

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում թյուրքերի և դաշնակների կողմից գլխավորած հայկական «ազգային խորհրդի» միջև «Դաշտության և բարեկամության» մի կոնվենցիա է կնքվում, որի համաձայն Թյուրքիան զավթում էր Սուրմալուի գավառը, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի և Երևանի գավառների մեծ մասը։ Պայմանագրի մեկ կետով դաշնակները համաձայնվում են թույլ տալ թյուրքական զորքերին Հայաստանի տերիտորիայով անցնել Ադրբեջան՝ Բաքվում Սովետական իշխանության վրա հարձակվելու համար, իսկ մի ուրիշ կետով թյուրքերի օգնությամբ ճնշել Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը Սովետական իշխանության հաստատման համար։ Հայաստանը պիտի զորացրեր իր բանակը, ոչ մի հարաբերություն չպիտի ունենար Թյուրքիայի թշնամի պետությունների հետ, երկաթուղու կայարանները պիտի լինեին թյուրքերի հսկողության տակ։ «Պետական» սահմանը հարավից սկսվում էր Արփա գյուղից (Շարուր) և դնալով դեպի հյուսիս՝ կտրում էր Էջմիածին—Սարդարաբադ խճուղին, ապա անցնում դեպի Արագած, Աղբուլաղ, մինչև Ախալքալաքի գավառի սահմանը[2]։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 70/202, գ. 1271, թ. 47։

[2] Այդ կոնվենցիան տես Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 68/200, գ. 11 (ամբողջ գործը)։

Թյուրքական զավթիչների կողմից այդ զիջումն էլ ժամանակավոր խաղ էր։ Նրանք պատրաստվում էին գրավել նաև այդ տերիտորիան։ Թյուրքերը մտադիր էին այդ անել Բաքուն գրավելուց հետո։ Սակայն հայ ժողովրդի պայքարը թյուրքական զավթիչների դեմ, ինչպես և Բաքվում Սովետական իշխանության հերոսական պայքարը օտարերկրյա ինտերվենտների դեմ, թույլ չտվին իրականանալու օկուպանտների այդ պլանը։ Բաքուն ընկավ միայն սեպտեմբերի 15-ին, իսկ քիչ հետո՝ նոյեմբերին գերմանա-թյուրքական օկուպանտները ստիպված եղան թողնել Անդրկովկասը՝ մի կողմից նրա ժողովուրդների ազատագրական պայքարի հարվածների տակ, իսկ մյուս կողմից՝ համաշխարհային պատերազմում իրենց կրած պարտության հետևանքով։

Անդրկովկասում երեք կոնտրռևոլյուցիոն մարիոնետային բուրժուա-նացիոնալիստական կառավարություններ ստեղծելուց հետո, գերմանա-թյուրքական զավթիչներն անցան իրենց հիմնական խնդրի իրականացմանը՝ հարձակման Բաքվի Սովետական իշխանության վրա։ Գերմանա-թյուրքական իմպերիալիստների հետ միասին Բաքվի վրա արշավեցին նրանց ստոր վարձկանները՝ անդրկովկասյան-կոնտրռևոլյուցիոն ուժերը։

Բաքվի ժողովրդական Կոմիսարների Սովետը դեռ 1918 թ. մայիսի վերջերին դիմեց Անդրկովկասի աշխատավորներին՝ կոչելով նրանց պաշտպանել Սովետական իշխանությունը Բաքվում, է՛լ ավելի ուժեղացնել պայքարը Սովետական իշխանության հաստատման համար ամբողջ Անդրկովկասում։

«Բաքվի պրոլետարիատը,— ասվում էր կոչում,— առաջինն էր, որ հուշակեց իր համերաշխությունը Ռուսաստանի Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի հետ և դեմ դնաց Անդրկովկասյան կոմիսարիատին ու Սեյմին։ Բաքվի պրոլետարիատն այժմ ևս բարձր է պահում Սովետական իշխանության դրոշը և պատրաստ է պայքարելու ամբողջ Անդրկովկասի բանվորների ու գյուղացիության ազատության ու երջանկության համար»։ Կոչը Բաքվի Սովետի դրոշի տակ էր հրավիրում Անդրկովկասի բոլոր աշխատավորներին. «Բաքվի պրոլետարիատը ձգտում է Անդրկովկասում ստեղծել նոր կառավարություն, առանց բեկերի ու իշխանների և առանց հայ նացիոնալիստների,— բանվորների ու գյուղացիների կառավարություն, Սովետների կառավարություն։ Այդ կառավարությունը՝ դաշնակցած ամբողջ ռուսաստանյան պրոլետարիատի ու գյուղացիության հետ՝ կպաշտպանի Անդրկովկասի միասնությունը Ռու-

սաստանի հետ, կխորտակի բոլոր ազգությունների կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը և կհաստատի ամբողջ Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների եղբայրություն...

Բոլոր մութ ուժերը ոտքի են ելել Բաքվի Սովետի դեմ, Անդրկովկասի միակ ազատ անկյունի դեմ։ Բաքվի Սովետի դրոշակը ազատության դրոշակ է ու աշխատավորների եղբայրության դրոշակ։ Բոլորդ մտեք մեր դրոշակի տակ»[1]։

Բացի գերմանա-թյուրքական զավթիչներից, այդ ժամանակ Բաքվի վրա հարձակման էին պատրաստվում նաև անգլիական իմպերիալիստները Պարսկաստանից։

Գերմանա-թյուրքական և անգլիական ինտերվենտների ճնշման տակ, նրանց գործակալներ՝ էսեռների, մենշևիկների, դաշնակների, մուսավաթականների քայքայիչ աշխատանքի հետևանքով Բաքվի Սովետական իշխանությունը ընկավ։

Հենվելով դաշնակների, էսեռների, մենշևիկների վրա, անգլիական իմպերիալիստները 1918 թ. օգոստոսի 4-ին մտան Բաքու։ Անգլիական իմպերիալիստներն իրենց ստոր վարձկանների՝ էսեռների, մենշևիկների, դաշնակների միջոցով 1918 թ. սեպտեմբերի 20-ին Անդրկասպյան ավազուտներում գազանաբար սպանեցին Բաքվի բանվորների սիրելի կոմիսարներին, նշանավոր բոլշևիկներ Ստ. Շահումյանին, Ա. Ջափարիձեին, Մ. Ազիզբեկովին, Ի. Ֆիալետովին և մյուսներին։

Օգտվելով այն հանգամանքից, որ Սովետական Ռուսաստանը կյանքի ու մահու կռիվ էր մղում Անտանտայի և ռուսական զանազան կոնտրռևոլյուցիոն ուժերի դեմ և դեռ ի վիճակի չէր անմիջական ռազմական օգնություն ցույց տալ Սովետական իշխանության հաստատման համար պայքարող Անդրկովկասի ժողովուրդներին, ամերիկա-անգլիական իմպերիալիստները, որոնք, ինչպես գրել է Վ. Ի. Լենինը, նույնպիսի գազաններ էին, ինչպիսին էին գերմանական իմպերիալիստները[2], հենվելով Անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն պարտիաների վրա 1918 թ. վերջին, գերմանա-թյուրքական զավթիչների հեռացումից հետո, օկուպացրին Անդրկովկասը։

Անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն կառավարություններն այժմ Ծառայության անցան ամերիկա-անգլիական իմպերիալիստների

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր։ Երևան, 1948, էջ 603—607։

[2] Տես Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 191։

մոտ և դարձան նրանց հլու գործակալությունը։ Օգտագործելով նրանց, ամերիկա-անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները ջանում էին Անդրկովկասը դարձնել պլացդարմ Սովետական Ռուսաստանի դեմ իրենց կազմակերպած ինտերվենցիայի համար, Ռուսաստանից պոկել Անդրկովկասը և զավթել այն։

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ (1918—1920 ԹԹ.)

Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո Ռուսաստանի ծայրամասերում առաջացած մարիոնետային կառավարությունների, դրանց թվում և դաշնակների, «անկախությունը» խաբուսիկ երևութականություն էր։ Իրականում այդ բոլոր կառավարությունները կախված էին իմպերիալիստական պետությունների այս կամ այն խմբից։

Եվ, իրոք, դաշնակների տիրապետության օրոք Հայաստանի իսկական տերերն էին ամերիկա-անգլիական իմպերիալիստները։ Դաշնակները խաղալիք էին նրանց ձեռքին։ Ոչ միայն ամերիկյան գնդապետ Հասկելի, որին Անտանտայի պետությունները 1919 թ. հուլիսին նշանակել էին Հայաստանի «կոմիսար», կամ նրա ներկայացուցիչ Տալֆորտի, այլ և այդ պետությունների սոսկական ներկայացուցչի խոսքը օրենք էր դաշնակների համար։ Ամերիկյան իմպերիալիստները Հայաստանում իրենց այնքան ազատ էին զգում, որ ինքնագլուխ ձերբակալություններ էին կատարում և իրենց ոստիկանությունն ու բանտերն էին պահում։

Անգլո-ամերիկյան իմպերիալիստները ամեն տեսակ օգնություն էին ցույց տալիս դաշնակներին՝ դաժանորեն ճնշելու Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը Սովետական իշխանության հաստատման համար։ Այդ նպատակով անգլո-ամերիկյան ինտերվենտները Անդրկովկասում և Հայաստանում ստեղծել էին իրենց սեփական հետախուզությունը։ Անդրկովկասում գտնվող անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատարությունը 1919 թ. մարտին դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրին հայտնելով Ալեքսանդրապոլում կոմունիստների աշխատանքի մասին, կարգադրում էր անմիջապես խիստ ռեպրեսիվ միջոցների դիմել, դադարեցնելու համար այն։ «Բրիտանական ուժերի հրամանատար. գեներալը Անդրկովկասում,— ասվում էր անգլիական հրամանատարության այդ գրության մեջ,— տեղեկություն ունի

վստահելի աղբյուրներից, որ Ալեքսանդրապոլում բոլշևիկյան կոմիտե է հաստատված և որը որոշ ժամանակ է արդեն, ինչ գործուն պրոպագանդա է անում աշխատավոր դասի, բանակի և երկաթուղու բանվորների մեջ»[1]: Այնուհետև անգլիական, գեներալը հրամայում էր այսպես կոչված դաշնակցական կառավարության ձեռք առնել ամենախիստ միջոցները՝ ճնշելու կոմունիստների աշխատանքը:

Օգտվելով դաշնակների և մենշևիկների կողմից տարվող զոռլոգիական շովինիզմի քաղաքականության հետևանքով հայ և վրաց ժողովուրդների միջև 1918 թ. վերջին ծագած խայտառակ եղբայրասպան պատերազմից, ամերիկա-անգլիական ինտերվենտները զավթեցին Լոռին, վերածեցին այն «չեզոք գոտու», որի նահանգապետ նշանակեցին անգլիական գնդապետի: «Չեզոք գոտում» անգլո-ամերիկայն իմպերիալիստները սահմանեցին իրենց օրենքները և սկսեցին թալանել աշխատավորությանը: Չնայած ինտերվենտների հալածանքներին, ինչպես Լոռու նույնպես և ամբողջ Հայաստանի աշխատավորները, կոմունիստների ղեկավարությամբ, ուժեղացրին իրենց պայքարը զավթիչների դեմ, հանուն Սովետական իշխանության հաղթանակի:

Ամերիկա-անգլիական և ֆրանսիական օկուպանտները չէին խորշում թալանել սովի ճիրաններում գտնվող հայ ժողովրդին: Այսպես, օրինակ, ֆրանսիական իմպերիալիստները զավթեցին երկրում գտնվող բամբակի չնչին մնացորդները՝ չվճարելով ոչ մի կոպեկ: Հայաստանի բնակչությունից բազմաթիվ բողոքներ էին ստացվում ամերիկացիների կամայականությունների մասին: Բնակչությունը բողոքում էր, որ այսպես կոչված ամերիկյան «օգնության կոմիտեի» ներկայացուցիչները բռնագրավում են անասունները և բնակչության վերջին կենսամթերքները:

Որպես Սովետական Ռուսաստանի սխերիմ թշնամիներ, դաշնակները Հոկտեմբերյան ռևոլյուցիայից անմիջապես հետո անդրկովկասյան մյուս կոնտրռևոլյուցիոն պարտիաների հետ միասին պայքարի էին դուրս եկել Սովետական Ռուսաստանի դեմ: Շարունակելով իրենց այդ նույն հակասովետական քաղաքականությունը, նրանք ամերիկա-անգլիական իմպերիալիստների ղեկավարությամբ մասնակցեցին Անտանտայի կողմից Սովետական Ռուսաստանի դեմ կազմակերպված ինտերվենցիային: Դաշնակները սերտ

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 67/199, դ. 12, թ. 77—78:

կապեր հաստատեցին Սովետական Ռուսաստանի դեմ կռվող ռուսական կոնտրռևոլյուցիոն ուժերի պարագլուխների՝ Կոլչակի և ուրիշների հետ։ Սպիտակգվարդիական գեներալ Դենիկինի հետ նրանք ռազմական դաշինքի մեջ էին։ Կապը գեներալ Դենիկինի հետ այնքան սերտ էր, որ Դենիկինը դաշնակցական Հայաստանը իր տերիտորիան էր համարում, իսկ դաշնակցական բանակը՝ իր զորամասերից մեկը [1]։ Դենիկինի Թիֆլիսում գտնվող ներկայացուցիչը՝ ցարական գեներալ Բարատովը, 1919 թ. դաշնակ Խատիսյանին հայտարարել էր, որ Դենիկինը դաշնակցական Հայաստանը իր դաշնակիցն է համարում[2]։

Կարս բերդից անգլիական իմպերիալիստները և նրանց լակեյ դաշնակները թնդանոթներ ուղարկեցին Դենիկինին։ Իր հերթին Դենիկինը այլ ռազմամթերք էր ուղարկում դաշնակներին։ Երբ արդեն պարզ էր դենիկինյան բանակի վերջնական ջախջախումը, Դենիկինի մոտ գտնվող դաշնակների ներկայացուցիչը զեկուցում էր իր կառավարությանը, որ «մեր իսկական դաշնակցի (այսինքն Դենիկինի— Հ. Է.) միջոցները նրա լիկվիդացման դեպքում չպիտի անհետ կորչեն մեզ համար...»[3]։ Այնուհետև նա հաղորդում էր, որ «...ինչ վերաբերում է սպառազինման միջոցներին, ապա միսիային հաջողվեց օգնություն ստանալ այդ ուղղությամբ (վերջին անգամ ուղարկված է մեկ միլիոն երկու հարյուր հազար գնդակ և 10.000 շրապնել), իսկ ներկա մոմենտին ես ձեռք եմ առնում բոլոր անհրաժեշտ միջոցները լայն օգնություն ստանալու համար մեզ այդքան անհրաժեշտ սպառազինման միջոցներից և արդեն ձեռք եմ բերել գլխավոր հրամանատարի համաձայնությունը դրա համար...»[4]։ 1920 թ. մարտին Հյուսիսային Կովկասի կոնտրռևոլյուցիոն իշխանության ներկայացուցիչները գալիս են Հայաստան և դաշնակների հետ բանակցություններ են վարում կոմունիստների դեմ պայքարելու համար։

Նման սերտ դաշինքի մեջ էին գտնվում դաշնակները նաև Վրանգելի հետ։ Դենիկինի մոտ գտնվող դաշնակների ներկայացուցիչը Դենիկինի ջախջախումից հետո փոխադրվեց Ղրիմ և դարձավ նրանց ներկայացուցիչը Վրանգելի մոտ։ Վրանգելից դաշնակները

---

1 Այս մասին տես Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 68/200, գ. 720, թ. 76։

2 Նույն ֆոնդ, գ. 728, թ. 190—191։

3 Նույն ֆոնդ, գ. 865, թ. 1։

4 Նույն տեղում։

ռազմամթերք էին ստանում, փոխարենը նրան նավթ և քարածուխ ուղարկելով Բաթումիից։

Դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների վարած շովինիստական քաղաքականության շնորհիվ՝ ազգային երկպառակությունը Անդրկովկասում չտեսնված չափերի հասավ։ Իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո նրանք ղինված պայքարի մեջ մտան իրար հետ։ Ընդհարումները սկզբում հրահրվում էին գերմանա-թյուրքական, իսկ հետագայում՝ անգլո-ամերիկյան իմպերիալիստների կողմից։

Անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն կառավարությունները խստորեն հալածում էին ազգային փոքրամասնություններին։ Հայաստանում ապրող ադրբեջանցիների և ուրիշների հանդեպ դաշնակները վարում էին անողոսպ շովինիստական քաղաքականություն՝ ավերում էին նրանց գյուղերը և կոտորում բնակիչներին։ Դաշնակներն ավերեցին Կարսի մարզի, Զանգիբասարի, Զանգեզուրի, Բասարգեչարի և այլ շրջաններում գտնվող ադրբեջանական գյուղերը։ Այդ գյուղերի բնակչության կողմից լքված հողերը գավթում էին դաշնակցական մինիստրները, բարձրաստիճան պաշտոնյաները և խմբապետները։

Դաշնակների օրով Հայաստանի առանց այն էլ հետամնաց տնտեսությունը լիակատար քայքայման հասավ։ Մի քանի արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք կառուցվել էին ցարիզմի ժամանակ, քայքայվեցին և դադարեցին գործելուց։ Այդ ձեռնարկությունների, ինչպես և երկաթուղու բանվորությունը գտնվում էր տնտեսական և իրավական վերին աստիճանի ծանր պայմաններում։ Ձեռնարկատերերը բանվորներին անտանելի պայմաններում աշխատեցնում էին օրական 12—15 ժամ։ Երևանում գտնվող Սարկիսովի կաշվի «գործարանի» բանվորները բոկոտն աշխատում էին մի շենքում, որի հատակը ծածկված էր ջրով՝ կրի, բրդի ու հոտած մսի կտորներով շաղախված։

Բանվորներն ստանում էին չնչին աշխատավարձ, որը վճարվում էր մեծ հապաղումով։ Դրամանիշների արագ արժեքազրկման և գների օրեցօր աճման պայմաններում այդ հանգամանքը խիստ ծանր էր անդրադառնում բանվորների տնտեսական դրության վրա։ Դաշնակցական կառավարությունը 1918 թ. հունիս ամսից մինչև 1920 թ. նոյեմբերը, այսինքն մինչև իր տապալումը, բաց էր թողել մեծ քանակությամբ դրամանիշ՝ 10 միլիարդ ռուբլուց ավելի[1]։ Բան-

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 10, 113, գ. 27, թ. 3։

վորներն անհրաժեշտ կենսամթերքներ ձեռք էին բերում շուկայում, ուր ցորենի փութը 1920 թ. նոյեմբերին արժեր 35 հազար ռուբլի, իսկ կարտոֆիլինը՝ 18 հազար[1]։

Երկրի տնտեսության հիմնական ճյուղն էր հանդիսանում գյուղատնտեսությունը, որը խիստ անկում ապրեց դաշնակների վարած պատերազմների և Հայաստանում ապրող ուրիշ ազգությունների հալածանքի հետևանքով։

Գյուղատնտեսական գործիքների՝ արորների, գութանների և այլ գործիքների թիվը խիստ պակասել էր։ Գյուղացիության մեծագույն մասը չուներ լծկաններ։ Ցանում էր միայն գյուղի կուլակը, իսկ մնացած մասը սովամահ չլինելու համար ստիպված էր չնչին գնով վաճառել իր անասունը կամ վերջին ունեցվածքը, որը գնում էր գյուղական բուրժուազիան։ Էջմիածնից 1920 թ. հուլիսին հայտնում էին, որ բազմաթիվ գյուղացիներ սովի ճիրաններից ազատվելու համար ստիպված են եղել վաճառել ամենաչնչին գներով իրենց վերջին ունեցվածքը։ Նոր-Բայազետի գավառից հայտնում էին, որ սովի հարկադրանքով գյուղացին ծախում է իր անասունները, կալը, տունը։

Այս բոլորի հետևանքով ցանքերի տարածությունը կատաստրոֆիկ կերպով կրճատվեց. խիստ կերպով ընկավ և անասունների գլխաքանակը։ Եթե ամբողջ ցանքերի տարածությունը Հայաստանի ներկա տերիտորիայում 1913 թ. հասնում էր 345,7 հազար հեկտարի, ապա 1919 թ. նա ընկավ մինչև 82,7 հազար հեկտարի։ 1913 թ. Հայաստանում ցանված էր 15,3 հազար հեկտար բամբակ, իսկ 1919 թ. միայն 0,6 հազար հեկտար[2]։ Քայքայվեց ոռոգման սիստեմը և նրա վրա հենվող ջրովի տնտեսությունները անկման հասան։

Դաշնակցական կառավարության հակաժողովրդական քաղաքականության հետևանքով սովը երկրում ահռելի չափերի հասավ։ Ժողովրդական լայն մասսաները գալարվում էին սովի ճիրաններում։ Սովից և հիվանդություններից մեռնողների թիվը օրական հազարների էր հասնում։ 1919 թ. Հայաստանի բնակչության յուրաքանչյուր հազար մարդուն ծնվում էր 8,7, իսկ մեռնում 204,2 մարդ, այսինքն բնակչության նվազումը հասնում էր 195,5 մարդու յուրաքանչյուր հազար հոգուց։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 40/113, գ. 27, թ. 6։

[2] Социалистическое строительство Армянской ССР, Статистический сборник, Ереван, 1940, стр. 64.

Սովի և հիվանդությունների հետևանքով Հայաստանի մի շարք վայրերում՝ Սուրմալվում, Թալինի շրջանում, Նոր-Բայազետի գավառում և այլուր մեռել էր բնակչության կեսից ավելին։

1918 թ. սեպտեմբերի 26-ին Երևանում սովի հետևանքով ցույց է տեղի ունենում կառավարության դեմ։ Այդ օրը բազմության մի մեծ խումբ, բաղկացած գլխավորապես գաղթականությունից, հավաքվում է նախ պարեսի շենքի և ապա ներքին գործոց մինիստրի տան առաջ և հաց պահանջում։ Բազմությունը ցրելու համար իշխանությունները դիմում են զինված ուժի։

Բասարգեչարից 1920 թ. հունիսին հայտնում էին, որ շրջանի գյուղացիությունը հաց չունենալու պատճառով խոտով է կերակրվում և մարդիկ ամեն օր տասնյակներով մեռնում են։ Սովը Հայաստանում շարունակվեց դաշնակների տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում։ 1919 թ. հունվարին Երևանում քաղցած ամբոխը շուկայում հարձակվում է հացի փուռերի և հացավաճառ սպեկուլյանտների վրա։ Դարալագյազից 1920 թ. հունիսին հայտնում էին, որ «Դաղթականներից... սկսած մինչև հողագործ գյուղացու ճնշող մեծամասնությունը կարոտ է մի կտոր հացի»[1]։

Ժողովրդական լայն զանգվածները նաև մերկ էին ու բոկոտն։ Օրինակ, Էջմիածնից 1920 թ. մարտին հայտնում էին, որ գավառի ազգաբնակչությունը բառիս բուն նշանակությամբ մերկ է և բոկոտն։ Կան բազմաթիվ գյուղեր, որոնց բնակիչները մերկության պատճառով ամաչում են իրար հանդիպել և անհրաժեշտ դեպքում հարևան գյուղերը գնալ[2]։

Դաշնակների տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի բնակչությունը ահաբեկված էր, այսպես կոչված, բազմաթիվ «մաուզերիստական» խմբերի կողմից, որոնք կողոպտելով ու սպանելով՝ ապրում էին ժողովրդի հաշվին։ Սպանությունները, թալանը երկրում մեծ չափերի էին հասել և սիստեմատիկ բնույթ ստացել։ Դաշնակցական պաշտոնյաները, սկսած գյուղական լիազորներից մինչև մինիստրները, թույլ էին տալիս անօրինակ սանձարձակություններ, բռնություններ, կաշառակերություն և զեղծումներ։

Հայ ժողովուրդն իր ազատագրումը Սովետական իշխանության հաստատման մեջ էր տեսնում։ Հայ ժողովրդի լավագույն բարեկամներից մեկը՝ ընկեր Ս. Օրջոնիկիձեն 1918 թ. հոկտեմբեր-

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 67/199, դ. 147, թ. 12։

[2] Տես նույն տեղում, ֆ. 69/201, դ. 1748, թ. 37։

ին Լենինին և Ստալինին ուղարկած իր հեռագրում խոսելով Անդրկովկասի դրության մասին, այսպես էր նկարագրում Հայաստանի վիճակը. «...Հայաստանի դրությունը ողբերգական է։ Երևանի նահանգի երկու գավառների փոքրիկ կտորի վրա կուտակվել են 600.000 գաղթականներ, որոնք մասսայաբար կոտորվում են սովից և խոլերայից։ Թյուրքերը օկուպացված գավառներում կոտորել են բնակչության կեսը... Հայ ազգաբնակչությունը անհամբերությամբ օգնություն է սպասում Սովետական Ռուսաստանից»[1]։

Դաշնակները երկիրը վերածեցին ավերակների, իսկ ժողովրդին կանգնեցրին կործանման եզրին։ Նրանց արյունոտ տիրապետության ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմության ամենամռայլ էջերից մեկն է։ «Հայաստանը դաշնակների ժամանակ,— գրում է ընկեր Ա. Միկոյանը,— որբերի երկիր էր, արցունքի երկիր, աղքատության ու վայրենի կամայականությունների երկիր»[2]։

* *

Չնայած դաշնակների ամենադաժան հալածանքներին, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները չդադարեցրին իրենց պայքարը Սովետական իշխանության հաղթանակի համար։

Անդրկովկասի և Հայաստանի աշխատավորների պայքարը Սովետական իշխանության հաստատման համար ղեկավարում էր Կոմունիստական մեծ պարտիան։ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Ռուսաստանի աշխատավորները տապալեցին ցարիզմը և կապիտալիզմը, իսկ քաղաքացիական պատերազմի տարիներին հաղթանակ տարան օտարերկրյա ինտերվենտների ու ներքին կոնտրռևոլյուցիայի միացյալ ուժերի վրա։ Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն Վ. Ի. Լենինի գլխավորությամբ անդադրում ղեկավարում էր ամբողջ երկրի պարտիական կազմակերպությունների աշխատանքը, օգնում էր Սովետական իշխանության հաստատման համար պայքարող նախկին ցարական Ռուսաստանի ծայրամասերի ժողովուրդներին։ Ռուս մեծ ժողովուրդը, որը միշտ էլ պրոգրեսիվ դեր է կատարել հայ ժողովրդի, ինչպես և մեր երկրի մյուս ժողովուրդների պատմական ճակատագրում, Սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարում

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, քաղվածքների ֆ. 255։

[2] *Ա. Ի. Միկոյան, Ճառ Երևանի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների ժողովում, 9 դեկտեմբերի, 1937 թ., Երևան, 1939, էջ 10։*

առանձին ուժով դրսևորեց իր ռևոլյուցիոն ազատագրական միտիան՝ հղրայրական մեծ օգնություն ցույց տալով Սովետական իշխանության հաստատման համար պայքարող ծայրամասերի բոլոր ժողովուրդներին։

1918 թ. երկրորդ կեսին Հայաստանի մի քանի շրջաններում տեղի են ունենում գյուղացիական ելույթներ դաշնակցական կառավարության դեմ։ Այդ թվականի հոկտեմբերին Նոր-Բայազետի գավառի Նորատուզ և Ղշլաղ գյուղերի գյուղացիները, զայրացած դաշնակների կամայականություններից՝ ընդհարվում են տեղական միլիցիայի հետ, որի ընթացքում սպանվում և վիրավորվում են մի քանի գյուղացիներ։ Դաշնակցական կառավարության դեմ նույն թվականին ելույթներ են տեղի ունենում Ապարանում, Զանգեզուրում և այլ վայրերում։

Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը դաշնակների դեմ ավելի լայն ծավալ և կազմակերպված բնույթ ստացավ 1919 թ.։ Այդ թվականի կեսերից ավելի ուժեղացավ կոմունիստական կազմակերպությունների աշխատանքը Հայաստանում, կոմունիստների ազդեցությունը պրոֆմիություններում, գյուղացիների մեջ և բանակում։ Նույն թվականի սեպտեմբերին Ռուսաստանի Կ(բ) Պարտիայի Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որն ընտրեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ղեկավար կենտրոն՝ Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի Հայաստանի Կոմիտե՝ Արմենկոմ։ Խորհրդակցությունից հետո ուժեղանում է կոմունիստական կազմակերպությունների աշխատանքը։ Այդ խորհրդակցության մասնակից, հին բոլշևիկ, Արմենկոմի անդամ Ա. Մռավյանը իր հուշերում պատմում է, որ խորհրդակցությունից հետո սկսում են լայնանալ տեղական կազմակերպությունների շարքերը, մասնավորապես Երևանում և Ալեքսանդրապոլում [1]։

Սովետական իշխանության հաստատման համար Հայաստանի բանվորների և գյուղացիների մղած պայքարում զգալի դեր խաղաց Հայաստանի Կոմունիստական Երիտասարդական «Սպարտակ» Միությունը, Ռուսաստանի Կոմունիստական Երիտասարդական Միության ջոկատներից մեկը, որը հիմնադրվել էր 1919 թ. ապրիլին։

---

[1] Տես Ա. Մռավյանի հոդվածների, հիշողությունների ժողովածու, Երևան, 1930, էջ 43—44։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ 1919 թ. Հայաստանում տեղի են ունենում մի շարք գործադուլներ և գյուղացիական ելույթներ, ուղղված դաշնակցական կառավարության դեմ։ 1919 թ. հուլիսին գործադուլ են հայտարարում Երևանի և Ալեքսանդրապոլի արհեստանոցների բանվորներն ու ծառայողները։ Նոյեմբերին գործադուլ են հայտարարում Ալեքսանդրապոլի տպագրիչ բանվորները, պահանջելով աշխատավարձի հավելում։ Նույն թվականին գործադուլ է տեղի ունենում պետական ձեռնարկություններում՝ երկաթուղում, Կարսի ավտոդարաժում։ Հուլիս և դեկտեմբեր ամիսներին գործադուլ են հայտարարում Երևանի տպարանների և փոստհեռագրատան բանվորներն ու ծառայողները։ Կոմունիստների ղեկավարությամբ Սարիղամիշի բանվորները որոշում են ամերիկյան գնդապետ Հասկելի Սարիղամիշ գալու կապակցությամբ բողոքի ցույց կազմակերպել՝ հակառակ դաշնակների ցանկության, որոնք պատրաստվում էին նրան հանդիսավոր դիմավորում ցույց տալ։ Բանվորները քանդելով երկաթգիծը, արգելակում են դաշնակների նպատակի իրականացումը[1]։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո, ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես և Անդրկովկասում ու Հայաստանում ավելի է ուժեղանում գյուղացիության պայքարը հողի համար։ Այդ պայքարը էլ ավելի է սրվում Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո։ Կալվածատերերը Լոռիում փորձում են թյուրքական օկուպանտների միջոցով ճնշել գյուղացիների պայքարը, բայց այդ նրանց չի հաջողվում։ 1918 թ. ամառը կալվածատերերը Լոռիում, թյուրքական սվիններով օգնությամբ, հետ են խլում գյուղացիների կողմից գրավված իրենց հողերը և սկսում են հավաքել բահրան, սակայն գյուղացիները չեն դադարեցնում իրենց պայքարը։ Նույն Լոռիում, որը անգլիական ինտերվենտների կողմից 1919 թ. սկզբից վեր էր ածվել, այսպես կոչված, «չեզոք գոտու», ուր տեր և տնօրինություն էին անում անգլո-ամերիկյան օկուպանտները, գյուղացիները կոմունիստների գլխավորությամբ շարունակում են իրենց պայքարը հողի և Սովետական իշխանության հաստատման համար։ 1919 թ. Սևանի շրջանի Գոմաձոր գյուղի բնակիչները գրավեցին Սևանի վանքին պատկանող հողերը և ջրաղացը։

Աշխատավոր գյուղացիությունը բանվոր դասակարգի օգնությամբ և Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ պայքա-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, պապկա 8, գ. 3, էջ 15։

ելով հողի համար՝ պարզ դիտակցում էր, որ հող և աղատություն նա կստանա միայն Սովետական իշխանության հաղթանակով։ Դրա համար էլ, պայքարը Սովետական իշխանության հաստատման համար դնալով ավելի լայն մասսաներ էր ընդգրկում։

Էջմիածնի գավառից 1920 թ. ապրիլին հայտնում էին գավառի հողազուրկ և սակավահող գյուղացիների հող ստանալու բուռն պահանջի մասին։

Գյուղացիությանը մոլորեցնելու և նրան Սովետական կարգերի հաստատման համար մղվող պայքարից հեռու պահելու համար, դաշնակցական կառավարությունը կեղծ խոստումներ էր տալիս գյուղացիությանը հող տալու մասին։ Սակայն հանդիսանալով բուրժուազիայի, կալվածատերերի և կուլակների շահերի հավատարիմ պաշտպանը, իրականում դաշնակները ոչ մի կալվածատերից մի թիզ հող անգամ չխլեցին ու չտվին գյուղացուն։ Գյուղացին Հայաստանում հող ստացավ միայն Սովետական իշխանության հաստատումից հետո։

1919 թ. տեղի են ունենում մի շարք գյուղացիական ելույթներ։ Հունիսին Շամշադինի շրջանի Ղրղի, Նորաշեն, Վերին Կարմիր-Աղբյուր, Բերդ և այլ գյուղերի գյուղացիները հրաժարվում են զինվորներ տալ դաշնակցական կառավարությանը։ Գյուղացիների ելույթը ճնշելու համար դաշնակցական կառավարությունը պատժիչ զորամաս է ուղարկում Շամշադին։ Կառավարության դեմ ապստամբում է և Դարալագյազ գավառի Մարտիրոս գյուղը, որի բնակիչները զայրացած էին դաշնակցական իշխանությունների սանձարձակությունների և կամայականությունների։

Խաշոր դեպքեր են տեղի ունենում 1920 թ. հունվարին Ալեքսանդրապոլի երկաթուղային կայարանում, որոնք գալիս էին ասելու կոմունիստների ազդեցության արագ աճման մասին աշխատավորների մեջ։ Աշխուժացնելով իրենց աշխատանքը, Ալեքսանդրապոլի գավառի կոմունիստները 1920 թ. հունվարին լույս են ընծայում իրենց թերթի առաջին համարը՝ «Ալիք» անունով։ Սակայն դաշնակները դիմելով դաժան միջոցների, շուտով դադարեցնում են թերթի հրատարակումը։ Նույն ամսում Ալեքսանդրապոլում կայանում է կոմունիստական կազմակերպության գավառային անլեգալ կոնֆերանսը, որը ընտրում է դելեգատներ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերենցիային մասնակցելու համար։

Զայրացած դաշնակների հակաժողովրդական քաղաքականությունից, երկաթուղային բանվորները ընդհարման մեջ են մտնում դաշնակցական իշխանությունների հետ։ Դաշնակները ձերբակալում են 15 բանվորների։ Ի պատասխան դաշնակների կողմից գործադրվող բռնությունների՝ բանվորները գործադուլ են հայտարարում և պահանջում ազատել իրենց ընկերներին։ Երկաթուղային բանվորների պայքարին միանում են քաղաքի աշխատավորները։ Բանվորների ելույթը ճնշելու համար դաշնակները գործի են դնում երկաթուղային միլիցիան։

1920 թ. հունվարի վերջին ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի ղեկավարությամբ, Երևանում տեղի ունեցավ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների առաջին անլեգալ կոնֆերանսը, որին մասնակցում էին Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր-Բայազետի և մյուս շրջանների պարտիական կազմակերպությունների ներկայացուցիչները։

Քննելով Անդրկովկասում և Հայաստանում ստեղծված դրությունը, կոնֆերանսը պարտիական կազմակերպությունների առջև խնդիր է դնում պատրաստվել գինված ապստամբության՝ ոուս մեծ ժողովրդի, Սովետական Ռուսաստանի Կարմիր Բանակի օգնությամբ տապալելու դաշնակների և նրանց տերերի՝ իմպերիալիստական պետությունների արյունռուլ լուծը և հաստատել Հայաստանում սովետական կարգեր։ Կոնֆերանսը ընտրեց Արմենկոմի նոր կազմ։

Կոնֆերանսից հետո պարտիական կազմակերպությունները կազմակերպական-մասսայական լայն աշխատանքներ ծավալեցին՝ կոնֆերանսի որոշումներն իրագործելու համար։ Հայաստանի պարտիական կազմակերպությունների աշխատանքի աշխուժացման մասին ընկեր Ա. Միկոյանը 1920 թ. մարտի 6-ին հայտնում էր Ս. Մ. Կիրովին, որ «Հայաստանում աշխատանքը կարգի է գցվել։ Մեր ուժերն աճում են»[1]։ Ս. Մ. Կիրովն իր հերթին այս մասին հայտնում է ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեին։

1920 թ. մարտի վերջերին Կարմիր Բանակը մաքրեց Հյուսիսային Կովկասը կոնտրռևոլյուցիոն ուժերից և մոտեցավ Անդրկովկասի սահմաններին։ Կարմիր Բանակի հաղթանակները նոր եռանդ ու ոգևորություն առաջացրին Անդրկովկասի աշխատավորների մեջ նրանց պայքարում, ուղղված օտարերկրյա զավթիչների և վերջիններին գործակալության՝ անդրկովկասյան մարիոնետային կոնտրը-

[1] С. Киров, Статьи, речи, документы, том I, Москва, 1936, стр. 205, 219.

ռևոլյուցիոն կառավարությունների դեմ։ 1920 թ. մարտի 15-ին ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեն Կովկասի բոլոր կոմունիստական կազմակերպությունների և աշխատավորական մասսաների ներկայացուցիչների կողմից դիմում ուղարկեց Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեին, Ժողովրդական Կոմիսարների Սովետին, Երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալին և Կարմիր Բանակին։

«Մենք, Կովկասի բոլոր ժողովուրդների աշխատավորական մասսաներս,— ասված էր այդ դիմումում,— մեր եղբայրական ջերմ ողջույնն ենք հղում ռուսական պրոլետարիատին, գյուղացիությանը և Կարմիր Բանակին։ Ձեր հաղթանակները, թանկագին եղբայրներ և ընկերներ, քաղաքացիական կռվի ճակատներում, ձեր անօրինակ հերոսական սխրագործությունները մարտի դաշտում և աշխատանքի ճակատում, մեր սրտերը լցնում են արիությամբ և համոզմամբ մեր հաղթանակի նկատմամբ։

Մենք չենք ուզում մնալ ստրուկ, մանավանդ այժմ, երբ մեր կողքին կանգնած է Ռուսաստանի ազատագրված պրոլետարիատը, որի հետ մենք ցանկանում ենք միասնական պրոլետարական ինտերնացիոնալ ընտանիքի մեջ մտնել։

Մենք բոլորս, կովկասյան կոմունիստներս, մենք, Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի և Դաղստանի բանվորներս և գյուղացիներս, մենք, Կովկասի բոլոր ժողովուրդների աշխատավոր մասսաների ներկայացուցիչներս... երկու տարվա ընթացքում անօրինակ ծանր պայմաններում անհաշտ պայքար ենք մղում այն իդեալների համար, որոնց դուք ձեռք եք բերել Հոկտեմբերյան ռևոլյուցիայում...

Մենք անսասանորեն վստահ ենք և հաստատապես համոզված, որ Սովետական բանվորա-գյուղացիական Ռուսաստանը, Կոմունիստական Ինտերնացիոնալը և փառապանծ Կարմիր Բանակը անտարբեր ականատեսներ չեն մնա մեր կողմից դեղին-սև միացյալ կոնտրռևոլյուցիայի դեմ տարվող անհավասար պայքարում և ակտիվ կերպով կօգնեն մեզ՝ ազատվելու կապիտալի իշխանությունից։

Մենք խիստ տենչում ենք ռուս պրոլետարիատի հետ ձեռք-ձեռքի տված մտնել ընդհանուր աշխատանքի և սոցիալիստական շինարարության նոր կյանքի մեջ[1]»։

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի ապստամբ բանվորները և գյուղացիները, Սովետական Ռուսաստանի 11-րդ բանակի օգնու-

[1] Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Վրացական ֆիլիալ, 1917 – 1921 թթ., բոլշևիկյան պրոկլամացիաների ֆոնդ։

թյամբ, Ադրբեջանում հաստատեցին Սովետական իշխանություն։ Ադրբեջանի աշխատավորների այդ հաղթանակը կայծակի արագությամբ տարածվեց Հայաստանում և ոգևորեց Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին դաշնակների դեմ ուղղված նրանց պայքարում։

1920 թ. սկզբին քաղաքական և տնտեսական ճգնաժամը Հայաստանում ավելի սրվեց։ Հայաստանի աշխատավորների պայքարը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Սովետական իշխանության հաղթանակի համար նոր թափ ընդունեց։ 1920 թ. մայիսին Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ տեղի ունեցավ դինված ապստամբություն՝ տապալելու համար դաշնակների ատելի լուծը և հաստատելու Սովետական իշխանություն։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ 1920 թ. մայիսին Հայաստանի բոլոր խոշոր վայրերում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Ղարաքիլիսայում տեղի ունեցան մայիսմեկյան ցույցեր, ուղղված դաշնակցական կառավարության դեմ։ Ցույցերն ընթացան բոլշևիկյան լոզունգներով։ Այդ լոզունգներն էին՝ «Կեցցե՞ Սովետական Ռուսաստանը», «Կեցցե՞ Սովետական Ադրբեջանը», «Կեցցե՞ Սովետական Հայաստանը», «Կեցցե՞ Կոմունիստական պարտիան», «Կորչի՛ դաշնակցական կառավարությունը» և այլն։

Ցույցերը ամենուրեք անցան մարտական ոգով։ Երևանի աշխատավորները, մայիսի 1-ի առավոտյան դուրս գալով ցույցի, գնում են մինչև դաշնակցական «պառլամենտի» շենքը։ «Պառլամենտի» շենքի առջև տեղի է ունենում միտինգ, ուր պարտիայի հանձնարարությամբ դաշնակցական և անդրկովկասյան մյուս կոնտրռևոլյուցիոն կառավարությունների դեմ ուղղված կրակոտ ճառով հանդես է գալիս կոմունիստ Ս. Ալավերդյանը, որի ելույթը մեծ ոգևորություն է առաջացնում մասնակիցների մեջ։ Կոմունիստները, որոնք իրենց դրոշի տակ էին համախմբել քաղաքի բանվորությանը, ցրում են իրենց կոշերն ու թռուցիկները։ Թե՛ երթի ժամանակ և թե՛ միտինգում լսվում էին «Կորչի՛ դաշնակցական կառավարությունը», «Կեցցե՞ Սովետական Ռուսաստանը» բացագանչությունները։ Ցույցի ժամանակ զինվորներն իրենց համակրանքն են հայտնում կոմունիստներին։ Կոմունիստների միտինգը Փանախանի բուլվարում (այժմ Ազիզբեկովի հրապարակ) վեր է ածվում հայ և ադրբեջանցի աշխատավորների եղբայրական միասնության ցույցի։

Հայաստանի բոլոր վայրերում տեղի ունեցած մայիսմեկյան ցույցերից ամենաուժեղը Ալեքսանդրապոլինն էր, որտեղ գտնվում էին երկաթուղային բանվորների և ռևոլյուցիոն զինվորների մեծ մասը, ուժեղ էր կոմունիստական կազմակերպությունը։ Այստեղ ևս ցույցն անցնում է կոմունիստական լոզունգներով։ Այդ օրը կոմունիստները կոչ էին հրատարակել, որի մեջ ասվում էր, որ մոտ է դաշնակցական կառավարության տապալման օրը։ Մայիսի մեկի առավոտյան Ալեքսանդրապոլի կայարանում տեղի է ունենում միտինգ, ուր ելույթ են ունենում կոմունիստ-հռետորները։ Միտինգից հետո ցուցարարները շարժվում են դեպի քաղաք։ Դեպոյի բանվորների հրավերով գծի սպասարկման բանվորները թողնում են դաշնակների կողմից կազմակերպված միտինգը և ընդհարվելով նրանց հետ՝ միանում են բոլշևիկյան դրոշների տակ ընթացող ցուցարարներին։ Մինչև քաղաքի կենտրոն հասնելը, երկաթուղային դպրոցի մոտ սկսվում է նոր միտինգ, ուր հռետորները հանդես են գալիս հակակառավարական կրակոտ ելույթներով։ Այստեղից ցուցարարները շարժվում են դեպի քաղաքի կենտրոնը։ Քաղաքային այգու մոտ բացվում է մեծ միտինգ, որը անցնում է բարձր տրամադրությամբ. մեծ հաջողությամբ ելույթներ են ունենում կոմունիստները։ Քաղաքի կայազորի պատգամավորների խնդրանքով ցուցարարները գնում են դեպի զորանոցները։ Այստեղ հանդես են գալիս Ալեքսանդրապոլի կայարանում կանգնած «Վարդան զորավար» զրահագնացքի հրամանատար կապիտան Սարգիս Մուսայելյանը։ Նա իր զինվորների կողմից հայտարարում է, որ իրենք պատրաստ են պայքարելու Հայաստանում Սովետական իշխանության հաստատման համար։ Հնչում են «Կեցցե՞ բանվորների և զինվորների դաշինքը», «Կորչի՛ խմբապետական կառավարությունը» և այլ մարտական լոզունգներ։ Միտինգը ողջույնի հեռագիր է ուղարկում Սովետական Ադրբեջանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեին։ Այդ օրը կոմունիստների կողմից կազմակերպված ցույցին մասնակցում են մոտ հինգ հազարից ավելի մարդ։

Կարսում և Սարիղամիշում մայիսի մեկին աշխատավորները նույնպես ցույցի են դուրս գալիս բոլշևիկյան դրոշների տակ։ Կարսում աշխատավորները կազմակերպված շարքերով նախ շարժվում են դեպի կայարան, ուր տեղի է ունենում միտինգ, ապա անցնելով գլխավոր փողոցներով՝ կանգ են առնում քաղաքի հրապարակում, որտեղ կրկին տեղի է ունենում միտինգ։ Թե՛ կայարանում և թե՛ քաղաքի հրապարակում կայացած միտինգում մեծ ոգևորու-

թյուն են առաջացնում կոմունիստ-հռետորների ելույթները։ Սարի-ղամիշում աշխատավորների հետ միասին ցույցին ակտիվորեն մասնակցում են և կայազորի զինվորները։ Կոմունիստները հատուկ գնացք են ուղարկում Կարաղուրան՝ բանվորներին և զինվորներին Սարիղամիշ բերելու՝ ցույցին մասնակցելու համար։ Ցուցարարները նախ գնում են դեպի 4-րդ գնդի զորանոցը, որտեղ սկսվում է միտինգ, իսկ հետո շարժվում են դեպի կայարան, ուր և փոխադրվում է միտինգը։ Միտինգի մասնակիցները մեծ ոգևորությամբ լսում և արձագանքում են կոմունիստ-հռետորներին, որոնց թվում և 4-րդ գնդի զինվորների ներկայացուցիչներին։ Աշխատավորներին ահաբեկելու և մայիսմեկյան ցույցը խանգարելու նպատակով դաշնակները Սարիղամիշ էին բերել մի խումբ մաուզերիստների։ Սակայն 4-րդ գնդի զինվորները, որոնք գնում էին կոմունիստների ետևից, թույլ չեն տալիս, որ դաշնակները իրագործեն իրենց մտադրությունը։

Աշխատավորների մայիսմեկյան ելույթները ցույց տվին, որ ժողովրդական լայն մասսաները գնում են կոմունիստների ետևից և պատրաստ են թոթափելու անգլո-ամերիկյան իմպերիալիստների ու նրանց գործակալ դաշնակների լուծը և Հայաստանում հաստատել Սովետական կարգեր։ Այդ ցույցերը համոզեցուցիչ կերպով ցույց տվին, որ բանակում ևս ուժեղ էր կոմունիստների ազդեցությունը և զինվորները պատրաստ էին ոտքի հլնել Սովետական իշխանության հաղթանակի համար։ Մայիսի մեկից հետո Ալեքսանդրապոլում գտնվող զորամասերի ներկայացուցիչներն ամեն օր գալիս էին կայարան և կոմունիստներին իրենց պատրաստակամությունը հայտնում առաջին իսկ կոչով իրենց զենքն ուղղել դաշնակցական կառավարության դեմ։ Ալեքսանդրապոլում կանգնած հեծյալ գնդում այն ժամանակ ծառայում էր, ներկայումս Սովետական Միության Հերոս, բանակի գեներալ Հ. Բաղրամյանը։ Շնորհիվ Հ. Բաղրամյանի տարած հռչակ աշխատանքի, գունդը անցնում է ապստամբների կողմը։

Արմենկոմի համար պարզ է դառնում, որ ապստամբությունը ամենամոտիկ ժամանակի խնդիր է։ Նա մշակում է ապստամբության ծրագիր, համաձայն որի ապստամբության ազդանշան տվողը պիտի լիներ Ղազախը, որը սահմանակից լինելով Սովետական Ադրբեջանին՝ ուներ ամուր թիկունք։

Սակայն դեպքերը մայիսի մեկից հետո ընթացան այնպես, որ ապստամբությունը սկսվեց Ալեքսանդրապոլում։ Մայիսի մեկից

հետո «Վարդան զորավար» զրահագնացքի անձնակազմը և Ալեքսանդրապոլ կայարանի բանվորությունը գտնվում էին ապստամբ-վիճակում։

Մայիսի 7-ին Ալեքսանդրապոլում, զրահագնացքում, տեղի է ունենում Ալեքսանդրապոլի և նրա շրջակա գյուղերի ու Կարսի, Սարիղամիշի, Ղարաքիլիսայի կոմունիստական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, մասնակցությամբ ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի ներկայացուցիչների։ Խորհրդակցությունը որոշում է սկսել զինված ապստամբությունը։ Ապստամբությունը ղեկավարելու համար խորհրդակցությունն ընտրում է Հայաստանի Ռազմա-հեղափոխական Կոմիտե և ցուցում է տալիս, որ ռազմա-հեղափոխական կոմիտեներ կազմակերպվեն նաև շրջաններում։

Մայիսի 10-ին Ռազմա-հեղափոխական Կոմիտեն կոչով դիմում է Հայաստանի աշխատավորներին, ուր ասվում էր, որ բանվորների, գյուղացիների և կարմիր զորքի կամքով նա Հայաստանում հռչակում է Սովետական իշխանություն, իսկ դաշնակների կառավարությունը, որը հենվում էր բռնության, սպեկուլյանտների, խըմբապետների, թալանի ու օտարերկրյա զավթիչների օգնության վրա՝ տապալված։ Այնուհետև Ռազմա-հեղափոխական Կոմիտեն կոչ էր անում ազգաբնակչությանը պահպանել հեղափոխական կարգապահություն[1]։

Քաղաքի տերը դառնալով, Ռազմա-հեղափոխական Կոմիտեն ձեռնամուխ է լինում Սովետական իշխանության մարմինների ստեղծմանն։ Բնակչությունը կենսամթերքով ապահովելու համար հաշվի են առնվում մթերային պահեստները, ներառյալ և ամերիկացիների պահեստները։

Միաժամանակ ապստամբվում են Ալեքսանդրապոլի շրջակա գյուղերը։ Քավթառլուի շրջանի գյուղացիներն իրենց գյուղերից դուրս են վռնդում դաշնակցական կառավարության ներկայացուցիչներին և գյուղերում հայտարարում Սովետական իշխանություն։

Կարսում ապստամբությունը սկսվում է մայիսի 10-ին։ Այդ օրը տեղական ռազմա-հեղափոխական կոմիտեն, որի գլուխն էր անցել աննկուն բոլշևիկ, Արմենկոմի անդամ Ղ. Ղուկասյանը, Կարսում հայտարարում է Սովետական իշխանություն։ Դաշնակները փորձում են դիմադրել։ Նրանք շրջապատում են ռազմա-հեղափոխական կոմիտեի շենքը, բայց պարտվում են։ Այնուհետև նրանք

[1] „Коммунист", 1935, № 106.

փորձում են զինաթափ անել պարետային վաշտի զինվորներին, բայց վերջինները սպառնում են կրակ բացել և դաշնակները ցրվում են։ Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն գրավում է քաղաքի կարևոր հիմնարկությունները՝ փոստ-հեռագրատունը, բանկը, քաղաքի ամբոցը և այլն։ Ղեկավարվելով Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեից ստացված հրահանգներով, տեղական ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն չի մեկուսացնում դաշնակ պաշտոնյաներին, որոնց թվում և Կարսի նահանգապետ Կորգանովին, զորքերի հրամանատար Փիրումովին և ուրիշներին, որոնք օգտվելով այդ հանգամանքից, սկսում են պրովոկացիոն հայտարարություններ անել Սովետական իշխանության հասցեին և պատրաստվել տապալելու այն։ Նրանց հաջողվում է մայիսի 11-ին ապստամբների դեմ հանել այսպես կոչված պահակային դումարտակը, որը կազմված էր քաղաքի սպեկուլյանտներից և ուրիշ մութ տարրերից։ Քաղաքում մթնոլորտը լարվում է։ Անակնկալներից խուսափելու համար ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն փոխադրվում է Կարսի ամրոցներից մեկը և լուրջ միջոցներ է ձեռնարկում ճնշելու կոնտրռևոլյուցիան։

Մայիսի 12-ին դաշնակները փորձում են հարձակվել ամրոցի վրա, որի դեմ ուղարկում են դաշնակների կողմից հավաքագրված խանութպաններից և սպեկուլյանտներից կազմված ոհմակը։ Սակայն ոհմակը ցրվում է ապստամբների կողմից արձակված մի քանի թնդանոթային և հրացանային համազարկերից։

Սարիղամիշում ապստամբությունը սկսվում է մայիսի 10-ի գիշերը։ Տեղական ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի կարգադրությամբ, որի գլուխն էր անցել կոմունիստ Ա. Ճուղուրյանը, գիշերը զինվորները շրջապատում են քաղաքային վարչությունը և պահանջում, որ նա հանձնվի ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեին։ Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի այս առաջարկը վարչությունը ներկայացնողին դաշնակները տեղնուտեղը սպանում են։ Տեղի է ունենում զինված ընդհարում դաշնակների և զինվորների միջև, որի ժամանակ սպանվում է մաուզերիստների ղեկավարը։ Դաշնակները ստիպված են լինում հանձնվել և ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն նրանց բանտարկում է, ինչպես և բանտարկում է մյուս ակտիվ դաշնակներին, բացի մի քանիսից, որոնք կարողանում են թաքնվել։ Քաղաքը անցնում է ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի ձեռքը։

Կարսից ապստամբները օգնություն են խնդրում Սարիղամիշի ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեից։ Վերջինս շտապ պատրաստում է մի գնացք և ուղարկում Կարս։ Սակայն այդ գնացքը Բեգլի-Ահ-

մեդ կայարանից դեպի Կարս չի կարողանում գնալ՝ ճանապարհը դաշնակների կողմից կտրված լինելու պատճառով և ստիպված է լինում վերադառնալ Սարիղամիշ։ Այսպիսով, Սարիղամիշը կտրվում է Կարսից և Ալեքսանդրապոլից։

Մայիսի 13-ին ապստամբություն է ծագում նաև Նոր-Բայազետի գավառում։ Գավառի կոմունիստական կազմակերպության ղեկավարն էր աշխատավորների կողմից սիրված Հ. Սարուխանյանը, որին դաշնակները 1920 թ. ապրիլին ռևոլյուցիոն գործունեության համար աքսորել էին գավառից։ Արմենկոմի հանձնարարությամբ նա մայիսի առաջին օրերին վերադառնում է Բայազետ, այնտեղ ապստամբությունը կազմակերպելու և ղեկավարելու համար։

Ապստամբությունը Նոր-Բայազետում սկսվում է Ղարանլուխ (այժմ Մարտունի) գյուղից։ Այդտեղ գյուղացիների և գյուղում կանգնած ռազմա-միլիցիոներական գնդի զինվորների մեջ կոմունիստների տարած աշխատանքը տալիս է իր արդյունքը. գյուղացիները և զինվորներն իրենց պատրաստակամությունն են հայտնում ոտքի ելնել դաշնակցական կառավարության դեմ՝ հանուն Սովետական իշխանության։ Մայիսի 13-ին Բասարգեչարից ինքնակամ կերպով Ղարանլուխ եկած զինվորների մի վաշտ, որը դժգոհ էր դաշնակցական կառավարության կողմից տարվող ազգամիջյան ընդհարումներից հարևան եղբայրական ժողովուրդների հետ, միանում է Մարտունիում գտնվողներին և կոմունիստների ղեկավարությամբ ապստամբում։ Ապստամբները կազմակերպում են ռազմա-ռևոլյուցիոն կոմիտե՝ Հ. Սարուխանյանի գլխավորությամբ։ Ղարանլուխ գյուղն անցնում է ապստամբների ձեռքը, որոնք բանտարկում են Նոր-Բայազետի գավառում գործող դաշնակցական կառավարության զորամասերի հրամանատար գեներալ Սիլիկովին. որն ապստամբության ժամանակ գտնվում էր Ղարանլուխում և փորձում էր ճնշել այն։ Թողնելով իրենց ուժերի մի մասը Ղարանլուխում, ապստամբները շարժվում են դեպի Նոր-Բայազետ։ Ճանապարհին նրանց միանում են Ղարանլուխի շրջանի գյուղացիները։ Մայիսի 17-ին, կռվից հետո, ապստամբները գրավում են քաղաքը։

Շամշադինում ապստամբությունը բռնկվում է մայիսի 14-ին, իսկ Քարվանսարայի (այժմ Իջևան) շրջանում՝ մայիսի 19-ին։ Շամշադինում և մի շարք ուրիշ գյուղերում՝ Ղրղիում, Նորաշենում, Զորաթանում և այլ վայրերում, հայտարարվում է Սովետական իշխանություն։ Մայիսի 21-ին Քարվանսարայի ապստամբ գյուղացիները և նրանց միացած կառավարական 6-րդ գնդի զինվորները, վերց-

նում են Քարվանսարան, գրավում պետական հիմնարկները և ձերբակալում դաշնակ գործիչներին։ Մայիսի 21-ին Քարվանսարայում կազմակերպված ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն հայտարարում է Սովետական իշխանություն։ Բնակչությունն այդ ակտը ընդունում է ցնծությամբ, քաղաքը զարդարվում է կարմիր դրոշակներով։ Քարվանսարայից ապստամբները շարժվում են դեպի Դիլիջան և գրավում այն։

Վախենալով Հայաստանի աշխատավորների պայքարից և նրանց հաղթանակից, ապստամբների կողմից Դիլիջանը գրավվելուց հետո դաշնակցական կառավարությունը օգնություն է խնդրում իր տերերից՝ իմպերիալիստական պետություններից։ Մայիսի 22-ին նա Վրաստանի դիվանագիտական իր ներկայացուցչին հեռագրում է հետևյալը. «Բոլշևիկները գրավեցին Դիլիջանը։ Կատեգորիկ կերպով դաշնակիցներից օգնություն խնդրեցեք...»[1]։

1920 թ. մայիսին տեղի է ունենում ապստամբություն նաև Զանգեզուրում։

Ադրբեջանում Սովետական իշխանության հաստատումից հետո աշխուժանում են պարտիական կազմակերպությունների աշխատանքները Զանգեզուրում։ Զանգեզուրի կոմունիստները կապեր են հաստատում Բաքվի և Լեռնային Ղարաբաղի կոմունիստների հետ։ Շուտով Կարմիր Բանակը մաքրում է Ղարաբաղը դաշնակցական և մուսավաթական հրոսակախմբերից և մոտենում Զանգեզուրի սահմաններին։ Զանգեզուրի գյուղացիությունը անհամբեր սպասում էր Կարմիր Բանակի գալուն։ Մի թղթակցությունում այդ մասին կարդում ենք. «Զանգեզուրի գյուղացիությունն անհամբեր սպասում է Կարմիր Բանակին։ Խնձորեսկ գյուղը երբ իմանում է, որ կարմիր զորքը մտել է Շուշի, դուրս է գալիս կարմիր դրոշակներով, բայց կառավարական զորքը վրա է հասնում՝ ցրում բոլորին... Զանգեզուրի գյուղացիությունը սպասում է կարմիրների գալուն, որ պիտի փրկեն նրանց դաշնակցականների ձեռքից»[2]։

Մայիսի 15—20-ին ապստամբվում են Սիսիանի մի շարք գյուղեր՝ Բռնակոթ, Շաղաթ, Բոլակ և ուրիշները։ Ապստամբները կազմակերպում են ռազմա-ռևոլյուցիոն կոմիտե։ Մայիսի 21-ին ապըստամբվում է նաև Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղը, որտեղ ուժեղ

---

1 Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 68,200, գ. 764, թ. 139։

2 «Կոմունիստ» (Բաքու), № 48, 15 հուլիսի, 1920։

էր կոմունիստական կազմակերպությունը։ Խնձորեսկում հայտարարվում է Սովետական իշխանություն, բանտարկվում են դաշնակցական պաշտոնյաները և զինվորականները։

Ապստամբության հաջողության համար մեծ նշանակություն կունենար և ելույթը Երևանում։ Արմենկոմը փորձում է այդ անել, բայց չի հաջողվում։

Մայիսյան ապստամբությանը ակտիվորեն մասնակցեց նաև Հայաստանի Կոմունիստական Երիտասարդական Միությունը՝ «Սպարտակը»։

Հերոսական զինված ապստամբությունը մայիսի վերջին պարտվեց։

Հերոսական Մայիսյան ապստամբության պարտությունը հետևանք էր Արմենկոմի և Հայաստանի Ռազմա-հեղափոխական Կոմիտեի կողմից թույլ տրված կոպիտ քաղաքական և ռազմա-ստրատեգիական սխալների, ինչպես և այդ ղեկավար օրգաններում խցկված դավաճանական տարրերի գործունեությանը։ Այն ժամանակ, երբ պետք էր գործել միաժամանակ և համարձակորեն անցնել հարձակման թշնամու դեմ, Արմենկոմը և Հայաստանի Ռազմա-հեղափոխական Կոմիտեն ցուցաբերեցին անվճռականություն և դանդաղկոտություն, որի շնորհիվ ապստամբությունները առանձին վայրերում տեղի ունեցան տարբեր ժամանակներում և վերածվեցին իրարից կտրված ելույթների։ Ապստամբության ժամանակ ստեղծված իրադրությունը նպաստավոր էր հակառակորդի ուժերը ջախջախելու համար։ Բայց այդ հանգամանքը անընդունակ եղան օգտագործելու ապստամբության ղեկավար մարմինները։

Վ. Ի. Լենինը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության նախօրյակին խոսելով զինված ապստամբության մասին, հիշեցնում էր Կ. Մարքսի խոսքերը, թե «զինված ապստամբությունը, ինչպես և պատերազմը, արվեստ է»։ «Այդ արվեստի գլխավոր կանոններից,— գրել է Վ. Ի. Լենինը,— Մարքսն առաջադրել է՝

1. Երբեք չխաղալ ապստամբության հետ, այլ սկսելով այն՝ հաստատ իմանալ, որ պետք է մինչև վերջը գնալ։

2. Անհրաժեշտ է ուժերի մեծ գերակշռություն հավաքել վճռական վայրում, վճռական մոմենտին, որովհետև հակառակ դեպքում թշնամին, ունենալով ավելի լավ նախապատրաստություն և կազմակերպություն, կոչնչացնի ապստամբներին։

3. Քանի որ ապստամբությունը սկսված է, պետք է գործել ամենամեծ վճռականությամբ և անպատճառ, անպայման անցնել

ճարձակման: «Պաշտպանվելը զինված ապստամբության մահն է»:

4. Պետք է աշխատել թշնամուն հանկարծակիի բերել, գտնել այն մոմենտը, երբ նրա զորքերը ցրված են:

5. Պետք է աշխատել ամեն օր թեկուզ փոքրիկ հաջողություններ ձեռք բերել (կարելի է ասել ամեն ժամ, եթե գործը վերաբերում է մի քաղաքի), ինչ էլ լինի՝ պահպանելով «բարոյական գերակշռությունը» [1]: Այնուհետև Վ. Ի. Լենինը նույն հոդվածում գրում է, որ ապստամբները պիտի հայտնաբերեն նախաձեռնություն և համարձակություն:

Ապստամբների զեկավար մարմինները անտեսեցին մարքսիզմ-լենինիզմի այս դրույթը զինված ապստամբության մասին:

Ապստամբության պարտության գործում մեծ դեր խաղաց և անդլո-ամերիկյան ինտերվենտների օգնությունը դաշնակներին: Հայաստանի և Անդրկովկասի «գերագույն կոմիսար», ամերիկյան գնդապետ Հասկելը և մենշևիկները պատրաստվում էին տնտեսական բլոկադայի ենթարկել Հայաստանը՝ արգելել ամեն տեսակի ապրանքների մուտքը Հայաստան՝ մենշևիկյան Վրաստանի վրայով: Նույն Հասկելի կարգադրությամբ Ալեքսանդրապոլի ամերիկյան կոմիտեն մայիսի մեկից հետո սկսեց ցրիվ տալ իր տրամադրության տակ գտնվող մթերքները, ցանկանալով խուճապ առաջացնել քաղաքում և այդ ճանապարհով հարվածել ապստամբությանը Ալեքսանդրապոլում: Նույնն էին անում պետական պահեստների հետ դաշնակները Ալեքսանդրապոլում:

Ապստամբության առաջին օրերին գլուխը կորցրած դաշնակցական կառավարությունը օգտագործելով ապստամբների զեկավար օրգանների կողմից թույլ տրված սխալները, կարողանում է ժամանակ շահել իր ուժերը հավաքելու և նրանց ապստամբների դեմ ուղղելու համար: Կառավարությունը երկրում հայտարարում է արտակարգ դրություն: Երկրի բոլոր կոնտրռևոլյուցիոն պարտիաները՝ կադետները, մենշևիկները, էսեռները և ուրիշները, ինչպես և հոգևորականությունը դաշնակների գլխավորությամբ միասնական ճակատով հանդես են գալիս ճնշելու ապստամբությունը: Դաշնակցական կառավարությունն իր ուժերն առաջին հերթին ուղղում է ապստամբության կենտրոնի՝ Ալեքսանդրապոլի դեմ: Նա Ալեքսանդրապոլի դեմ խմբապետ Սեպուհի գլխավորությամբ ուղարկում է մաուզերիստներից, դաշնակցական պար-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 211:

«ոիայի անդամներից և կանոնավոր բանակի զորամասերից կազմըված մի ջոկատ։ Հայաստանի Ռազմա-հեղափոխական Կոմիտեի տրամադրության տակ եղած զինված ուժերը բավական էին այդ ջոկատը ջախջախելու համար, մանավանդ, որ ջոկատի վստահելի մասը կազմում էին դաշնակները և մաուզերիստները, իսկ կանոնավոր զորամասերի զինվորները անհուսալի էին կառավարության համար և առաջին իսկ ընդհարման դեպքում կամ կանցնեին ապստամբների կողմը, կամ կլքեին ջոկատը։ Բայց իր անվճռականության ու տատանումների պատճառով, ինչպես նաև դավաճանների գործունեության՝ Ռազմա-հեղափոխական Կոմիտեն չկարողացավ մարտի հանել իր ուժերը։ Ռազմա-հեղափոխական Կոմիտեի զինված ուժերի կարևոր պոստում կարողացել էր սողոսկել գնդապետ Ղորղանյանը, որն, ինչպես պարզվեց հետո, կապված լինելով դաշնակների հետ՝ նրանց հանձնարարությամբ սաբոտաժի էր ենթարկում մարտական գործողությունները։ Այդ ստոր լրտեսը խուճապային հայտարարություններ էր անում այն մասին, որ իբր թե ապստամբները դաշնակներին ջախջախելու համար չունեն անհրաժեշտ չափով ուժեր։ Միակ ռազմական գործողությունը, որ տեղի է ունենում՝ դա Երևանի ուղղությամբ հետախուզության դուրս եկած զրահապատ գնացքի ընդհարումն էր Աղին կայարանի մոտ խրմբապետ Սեպուհի ջոկատի հետ։ Տեսնելով, որ իր ջոկատի կանոնավոր զորամասերի զինվորներն անհուսալի են իրեն համար և որ ինքը կարող է պարտվել, Սեպուհը թողնում է երկաթգիծը և գյուղերի վրայով շարժվում դեպի Ալեքսանդրապոլ։ Մայիսի 14-ին ջոկատը մտնում է քաղաք։

Ալեքսանդրապոլում ապստամբությունը ճնշելուց հետո դաշնակցական կառավարությունն իր ուժերն ուղղում է ապստամբած մյուս վայրերի դեմ և առանձին-առանձին ճնշում ապստամբությունները։ Մայիսի 13-ին Կարսում ապստամբություն պարտվում է։ Կարսից Ալեքսանդրապոլ նահանջելիս, Արդինա գյուղի մոտ, դաշնակների հետ ընդհարման ժամանակ մի շարք ընկերների հետ զոհվում է նաև Կարսի ապստամբների ղեկավար Ղ. Ղուկասյանը։ Դրսից օգնություն չստանալով, ապստամբները, կտրված լինելով Սարիղամիշում, ստիպված են լինում մայիսի 17-ին զիջել քաղաքը։ Մայիսի 19-ին դաշնակներին հաջողվում է վերցնել Նոր-Բայազետը։ Դաշնակցական ճիվաղները չտեսնված տանջանքների են ենթարկում Նոր-Բայազետի դավառի ապստամբների ղեկավար Հ. Սարուխանյանին և դաղանաբար սպանում նրան։ Շամշա-

դինի և Քարվանսարայի շրջաններում կռիվները ապստամբների ու դաշնակների միջև երկարատև և կատաղի բնույթ են ստանում։ Շամշադինի և Քարվանսարայի ապստամբ գյուղացիները ցուցաբերում են բարձր հերոսականություն, բայց վերջիվերջո թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ նրանց մի մասը ստիպված է լինում թողնել Հայաստանի սահմանները և անցնել Սովետական Ադրբեջան, որտեղ նրանք մտնում են Կարմիր Բանակի շարքերը։ Զանգեզուրում կռիվները նույնպես երկարատև և համառ բնույթ են ստանում։

Ճնշելով ապստամբությունը, դաշնակցական կառավարությունը հաշվեհարդար է տեսնում ապստամբած աշխատավորական մասսաների հետ։ Հայաստանի կոնտրռևոլյուցիոն բոլոր ուժերը դաշնակների գլխավորությամբ չտեսնված դաժան հալածանքներ են սկսում աշխատավորների դեմ։ Ապստամբներին պատժելու համար կառավարությունն ստեղծում է արտակարգ դատարաններ։ Հարյուրավոր ռևոլյուցիոն բանվորներ ու գյուղացիներ գնդակահարվում և սպանվում են Հայաստանի զանազան վայրերում։ Դաշնակները առանձնապես կատաղի արշավանք են սկսում Հայաստանի բանվորների ու գյուղացիների ավանդարդի՝ Կոմունիստական պարտիայի դեմ։ Դաշնակ դահիճների ձեռքով զոհվում են հայ ժողովրդի ազատության, նրա այսօրվա երջանիկ կյանքի համար պայքարող Կոմունիստական պարտիայի հավատարիմ զավակներ՝ Հ. Սարուխանյանը, Ս. Ալավերդյանը, Ս. Մուսայելյանը, Բ. Ղարիբջանյանը, Ղ. Ղուկասյանը, Բ. Բատիկյանը, Ե. Սեյանը, Ե. Մկրտումյանը, Վ. Ալեքսևեը և շատ ուրիշներ։

Դաշնակների գազանությունները Սովետական Ռուսաստանի և Սովետական Ադրբեջանի աշխատավորների մեջ մեծ վրդովմունք առաջ բերեց. նրանք իրենց բողոքի ձայնը բարձրացրին այդ գազանությունների դեմ։ Այդ ձայնին միացան նաև Վրաստանի աշխատավորները։

Ապստամբության պարտությունից հետո դաշնակցական կառավարությունը շտապեց հանդստացնել իր տերերին՝ իմպերիալիստական պետություններին, որոնք վախենում էին, որ Հայաստանը ևս կարող է Ադրբեջանի պես դուրս գալ իրենց ձեռքից։ Դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրը մենշևիկյան Վրաստանում իր կառավարության ներկայացուցչին կարգադրում է իմպերիալիստական պետությունների կառավարություններին հայտնել հետևյալը. «Իմ անունից հեռագրեք Հնդկա-եվրոպա-

ձան հեռագրով կամ ռադիոյով Հռոմ, Փարիզ, Լոնդոն և Վաշինգտոն, որ բոլշևիկյան շարժումը Հայաստանում... ճնշված է...»[1]։ Դատարկ սնապարծություն էր դաշնակի այդ հայտարարությունը։ Հայաստանի բանվորները ու գյուղացիները ո՛չ միայն չդադարեցրին, այլ ընդհակառակը, ավելի ուժեղացրին իրենց պայքարը կոմունիստների ղեկավարությամբ, Սովետական իշխանության հաստատման համար։

Մայիսյան փառապանծ ապստամբությունը Հայաստանի բանվորների և գյուղացիների կողմից Սովետական իշխանության հաստատման համար մղվող պայքարի ամենափառավոր էջերից մեկն է հանդիսանում, պայքար՝ որը դաշնակների արյունոտ տեռորի պայմաններում շարունակվեց մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում։

3. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսյան ապստամբությունը քաղաքացիական պատերազմի մի դրվագ էր, որի բովով անցան Հայաստանի բանվորներն ու գյուղացիները։ Հաշվի առնելով ապստամբության դասերը, նրանք Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հռաստատիկ եռանդով շարունակեցին պայքարը դաշնակների տիրապետության դեմ՝ լի հավատով դեպի իրենց հաղթանակը։

Մայիսյան ապստամբությունից հետո քաղաքացիական կռիվները Շամշադինում շարունակվեցին մինչև հունիսի վերջը։ Զանգեզուրի աշխատավորները, 11-րդ բանակի զորամասերի օգնությամբ, շարունակեցին իրենց պայքարը դաշնակների դեմ։ 1920 թ. հուլիսին Զանգեզուրի մեծ մասում հաստատվեցին սովետական կարգեր, որը տևեց մինչև նույն թվականի հոկտեմբեր ամիսը։ Նոր-Բայազետի գավառում, Մայիսյան ապստամբությունից հետո, ընդհարումներ տեղի ունեցան Դալիզարդաշ (այժմ Սարուխան) և ուրիշ գյուղերում դաշնակցական բռնակալների և գյուղացիների միջև։

Այն ժամանակ, երբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները Մայիսյան ապստամբությունից հետո Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ուժեղացնում են պայքարը դաշնակների ու նրանց տերերի՝ իմպերիալիստական պետությունների դեմ, դաշնակները այդ պետությունների օգնությամբ նոր աղետներ էին

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 68/200, գ. 764, թ. 118։

պատրաստում հայ ժողովրդի գլխին՝ իրենց տիրապետությունը շարունակելու համար։

1920 թ. օգոստոսի 10-ին Անտանտայի պետությունների և Թյուրքիայի սուլթանական կառավարության միջև Սևրում (Ֆրանսիա) հաշտության պայմանագիր է կնքվում։ Պայմանագրի 6-րդ հոդվածի 88—91 հոդվածներով մի նոր խարդախ դավ էր պատրաստվում հայ ժողովրդի համար. նախատեսվում էր իբր թե «անկախ» Հայաստանի կազմակերպումը Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների սահմաններում։ Այդ ապագա «անկախ» Հայաստանի սահմանները պիտի որոշեր՝ ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը։ Սևրի հաշտության պայմանագրի կնքումից քիչ առաջ ԱՄՆ-ը ցանկություն էր հայտնել վերցնել ապագա Հայաստանի «մանդատը»։ Ամերիկյան իմպերիալիստները այդ ցանկանում էին անել ո՛չ թե հայ ժողովրդին օգնելու նպատակով, այլ ելնելով միմիայն իրենց զավթողական քաղաքականությունից։ Նրանք չէին բավարարվում միայն Հայաստանի «մանդատով»։ Հայաստանը առանձին վերցրած նրանց չէր գոհացնում։ Նրանք ձգտում էին Հայաստանի «մանդատի» պատրվակի տակ զավթել Անդրկովկասը, Թյուրքիան և Մերձավոր Արևելքի երկրները։ Իր հերթին անգլիական իմպերիալիստները Հայաստանին «օգնելու» պատրվակի տակ նույնպես ձգտում էին զավթել Անդրկովկասը, իսկ ֆրանսիական իմպերիալիստները՝ Կիլիկիան և Սիրիան։ Ամերիկյան և ուրիշ իմպերիալիստները ցանկանում էին Հայաստանը, Թյուրքիան և Մերձավոր Արևելքի երկրները գաղութացնել, իսկ նրանց ժողովուրդներին ստրկացնել ու շահագործել՝ իրենց առավելագույն շահույթը ապահովելու համար։

Մտցնելով Սևրի պայմանագրում «անկախ» Հայաստանի կազմակերպման հարցը, իմպերիալիստական պետությունները մտածում էին միմիայն իրենց շահերի և ոչ թե հայ ժողովրդի մասին։

Ինչպես արդեն ասվեց վերևում, Սևրի պայմանագիրը կնքված էր սուլթանական կառավարության հետ, այնինչ Թյուրքիայում փաստորեն իշխանության տերերն էին քեմալականները, որոնք պայքարում էին այդ պայմանագրի ոչնչացման համար։

Իմպերիալիստական պետությունները իրենց ձեռքին խաղալիք դարձած մարիոնետային դաշնակցական կառավարությանը պատերազմի էին հրահրում քեմալականների դեմ՝ իրենց զավթողական-իմպերիալիստական նպատակին հասնելու համար։ Միաժամանակ այդ նույն իմպերիալիստական պետությունները իմանալով

Հայաստանը և Անդրկովկասը զավթելու քեմալականների մտադրությունը, նրանց ևս պատերազմի էին հրահրում Հայաստանի դեմ, հույս ունենալով, որ վերջին հաշվով, իրենց կհաջողվի թյուրքական ինտերվենցիա կազմակերպել Անդրկովկասում, ուղղված Սովետական Ռուսաստանի դեմ։

1920 թ. հունիսին և հուլիսին նոտաների փոխանակություն է տեղի ունենում դաշնակցական և քեմալական կառավարությունների միջև՝ անգլիացիների խորհրդով դաշնակների կողմից Օլթիի շրջանում հրահրած ռազմական գործողությունների առթիվ։

Իր առաջին նոտայում, հունիսի վերջերին, քեմալական կառավարությունը առաջարկում էր դաշնակցական կառավարությանը դադարեցնել ռազմական գործողությունները Օլթիի շրջանում և խաղաղ ճանապարհով լուծել վիճելի տերիտորիալ հարցերը։ Նոտայում, սակայն, ոչինչ չէր ասվում թյուրքերի տերիտորիալ պահանջների մասին։ Երկրորդ նոտայում, հուլիսի սկզբներին, քեմալական կառավարությունը հայտարարում էր, որ նա տերիտորիալ խնդիրներում կանգնած է Բաթումում կնքված կոնվենցիայի տեսակետի վրա[1]։ Այսպիսով, քեմալական կառավարությունը ձգտում էր իր ձեռքում պահել Արևելյան Հայաստանի մի զգալի մասը։ Դաշնակցական կառավարությունն իր վերջին պատասխանում հայտնում էր, որ ապագա Հայաստանի սահմանները որոշելու են Անտանտայի պետությունները, և որ մինչև այդ հարցի լուծումը նրա զորքերը չեն անցնելու 1914 թ. ռուս-թյուրքական սահմանը[2]։ Դաշնակցական կառավարությունն իր հերթին, այսպիսով, հայ ժողովրդի նկատմամբ վարում էր ավանտյուրիստական քաղաքականություն, կապելով նրա բախտը իմպերիալիստական պետությունների մեքենայությունների հետ։

Հայ ժողովրդի փրկությունը կապված էր Սովետական Ռուսաստանի, ռուս մեծ ժողովրդի օգնության հետ։ Եվ Սովետական Ռուսաստանը հայ ժողովրդին առաջարկեց իր օգնությունը։ 1920 թ. հուլիսի 19-ին Սովետական Ռուսաստանի Արտգործժողկոմատը դիմեց դաշնակցական կառավարությանը մի հայտարարությամբ, որի մեջ ասվում էր, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունն իր

---

[1] Թյուրքական նոտաները, տես Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 63/200, գ. 402, թ.թ. 13 և 18.

[2] Դաշնակցական կառավարության պատասխանները, տես նույն ֆոնդի և գործի 16 և 19 թերթերում։

պատրաստակամություն է հայտնում օժանդակել հայ ժողովրդի բարգավաճման գործին, օգնել նրան ստեղծելու իր հարևանների հետ խաղաղ պայմաններ աշխատանքի ու ազատ կյանքի համար[1]։

Սովետական Ռուսաստանի առաջարկը հայ ժողովրդի համար միակ ընդունելի և ճիշտ ուղին էր։ Անհրաժեշտ էր հրաժարվել իմպերիալիստների կեղծ խոստումներից և ընդունել Սովետական Ռուսաստանի օգնությունը։ Սակայն հանդիսանալով հայ ժողովրդի և Սովետական Ռուսաստանի սխերիմ թշնամիներ, դաշնակները, իմպերիալիստական պետությունների այդ գործակալները, ամուր կառչած մնացին այդ պետություններին և մերժեցին Սովետական Ռուսաստանի առաջարկը, որը վերկարար նշանակություն ուներ հայ ժողովրդի համար։

Իմպերիալիստական պետությունների օգնության հուսով դաշնակների սարքած ռազմական գործողությունները Օլթիի շրջանում, ուրիշ հանդիսացան քեմալականների համար հարձակման անցնելու Հայաստանի դեմ։ Քեմալական Թյուրքիան վաղուց էր պատրաստվում այդ հարձակման և արդեն կենտրոնացրել էր Հայաստանի սահմանների վրա բավական թվով զորքեր։ 1920 թ. աշնանը սկսվեց պատերազմ դաշնակցական Հայաստանի և քեմալական Թյուրքիայի միջև։ Դաշնակցական կառավարությունը խայտառակ ձևով պարտվեց։ Անցնելով հարձակման, թյուրքական զորքերը սեպտեմբերին գրավեցին Սարիղամիշը, հոկտեմբերի 30-ին՝ Կարսը, իսկ նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը։ Նորից օրհասական վտանգ ստեղծվեց հայ ժողովրդի համար։

Դաշնակցական կառավարության բոլոր դիմումները իմպերիալիստական պետություններին մնացին անհետևանք։

Այսպես, ռազմական գործողությունները սկսվելուց հետո, դաշնակցական կառավարությունը դիմեց Անդրկովկասում Անգլիայի ներկայացուցիչ գնդապետ Ստոքսին, ինչպես և Ֆրանսիայի և այլ պետությունների ներկայացուցիչներին։ Սարիղամիշի ուղղությամբ սկսված թյուրքական զորքերի առաջխաղացման կապակցությամբ, դաշնակցական կառավարության Վրաստանի ներկայացուցիչը 1920 թ. սեպտեմբերի 30-ին լինում է Անդրկովկասում գտնվող դաշնակից պետությունների ներկայացուցիչների մոտ և օգնություն խնդրում։ Այդ մասին նույն օրը իր կառավարությանը

---

[1] Սովետական Ռուսաստանի Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի հայտարարությունը, տես Հայկական ՍՍՌ Պետական Կենտր. Արխիվ, ֆ. 68/200, գ. 769 բ, թ. 261։

նա զեկուցում է հետևյալը. «...Ես խնդրեցի նրանց չմերժել անմիջապես իրազեկ դարձնելու իրենց կառավարություններին Հայաստանում ստեղծված դրության մասին և միջոցներ ձեռք առնել՝ հասցնել շտապ-փույթ օգնություն, որը կարող է կայանալ նախ՝ հնարավոր դեսանտի և ծովային դեմոնստրացիայի մեջ և ապա՝ շտապ կերպով վառելիք հասցնելու մեջ։ Նրանք ինձ լսեցին մեծ ուշադրությամբ, հայտնեցին իրենց համակրության զգացմունքը և խոստացան այս մասին հաղորդել անհետաձգելիորեն իրենց կառավարությանց և խնդրել անհրաժեշտ օգնություն»[1]։

Հոկտեմբերի 3-ին գնդապետ Ստոքսը գալիս է Երևան, որտեղ դաշնակցական կառավարությանը հայտարարում է, որ «...Անգլիան անզոր է այժմ ռեալ օգնություն հասցնել Հայաստանին։ Ռմբակոծել կամ վերցնել Տրապիզոնը[2] միտք չունի, որովհետև Անգլիան չի կարող մեծ ուժ հանել տաճկական ափը՝ երկրի խորքերը շարժվելու համար, իսկ միայն քաղաքը և նավահանգիստը գրավելը մեծ օգնություն չի հասցնի Հայաստանին»[3]։

1920 թ. նոյեմբերի 3-ին դաշնակների Վրաստանում գտնվող փիվանագիտական ներկայացուցիչը լինում է Ստոքսի մոտ և հայտնում Կարսի անկման մասին։ Հանձնման արդյունքների մասին նա զեկուցում է իր կառավարությանը հետևյալը. «Ձեր շիֆրով հեռագիրը Կարսի անկման մասին ստացա ամսույս 3-ի երեկոյան։ Իսկույն տեսակցություն խնդրեցի Ստոքսի հետ և հայտնելով այդ լուրը, հարցրի իրենցից սպասվելիք օգնության մասին։ Ինչպես ձեզ հեռագրել էի այդ մասին, նրա պատասխանը շատ պարզ էր այս անգամ։ Նա իսկույն հանեց սեղանի արկղից մի ամբողջ գործ, ցույց տվեց հեռագրերի մի կույտ և ասաց, որ ինքը շարունակ հեռագրում է օգնության մասին և մինչև հիմա ոչ մի պատասխան չի ստացել։ Իր կարծիքով դա նշանակում է, որ Եվրոպան... չի ուզում օգնել մեզ»[4]։

Նույն պատասխանն է տալիս և Ֆրանսիայի ներկայացուցիչը։ «Նույն կարծիքը հայտնեց,— գրում է իր հաղորդման մեջ դաշնակ-

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 68 200, գ. 268, թ. 6։

[2] Տրապիզոնի ռմբակոծման և այնտեղ դեսանտ հանելու հարցը դաշնակներն էին բարձրացրել Անգլիայի և Ֆրանսիայի առջև։

[3] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 68 200, գ. 312, թ. 390։

[4] Նույն ֆոնդ, գ. 867, թ. 10 և 11։

ների ներկայացուցիչը,— ինչպես այդ մասին ես ձեզ արդեն դրել էի, և Կորբեյլը իր այցելության ժամանակ»[1]։

Նոյեմբերի 5-ին դաշնակցական կառավարությունը անմիջականորեն դիմում է ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի արտաքին գործերի մինիստրներին։ Դիմումում ասվում էր. «Ձեր և մեր ընդհանուր թշնամու դեմ միայնակ պայքարում ընկճված Հայաստանը կորցնելով Կարսը և գտնվելով Ալեքսանդրապոլը կորցնելու նախօրյակին՝ վերջին անգամ կոչ է անում ձեզ, խնդրելով արագացնել ռեալ օգնությունը՝ միջամտել զինված կոնֆլիկտին և սահմանել հակառակորդին դադարեցնել ռազմական գործողությունները դիվանագիտական ճանապարհով»[2]։ Այդ դիմումը ևս մյուսների պես մնում է անհետևանք։

Միաժամանակ դաշնակների ներկայացուցիչը Եվրոպայում նույն խնդրով 1920 թ. հոկտեմբերին դիմում է Ազգերի Լիգային, տեսակցություն է ունենում Ֆրանսիայի պրեմյեր-մինիստր Ժ. Լեյդի, Ֆրանսիայում ամերիկյան դեսպան Վալասի և ուրիշների հետ, դիմում է նաև մարշալ Ֆոշին[3]։ Այդ բոլոր դիմումները, ինչպես և պետք էր սպասել, անհետևանք մնացին։ Դաշնակները այլևս իմպերիալիստական պետություններին պետք չէին։ Նրանց պետք էր Թյուրքական ինտերվենցիան Անդրկովկասում, Թյուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Անդրկովկասի խորքերը։

Խոսելով Հայաստանի և քեմալական Թյուրքիայի միջև 1920 թ. աշնանը ծագած պատերազմի մասին, Ի. Վ. Ստալինը գրել է. «Դաշնակների Հայաստանն ընկավ, անկասկած, որպես Անտանտայի պրովոկացիայի զոհ, որը նրան գրգռեց Թյուրքիայի դեմ, և հետո նրան խայտառակ կերպով լքեց-թողեց Թյուրքերի հոշոտմանը»[4]։

Պատերազմի հետևանքով Հայաստանի տնտեսական դրությունը էլ ավելի ծանրացավ։ Վերցնելով Ալեքսանդրապոլը, Թյուրքերն առաջ շարժվեցին դեպի Ջաջուռ։ Նրանք պատրաստվում էին հարձակվել և Երևանի վրա։ Գյուղատնտեսական աշխատանքները կանգ էին առել դեռ աշնանից՝ աշխատող ձեռքերը պատերազմի կապակցությամբ բանակ վերցնելու հետևանքով։ Ավելի վատթարացան երկրի բնակչության կյանքի պայմանները, որոնք շատ ծանր էին դեռ մինչև պատերազմը։ Պատերազմը վարելու համար դաշնակ-

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. արխիվ, ֆ. 68/200, գ. 867, թ. 10 և 11։

[2] Նույն ֆոնդ, գ. 867, թ. 82։

[3] Նույն տեղում, ֆ. 199, գ. 111վ, թթ. 34—41։

[4] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 455—459։

ցական կառավարությունը քամում էր ժողովրդի վերջին միջոցները։ Թանկությունը չտեսնված չափերի էր հասել։ Երկրի ներսում տիրում էր անարխիա, կողոպուտ և թալան։ Դաշնակցական խմբապետները թափառում էին գյուղից գյուղ և ահ ու սարսափի մեջ պահելով ժողովրդին՝ կողոպտում նրան։ Ահա թե ինչ էր կատարվում Էջմիածնի գավառում 1920 թ. նոյեմբերին։ «Գավառումս... զինված խմբերի թիվը,— հայտնում էին Էջմիածնից,— օրեցօր ավելանում է... այս բոլոր խմբերը... զենքով մտնում են գյուղերը, զոռով բռնադրավում են տները, դուրս վռնդում գյուղացիներին, խլում նրանց գույքը. ահ ու սարսափը ամենուրեք է։ Այս դրությունը երկար չի կարող շարունակվել»[1]։

* *

1920 թ. նոյեմբերին ժողովրդական ամենալայն մասսաների համար վերջնականապես պարզ է դառնում, որ դաշնակների վարած հանցագործ քաղաքականության հետևանքով կործանման եզրին կանգնած ժողովրդի փրկությունը միայն և միայն սովետական կարգերի հաստատման մեջ էր կայանում։ Երկրում ավելի էին սրվում սոցիալական հակասությունները և ուժեղանում դասակարգային պայքարը։

Նամշաղինից 1920 թ. հոկտեմբերին ուղարկված մի թղթակցությունում, որը արտահայտում էր շրջանի գյուղացիների տրամադրությունը, ասվում էր. «Պետք է հավաքենք մեր ուժերը և նորից ընդհարվենք ավազակ կառավարության (դաշնակցական կառավարության— Հ. Է.) հետ՝ վերջնականապես տապալելու նրան»[2]։ Նույն տեղից դարձյալ հոկտեմբերին ուղարկված մի ուրիշ թղթակցությունում ասվում էր. «Ժողովուրդը կանչում է միաբերան, երբ է հաստատվելու մեր երկրում Սովետական իշխանությունն, երբ է Կարմիր Բանակը մեզ օգնության գալու»[3]։

Կովկասում ստեղծված դրության հետ մոտիկից ծանոթանալու և պարտիական կազմակերպություններին օգնություն ցույց տալու համար ՌԿ(բ)Պ ԿԿ-ի հանձնարարությամբ Ի. Վ. Ստալինը մեկնում է Կովկաս։ 1920 թ. նոյեմբերի սկզբներին Ի. Վ. Ստալինը գալիս է Բաքու։ Նոյեմբերի 4-ին տեղի է ունենում Ադրբեջանի Կ(բ)Պ ԿԿ-ի

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 82/214, գ. 51, թ. 760։

[2] «Կոմունիստ» (Բաքու), № 119, 11 հոկտեմբերի, 1920։

[3] Նույն տեղում, № 129, 22 հոկտեմբերի։

Բաղբյուրոյի և ՌԿ(բ)Պ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի անդամների նիստ՝ մասնակցությամբ Ի. Վ. Ստալինի։ Նիստի օրակարգի հարցերից մեկն էր Հայաստանում ստեղծված դրության հարցը։ Խոսելով այդ մասին Ի. Վ. Ստալինը գրել է. «Հազիվ թե կարելի է կասկածել, որ Հայաստանն այլևս փրկության ոչ մի հնարավորություն չունի, բացի մեկից՝ դաշինքից Սովետական Ռուսաստանի հետ»[1]։

Ինչպես արդեն ասվեց վերևում, Հայաստանի աշխատավորները կոմունիստների ղեկավարությամբ Մայիսյան ապստամբությունից հետո ուժեղացրին իրենց պայքարը, այսպես կոչված, դաշնակցական կառավարության դեմ։ 1920 թ. հոկտեմբերին Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն դիմեց Հայաստանի աշխատավորներին մի կոչով, որը վերջանում էր հետևյալ խոսքերով. «Մենք դիմում ենք Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաներին, նրանց ռևոլյուցիոն կորովին ու դասակարգային գիտակցության՝ կազմակերպվելու Կոմունիստական պարտիայի դրոշի շուրջը, հավաքելու ցրված ռևոլյուցիոն ուժերը, որպեսզի ձեռք ձեռքի տված Սովետական Ռուսաստանի պրոլետարիատի հետ միահամուռ ուժերով խորտակենք միջազգային իմպերիալիզմի հայկական-դաշնակցական հատվածի լուծը, նորից բարձրացնենք կոմունիզմի դրոշակը Հայաստանում»[2]։

Հայաստանի աշխատավորները կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ է՛լ ավելի են ուժեղացնում իրենց պայքարը դաշնակների ատելի լծի դեմ։ Երկաթուղու բանվորները կազմակերպում են հակակառավարական ելույթներ։ Կոմունիստները ակտիվ աշխատանք են ծավալում գյուղացիության մեջ, կազմակերպելով նրանց պայքարը դաշնակների դեմ։ Նոր-Բայազետից հայտնում էին, այսպես կոչված, դաշնակցական կառավարությանը, որ բոլշևիկները նոսն աշխատանք են ծավալել գավառում և եթե այդպես շարունակվի, ապա գավառը պիտի կորած համարել կառավարության համար։ Զանգեզուրի աշխատավորները հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին 11-րդ բանակի զորամասերի օգնությամբ է՛լ ավելի են ուժեղացնում իրենց պայքարը դաշնակ-իմպերիալիստական բանդաների դեմ, Զանգեզուրի մեծ մասում հաստատելով Սովետական իշխանություն։ 1920 թ. հոկտեմբերի վերջերին Գորիսից

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 455։

2 «Կոմունիստ» (Բաքու), № 117, 8 հոկտեմբերի, 1920։

(ուր հայտարարված էր Սովետական իշխանություն) ուղարկված մի թղթակցություն պատմում է աշխատավորների այդ պայքարի մասին։ «Հոկտեմբերի 23-ին Աղատության հրապարակի վրա,— ասվում է թղթակցությունում,— բրիգադայի (11-րդ բանակի բրիգադայի— Հ. Է.) հրամանատարն ընդունեց Զանգեզուրի կոմունիստական զորախումբը։ Զորախումբը բաղկացած էր 200 հոգուց, որոնցից շատերը կոմունիստներ էին, իսկ մնացածները համակրողներ։

Երեկոյան կազմակերպվեց միտինգ-ներկայացում, որը չափից դուրս աշխույժ անցավ։ Խոսող ընկերների ճառերն ընդունվում էին «Կորչե՛ն դաշնակները», «Կեցցե՛ Սովետական իշխանությունը», «Կեցցե՛ Կոմունիստական պարտիան» բացագանչություններով։ Ներկայացումից հետո կոմունիստական ջոկատը ճամբա ընկավ կուվելու Նժդեհի դեմ»[1]։

Նոյեմբերի վերջերին Քարվանսարայի, Շամշադինի և Դիլիջանի շրջանների աշխատավորները փաստորեն դտնվում էին ապըստամբ վիճակում։

1920 թ. նոյեմբերի 12-ին դաշնակցական բանակի գեներալ խանկալամովը Դիլիջանից հաղորդում էր բանակի հրամանատարին, որ նոյեմբերի 10-ին, դիշերը, Սովետական Աղրբեջանի սահմանների մոտ կանգնած 6-րդ գնդի 4-րդ վաշտի 52 զինվորներ զենքը ձեռքներին ինքնակամ թողել են իրենց դիրքերը և անցել կոմունիստների կողմը[2]։ Նոյեմբերի 28-ին Դիլիջանից հաղորդում են, որ զենքը ձեռքներին իրենց զորամասերը լքող և տուն վերադարձող կամ կոմունիստների կողմն անցնող զինվորների թիվը խիստ աճում է։ Հայտնվում էր նաև, որ վերադառնալով տուն, զինվորներն իրենց գյուղերում հայտարարում են Սովետական իշխանություն[3]։

Ժողովրդական ապստամբությունը ճնշելու համար դաշնակները դիմում են արտակարգ միջոցառումների՝ հիմնում են զինվորական դատարաններ, բանտարկում և գնդակահարում կոմունիստներին, կոնտրռևոլյուցիոն տարրերից խմբեր են կազմակերպում և այլն։ Սակայն այդ բոլորը չէին կարող օգնել նրանց։ Դաշնակների օրերը հաշվված էին։

1920 թ. նոյեմբերի 29-ի առավոտյան Հայաստանի հյուսիսային շրջանների՝ Քարվանսարայի և Դիլիջանի աշխատավորները Կո-

---

[1] «Կոմունիստ» (Բաքու), № 142, 7 նոյեմբերի, 1920։

[2] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 68/200, գ. 867, թ. 262։

[3] Նույն տեղում, թ. 396։

մունիստական պարտիայի ղեկավարությամբ ապստամբում են դաշնակցական կառավարության դեմ։ Վերջինս զորքեր է ուղարկում ապստամբների դեմ, սակայն այդ զորքերը միանում են ապստամբած իրենց եղբայրներին և զենքն ուղղում դաշնակների դեմ։ Նոյեմբերի 29-ին Քարվանսարայում կազմակերպվում է Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտե, որը ապստամբության ղեկավարման գործը իր ձեռքն է վերցնում։ Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն Հայաստանը հայտարարում է Սովետական Սոցիալիստական Հանրապետություն։ Այդ առթիվ հրապարակված դեկլարացիայում ասվում էր. «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ՝ Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունը այսօրվանից Հայաստանում հայտարարում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։ Այսօրվանից Խորհրդային Հայաստանի Կարմիր դրոշակը պաշտպանելու է նրա աշխատավոր ժողովրդին ճնշողների դարավոր լծից...»[1]։

Նոյեմբերի 30-ին ապստամբները վերցնում են Դիլիջանը։ Այդտեղից Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն Հայաստանի բանվորների և գյուղացիների անունից դիմում է Վ. Ի. Լենինին ու խնդրում, որ Սովետական Ռուսաստանը օգնություն ցույց տա նրանց։ Դիմումում ասվում էր. «Ողջ հայտնի լինի համաշխարհային ռևոլյուցիայի առաջնորդին, որ Դիլիջանի և Քարվանսարայի շրջանների գյուղացիները, վրդովված դաշնակցական կառավարության հանցագործ քաղաքականությամբ և երկրում խորացող անարխիայով, ապստամբության դրոշ են բարձրացրել...

Դիլիջանը մեր ձեռքին է։

Ոգևորված ապստամբները առաջ են սլանում՝ վերջնականապես խորտակելու Անտանտայի ատելի գործակալին։

Կատարելով նրանց կամքը և տեղական Ռևկոմ կազմելով, մենք առաջ ենք շարժվում, հավատացած լինելով, որ Արևելքի ճնշված ժողովուրդների ազատարար սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հերոսական Կարմիր Բանակը մեր այս դժվարին պայմաններում մեզ օգնության կհասնի։

Հայաստանի բոլոր բանվորների ու գյուղացիների կողմից մենք խնդրում ենք Սովնարկոմին այդ օգնությունը ցույց տալ մեզ»[2]։

Լենինի գլխավորած Սովետական Ռուսաստանի կառավարության ցուցումներով Ադրբեջանում գտնվող 11-րդ բանակի զորա-

1 «Կոմունիստ» (Երևան), № 2, 1920։

2 «Կոմունիստ» (Բաքու), № 162, 1 դեկտեմբերի, 1920։

մասերը օգնության են հասնում Հայաստանի ապստամբ բանվորներին և գյուղացիներին։ Այդ զորամասերի շարքում էին գտնվում նաև Հայաստանի շրջանների Մայիսյան ապստամբության մասնակից գյուղացիներից շատերը, որոնք ապստամբության ճնշումից հետո անցել էին Սովետական Ադրբեջան։

Կարմիր Բանակի օգնությամբ ապստամբները առաջ շարժվելով, 1920 թ. դեկտեմբերի 2-ին մտնում են Երևան։ Աշխատավորությունը 11-րդ բանակի զորամասերին ամենուր դիմավորում էր մեծ խանդավառությամբ։ Այսպես կոչված դաշնակցական կառավարությունը տապալվում է։

Այսպիսով, Հայաստանի բանվորների ու գյուղացիների պայքարը Սովետական իշխանության հաստատման համար հայ ժողովրդի ավագ եղբայր ռուս մեծ ժողովրդի օգնությամբ պսակվում է լիակատար հաղթանակով, որը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակն էր Հայաստանում։

Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը ջերմորեն ողջունեցին Հայաստանի աշխատավորներին նրանց հաղթանակի առթիվ։ Ռազմահեղափոխական Կոմիտեին ուղարկած հեռագրում Վ. Ի. Լենինը գրում էր. «Հանձին ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին»[1]։ Ի. Վ. Ստալինն իր «Կեցցե՞ Սովետական Հայաստանը» հոդվածում գրում էր. «Տանջված ու բազմաչարչար, Անտանտայի և դաշնակների ողորմածությամբ սովի, քայքայման ու գաղթի մատնված Հայաստանը,— բոլոր «բարեկամների» կողմից խարված այդ Հայաստանը, այժմ իր փրկությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց սովետական երկիր»[2]։

Հանդես գալով 1920 թ. դեկտեմբերին Սովետների Համառուսական 8-րդ համագումարում ժողովրդական Կոմիսարների Սովետի հաշվետու զեկուցումով, Վ. Ի. Լենինը նշեց Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը Ադրբեջանում, Հայաստանում և Բուխարայում, ասելով. «Ես պետք է նշեմ նաև, ընկերնե՛ր, որ Արևելքում մեր քաղաքականությունն այս տարվա ընթացքում խոշոր հաջողություններ ունեցավ։ Մենք պետք է ողջունենք Բուխարայի, Ադրբեջանի և Հայաստանի Սովետական ռեսպուբլիկաների կազմվելն ու ամրապնդվելը, որոնք վերականգնեցին ո՛չ միայն իրենց լիակա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 550։

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 458։

տար անկախությունը, այլև իշխանությունը վերցրին բանվորների ու գյուղացիների ձեռքը։ Այդ ռեսպուբլիկաներն ապացույց և հաստատումն են այն բանի, որ Սովետական իշխանության գաղափարներն ու սկզբունքները մատչելի և անմիջապես իրագործելի են ո՛չ միայն այն երկրներում, որոնք արդյունաբերության տեսակետից զարգացած են, ո՛չ միայն սոցիալական այնպիսի հենարան ունեցող երկրներում, ինչպիսին պրոլետարիատն է, այլև այնպիսի հիմք ունեցող երկրներում, ինչպիսին գյուղացիությունն է։ Գյուղացիական Սովետների գաղափարը հաղթանակեց։ Իշխանությունը գյուղացիների ձեռքում ապահովված է. նրանց ձեռքումն են հողը, արտադրության միջոցները։ Գյուղացիական-սովետական Ռեսպուբլիկաների բարեկամական հարաբերությունները Ռուսաստանի սոցիալիստական ռեսպուբլիկայի հետ արդեն ամրապնդված են մեր քաղաքականության գործնական արդյունքներով»[1]։

Հայաստանի բոլոր աշխատավորները մեծ խանդավառությամբ ողջունեցին Սովետական իշխանության հաղթանակը երկրում։ Հայաստանի բոլոր վայրերում տեղի ունեցած միտինգներում և ժողովներում ժողովրդական լայն մասսաները խոստանում էին չխնայել իրենց կյանքը Սովետական իշխանության համար, սոցիալիզմի հաղթանակի համար։

Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում ջերմորեն ողջունեցին Սովետական Ադրբեջանի աշխատավորները, որոնք անմիջապես Սովետական Ռուսաստանի աշխատավորների հետ միասին օգնության եկան Սովետական Հայաստանին։ Սովետական իշխանության հաղթանակը ողջունեցին նաև Հյուսիսային Կովկասի ժողովուրդները։ Վլադիկավկազում (Զաուշիկաու) այդ առթիվ տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, որտեղ Ս. Մ. Կիրովը հանդես եկավ զեկուցումով սովետական կարգերի հաստատման մասին Հայաստանում։ Հանդիսավոր նիստը որոշեց ողջույն ուղարկել Հայաստանի աշխատավորներին իրենց հաղթանակի առթիվ։ Իրենց ողջույնն ուղարկեցին և մենշևիկյան ծանր լծի տակ տառապող Վրաստանի աշխատավորները։

Սովետական իշխանության հաստատմամբ նոր, լուսավոր դարաշրջան սկսվեց հայ ժողովրդի պատմության մեջ։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, Սովետական իշխանությունը փրկեցին հայ ժողովրդին նրան սպառնացող կործանումից, տվեցին

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 619։

նրան սոցիալիստական ազատագրություն և երջանիկ կյանք։ «Միայն Սովետական իշխանության դաղափարը Հայաստանին բերեց խաղաղության և ազգային վերածնունդի հնարավորություն»[1]։

Սովետական իշխանության հաստատումով Հայաստանում սկսեց զարգանալ նոր, սոցիալիստական արտադրահեղանակ և սոցիալիզմի տնտեսական օրենքների գործունեության համար լայն ասպարեզ բացվեց։ Սովետական իշխանությունը, հենվելով բանվորա-գյուղացիական ամուր դաշինքի վրա, ուժեղ պայքար տարավ ճնշելու և լիկվիդացնելու հասարակության մեռնող ուժերի դիմադրությունը և ապահովելու սոցիալիզմի հաղթանակը։ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո սկսվում է սոցիալիստական հայ ազգի ձևավորման պրոցեսը։ Հայ ժողովուրդը բռնեց զարգացման լուսավոր ուղին, շահագործումից և օտարի ճնշումից ազատ ուղին և այժմ սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին հաստատորեն գնում է առաջ, կառուցելով կոմունիստական հասարակարգ։

* * *

Դաշնակները իրենց տիրապետությունը Հայաստանում շարունակելու նպատակով 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում Անկարայի կառավարության հետ ապօրինի կերպով կնքեցին Հայաստանը անդամահատող և ստրկացնող հաշտության պայմանագիր։ Այդ խայտառակ պայմանագրով հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներ դաշնակները Հայաստանը փաստորեն գնում էին Թյուրքիայի լծի տակ, փոխարենը ստանալով նրա խոստումը՝ օգնել դաշնակներին, տապալելու Սովետական իշխանությունը Հայաստանում։

Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի տերիտորիան հավասարվում էր 1918 թ. Բաթումիի կոնվենցիայով նախատեսված տերիտորիային, Հայաստանը զինաթափվում էր և զրկվում բանակ ունենալու իրավունքից. նա զենքի տակ կարող էր պահել միմիայն 1500 զինվոր, 8 թնդանոթներով և 24 գնդացիրներով։ Թյուրքիային իրավունք էր վերապահվում իր ներկայացուցիչների միջոցով հսկողություն սահմանել այդ պահանջի կատարման վրա։ Պայմանագիրը իրավունք էր տալիս Թյուրքիային ռազմական գործողություններ վարել Հայաստանի տերիտորիայում, եթե նա այդ անհրաժեշտ

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 458։

կգտներ իր անվտանգության տեսակետից և նախատեսնում էր Թյուրքիայի օգնությունը դաշնակներին՝ ճնշելու ռևոլյուցիոն շարժումը երկրում ու կռվելու Սովետական Ռուսաստանի դեմ։ Սողալով թյուրքական զավթիչների ոտքի տակ, դաշնակները նրանց սվինների օգնությամբ ցանկանում էին վերականգնել իրենց արյունոտ տիրապետությունը Հայաստանում։

Սովետական Հայաստանի կառավարությունը Սովետական Ռուսաստանի օգնությամբ չեղյալ հայտարարեց Հայաստանը ստրկացնող այդ պայմանագիրը։

Թյուրքական բանակի կողմից գրավված Կարսի մարզի և Ալեքսանդրապոլի գավառի հայ բնակչության այն մասը, որը չկարողացավ փախչել, վայրագարար կոտորվում էր թյուրքական օկուպացիոն բանակի կողմից։ Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն անմիջապես մի շարք միջոցառումների դիմեց՝ դադարեցնելու թյուրքերի վայրագությունները։ Իր 1921 թ. հունվարի 7-ի և 18-ի նոտաներում, ուղղված քեմալական կառավարությանը, նա կտրուկ կերպով պահանջեց վերջ տալ կոտորածներին և ժողովրդի գույքի հափշտակմանը։ Հունվարի 7-ի նոտայում ասվում էր, որ «Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կառավարության կողմից ստացված ստույգ տեղեկությունների համաձայն Ալեքսանդրապոլի գավառում և շեղոք գոտում[1] ձեր օկուպացիոն զորքերի կողմից անընդհատ կատարվում են բռնություններ, կողոպուտ և սպանություններ հիշված վայրերի խաղաղ աշխատավոր բնակչության նկատմամբ։ Թյուրքական զորքերի կողմից գրավված բոլոր վայրերում գրավվում և Թյուրքիա է ուղարկվում Հայաստանի ՍՍՌ-ի պետական գույքը, թալանվում է մասնավոր գույքը և տընտեսությունը, քշվում-տարվում են գյուղացիների անասունները և բռնագրավվում են բնակչության պարենի վերջին պաշարները։ Թյուրքիա տանելու համար Նալբանդ կայարանում կենտրոնացվում է շրջակա գյուղերում բռնագրավված հացահատիկի խոշոր պաշար, որի հետևանքով այդ գյուղերի բնակիչները սովի, մահվան են դատապարտվում։ Բոլոր աշխատունակ տղամարդիկ բռնի կերպով իրենց հայրենի վայրերից դուրս են ուղարկվում և ձմռան եղանակին թեթև հագնված ծանր հարկադիր աշխատանքի են գործադրը-

---

[1] Դաշնակների և թյուրքերի միջև 1920 թ. նոյեմբերին կնքված զինադադարի համաձայն Ալեքսանդրապոլի գավառի մի մասը հայտարարվել էր «չեղոք գոտի»։

«վում»[1]։ Հունվարի 18-ի նոտայում ասվում էր. «...Ալեքսանդրապոլից վերջին ամսվա ընթացքում տարվել են և շարունակվում են տարվել կտրականապես ամեն ինչ՝ գյուղատնտեսական մեքենաներ, շոգեքարշեր, հեռագրական և հեռախոսային ապարատներ, ավտոմոբիլներ, մասնավոր մարդկանց գույքեր և այլն...»[2]։

Թյուրքական օկուպանտները ձմռան սոսկալի ցրտերին Ալեքսանդրապոլից և գյուղերից հավաքելով տղամարդկանց՝ հանում էին նրանց հագուստները և հագցնելով ալյուրի պարկերից կարված շորեր, քշում էին հարկադիր աշխատանքի դեպի Կարս, Սարիղամիշ ու Էրզրում։

1921 թ. հունվարի վերջերին Ալեքսանդրապոլից հայտնում էին, որ թյուրքերը օր-օրի վրա ավելի մեծ քանակությամբ «...սկսեցին անհայտացնել տղամարդկանց, որոնց մի մասի դիակները գտնվեցին Կաղաշի-պոստի ճանապարհի վրա և բոստաններում, մյուս մասից տեղեկություն ստացվեց Կարսից և Սարիղամիշից»[3]։

Ալեքսանդրապոլի գավառի երկրորդ շրջանի կոմիսարը Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեին ուղարկած իր զեկուցագրում հայտնում էր շրջանի Քավթառլու գյուղում թյուրքերի կողմից կատարված դաղանային սպանությունների մասին։ 1920 թ. դեկտեմբերի 26-ին գյուղն է մտնում թյուրքական զորքերի մի ջոկատ։ Ջոկատը գյուղում տեղավորելու համար թյուրքերը աշխատանքի են հանում մի խումբ գյուղացիների, որոնց թվում լինում են և ինը Կոմունիստ։ Աշխատանքը վերջանալուց հետո պարզվում է, որ կոմունիստները անհայտացել են։ Շրջանի կոմիսարը հետաքննություն է կատարում ու պարզում, որ կոմունիստներին սպանել են թյուրքական զինվորները և դիակները Քավթառլու գյուղի մի բնակչի սայլով գյուղից տարել են դուրս թաղելու և որպեսզի թաքցնեն կատարված ոճրագործության հետքերը, վերադարձին նրանք սպանել են նաև սայլի տիրոջը։ «Ինչպես այդ իմ կողմից բազմիցս հաստատված է,— հայտնում էր շրջանի կոմիսարը,— թյուրք զինվորները խիստ կարգապահության հետևանքով ոչինչ չեն անում առանց հրամանատարական կազմի գիտության, և այստեղից կարելի է եզրակացնել, որ մեր կոմունիստ ընկերները ամենավայրագ կերպով

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 9, թթ. 14—15։

[2] Նույն ֆոնդ, գ. 313, թ.թ. 69—70։

[3] Նույն տեղում, գ. 78, թ.թ. 76—77։

սպանվել են թյուրքական հրամանատարական կազմի գիտությամբ»[1]։

Ռումինական քաղաքացի Վ. Իոնեսկուն, որը չէր կարողացել հեռանալ Կարսից թյուրքերի կողմից այն գրավվելուց հետո, պատմում է, որ «...Կարսում նա թյուրքական բժիշկ Նուրի-բեյից իմացել է, որ քաղաքում սպանվել է 8 հազար հայ»։ Սակայն Վ. Իոնեսկուի կարծիքով «սպանվածների թիվը 10—12 հազարից պակաս չպիտի լիներ. դեռ մեկ ամիս հետո քաղաքի շրջակայքում կարելի էր հանդիպել բազմաթիվ դիակների»[2]։

Ոչ լրիվ տվյալներով թյուրքական օկուպանտների ձեռքով Կարսում և Ալեքսանդրապոլի գավառում սպանվել էին մոտ 30 հազար տղամարդ, 30 հազար կին և երեխա. բացի այդ, սովից մեռածների թիվը հասնում էր 32 հազարի։ Այդ վայրերից թյուրքերը հարկադիր աշխատանքի էին քշել Էրզրումի ուղղությամբ մոտ 15 հազար մարդ, որոնց մեծագույն մասը չվերադարձավ տուն։ Պետական և մասնավոր գույքի հափշտակումը չտեսնված չափերի էր հասել և կրում էր սիստեմատիկ բնույթ։ Տանում էին ամեն ինչ՝ սկսած պատուհանների, դռների շրջանակներից մինչև շոգեքարշերը, վագոնները, ավտոմոբիլները, հեռագրական, հեռախոսային ապարատները և գյուղատնտեսական գործիքները։ Ալեքսանդրապոլում ցերեկով օկուպանտների սայլը կանգնում էր այս կամ այն տան առջև, թյուրք վինովորները մտնում էին ներս և հանում իրենց ցանկացած իրերը։ Կարսի մարզից և Ալեքսանդրապոլի գավառից թյուրքերը տարել էին մեծ քանակությամբ անասուն և հացահատիկ։

1921 թ. ապրիլի 23-ին, Սովետական Ռուսաստանի օգնությամբ, թյուրքական օկուպացիայից ազատագրվեցին Ալեքսանդրապոլ քաղաքը և գավառը։

Այսպիսի բացառիկ ծանր պայմաններում Հայաստանում հաղթանակած երիտասարդ Սովետական իշխանությունը ձեռնամուխ եղավ նոր, սոցիալիստական կարգերի կառուցման մեծ գործին։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 4/114, դ. 217, թ. 81։ Նույն ֆոնդ, դ. 229, թ. 34։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ 1921 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐՈՒՄ

1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Հայաստանում սովետական կարգեր հաստատվեցին այն ժամանակ, երբ Սովետական Ռուսաստանն ապրում էր ռազմական կոմունիզմի վերջին շրջանը։ Ռազմական կոմունիզմը Սովետական Ռուսաստանում կիրառվեց քաղաքացիական կռիվների և օտարերկրյա իմպերիալիստների ռազմական ինտերվենցիայի տարիներին՝ 1918—1920 թվականներին։ Այն ժամանակ երկիրը գտնվում էր ծանր դրության մեջ։ Քայքայված վիճակում էին արդյունաբերությունը, տրանսպորտը և գյուղատնտեսությունը։ Զգացվում էր ամեն տեսակի մթերքների, ապրանքների և առաջին անհրաժեշտության կենսամթերքների խիստ պակասություն։ Ներքին և արտաքին կոնտրռևոլյուցիոն ուժերը դաշինքի մեջ մտնելով, վինքի ուժով կամենում էին կործանել Սովետական իշխանությունը։ Կատաղած թշնամիներին ջախջախելու համար անհրաժեշտ էր արդյունաբերությունը ապահովել հումքով, Կարմիր Բանակը՝ սպառազինությամբ, բնակչությունը՝ կենսամթերքներով և այլ անհրաժեշտ ապրանքներով։ Մինչդեռ Ռուսաստանի պարենային, հումքային և վառելանյութի շրջանների զգալի մասը դեռևս գտնվում էր հակառակորդի ձեռքում, որի հետևանքով ավելի էր բարդացել Սովետական իշխանության վիճակը։ Նման պայմաններում հրամայական անհրաժեշտություն էր մոբիլիզացնել բոլոր միջոցները, կուտակել պաշարներ, նախա-

պատրաստվել երկարատև և լուրջ պատերազմի։ Անհրաժեշտ էր ամրապնդել Սովետական իշխանությունը, ջախջախել և մեր Հայրենիքի սահմաններից դուրս շպրտել թշնամական զորքերին, ջախջախել ներքին կոնտրռևոլյուցիոն ուժերին։

Կոմունիստական պարտիան և Սովետական իշխանությունը կիրառելով ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, ամբողջ թիկունքը ի սպաս դրեցին ռազմաճակատին, ամրապնդեցին մեր երկրի բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ռազմա-քաղաքական դաշինքը, ապահովեցին սովետական ժողովրդի հաղթանակը։ Այդ ռազմա-քաղաքական դաշինքի հիմքը հանդիսանում էր այն, որ գյուղացիությունը պրոլետարիատի դիկտատուրայի շնորհիվ ստացավ հող և ամեն տեսակի պաշտպանություն ընդդեմ կալվածատերերի և կուլակների, որոնք ինտերվենտների հետ միացած, պայքարում էին հին կարգերի վերականգնման համար։ Իսկ բանվոր դասակարգը գյուղացիությունից ստացավ հաց և այլ կենսամթերքներ՝ պարենամատակարարման կարգով։ Պարենամատակարարումը պետական մթերումների հատուկ ձև էր, որով գյուղացիական տընտեսությունների ստացած ընդհանուր բերքից նրանց թողնելով անհրաժեշտ պաշար՝ սննդամթերք, սերմացու,— ամբողջ ավելցուկը Սովետական պետությունը վերցնում էր պարտադիր կարգով և կայուն գներով։ Պարենամատակարարման և հացի առևտրի մենաշնորհի կիրառումով պետական պահեստներում ղգալի չափով ավելացան հացի և գյուղատնտեսական այլ մթերքների պաշարները, որը Սովետական պետության կողմից օգտագործվեց Կարմիր Բանակի և արդյունաբերական կենտրոնների պահանջներն ապահովելու համար։

Բնորոշելով Սովետական Ռուսաստանի բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ռազմա-քաղաքական դաշինքը, Վ. Ի. Լենինը գրել է. «Սովետական Ռուսաստանում պրոլետարիատի ու գյուղացիության ճիշտ փոխհարաբերության հիմքը ստեղծված է 1917—1921 թվականների դարաշրջանով, երբ կապիտալիստների ու կալվածատերերի արշավանքը թե ամբողջ համաշխարհային բուրժուազիայի, թե մանր-բուրժուական դեմոկրատիայի (էսեռների ու մենշևիկների) բոլոր պարտիաների աջակցությամբ ստեղծեց, ամրապնդեց և ձևակերպեց պրոլետարիատի ու գյուղացիության ռազմական դաշինքը հօգուտ Սովետական իշխանության»[1]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, Երևան, 1952, էջ 587։

Առանց այդպիսի դաշինքի Սովետական իշխանությունը անկարող կլիներ հաղթանակով դուրս գալ քաղաքացիական կռիվներից և օտարերկրյա ինտերվենտներին ջախջախել ու դուրս շպրտել մեր երկրից։

Ռազմական կոմունիզմի տարիներին սովետական ռեսպուբլիկաները օղակված էին իմպերիալիստական պետությունների կողմից և ներկայացնում էին մի պաշարված ճամբար. երկրի կյանքում ամեն ինչ հարմարեցված էր պատերազմական պահանջներին, ներքին կոնտրռևոլյուցիոն ուժերի և օտարերկրյա ինտերվենտների դեմ մղվող կռվում հաղթանակը ապահովելու գործին։ Այդ պատճառով սովետական երկրի էկոնոմիկան ռազմական կոմունիզմի ժամանակաշրջանում սահմանափակված էր ռազմական ինդուստրիան զարգացնելով, հետևապես Կոմունիստական պարտիան ու Սովետական պետությունը ժամանակավորապես չէին կարող ուշադրությունը կենտրոնացնել տնտեսական շինարարության վրա։

Հայաստանի Սովետական իշխանությունը, հետևելով Սովետական Ռուսաստանի օրինակին և օգտագործելով նրա ավելի քան երեք տարվա փորձը, իր գոյության առաջին շրջանում— 1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. գարունը— կիրառեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը։ Չնայած կարճատևությանը, այնուամենայնիվ, ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումով, Հայաստանում ապահովվեց Սովետական իշխանության գոյությունը և ամրապնդումը։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման ժամանակ երկիրը գտնվում էր խիստ ծանր պայմաններում։ Դեռևս շարունակվում էր դաշնակների արյունոտ տիրապետության ժառանգություն՝ տնտեսական սուր ճգնաժամը։

Երիտասարդ սովետական ռեսպուբլիկայի դրությունն ավելի էր բարդացել այն պատճառով, որ իր վերջին օրերն ապրող վրացական մենշևիկյան «կառավարությունը» բլոկադայի էր ենթարկել Սովետական Հայաստանը՝ կտրելով երկաթուղային կապը նրա և Սովետական Ռուսաստանի ու Ադրբեջանի միջև։ Լոռու մի մասը՝ «չեզոք գոտին» գտնվում էր մենշևիկների իշխանության տակ (մինչև 1921 թ. փետրվարի կեսերը), Զանգեզուրում շարունակում էին իշխել դաշնակները (մինչև 1921 թ. հուլիսի կեսը), իսկ Ալեքսանդրապոլն իր գավառով և Հայաստանի միակ երկաթուղու կարևոր ուղեմասը դեռևս գտնվում էին թյուրքական զավթիչների (քեմալականների) ձեռքում (մինչև 1921 թ. ապրիլի 23-ը)։

Այդպիսի ծանր պայմաններում Հայաստանի Սովետական իշխանության առաջ ծառացած էին քաղաքական, տնտեսական և կուլտուրական բնույթի բազմաթիվ խնդիրներ, որոնք պահանջում էին իրենց անհետաձգելի լուծումը։ Այդ խնդիրների շարքում կարևորագույնը պրոլետարիատի դիկտատուրայի, Սովետական իշխանության օրգանների ստեղծումն ու ամրապնդումն էր, առանց որի անհնարին էր մյուս բոլոր խնդիրների իրականացումը, անհնարին էր հետագա առաջընթացը։

Սովետական ապարատի կազմակերպումն ու ամրապնդումը Հայաստանում սկսվեց այն ժամանակ, երբ արդեն Սովետական Ռուսաստանը թևակոխել էր իր գոյության չորրորդ տարին և այդ ուղղությամբ կուտակել էր հարուստ փորձ։ Այս հանգամանքը խոշոր նշանակություն ունեցավ Հայաստանի, ինչպես նաև մյուս սովետական ռեսպուբլիկաների համար։

Հայաստանի Ռևոլյուցիոն Կոմիտեի (Ռևկոմի) դեկրետներով կազմակերպվում են Հայկական ՍՍՌ Ներքին Գործերի, Ռազմական, Արդարադատության, Լուսավորության, Հողագործության, Ֆինանսների, Պարենավորման, Աշխատանքի, Առողջապահության և Սոցիալական ապահովագրության ժողովրդական կոմիսարիատներ։ Հաղթված, բայց տակավին չզինաթափված կոնտրռևոլյուցիոն ուժերի դեմ պայքարելու նպատակով, Հայաստանի Ռևկոմի 1920 թ. դեկտեմբերի 6-ի դեկրետով, կազմակերպվում է Արտակարգ Հանձնաժողով։

1920 թ. դեկտեմբերի 13-ին լույս է տեսնում Հայկական ՍՍՌ ՆԳԺ Կոմիսարիատի հրամանը՝ հին վարչական հիմնարկությունների լիկվիդացման մասին։ «Սույն հրամանը հրատարակելու օրվանից,— ասված է վերոհիշյալ հրամանում,— վերացվում են հետևյալ հիմնարկություններն ու պաշտոնները՝ նահանգապետությունները, քաղաքային ինքնավարությունները, գավառական կոմիսարները, նախկին Ներքին Գործերի Նախարարության արտակարգ լիազորները, միլիցիայի տեսուչները, նահանգական ատյանները, Հանրապետության միլիցիայի պահեստը, բոլոր նրանց մոտ գտնված գրասենյակներով և շտատներով»[1]։ Դրանից մի քանի օր առաջ, դեկտեմբերի 6-ին հրապարակվել էր Հայաստանի Ռևկոմի հրամանը, որով իրենց լիազորություններից զրկվել էին դաշնակ-

---

[1] ՀՍՌՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1921, էջ 11։

ցական ջախջախված կոնտրռևոլյուցիոն «կառավարության» արտաքսահմանում գտնված բոլոր դիվանագիտական ներկայացուցչությունները և միսիաները[1]։ Ռևկոմի դեկտեմբերի 21-ի դեկրետով Սովետական Հայաստանի սահմաններում «վերացվում է ռուսական կայսրության «Հավաք օրինաց»-ը այն բոլոր փոփոխություններով հանդերձ, որ մտցրել էին ժամանակավոր կառավարությունը, Անդրբրկովկասյան սեյմը և Հայաստանի Խորհուրդը, պառլամենտն ու կառավարությունը»[2]։ Դրա փոխարեն Հայաստանում գործող օրենքներ են հայտարարվում Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Ռեսպուբլիկայի օրենքները (որոշ փոփոխություններով՝ համապատասխան տեղական պայմաններին)։

Հայկական ՍՍՌ Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատի 1920 թ. դեկտեմբերի 18-ի հրամանով լիկվիդացվում են հին դատարանները, որոնք իրենց ամբողջ գործունեությամբ ուղղված էին աշխատավոր ժողովրդի դեմ՝ հանուն տիրապետող դասակարգերի շահերի պաշտպանության։ Հին դատարանների փոխարեն Արդժողկոմատի դեկտեմբերի 22-ի հրամանով ստեղծվում են նոր, սովետական ժողովրդական դատարաններ[3]։ Հայաստանի Ռևկոմի դեկրետով Ռևկոմին կից կազմակերպվում է Գերագույն Ռևոլյուցիոն Տրիբունալ, իսկ Արդժողկոմատին կից՝ ռևոլյուցիոն տրիբունալներ։ Եկեղեցին անջատվում է պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց։

Հայկական ՍՍՌ ՆԳԺ Կոմիսարիատի հրամանով վերացվում են դասերը, դասային բոլոր արտոնություններն ու սահմանափակումները։ «Այժմ Հայաստանում գոյություն ունեցող դասերը և քաղաքացիների դասային բաժանումները,— ասված է հրամանի առաջին կետում,— դասային արտոնությունները և սահմանափակումները, դասային կազմակերպությունները և հիմնարկությունները, ինչպես նաև քաղաքացիական բոլոր աստիճանները վերացվում են»[4]։

Աղդայնացվում են մասնավոր բանկերը, Եսապովի կոնսերվի գործարանը[5], Հայաստանի վրայով անցնող Հնդկաստան—Եվրոպա հեռագրագիծը և այլն։

---

1 ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1921, էջ 7։

2 Նույն տեղում, էջ 25։

3 Նույն տեղում, էջեր 20, 21, 27։

4 Նույն տեղում, էջ 86։

5 Մյուս մասնավոր գործարանների պետականացումը տեղի ունեցավ քիչ ավելի ուշ, 1921 թ. ապրիլից հետո։

Այդ բոլորին զուգընթաց, Հայաստանի Սովետական իշխանությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ է լինում սովետական նոր ապարատի կազմակերպման, ամրապնդման և երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման գործին։

Որպես իշխանության կառավարման տեղական օրգաններ, Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից կազմակերպվում են գյուղական, գավառակային և գավառային ռևկոմներ։ Երկրի ներքին գործերի բարձրագույն վարչական մարմնի ֆունկցիան հանձնարարված էր Հայկական ՍՍՌ ՆԳԺ Կոմիսարիատին։ Նրան էր հանձնարարված իշխանության կազմակերպումը տեղերում, երկրի ամբողջ վարչական կազմի կենտրոնացումը, բոլոր տեղական, գավառական և քաղաքային ռևկոմների վարչական ղեկավարումը, երկրի ներքին վարչական կյանքին վերաբերող բոլոր հրամանների ու որոշումների հրատարակումը [1]։ Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը մեծ աշխատանքներ կատարեց նոր, սովետական վարչական ապարատի կազմակերպման, ղեկավարման և ամրապնդման ուղղությամբ։

Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից սկսվեց Սովետական Հայաստանի Կարմիր Բանակի կազմակերպումը։ Նրա սաղմնավորումն սկսվել էր դեռևս Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց առաջ։ 1920 թ. Մայիսյան հերոսական ապստամբության ճնշումից հետո Երևանի, Ալեքսանդրապոլի, Իջևանի, Շամշադինի և Հայաստանի մի շարք այլ շրջանների ապստամբած ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների որոշ մասը, դաշնակների տեռորից պաշտպանվելու նպատակով, անցել էր Սովետական Ադրբեջան, որտեղ 1920 թ. կեսերին հիշյալ ուժերից ձևավորվել էր Կարմիր Բանակի հայկական առաջին գունդը։ Բաքվում էր գտնվում նաև Հայաստանի Կոմունիստական պարտիայի ԿԿ, որն այդ ժամանակ կոչվում էր Արտասահմանյան բյուրո։

Կարմիր Բանակի հայկական առաջին գնդի կազմակերպումը տեղի է ունեցել 11-րդ բանակի Ռազմա-ռևոլյուցիոն խորհրդի օգնությամբ և Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կենտկոմի ղեկավարությամբ։ Գնդի կազմակերպմանը և ամրապնդմանը մեծ օգնություն է ցույց տվել Բաքվի ռևոլյուցիոն պրոլետարիատը։

---

[1] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, էջ 8—9։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, այդ գունդը դառնում է այն կորիզը, որի հիման վրա ստեղծվում և ամրապնդվում է սովետական երկրի հզոր Կարմիր Բանակի ջոկատներից մեկը՝ Սովետական Հայաստանի Կարմիր Բանակը։ Հայաստանի Կարմիր Բանակի ձևավորման ժամանակ մարտական-քաղաքական դպրոց անցած վերոհիշյալ գունդը բաժանվում է մասերի և նրանցից մեկական գումարտակ ուղարկվում է նոր կազմակերպված մյուս գնդերը։ Սովետական Հայաստանի Կարմիր Բանակի ձևավորումը տեղի է ունեցել թշնամու դեմ մղված հերոսական մարտերում։ «Հայկական լեռնա-հրաձգային դիվիզիան,— ասված է 1935 թվականին դիվիզիայի 15-ամյակի առթիվ, ՍՍՌՄ Պաշտպանության ժողկոմ ընկեր Կ. Ե. Վորոշիլովի հրամանում,— բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի ամենահին զորամասերից մեկը, ծնունդ է առել Հայաստանի աշխատավորների պարտիզանական ջոկատներից ու մարտական խմբերից, Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի ժամանակ»[1]։

1920 թ. դեկտեմբերի 5-ից սկսվում են Հայկական ՍՍՌ Ռազմական Ժողովրդական Կոմիսարիատի կազմակերպման աշխատանքները։ Կոմիսարիատը կազմակերպման առաջին իսկ օրվանից ձեռնամուխ է լինում Սովետական Հայաստանի Կարմիր Բանակի ամրապնդման աշխատանքներին։ Հաստատվում է զինվորական կոմիսարների ինստիտուտ, բանակից հեռացվում և արտաքսվում է սովետական կարգերի նկատմամբ թշնամաբար տրամադրված ցարական և դաշնակցական բանակից մնացած սպայությունը[2]։ Ռազմական Ժողովրդական Կոմիսարիատի 1920 թ. դեկտեմբերի 12-ի հրամանով ՀՍՍՌ Կարմիր Բանակում հիմնվում է Քաղաքական-վարչություն։ ՀԿ(բ)Պ Կենտկոմի որոշմամբ 100 կոմունիստներ ուղարկվում են քաղաքական աշխատանքի հայկական դիվիզիայում, որը Հայկական ՍՍՌ Կարմիր Բանակի առաջին զորամասերից էր։ Այդ ձեռնարկումը խոշոր չափով նպաստեց դիվիզիայի քաղաքական-բարոյական վիճակի ամրապնդմանը, որը ցայտուն կերպով դրսևորվեց 1921 թվականի քաղաքացիական կռիվների ընթացքում։

---

[1] «Խորհրդային Հայաստան», № 125, 1 հունիսի, 1935։

[2] Պետք է նշել, որ այս գործը պահանջված հետևողությամբ և արագությամբ չկատարվեց, որից օգտվեցին դաշնակները 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի նախապատրաստման ժամանակ։ Սպայության մի մասին հաջողվեց պատսպարվել և անցնել դաշնակցական բանդաների կողմը, որոնք այդ ժամանակ կենտրոնացած էին Արագածի ստորոտում և Բաշ-Գյառնիում։

Սովետական Հայաստանի Կարմիր Բանակը կազմակերպվից երկրի տնտեսական դժվարությունների և սովի ծանր օրերին։ Ձնայած դրան, նա արժանացավ աշխատավոր ժողովրդի խանդավառ սիրուն և նյութական ու բարոյական մեծ օգնությանը։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ամենուրեք միտինգներ էին գումարում, ողջունում էին Կարմիր Բանակի կազմակերպումը և ամեն կերպ օգնում էին նրան։ 1920 թ. դեկտեմբերի 11-ին Աշտարակում և Օշականում տեղի ունեցած աշխատավոր գյուղացիների միտինգներում ընդունված բանաձևում ասված է. «Օշականում և Աշտարակում կազմակերպված միտինգներում հասարակությունը լսելով զեկուցում Կարմիր Բանակի դերի և նրա պարենավորման մասին, խանդավառությամբ որոշեց հացի վերջին պատառը, այլ մթերքներ և սայլերը, տրամադրել Կարմիր Բանակի կարիքների համար»[1]։

Նման որոշումներ են ընդունել նաև Երևանի, Ղամարլուի (այժմ Արտաշատ), Ներքին Ախտալի, Էջմիածնի և մի շարք այլ շրջանների աշխատավորների ժողովները։

Հայաստանի բանվորների և գյուղացիների ամենալայն աջակցությամբ, Հայկական ՍՍՌ Կարմիր Բանակը, ամրապնդելով իր շարքերը, 1921 թվականի քաղաքացիական կռիվների ընթացքում մարտական առաջին քննությունն է բռնում։

Նոր ստեղծված Սովետական իշխանությունն անմիջապես ձեռնամուխ եղավ ագրարային հարցի լուծմանը։ Հայաստանի Ռևկոմի 1920 թ. նոյեմբերի 29-ի դեկլարացիայում արդեն տրված էին ագրարային հարցի լուծման հիմնական սկզբունքները, որոնք բխում են Սովետների Համառուսաստանյան 2-րդ համագումարի՝ հողի մասին ընդունած դեկրետից։ Դրան հետևող մի շարք դեկրետներով Ռևկոմը քայլ առ քայլ իրականացնում էր այդ սկզբունքները։ 1920 թ. դեկտեմբերի 28-ին լույս է տեսնում Ռևկոմի դեկրետը հողերի ազգայնացման մասին։ Դեկրետում ասված է. «Բանվորագյուղացիական աղքատիկությունի հողազուրկ և սակավահող մասը հողաբաժիններով ապահովելու և գյուղատնտեսությամբ զբաղվող ցանկացողներին հողեր բաշխելու նպատակով, այլև հանրապետության բոլոր կարիքները բավարարելու համար, արքունական, նպելի, եկեղեցական, վանքային, վակուֆային[2], մեչետային, իրավա-

---

[1] «Կոմունիստ» (հայերեն), օրգան ՀԿ(բ)Պ Կենտկոմի և ՀՍՍՌ Ռևկոմի, № 8, Երևան, 14 դեկտեմբերի, 1920։

[2] Վակուֆային հող—մահմեդական հասարակությանը կամ հիմնարկությանը պատկանող հողամաս, կալվածք։

բանական անձերի և մասնավոր հողերը դառնում են Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության սեփականություն»[1]։

Ռևկոմի 1921 թ. հունվարի 10-ի և 11-ի դեկրետներով ազգայնացվում են բոլոր անտառները և ամբողջ հողի ընդերքը[2]։

Հողային հարցի լուծման և մյուս կարևորագույն ձեռնարկումների շնորհիվ չքավոր գյուղացիությունն ավելի ամուր կերպով համախմբվեց Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության շուրջը։ Միջակ գյուղացիությունն սկսեց ավելի մոտ կանգնել Սովետական իշխանությանը և հաստատապես օժանդակել նրան։

Սովետական իշխանությունը լուծեց նաև ազգային հարցը, միանգամ ընդմիշտ անցյալի գիրկը նետելով ազգային երկպառակությունը և թշնամանքը, որը շահագործողների տիրապետության ժամանակ հրահրվում էր ժողովուրդների միջև։ Դաշնակներն իրենց արյունոտ տիրապետության երկու և կես տարիների ընթացքում Հայաստանում դազանաբար հալածում, թալանում ու ոչնչացնում էին ադրբեջանական և մյուս ազգերին պատկանող բնակչությանը։ Նրանց մնացած մասը մասսայաբար հեռանում էր Հայաստանից իր գոյությունը պահպանելու համար։

Դաշնակները, մենշևիկները և մուսավաթականները վարելով ագրեսիվ նացիոնալիզմի քաղաքականություն, հայ, վրացի, ադրբեջանցի և Անդրկովկասի մյուս ժողովուրդներին կռվի էին հանել միմյանց դեմ։

Նրանք այդ կռիվներում ոչնչացրին տասնյակ հազարավոր աշխատավորներ։ 1921 թ. հուլիսի 6-ին Թիֆլիսի պարտիական կազմակերպության ընդհանուր ժողովում տված զեկուցման մեջ, անդրադառնալով այդ հարցին, Ի. Վ. Ստալինը ասել է. «Ըստ երևույթին, ակներևորեն նացիոնալիստական կառավարությունների երեք տարվա գոյությունը Վրաստանում (մենշևիկներ), Ադրբեջանում (մուսավաթականներ), Հայաստանում (դաշնակներ) զուր չի անցել։ Այդ նացիոնալիստական կառավարությունները, իրենց նացիոնալիստական քաղաքականությունը վարելով, աշխատավորության մեջ ագրեսիվ նացիոնալիզմի ոգով աշխատելով, վերջապես, բանն այնտեղ հասցրին, որ այդ փոքրիկ երկրներից յուրաքանչյուրը շրջապատվեց թշնամական նացիոնալիստական մթնոլորտի օղակով, որը Վրաստանին և Հայաստանին զրկեց ռուսական հացից ու ադրբեջանա-

---

[1] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1921, էջ 21։

[2] Նույն տեղում, էջ 61—63։

-կան նավթից, իսկ Ադրբեջանին ու Ռուսաստանին՝ Բաթումի վրա-
-յով եկող ապրանքներից։ Ես արդեն չեմ խոսում զինված ընդհա-
-րումների (վրացա-հայկական պատերազմ) և կոտորածի (հայ-թա-
-թարական), որպես նացիոնալիստական քաղաքականության բնա-
-կան հետևանքների մասին»[1]։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Սովետական իշխանությունը Հայաստանում կիրառելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի քաղաքականություն, հռչակեց բոլոր ազգերի իրավահավասարություն՝ հիմնված բոլոր աշխատավորների դասակարգային համերաշխության լիակատար դրսևորման վրա։ Սոցիալիզմի համար մղվող պայքարում ամրապնդվեց տարբեր ազգերի աշխատավորների եղբայրական, խաղաղ և պատմության մեջ իր նմանը չունեցող համագործակցությունը։ Դաշնակների հալածանքների պատճառով Հայաստանից Ադրբեջան և այլ վայրեր փախած ադրբեջանական բնակիչները Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից հետո վերադարձան իրենց բնակավայրերը։ Սովետական պետությունը նրանց նյութական և ամեն տեսակի օգնություն ցույց տվեց վերականգնելու ավերված գյուղերը և կարգավորելու իրենց տնտեսությունը։

Հայաստանի Ռևկոմի 1920 թ. դեկտեմբերի 6-ի դեկրետով ռեսպուբլիկայի սահմաններում հայերենը ճանաչվում է որպես պետական լեզու։ Հայկական դպրոցներին զուգընթաց բացվում են ադրբեջանական, ռուսական դպրոցներ։ Ազգային լեզուներով սկսվում են հրատարակվել թերթեր ու գրականություն։

Առաջին իսկ օրերից Սովետական իշխանությունը Հայաստանում խոշոր ձեռնարկումներ սկսեց նաև կուլտուրական շինարարության բնագավառում։ Այդ աշխատանքը կազմակերպելու և ղեկավարելու համար ստեղծվեց Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատ։ Հայաստանի Ռևկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետով պետական սեփականություն են հայտարարվում և հանձնվում Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատին «Բոլոր ազգության հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկությունները (դպրոցները, հնագիտական և աղգագրական թանգարանները, մատենադարաններն ու տպարանները) իրենց ամբողջ շարժական և անշարժ գույքով»[1]։ Կազմակերպ-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, Երևան, 1948, էջ 106—107։

[2] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1921, էջ 16։

վում են Երևանի Պետական համալսարանը և մի շարք նոր դպրոցներ ու կուլտուրական հաստատություններ։

Հայաստանի ժողովրդական տնտեսությունը վերականգնելու և այն կազմակերպելու նպատակով ՀՍՍՌ Ռևկոմի 1921 թ. հունվարի 21-ի դեկրետով Ռևկոմին կից ստեղծվում է Ժողովրդական Տնտեսության խորհուրդ (Ժողտնտխորհ)։

Հայաստանի ժողովրդական տնտեսությունն այդ ժամանակաշրջանում գտնվում էր ծայրահեղ քայքայված վիճակում։ Այդ տնտեսությունը, որը ցարիզմի տիրապետության ժամանակաշրջանում, շնորհիվ վերջինիս գաղութային ռեժիմի, գտնվում էր տնտեսական զարգացման ցածր մակարդակի վրա, դաշնակների տիրապետության օրով, նրանց ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով խսպառ կազմալուծվել էր։

Սովետական Հայաստանի դրությունն ավելի էր բարդացել նաև նրանով, որ, ինչպես նշեցինք, այդ ժամանակ Ալեքսանդրապոլն իր դավառով դեռևս մնում էր թյուրքական զավթիչների ձեռքում, որոնք այնտեղ էին մտել 1920 թ. նոյեմբերի 7-ին։ Նրանք բարբարոսաբար հետապնդում և սպանում էին տեղական բնակչությանը, կողոպտում և հափշտակում էին բանվորների ու գյուղացիների ապրուստի վերջին միջոցները, սովի մատնելով նրանց, թալանում և ոչնչացնում էին այն նյութական արժեքները, որոնք ստեղծված էին աշխատավորության քրտինքով։ Թյուրքական զավթիչների բարբարոսությունները գնալով ավելի ու ավելի խստանում էին։

Այս ծանր օրերին Սովետական Ռուսաստանը դարձյալ իր եղբայրական օգնության ձեռքն է մեկնում հայ ժողովրդին, սանձահարելով թյուրքական զավթիչների բռնություններն ու գազանությունները։

Ողևորված Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ, ամենածանր պայմաններում գտնվող Շիրակի աշխատավորությունը շարունակում է իր պայքարը թյուրքական զավթիչների դեմ։ Սովետական Ռուսաստանի հերոսական 11-րդ բանակի զորամասերը 1921 թ. ապրիլի 23-ին մտնում են Ալեքսանդրապոլ։ Թյուրքական զավթիչները դուրս են շպրտվում Ալեքսանդրապոլից ու նրա դավառից։

Վրաստանի մենշևիկյան կառավարությունը իր հերթին թշնամական դիրք էր բռնել Սովետական Հայաստանի նկատմամբ։ Այդ ժամանակ մենշևիկյան Վրաստանում էին կենտրոնացած Կովկասի կոնտրռևոլյուցիոն ուժերը, ինչպես նաև ջախջախված ռուսական

սպիտակգվարդիական տականքների որոշ մասը։ Մենշևիկները, «Վրաստանը դարձնում էին եվրոպական իմպերիալիզմի մի գաղութ և պայքարի պատվար՝ Սովետական իշխանության դեմ, իսկ վրաց ժողովրդին հանձնում էին ստրկության իմպերիալիստների ձեռքը»[1]։ Սովետական Հայաստանին հարվածելու, և սովետական կարգերը տապալելու նպատակով, ինչպես նշեցինք վերևում, մենշևիկները բլոկադա էին հայտարարել նրան։ Հակառակ 1920 թ. մայիսին Սովետական Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված պայմանագրի, որով նախատեսված էր ազատ տրանզիտ Վրաստանի վրայով Հայաստան ուղարկվող ապրանքների համար, վրաց մենշևիկները փակել էին երկաթուղային ճանապարհները Ռուսաստանից և Ադրբեջանից Հայաստան ուղարկվող ապրանքներով ու կենսամթերքով բեռնված գնացքների համար։

Վրացական մենշևիկների սանձարձակությունն այն աստիճանի էր հասել, որ նրանք արգելում են Հայաստան մեկնել և մի քանի օր Թիֆլիսում են պահում Հայաստանում Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի գնացքը, որը հնարավորություն է ստանում մեկնել Հայաստան միայն Սովետական Ռուսաստանի կառավարության վճռական միջամտությունից հետո։

Պրոլետարական Բաքվի Սովետը, մենշևիկյան Վրաստանի կողմից Սովետական Հայաստանի նկատմամբ ցույց տված այդ վարմունքի կապակցությամբ 1920 թ. դեկտեմբերին կտրական բողոք է ուղարկում մենշևիկյան կառավարությանը, հայտարարելով, որ Բաքվի Սովետը «ստիպված է վերաքննության առնել Վրաստանի հետ կնքված առևտրական դաշինքը՝ նավթ բաց թողնելու վերաբերմամբ»[2]։ Սովետական Ռուսաստանի և Սովետական Ադրբեջանի միջամտության շնորհիվ մենշևիկյան Վրաստանի վրայով բաց են թողնվում Հայաստան մեկնող մի շարք գնացքներ։ Սակայն մենշևիկները իրենց բլոկադան Հայաստանի նկատմամբ չվերացրին և ամեն անգամ Հայաստան մեկնող գնացքների համար խոչընդոտներ էին ստեղծում մինչև սովետական կարգերի հաստատումը Վրաստանում։

Հայաստանի սովետական կարգերի դեմ իրենց կատաղի պայ-

---

[1] Համկ(բ)Պ Կենտկոմի և ՍՍՌՄ ԺԿՍ-ի ողջույնից՝ Վրաստանում սովետական կարգեր հաստատելու 20-ամյակի առթիվ, «Սովետական Հայաստան», 25 փետրվարի, 1941։

[2] «Կոմունիստ», № 16, 24 դեկտեմբեր, 1920։

քարն էին շարունակում նաև Զանգեզուրում ժամանակավորապես ծպտված դաշնակցական ոհմակները։ Իրենց ավանտյուրիստական իշխանությունը վերականգնելու նպատակով նրանք նախապատրաստվում էին միավորելու բոլոր կոնտրռևոլյուցիոն ուժերը և հարվածելու Հայաստանի Սովետական Ռեսպուբլիկային։

Նման դժվարին պայմաններում Հայաստանի աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ լծվում են երկրի քայքայված տնտեսության վերականգնման գործին, սոցիալիզմի կառուցման վեհ ու պատմական աշխատանքներին։

Քայքայված տնտեսությունը վերականգնելու և սոցիալիստական շինարարությանն օժանդակելու նպատակով, այդ ժամանակ, Սովետական Ռուսաստանի օրինակով, Հայաստանում լայնորեն ծավալվում են կոմունիստական շաբաթօրյակները՝ հազարավոր աշխատավորների մասնակցությամբ։ Առաջին շաբաթօրյակը Երևանում տեղի է ունենում 1920 թ. դեկտեմբերի 25-ին։ 1921 թ. հունվարի 1-ի շաբաթօրյակին Երևանում մասնակցում են 1500-ից ավելի աշխատավորներ[1]։ Այդպիսի շաբաթօրյակներ են տեղի ունենում նաև Սովետական Հայաստանի մյուս գավառներում։ Նույն թվականի մայիսի մեկին Ալավերդում տեղի ունեցած շաբաթօրյակին մասնակցում են ավելի քան 500 բանվորներ ու ծառայողներ։

Սոցիալիստական աշխատանքի խանդավառությունը համակում է Հայաստանի բանվոր դասակարգին, որը սովետական կարգերի ամրապնդման համար մղվող պայքարում իր ետևից տանում է աշխատավոր գյուղացիությանը և ինտելիգենցիային։

Չնայած Սովետական իշխանության ու նրա ապարատի ամրապնդման ուղղությամբ կատարված սկզբնական ձեռնարկումներին, այնուամենայնիվ ռեսպուբլիկայում դրությունը դեռևս ծանր էր և այն շարունակվեց ու ավելի բարդացավ 1921 թ. փետրվարին Հայաստանում սկսված քաղաքացիական կռիվների հետևանքով։

2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1921 ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԱՅԴ ԿՌԻՎՆԵՐՈՒՄ

1921 թվականին Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվները կարելի է բաժանել երեք էտապի։

---

[1] «Կոմունիստ», № 25, Երևան, 6 հունվարի, 1921։

Առաջին էտապն ընդգրկում է Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կովկասյան Բյուրոյի (Կավբյուրո) ցուցումներով և Հայաստանի ու Վրաստանի բոլշևիկների անմիջական ղեկավարությամբ փետրվարի 11-ին Լոռվա «չեղոք գոտում» վրացական մենշևիկյան կառավարության դեմ սկսած զինված ապըստամբությունը։

Երկրորդ էտապն սկսվում է օտարերկրյա իմպերիալիստների գործակալ, բանվորների ու գյուղացիների կատաղի թշնամի դաշնակների փետրվարյան ավանտյուրայով, որը տևում է մինչև 1921 թ. ապրիլի 2-ը։

Երրորդ էտապն ընդգրկում է փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից հետո Զանգեզուրի ազատագրման համար մղված կռիվները (ապրիլ-հուլիս), որոնք ավարտվում են Կարմիր Բանակի հաղթանակով և դաշնակցական կոնտրռևոլյուցիայի վերջնական ջախջախմամբ։

Համառոտակի ծանոթանանք այդ էտապների հետ։

Օգտագործելով դաշնակների և մենշևիկների միջև եղած տերիտորիալ վեճերը, անգլո-ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիստները ամեն կերպ աշխատում էին ամրապնդել իրենց դիրքերը Անդրկովկասում, որպես ռազմա-ստրատեգիական և տնտեսական կարևորագույն հենակետ՝ ընդդեմ Սովետական Ռուսաստանի։ Այդ վեճերը առանձնապես սրվել էին 1918—1919 թվականներին Բորչալուի գավառի վերաբերյալ։ Դա հարմար առիթ էր անգլո-ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիստների համար, Անդրկովկասում իրենց նվաճողական դիրքերը ամրապնդելու նպատակով։ 1919 թ. հունվարի 9—17-ը Թիֆլիսում Անտանտայի ներկայացուցիչների ղեկավարությամբ տեղի է ունենում դաշնակների և մենշևիկների բուրժուա-նացիոնալիստական մարիոնետային կառավարությունների ներկայացուցիչների կոնֆերանսը, որը քննության է առնում վիճելի տերիտորիայի՝ Բորչալուի գավառի հարցը։ Կոնֆերանսի աշխատանքները վերջանում են նրանով, որ անգլո-ամերիկյան և ֆրանսիական ինտերվենտները վիճելի տերիտորիան հայտարարում են «չեղոք գոտի», այսինքն փաստորեն վերցնում են իրենց ձեռքը։

Այսպիսով ստեղծվում է Լոռվա «չեղոք գոտին», որտեղ աշխատավորների նկատմամբ մենշևիկների ու դաշնակների գաղանությունները ավելանում է անգլիական ու ամերիկյան իմպերիալիզմի գաղութային ռեժիմը։ Ըստ վերոհիշյալ կոնֆերանսի որոշման,

«չեզոք գոտու» մեջ էին մտնում նախկին Բորչալուի գավառի Ալավերդու, Ուզունլարի և Վորոնցովկայի շրջաններն իրենց 41 գյուղերով[1]։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, դաշնակների օգնությամբ շարունակելով իրենց առաջխաղացումը, մենշևիկյան զորամասերը հասնում են մինչև Շահալի կայարանը և գավթում Ջալալ-Օղլին (այժմ Ստեփանավան), Լորուտը, Աթանը և ուրիշ գյուղեր[2]։ Մենշևիկների կողմից գրավված շրջանների վիճակի մասին Լոռվա ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի հաղորդագրության մեջ ասված է. «Ներկայումս այդ գրավված շրջաններում թագավորում է սանձարձակ քմահաճ վերաբերմունք և ամենախայտառակ կողոպուտ։ Ջինաթափման աստառի տակ բոլոր գյուղերում և խրճիթներում ընդհանուր խուզարկություններ տեղի ունեցան. բացի զենքից, մենշևիկյան բանդաները խլեցին գյուղացիներից ամեն տեսակի մթերքներ, ընդսմին նրանք չամաչեցին տանել եղած մի քանի ֆունտ հացը, մի ֆունտ յուղը և մի քանի կտոր պանիրը և այլն, և այլն»[3]։

Հայաստանում սովետական կարգեր հաստատելուց հետո Հայաստանի Ռևկոմը մի շարք նոտաներ է ուղարկում Վրաստանի մենշևիկյան կառավարությանը, կտրուկ պահանջ դնելով Լոռվա «չեզոք գոտուց» մենշևիկյան զորքերը հետ քաշելու և այնտեղի աշխատավորության նկատմամբ եղած բռնություններին վերջ տալու մասին։ «Չեզոք գոտու» վերաբերյալ վիճելի հարցերը խաղաղ կերպով լուծելու նպատակով Սովետական Հայաստանի Արտաքին Գործերի Ժողկոմատը 1920 թ. դեկտեմբերի 29-ի նոտայով հայտնում է խաղաղ բանակցություններ սկսելու անհրաժեշտությունը՝ Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ։ Սակայն վրացական մենշևիկները, ոգևորվելով օտարերկրյա իմպերիալիստների օգնությունից, ոչ մի բան հաշվի առնել չէին ուզում։

Ինչպես ամբողջ Վրաստանում, նույնպես և «չեզոք գոտում» նրանք է՛լ ավելի են ուժեղացնում հարձակումներն ու հալածանքները կոմունիստական կազմակերպությունների ու նրանց հետևից գնացող աշխատավորների նկատմամբ։ Նրանք բանտերը լցնում են կոմունիստներով և նրանց համակրողներով։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 68բ/200, գ. 116ա և ֆ. 4/114, գ. 318, թ.թ. 3—4։

[2] «Տես «Կոմունիստ» № 53, Երևան, 11 փետրվարի, 1921, Լոռվա ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի հաղորդագրությունը։

[3] Նույն տեղում։

Բայց ոչ մի ուժ ընդունակ չէր կանգնեցնելու ռևոլյուցիոն մարտերում կոփված Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների գլխավորած Վրաստանի և Լոռվա բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն պայքարի հուժկու վերելքը։

Խորը ընդհատակում գործող Լոռվա կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ՝ կազմակերպություններ, որոնք անմիջական կապ ունեին Անդրկովկասի կոմունիստական կազմակերպության ղեկավարներ Ս. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի և Ա. Միկոյանի հետ և աշխատում էին նրանց ցուցումներով— «չեզոք գոտու» ռևոլյուցիոն բանվորներն ու գյուղացիները նախապատրաստվում էին զինված ապստամբության։ Այս գործի ավանդարդումն էին Ալավերդու հանքերի և «չեզոք գոտու» մեջ մտնող երկաթուղային կայարանների (Սանահին, Ալավերդի, Քոլագերան, Այրում, Ախթալա, Շահալի) բանվորները։

Ալավերդու և Լոռվա բանվորների հետ սերտորեն շաղկապված էին և նրանց հետ էին գնում Լոռվա աշխատավոր գյուղացիները։ Բացի հանքերից ու երկաթգծից, «չեզոք գոտու» շատ գյուղերում այդ ժամանակ գործում էին կոմունիստական ուժեղ կազմակերպություններ։ Այսպես, օրինակ, Հաղպատ գյուղում կար 111 կոմունիստ, Որնակ գյուղում՝ 58 կոմունիստ և այլն[1]։

Լոռվա կոմունիստական կազմակերպությունները, որոնք ստեղծվել ու կոփվել էին Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչներ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և Ա. Միկոյանի կողմից, սերտ կապի մեջ էին Վրաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի հետ։ Անդրկովկասյան կոնտրռևոլյուցիայի և ինտերվենտների գործիք դարձած վրացական մենշևիկների դեմ զինված ապստամբությունը, Վրաստանի և Հայաստանի Կոմունիստական պարտիաները նախապատրաստում էին Ս. Օրջոնիկիձեի գլխավորած ՌԿ(բ)Պ ԿԿ Կովկասյան Բյուրոյի անմիջական ղեկավարությամբ։ «Չեզոք գոտում» զինված ապստամբություն նախապատրաստելու, կոմունիստական կազմակերպություններին օգնելու նպատակով, ՌԿ(բ) Պարտիայի Կենտկոմի Կովկասյան Բյուրոն այնտեղ աշխատանքի է ուղարկում մի շարք ղեկավար պարտիական աշխատողներ։

---

[1] Թվերը վերցված են Ալավերդու գործարանի հին բանվոր և հին բոլշևիկ Ս. Դ. Էվոյանի Լոռվա ապստամբության վերաբերյալ հիշողություններից, որոնք պահվում են ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվում։

1920 թ. դեկտեմբերի սկզբին Ղարաքիլիսայի (այժմ Կիրովական) գավառային Ռևկոմը, Ռ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյից (Կավբյուրոյից) ուղարկված ընկերների հետ միասին, հրավիրում են գյուղացիական մի շարք համագումարներ, որոնք խոշոր դեր են խաղում աշխատավորների ռևոլյուցիոն տրամադրությունը բարձրացնելու և զինված ապստամբությունը նախապատրաստելու գործում։ Իր զեկուցագրում Ղարաքիլիսայի գավառային Ռևկոմի ներկայացուցիչն 1920 թ. դեկտեմբերին այդ մասին հաղորդել է. «Դեկտեմբերի մեկից մինչև 10-ը մեր կողմից հրավիրված է երեք համագումար, որոնցից երկուսն անպարտիական և մեկը պարտիական։ Այդ համագումարներում գյուղացիությունն արտահայտել է իր պատրաստակամությունը՝ միանալու Սովետական Հայաստանին և ապստամբության դեպքում նա պատրաստ է օգնելու կենսամթերքներով ու կենդանի ուժով։ Մեր պարտիան ձեռնարկել է կոմբջիջների կազմակերպմանը և այժմ բոլոր գյուղերում — Վորոնցովկայից մինչև Շահալի— կան պարտիական կազմակերպություններ։ Ինքնապաշտպանության անվան տակ այդ կազմակերպություններին կից կազմակերպել ենք զինված ուժեր— յուրաքանչյուր գյուղում 50-ից մինչև 200 մարդ։ Այժմ նրանք մեզ մոտ հաշվվում են մինչև 2500 մարդ»[1]։ Դեկտեմբերի սկզբներից «չեղոք գոտում» արդեն կային մի շարք պարտիզանական զինված ջոկատներ։

Հրավիրված գյուղացիական համագումարների պատգամավորները, վերադառնալով իրենց տեղերը, գյուղերում կազմակերպում են հասարակական լայն ժողովներ, ուր զեկուցում են համագումարի արդյունքների և մենշևիկների ու դաշնակների կողմից «չեղոք գոտում» կատարվող բռնությունների մասին։ Նման ժողովներ են հրավիրվում Վորոնցովկայում, Պրիվոլնոյում, ռուսական Ջալալ-Օղլիում, Նովո-Պոկրովկայում, Նովո-Միխայելովկայում, Կոտուր-Բուլաղում, Արմանիսում և մի շարք այլ գյուղերում։ Ամենուրեք միահամուռ կերպով ընդունած որոշումներում աշխատավոր գյուղացիությունն իր զայրույթն է արտահայտում մենշևիկների կողմից «չեղոք գոտում» կատարվող բռնությունների դեմ։ Բոլոր ժողովներում ընդունված որոշումներում նրանք հաստատակամորեն հայտնում են իրենց պատրաստակամությունը՝ Վրաստանի բանվորների ու գյուղացիների հետ դաշնակցած, Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ պայքարի դուրս գալ մենշևիկների բուրժուա-

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 1114, գ. 11. թ. 1։

նացիոնալիստական մարիոնետային իշխանությունը տապալելու և սովետական կարգեր հաստատելու համար։

Լոռվում և նրան սահմանակից սովետական շրջաններում եղած պարտիզանական ջոկատներն ամրապնդելու, նորերը կազմակերպելու և զինված ապստամբությունը բազմակողմանիորեն նախապատրաստելու նպատակով, ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի ցուցումով Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմը 1920 թ. դեկտեմբերի 20-ին Ղարաքիլիսայում կազմակերպում է ապստամբության շտաբ։ Ապստամբության շտաբն ամբողջ «չեղոք գոտին» բաժանում է 4 գավառամասի՝ Վորոնցովկայի, Դսեղի, Ուղունլարի և Շնողի։ Ստեղծվում են գավառամասային գաղտնի ռևկոմներ և պարտիական կոմիտեներ, ամուր կապ է հաստատվում ինչպես այդ, նույնպես և տեղերում գոյություն ունեցող ռևկոմների ու պարտիական ջոկատների միջև։

1921 թ. հունվարին Ղարաքիլիսայում «չեղոք գոտու» գավառամասերի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունենում Լոռվա կոմունիստական կազմակերպությունների կոնֆերենցիան, որի աշխատանքները ՀԿ(բ)Պ Կենտկոմի կողմից ղեկավարում էր Ա. Մռավյանը։ Տեղերի ներկայացուցիչների զեկուցումներից բացի, կոնֆերենցիան լսում է Ա. Մռավյանի զեկուցումը Լոռվա կոմունիստական կազմակերպությունների խնդիրների մասին։ Կոնֆերենցիայի աշխատանքներն ավարտելուց հետո, ապստամբության շտաբը հրավիրում է հատուկ խորհրդակցություն, որին մասնակցում են «չեղոք գոտու» պատգամավորները և Ղարաքիլիսայում գտնվող կայազորի հրամանատարությունը։ Խորհրդակցությունը մշակում է ապստամբության մանրամասն պլանը և այն իրականացնելու համար գավառամասերին ամրացնում է ռազմական գործի ստուգված մասնագետներ։ Փետրվարի 7-ին կազմակերպվում է Լոռվա ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն, որի գլուխ է կանգնում ՌԿ(բ)Պ ԿԿ Կովկասյան Բյուրոյի կողմից «չեղոք գոտուն» ամրացված ներկայացուցիչը, իսկ կազմի մեջ են մտնում Ս. Գ. Էվոյանը (Ալավերդու հին բանվոր) և Ս. Սարգսյանը (երկաթգծի հին բանվոր)։

Փետրվարի առաջին տասնօրյակում արդեն լիակատար կերպով ավարտված էին զինված ապստամբության նախապատրաստական աշխատանքները։ ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի դիրեկտիվներով ապստամբության սկիզբը Լոռվա «չեղոք գոտում» նշանակված էր 1921 թ. փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը։ Սահման-

ված ժամկետին ապստամբությունն սկսվում է։ Շնորհիվ Վրաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի կողմից մենշևիկյան բանակում տարված ուժեղ ագիտացիայի, մենշևիկյան զորամասերի շարքային զինվորների մեծ մասը չէին ցանկանում կռվել իրենց դասակարգային եղբայրների՝ «շեզոք գոտու» հայ, ռուս և այլազգի բանվորների ու գյուղացիների դեմ։ Սակայն որոշ տեղերում, ինչպես, օրինակ, Լոռվա տափաստանում, մենշևիկների ընտրովի, այսպես կոչված, «ժողովրդական գվարդիա» զորամասերը, որոնք կազմված էին մեծ մասամբ հարուստների զավակներից, ապըստամբներին ցույց են տալիս կատաղի դիմադրություն՝ հրետանային ուժեղ կրակով ավերում են Վորոնցովկա, Պրիվոլնոյե և նրանց շրջակա գյուղերը։ Այն ժամանակ ապստամբության շտաբը դիմում է Կարմիր Բանակի օգնությանը։ Ընդառաջելով ապստամբներին, Ս. Օրջոնիկիձեի կարգադրությամբ հերոսական 11-րդ բանակի զորամասերը փետրվարի 12-ին անցնում են «շեզոք գոտու» սահմանը։ Նրանք օգնության են հասնում Լոռվա և Վրաստանի ապստամբ բանվորներին ու գյուղացիներին։ «Պարզ է, իհարկե,— ասում է Ս. Օրջոնիկիձեն, —որ մոտ կանգնած Կարմիր Բանակը չէր կարող սառնարյուն կերպով նայել, թե ինչպես են մենշևիկները գնդակահարում Սովետական իշխանության համար ապստամբություն բարձրացրած գյուղացիներին։ Բոցավառվող Վորոնցովկա և Պրիվոլնոյե գյուղերը մի աղդանշան եղան, որոնք Կարմիր Բանակին օգնության կանչեցին ապստամբներին...»[1]։ Կարմիր Բանակի այդ օգնությամբ ապահովվեց ապստամբության արագ հաղթանակը «շեզոք գոտում»։

Վրաստանի Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, այդ ժամանակ Բորչալուի գավառում մենշևիկների մարիոնետային իշխանության դեմ սկսվում է զինված ապստամբություն։ Շուտով զինված ապստամբություններ են սկսվում Գորիում, Դուշեթում, Գուրիայում, Աբխազիայում, Աջարստանում, Հարավ-Օսեթիայում, Լեչխումի գավառում և երկրի մյուս մասերում։ Ապստամբությունը դառնում է ընդհանուր։ Փետրվարի 16-ին կազմակերպվում է Վրաստանի Ռևոլյուցիոն Կոմիտե (Ռևկոմ), որը Վրաստանը հայտարարում է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա։ Վրաստանի ապստամբ բանվորներին ու գյուղացիներին եղբայրական օգնու-

---

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 45։

թյան են հասնում Սովետական Ռուսաստանի 11-րդ բանակի հերոսական զորամասերը։

Չնայած Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և մյուս երկրների իմպերիալիստների կողմից վրացական մենշևիկներին ցույց տված ամեն տեսակ օգնությանը, Վրաստանում սկսված այդ ընդհանուր զինված ապստամբությունը արագ կերպով ծավալվում է և ավարտվում Վրաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակով։ 1921 թ. փետրվարի 25-ին Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի վրա ծածանվում է Սովետների Կարմիր դրոշը։ Շուտով ամբողջ Վրաստանում հաստատվում են սովետական կարգեր։ Իրականացվում է ազատատեր վրաց ժողովրդի դարավոր իղձը։ Նա ձեռք է բերում իր իսկական ազատությունն ու անկախությունը։ Վրաստանի ազատագրումը ջերմորեն ողջունեցին Սովետական Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորները։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Սովետական Վրաստանի աշխատավորները, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում ձեռնամուխ են լինում սոցիալիստական շինարարությանը, իրենց նոր ու երջանիկ կյանքի ստեղծմանը։

* * *

Սովետական կարգերի հաստատումը Վրաստանում, ինչպես նաև զինված ապստամբության հաղթանակը Լոռվա «չեղոք գոտում» վճռական նշանակություն ունեցան այդ ժամանակ Հայաստանում դաշնակների կողմից կազմակերպված կոնտրռևոլյուցիոն խռովության՝ փետրվարյան ավանտյուրայի արագ ջախջախման գործում։

Երբ Հայաստանում Սովետական իշխանությունը դեռ նոր էր սկսել իր առաջին քայլերը, դաշնակները, իրենց շուրջը համախմբելով կոնտրռևոլյուցիոն տարրերին, սկսեցին 1921 թ. փետրվարյան ավանտյուրան։ Բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության դեմ սկսված այդ կոնտրռևոլյուցիոն ելույթն ուներ իր որոշակի նպատակը՝ տապալել Սովետական իշխանությունը Հայաստանում և վերականգնել հին կարգերը, երկիրը կրկին դարձնել իմպերիալիստական պետությունների գաղութ և Սովետական Ռուսաստանի դեմ կոնտրռևոլյուցիոն պայքարի բազա։

Սոցիալիստական ռևոլյուցիայի մեծագույն հանճար Վ. Ի. Լենինը, խոսելով տապալված շահագործողների ռեստավրացիոն հույսերի և փորձերի մասին, գրել է. «Անցումը կապիտալիզմից կո-

մունիզմին մի ամբողջ պատմական դարաշրջան է։ Քանի այն չի ավարտվել, շահագործողների մեջ անխուսափելիորեն մնում է ռեստավրացիայի հույսը, իսկ այդ հույսը ռեստավրացիայի փորձերի է վերածվում։ Եվ առաջին լուրջ պարտությունից հետո՝ տապալված շահագործողները, որոնք իրենց տապալմանը չէին սպասում, դրան չէին հավատում, մտքով անգամ այդ չէին անցկացնում, տասնապատկված եռանդով, կատաղի կրքով, հարյուրապատիկ ուժեղացած ատելությամբ նետվում են դեպի մարտի և նետվում՝ հանուն խլված «դրախտի» վերադարձման, հանուն իրենց ընտանիքների, որոնք այնքան քաղցր էին ապրում, և որոնց այժմ «ռամիկ խուժանը» դատապարտում է քայքայման ու թշվառության (կամ «հասարակ» աշխատանքի...)»[1]։

1921 թ. փետրվարյան ավանտյուրան հին կարգերի ռեստավրացիայի այդպիսի մի փորձ էր։ Սակայն այդ դավադրությունը ինքնամփոփ երևույթ չէր։ Այն սերտորեն կապված էր միջազգային հակասովետական ռեակցիայի հետ, որի գլուխ կանգնած էին ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստները և հանդիսացավ այդ ռեակցիայի արտահայտություններից մեկը Անդրկովկասում։

Փետրվարյան ավանտյուրան նախապատրաստվեց և ծագեց հետևյալ պայմաններում։

ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստները բազմապիսի օգնություն ցույց տալով Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն ուժերին, նպատակ էին դրել ինչ գնով ուզում է լինի՝ ձեռքից բաց չթողնել Անդրկովկասը։ Այդ ուղղությամբ նրանց ջանքերը ավելի ուժեղացան Կարմիր Բանակի կողմից Վրանգելի սպիտակգվարդիական բանդաների ջախջախումից և Ադրբեջանում ու Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո։ Ֆրանսիական «գերագույն կոմիսար» Ա. Շեալյեն 1920 թ. դեկտեմբերի 16-ին Թիֆլիսում մենշևիկյան Վրաստանի Հեռապրական գործակալության աշխատակցի հետ ունեցած զրույցում հայտարարել է, որ ամբողջ աշխարհի (այսինքն իմպերիալիստների — Ա. Հ.) շահերը պահանջում են Հայաստանի և Ադրբեջանի Սովետական իշխանությունների տապալումը։ Նա միաժամանակ վրացական մենշևիկներին խոստացել էր զինված օգնություն, եթե երկրում նրանց դեմ պայքար ծավալվի կամ եթե արտաքին թշնամու կողմից նրանց մարիոնետային իշխա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, Երևան, 1951, էջ 319։

նության վրա հարձակում տեղի ունենա։ Դրանից մի քանի շաբաթ հետո, 1921 թ. հունվարի 27-ին, անգլիական բուրժուազիայի օրգան «Թայմս»-ը գրել է. «Դաշնակների լիդերներն այս ամսի սկզբներին Թիֆլիսում ունեցած կոնֆերանսում վճռել են բոլոր հնարավոր միջոցներով շարունակել կռիվը բոլշևիզմի դեմ...»[1]։ Սակայն թերթը միաժամանակ նշել է, որ դրա համար անհրաժեշտ է դրսի օգնությունը դաշնակներին։

Ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստները կազմակերպում են այդ օգնությունը։ Նրանք դաշնակներին և Անդրկովկասի մյուս կոնտրռևոլյուցիոն ուժերին օգնում են ոչ միայն նյութապես, ռազմամթերքով, այլև իրենց զորքերով կռվում են սոցիալիստական ռևոլյուցիայի դրոշը բարձրացրած Անդրկովկասի աշխատավորության դեմ, համաձայնեցնում և միատեղ մշակում են սովետական կարգերի դեմ Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն ուժերի զինված ելույթների պլանները, այդ թվում նաև դաշնակների փետրվարյան ավանտյուրայի պլանը։

Անգլո-ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիստների թելադրանքով և օգնությամբ այդ ժամանակ մենշևիկյան Վրաստանում (Թիֆլիսում) կազմակերպվում են Հայաստանի, Ադրբեջանի, Կովկասի Լեռնական Ռեսպուբլիկայի «փրկության կոմիտեներ», որոնց խնդիրն էր Կովկասում սովետական ռեսպուբլիկաների դեմ կազմակերպել կոնտրռևոլյուցիոն զինված ելույթներ։ Խոսելով այդ մասին, Ս. Օրջոնիկիձեն գրում է. «...Երբ Թիֆլիսում կազմակերպվեցին Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնական Ռեսպուբլիկայի և այլն «փրկության կոմիտեներ»— դա Կովկասում ամենուրեք Սովետական իշխանության դեմ ապստամբություն բարձրացնելու մի պլան էր»[2]։

Ս. Մ. Կիրովը՝ ընութագրելով Վրաստանի մենշևիկյան կառավարության դերը, այդ օրերին, գրել է. «Կան տվյալներ ենթադրելու, որ Ադրբեջանի մուսավաթականների ելույթը Գյանջայում (խոսքը 1920 թ. մայիսին այնտեղ տեղի ունեցած կոնտրռևոլյուցիոն ելույթի մասին է— Ս. Հ.) մանրամասն կերպով նախապատրաստվել է հենց Թիֆլիսում։ Մինչև այժմ այնտեղ են մնում Դոնի, Կուբանի, Թերեքի նախկին իշխանությունների ներկայացուցիչները. այնտեղ են գործում նաև Վրանգելի ներկայացուցիչները»[3]։ Մի այլ տեղ այդ

---

[1] Бюллетень НКИД РСФСР, № 66, 23 февраля, 1921, стр. 30—31.
[2] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 49։
[3] С. М. Киров, Статьи, речи, документы (сборник), т. 1, Партиздат, 1936, стр. 225.

առթիվ Ս. Մ. Կիրովը ասում է. «Հենց այժմ խոսեցի Օրջոնիկիձեի հետ, որը գտնվում է Բաքվում, նա հաղորդում է հետևյալը.— Ելիզավետոպոլի (Գյանջայի) նահանգում եղել է մեծ ապստամբություն, որը ճնշվել է վեցօրյա մարտերից հետո։ Ելիզավետոպոլը ուժեղ շափով տուժել է հրետանուց։ Այժմ ապստամբություններ են տեղի ունենում Շուշիում և Աղդամում։ Ապստամբությունները կազմակերպվում են մուսավաթականների կողմից։ Վրացիները որոշակի կերպով նկատի ունեն Զաքաթալայի գավառը օգտագործել որպես բազա՝ Ելիզավետոպոլի նահանգի դեպքերի կապակցությամբ»[1]։

Ինչպես նշեցինք, Հայաստանում Սովետական իշխանություն հաստատվեց այն ժամանակ, երբ երկիրը՝ իմպերիալիստների կամակատար դաշնակների ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով կանգնած էր կործանման եզրին, երբ հայ ժողովուրդը բղկտվում էր եվրոպական և ամերիկյան իմպերիալիստների ու քեմալական օկուպանտների կողմից։

Այդպիսի ծանր պայմաններում Սովետական իշխանությունը Հայաստանում ձեռնամուխ եղավ սոցիալիստական շինարարությանը։ Այդ ժամանակ ռեսպուբլիկայում զգացվում էր պարտիական, սովետական կադրերի խիստ պակաս։ Առանձնապես ծայրամասային և լեռնային շրջաններում (Դարալագյազ, Արագածի ստորոտ, Բաշ-Գյառնի, Նոր-Բայազետ և այլն) սովետական ապարատը գտնվում էր ավելի թույլ վիճակում։ Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կենտկոմը և Ռևկոմը անհրաժեշտ շափով այդ շրջանների հարցով չզբաղվեցին։ Իսկ քաղաքական-մասսայական աշխատանքները թերագնահատված էին, մանավանդ գաղթականության մեջ։ Այդ ցույց տալու համար կարելի է հիշատակել հետևյալ փաստը։

Արագածի ստորոտի 21 գյուղերում վերաբնակված գաղթականների ներկայացուցիչը 1921 թ. հունվարի 14-ին Հայաստանի Ռևկոմին ուղղած դիմումի մեջ գրել է. «Ալագյազում քրդական և հայկական գյուղերում վերաբնակվող մշեցիներս ու սասունցիներս ներկա խնդրագրով դիմում ենք Ձեզ, հայտնելով, որ մենք ենք իսկական բանվոր-ոնչպար ժողովուրդը, մեր սրտին շատ մոտ է խորհրդային իշխանությունը, որը միակ պաշտպանն է բանվոր հողագործ ժողովրդին»[2]։ Հետո նրանք այդ նամակով խնդրել են, որ իրենց

---

[1] С. М. Киров, Статьи, речи, документы, стр. 226.

[2] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 3116, գ. 2, թ. 79, բնագրի ոճը պահպանված է։

մոտ ուղարկվեն պրոպագանդիստներ, լրագրեր, գրականություն, կազմակերպվեն ռեկոմներ և այլն։ Այդպիսին էր վիճակը նաև մի շարք շրջաններում։

Օգտվելով նման դրությունից, սովետական կարգերի հաստատումից հետո Հայաստանում մնացած դաշնակցական զինված ուժերի մի մասը ծպտված կերպով կենտրոնանում էր այդ վայրերում։ Հակասովետական ուժեղ ագիտացիային զուգընթաց, նրանք վերադասավորում և լրացնում են իրենց ուժերը։ Նույնիսկ մի շարք շրջաններում և գյուղերում (Դարալագյազ, Բաշ-Գյառնի և այլն) դաշնակները խարդախորեն թափանցում են ռեկոմների կազմի մեջ և այնտեղ քայքայիչ աշխատանք կատարում։

Դրությունը անբարեհաջող էր նաև այն պատճառով, որ ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառման ընթացքում Հայաստանում տեղի ունեցան մի շարք շեղումներ և սխալներ։ Նախ և առաջ անտեսվեցին Անդրկովկասի և Հայաստանի տեղական առանձնահատկությունները։ Վ. Ի. Լենինը, խոսելով Սովետական Ռուսաստանի համեմատությամբ Անդրկովկասի առանձնահատկությունների և դրանցից բխող տակտիկայի մասին, Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի և Լեռնականների Ռեսպուբլիկայի կոմունիստներին 1921 թ. ապրիլի 14-ին գրած ծրագրային նամակում ցույց էր տալիս, որ նույնությամբ չընդօրինակել ռուսական կոմունիստների տակտիկան, այլ ինքնուրույն կերպով կշռադատել նրա յուրօրինակության պատճառները, նրա պայմաններն ու արդյունքները, կիրառել 1917—1921 թվականների փորձի ոչ թե տառը, այլ ոգին, իմաստը, դասերը, որ Անդրկովկասում մանր-բուրժուազիայի, ինտելիգենցիայի և մանավանդ գյուղացիության նկատմամբ պետք է ցուցաբերել ավելի մեղմություն, զգուշություն, ղիջողականություն։

Չնայած դրան, Հայաստանի առանձին շրջաններում խախտելով ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, շատ դեպքերում վերցնում էին ոչ միայն գյուղացիների պարենային ավելցուկը, այլև շատ ավելին, խախտելով պետության կողմից սահմանված նորմաները։ Դրա հետևանքով միջակ գյուղացիության որոշ մասի մեջ դժգոհություններ էին առաջանում։ Այդ դժգոհությունները օգտագործում են սովետական կարգերի երդվյալ թշնամիները՝ դաշնակները, կադետները, էսեռները, հնչակյանները, սպեցիֆիկները և մյուս կոնտրռևոլյուցիոն պարտիաների ու հոսանքների մնացորդները։

Օգտվելով թույլ տրված սխալներից և թույլ հսկողությունից գաղտնի կերպով սովետական ապարատի մեջ խցկված դաշնակները ևս կատարում էին անօրեն բռնագրավումներ, նպատակ ունենալով վարկաբեկել Սովետական իշխանությունը։ Այդ առթիվ Հայաստանի Արտակարգ Հանձնաժողովի 1921 թ. փետրվարի 10-ի հրամանում ասված է. «Դաշնակների գաղտնի ագենտները, խցկված լինելով մեր երիտասարդ խորհրդային հիմնարկությունները, ինքնագլուխ գործունեությամբ և ազգաբնակչության հետ կոպիտ վարվեցողությամբ ի չիք են դարձնում Խորհրդային իշխանությունը»[1]։

Հայաստանի Ռևկոմը, որի կազմի մեջ խցկվել էին օպորտունիստական տարրեր, դաշնակների և մյուս կոնտրռևոլյուցիոն պարտիաների նկատմամբ ձեռք չառավ վճռական միջոցներ։

Դաշնակցականների մի մասը, որոնք տակտիկական նկատառումներով քողարկված էին «ձախ» պիտակի տակ, ազատ կերպով ման էին գալիս Սովետական Հայաստանի մայրաքաղաքում և մյուս շրջաններում։ Նրանցից ոմանք տեղավորված էին սովետական ապարատում, բանակում, նույնիսկ զեկավար պոստերում, և գաղտագողի դավեր էին նյութում բանվորների ու գյուղացիների պետության դեմ։ Սովետական կարգերի դեմ նախապատրաստող դավադրությունը կոծկելու և ավելի լայն ազատություն ու վստահություն ձեռք բերելու նպատակով, նրանք արտաքուստ ձևանում էին լոյալ և նույնիսկ սովետական կարգերի կողմնակից։ 1920 թ. դեկտեմբերի կեսերին Երևանում կազմակերպվում է դաշնակցության անլեգալ կոմիտե։ Ավանտյուրայի ամբողջ նախապատրաստումը վերցնելով իր ձեռքը, այդ կոմիտեն սերտ կապ է հաստատում Հայաստանի այն շրջանների հետ, որտեղ կենտրոնացած էին իրենց թաքնված ուժերը՝ Բաշ-Գյառնի, Աշտարակ, Էջմիածին, Դարալագյազ։

Ինչպես ցույց են տալիս փաստերը, Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին ամիսներին՝ փետրվարյան ավանտյուրայի նախօրյակին, բարդ իրադրություն էր ստեղծված, որը, սակայն, Հայաստանի Ռևկոմը թերագնահատեց, նրանից անհրաժեշտ եզրակացություններ չհանեց։ 1921 թ. հունվարի 27-ին «Կոմունիստ» լրագիրը «Դաշնակցության վերջին ավանտյուրան» վերնագրով առաջնորդողում հիմնական գծերով ցույց է տվել Սովետական Հայաստանի համար ստեղծված բարդ իրադրությունը։ Այնտեղ նշվում է, որ դաշնակցությունը փորձում է «անգլո-ֆրան-

[1] «Կոմունիստ» (հայերեն), № 54, Երևան, 12 փետրվարի, 1921։

սիական կապիտալի օգնությամբ քաղաքացիական պատերազմ սկսել Հայաստանի բանվորա-գյուղացիական կառավարության դեմ։

Հայաստանում դաշնակցությունն իր բազան է դարձրել դրժբախտ Զանգեզուրը։ Այստեղ են հավաքված զանազան Ռուբեն,* Նժդեհ և այլ տխրահռչակ «փաշաներն» ու «հերոսները»։ Զանգեզուր են կուտակվում զանազան կողմերից Հայաստանում «անգործ» մնացած բազմաթիվ մաուզերիստները։

...Մյուս կողմից կապեր են հաստատված Թավրիզի միջոցով անգլիացիների և Թիֆլիսի հետ, որոնք հսկայական օգնություն են խոստանում նոր ձեռնարկությանը։ Եթե այդ բոլորին ավելացնենք նաև այն, որ Քեմալի զորքերի կողմից գրաված վայրերը չմաքրելու մրին քաղաքականությունը միանգամայն համապատասխանում է դաշնակցության դասակարգային ծրագրին, նոր ավանտյուրայի պատկերը կպարզվի միանգամայն։

Անա այն արտաքին ուժերը (ինչ խոսք, որ մենշևիկյան Վրաստանն էլ նրանց շարքումն է), որոնց վրա հիմնված, դաշնակցությունը պատրաստվում է Հայաստանում հակահեղափոխական հեղաշրջում առաջացնել և բանվորների ու գյուղացիների դիակների վրա կապիտալի ու մաուզերի իշխանություն հաստատել»[1]։

Այնուհետև առաջնորդողում խոսվում է այն ներքին ու արտաքին ուժերի մասին, որոնք ոգեշնչում էին հակասովետական ավանտյուրան։

Չնայած ավանտյուրայի այդպիսի որոշակի նախապատրաստությանը և նրա մասին «Կոմունիստ» թերթի ահազանգումներին՝ Հայաստանի Ռևկոմը, դաշնակների և մյուս թշնամիների նկատմամբ ցուցաբերելով օպորտունիստական վարքագիծ, իր ժամանակին վճռական միջոցների չդիմեց ավանտյուրան կանխելու, այն բնում խեղդելու համար։

Դաշնակների, էսեռների և մյուս կոնտրռևոլյուցիոն պարտիաների ու հոսանքների նկատմամբ Հայաստանի Ռևկոմի ունեցած օպորտունիստական վարքագծի դեմ ահազանգ են տալիս Ալեքսանդրապոլի կոմունիստները, որոնք պահանջում են ամենավճռական ու անողոք դատաստան տեսնել սոցիալիստական ռևոլյուցիայի բոլոր թշնամիների նկատմամբ։ 1920 թ. դեկտեմբերի 21-ին ՀԿ(բ) Պարտիայի Ալեքսանդրապոլի Կոմիտեն ՀԿ(բ)Պ Կենտկոմին (պատճենը Հայաստանի Ռևկոմին) ուղղում է մի գրու-

[1] «Կոմունիստ» (հայերեն), № 40, 27 հունվարի, 1921, ընդգծումները բնագրինն են։

թյուն, ուր ասված է. «Ալեքսոլի Կոմկուսակցության քաղկոմը՝ տեղեկանալով այն տակտիկայի մասին, որ ունի Հայաստանի Հեղկոմը ներքին կյանքում ընդհանրապես և հանդեպ ոճրագործ դաշնակները մասնավորապես, որոնց վերաբերմամբ գործադրվում է հեղափոխական ոգուն և գործելակերպին անթույլատրելի փափկություն, որպիսի հանդամանքը շատ թանկ կարող է նստել Կարմիր Հայաստանի առանց այն էլ հյուծված ընչազուրկներին և աննպաստ ընթացք ունենալ հեղափոխության համար, բողոքում է դրա դեմ և պահանջում է խիստ միջոցներ ձեռք առնել հակահեղափոխության դեմ։

Խմբապետների տեղը ոչ թե Կարմիր Բանակի հրամանատարության կազմի մեջ է, այլ Արտակարգ հանձնաժողովի նկուղը»[1]։

Հաշվի առնելով Սովետական Հայաստանի ծանր դրությունը, Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի հանձնարարությամբ 1921 թ. հունվարի վերջերին Հայաստան է գալիս Կովկասյան ռազմաճակատում Ռուսաստանի Արտակարգ հանձնաժողովի լիազոր Գ. Աթարբեկյանը, խնդիր ունենալով վճռական պայքար ծավալել դաշնակների և մյուս կոնտրռևոլյուցիոն պարտիաների ու հոսանքների մնացորդների դեմ։ Նրա ղեկավարությամբ Սովետական Հայաստանի պետական անվտանգության օրգանների կողմից հայտարերվում և ոչնչացվում են դաշնակների մի շարք գաղտնի կազմակերպություններ։ Սակայն դաշնակցականների մի մասին հաջողվում է թաքնվել։

Գործադրելով բոլոր ջանքերը, դաշնակները ամեն կերպ արագացնում են դավադրության նախապատրաստությունը։ Այդ օրերին Զանգեզուրից, որը դեռևս գտնվում էր դաշնակների ձեռքում, գաղտնի կերպով Սովետական Հայաստան են անցնում դաշնակցական մի շարք զինված բանդաներ։ Իրենց շուրջը համախմբելով Սովետական Հայաստանում գտնված կոնտրռևոլյուցիոն ուժերը՝ կուլակությանը, սպեկուլյանտներին, խմբապետներին, հոգևորականությանը և այլ կարգի տականքներին, դաշնակները խռովության առաջին փորձը կատարեցին 1921 թ. հունվարի 22-ին՝ Բաշ-Գյառնիում։ Այդ օրը նրանք զինված ելույթի միջոցով Բաշ-Գյառնին վերցնում են իրենց ձեռքը։ Երևանից մեկնած Կարմիր Բանակի զորամասերը, աշխատավոր գյուղացիության օգնությամբ, նույն ամսի 29-ին լիկվիդացնում են դաշնակների զինված ելույթը Բաշ-Գյառնիում։

Սակայն դաշնակցական բանդաները լիովին չեն գենաթափ-

---

1 Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 1111, գ. 7, թ. 8։

վում։ Նրանց մի մասը թաքնվում է։ Իսկ Երևանից ուղարկված Կարմիր Բանակի զորամասերը հրաման են ստանում վերադառնալ Երևան։ Օգտվելով Կարմիր Բանակի զորամասերի հրամանատարության այդ սխալից, հակառակորդը նորից գործելու հնարավորություն է ստանում։ Բաշ-Գյառնի են կենտրոնացվում թշնամու հիմնական ուժերը և շտաբը։ Նրանք տենդորեն շարունակում են նախապատրաստվել նոր ելույթի համար։

Վրացական մենշևիկները, որոնք այդ ժամանակ իշխանությունը դեռևս պահում էին իրենց ձեռքում, երկրում աճող ռևոլյուցիոն պայքարի հետևանքով, ծանր կացության մեջ էին և ամեն կերպ աշխատում էին արագացնել դաշնակների կողմից նախապատրաստվող կոնտրռևոլյուցիոն ելույթը։ Իսկ երբ դաշնակները սկսում են ավանտյուրան և գրավում Երևանը, մենշևիկյան Վրաստանի արտաքին գործերի մինիստր Սաբախտարաշվիլին փետրվարի 21-ին ողջունելով դաշնակներին, գրել է. «...Վրաստանի կառավարությունն առաջարկում է ձեզ՝ անմիջապես դուրս գալ մեզ հետ միասին և խփել բոլշևիկների թիկունքին... Բոլշևիկյան զորքերի բոլոր գրոհները երեկ և այսօր դիշերը ետ են շպրտված թշնամու համար մեծ կորուստներով։ Ցրանսիան վերջնականապես բռնեց մեր կողմը և նրա էսկադրան ռմբակոծում էր բոլշևիկյան զորքերին...»։

Փետրվարյան ավանտյուրայի նախապատրաստման գործում դաշնակներին խոշոր չափով օգնել է քեմալական Թյուրքիան։ Այդ մասին Հայաստանում գործող Կարմիր Բանակի զորամասերի շտաբի 1921 թ. փետրվարի ամփոփագրում ասված է. «Փետրվարի 16-ին թյուրքական հանձնաժողովի ներկայացուցիչը փորձում էր մեկնել Շահթախտ, ընդ որում մոտիկ կանգնած գործակալների տվյալների համաձայն մեկնելու նպատակն է եղել՝ ապստամբություն բարձրացնել Շահթախտի և Նախիջևանի շրջանում։

Նույն տվյալների համաձայն՝ ապստամբությունը (փետրվարյան ավանտյուրան— Ա. Հ.) նախապատրաստվում էր վաղուց և հետևանք է դաշնակների ու թյուրքերի միջև տեղի ունեցած հարաբերությունների։ Ըստ բոլոր տվյալների, այդ ապստամբությունը կազմակերպված է և տարվում է թյուրքերի ղեկավարությամբ...»[1]։ Ամփոփագրի վերջում ուղղակի ասված է, որ թյուրքերը մասնակցել են Բաշ-Գյառնիի խռովության նախապատրաստմանը։

---

[1] ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, 11-րդ բանակին վերաբերյալ նյութեր, կալուկ 4, գ. 1, թ. 103։

Փետրվարյան ավանտյուրայի նախապատրաստման գործում Թյուրքիայի մասնակցությունը բացահայտ կերպով երևում է ՀՍՍՌ Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի նոտայից, որը քաղաքացիական կռիվներն ավարտելուց հետո ուղարկվել է Թյուրքական բանակի արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշային (պատճեն՝ Անկարայի կառավարությանը և ՌՍՖՍՌ-ի ներկայացուցիչին՝ Անդրկովկասում)։ Այնտեղ ասված է. «Հայաստանում քաղաքացիական կռիվների կրիտիկական օրերին, երբ արտաքին և ներքին ոճրագործ ուժերը բարձրացան բանվորների և գյուղացիների իշխանության դեմ, ցանկանալով խեղդել նրան արյան ալիքների մեջ, Սովետական Հայաստանի կառավարությունը կարող էր հուսալ, որ իր թշնամիների ճամբարում տեղ չպիտի լինի բարեկամ Թյուրքիայի ներկայացուցիչին։ Բայց դժբախտաբար մենք ստիպված ենք արձանագրել, որ կապիտան Բահաեդդինի (Թյուրքիայի արևելյան ճակատի զորքերի հրամանատարության ներկայացուցիչը Երևանում— «Հայաստանի փրկության կոմիտեի» մոտ— Ա. Հ.) վարքագիծը քաղաքացիական կռիվների օրերին կրում էր շատ աննպաստ բնույթ հեղափոխության շահերի տեսակետից Հայաստանում։ Անհերքելիորեն ապացուցված է, որ կապիտան Բահաեդդինը մի քանի անգամ այցելել է ռազմաճակատ, իր ճառերով խրախուսելու համար «Հայրենիքի փրկության կոմիտեի» զորամասերը։ Երևանում այդ կապիտանը թույլ է տվել իրեն հրապարակորեն ողջունել «Հայրենիքի փրկության կոմիտեի» արկածախնդիրներին և խոստանալ Թյուրքիայի օգնությունը»։ Այնուհետև նոտայում ասված է. «...Մենք ստիպված ենք նրա վարքագիծը անվանել որպես միջամտություն Սովետական Հայաստանի ներքին գործերին, նրա թշնամիների կողմից։ Համարելով այդ վարքագիծը որպես միջազգային հարաբերությունների տարրական կանոնների կոպիտ խախտում, Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Ռևոլյուցիոն Կոմիտեն անթույլատրելի է համարում կապիտան Բահաէդդինի հետագա ներկայությունը Հայաստանի տերիտորիայում, հրաժարվելով ճանաչել նրան հետագայում որպես ներկայացուցչի»[1]։

Կարելի է հիշատակել մեկ ուրիշ փաստ ևս։ 11-րդ բանակի ղեկավար հրամանատարական կազմի ներկայացուցիչներից մեկը իր զեկուցագրում (1920 թ. դեկտեմբերին) խոսելով Թյուրքիայի կա-

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 102, թ. 22։

ռավարող շրջանների վերաբերմունքի մասին Հայաստանում սովետական կարգերի հաստատման վերաբերյալ, նշել է, որ քեմալականները առանձին զրույցի ժամանակ հայտնել են, թե Սովետական իշխանության հաղթանակը քիչ անսպասելի էր իրենց համար և դրան ավելացրել՝ «...բայց այդ բոլորովին չի քանդում մեր պլանները։ Ներկայումս մեր կողմից Հայաստանում նոր հեղաշրջում է պատրաստվում... այն հաշվով, որ Հայաստանը լինի Թյուրքիայի հովանավորության տակ...» [1]։

Այդ հեղաշրջման փորձը փետրվարյան ավանտյուրան էր, որը, սակայն, չկարողացավ արդարացնել թյուրքական ռեակցիոներների հույսերը, չնայած նրանց կողմից դաշնակներին ցույց տրված ամեն տեսակի օգնությանը։

Ինչ խոսք, որ Թյուրքիայի նման քաղաքականությունը խրախուսվում էր Անտանտայի, առանձնապես Անգլիայի ու ԱՄՆ-ի իմպերիալիստների կողմից, որոնք սիրաշահելով Թյուրքիային, նրան պատերազմի էին հրահրում Սովետական Ռուսաստանի դեմ։

1921 թ. փետրվար-մարտ ամիսներին Լոնդոնում հրավիրված մի շարք երկրների (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Գերմանիա, Հունաստան) կոնֆերանսին մասնակցում էր նաև Անկարայի կառավարության պատվիրակությունը Բեքիր-Սամի-բեյի նախագահությամբ։ Այդ կոնֆերանսում անգլիացիները «թյուրքերին բացահայտ կերպով ցանկանում էին հրել սովետական երկրի դեմ։ Լլոյդ-Ջորջը զրույց էր ունեցել թյուրքական պատվիրակության նախագահ Բեքիր-Սամի-բեյի հետ, որը նախքան այդ, եղել էր Մոսկվայում։ Տալով նրան մի քանի հարցեր Սովետական Ռուսաստանի մասին, Լլոյդ-Ջորջը զրույցի վերջում թյուրքին ուղղակի առաջարկեց Թյուրքիայի հովանավորության տակ վերցնել Անդրկովկասը՝ նավթաղբյուրների հետ միասին» [2]։

Ոգևորվելով Անտանտայի խրախուսանքից, Թյուրքիան ավելի ակտիվորեն էր օգնում անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն ուժերին, որի զինված ելույթներից մեկը հանդիսացավ դաշնակների փետրվարյան ավանտյուրան։

Փետրվարյան ավանտյուրան սկսելը որոշ չափով հեշտացավ շնորհիվ այն հանգամանքի, որ Հայաստանում գտնված Կարմիր Բանակի զորամասերի զգալի մասը կենտրոնացած էր Ղարաբիլի-

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, քաղվածքների ֆոնդ, 2-րդ մաս, գ. 352, թ. 285։

[2] История дипломатии, том III, Москва, 1945, стр. 99—100.

ապայում և երբ Լոռվա «չեղոք գոտում» ու Վրաստանում մենշևիկների դեմ սկսվեց զինված ապստամբությունը, այդ զորամասերը օգնություն ցնացին ապստամբ բանվորներին ու գյուղացիներին։ Դաշնակներն այդ առիթը բաց չթողեցին։

Ժողովրդի անարդ թշնամիները՝ դաշնակները, փետրվարյան ավանտյուրայով երիտասարդ Սովետական Հայաստանում բորբոքեցին քաղաքացիական կռիվները։

Սկսվում է Հայաստանի բանվորների ու գյուղացիների հերոսական պայքարը Սովետական իշխանության ներքին և արտաքին թշնամիների դեմ։ Այդ մարտական օրերին, Հայաստանի աշխատավորները հանուն Սովետական Հայրենիքի մարտնչում էին Ս. Օրջոնիկիձեի ղեկավարած 11-րդ բանակի զորամասերի հետ կողք-կողքի, բանակ, որն ստեղծվել, կոփվել և ամրապնդվել էր Սովետական Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվների ընթացքում։

Ավանտյուրայի հիմնական ուժերն էին մաուզերիստական խմբերը, կուլակությունը, սպեկուլյանտները, հոգևորականությունը և հակասովետական մյուս տարրերը։ Դաշնակները, էսեռները, կադետները, սպեցիֆիկները քիչ ջանքեր չթափեցին միջակ և չբավոր գյուղացիությանն իրենց կողմը գրավելու և ավանտյուրային մասնակից դարձնելու համար։ Սակայն այդ նրանց չհաջողվեց։ Աշխատավոր գյուղացիությունն ամբողջությամբ կանգնած էր Սովետական իշխանության կողմը և նրա պաշտպանության դիրքերում, նա բոլոր հնարավոր միջոցներով օգնում էր Կարմիր Բանակի զորամասերին հակասովետական ավանտյուրան լիկվիդացնելու համար։ Ռազմական գործողությունները սկսվեցին ու ծավալվեցին հետևյալ պայմաններում։

ՀՍՍՌ տերիտորիայում գտնված Կարմիր Բանակի զորամասերի հրամանատար Մալկաչանովի 1921 թ. հունվարի 2-ի N 1 հրամանով այդ զորամասերը բաժանվել էին 4 մարտական խմբավորման։

Աջ խմբավորումը (ընդհանուր կազմը՝ 6 դումարտակ, 14 հրանոթ, մեկ հեծյալ վաշտ), որի հրամանատարությունը հանձնված էր 2-րդ հրաձգային բրիգադի հրամանատար Երմոլենկոյին, դասավորված էր Դանադիրմազ սար—Գյոդակլու—Բաշ-Ապարան—Օշական—Աշտարակ—Սարդարաբադ (այժմ Հոկտեմբերյան) գյուղերի և Էջմիածին կայարանի շրջանում։

Ձախ խմբավորումը (ընդհանուր կազմը՝ 6 դումարտակ, 8 հրանոթ), որի հրամանատարությունը հանձնված էր առաջին հրաձիգ

բրիգադի հրամանատար Միրիմանովին, տեղավորված էր Ղամարլու—Ավշար—Դավալու շրջանում։

Դարալագյազի ջոկատը (մեկ գումարտակ, 4 հրանոթ) Մելիք-Մուրադյանի հրամանատարությամբ, տեղավորված էր Քեշիշքենդում (այժմ Միկոյան), խնդիր ունենալով պաշտպանել Սովետական Հայաստանը Զանգեզուրից սպառնացող դաշնակցական բանդաների հարձակումից։

Նոր-Բայազետի խմբավորումը (մեկ գումարտակ, մեկ լեռնային մարտկոց) տեղավորված էր Նոր-Բայազետում, խնդիր ունենալով ապահովել կարգ ու կանոնն այդ շրջանում։

Բանակի օժանդակը (ընդհանուր կազմով՝ 6 գումարտակ, 12 հրանոթ, 5 հեծյալ վաշտ, 2 զրահապնացք), 3-րդ հրաձիգ բրիգադի հրամանատար Տիմշենկոյի հրամանատարությամբ տեղավորված էր Երևան—Քանաքեռ—Ներքին-Ախտա—Ելենովկա (Սևան) շրջաններում։

Չունենալով ստույգ հետախուզական տվյալներ հակառակորդի ուժերի և նրանց դասավորության վերաբերյալ, և ճիշտ եղրակացության չգալով Բաշ-Գյառնիի հունվարի 22—29-ի խռովությունից, Կարմիր Բանակի զորամասերի հրամանատարությունը, մինչև փետրվարյան ավանտյուրայի սկսվելը իրեն ենթակա զորամասերը չկարողացավ նոր վերախմբավորման ենթարկել և ռազմական հզոր բռունցք ստեղծել, ավանտյուրայի հենց սկզբին, հակառակորդին արագորեն ջախջախելու համար։ Միայն փետրվարի 15-ին, այսինքն խռովությունն սկսվելուց հետո, Կարմիր Բանակի հրամանատարությունը ստույգ տեղեկություն է ստանում, որ Բաշ-Գյառնիում կազմակերպված է դաշնակների շտաբ և որ այնտեղ գտնված բանդաները բավականաչափ մեծացել են։ Բայց նույնիսկ այդ ժամանակ նրան դեռ հայտնի չէր, որ մեկ բանդա գտնվում էր Աշտարակի շրջանում, մեկ ուրիշը՝ Արագածի ստորոտում, մյուսը՝ Վերին և Ներքին Նեջուլու գյուղերի շրջանում (Երևանից 12 կիլոմետր հարավ-արևմուտք), որ Երևանում գոյություն ուներ մաուզերիստների ջոկատ՝ քաղաքի պարետի օգնականի ղեկավարությամբ, որ Դարալագյազում կային դաշնակցական զինված ջոկատներ։

Այդ պատճառով էլ, երբ Բաշ-Գյառնիում սկսվեց խռովությունը, Հայաստանի Կարմիր Բանակի զորամասերի հրամանատարությունը իր գլխավոր ուշադրությունը դարձրեց միայն Բաշ-Գյառնիի վրա, թերագնահատելով մյուս շրջաններից սպասվող վտանգը։

Ահա այդպիսի պայմաններում, 1921 թ. փետրվարի 13-ին Դարալագյազում դաշնակցական բանդաներն սկսում են իրենց զինված ելույթը։ Շրջապատելով Քեշիշքենդը, նրանք գաղանաբար մորթոտում ու ոչնչացնում են 11-րդ բանակի 20-րդ դիվիզիայի 180-րդ գնդի առաջին գումարտակի սպաներին և մարտիկներին։ Հարձակումը Քեշիշքենդի վրա ազդանշան դարձավ փետրվարյան ավանտյուրայի համար։ Այդ դեպքերից մեկ-երկու օր հետո, համարյա միաժամանակ, դաշնակները զինված ելույթներ են սկսում Բաշ-Գյառնիում, Ապարանում, Նոր-Բայազետում, Ախտայում։

Բաշ-Գյառնիում կենտրոնացած բանդաները, որոնց հետ էր դաշնակների գլխավոր շտաբը, փետրվարի 16-ին սկսում են զինված ելույթը և գրավում են մի շարք գյուղեր (Ճաթղռան, Գամրեգ, Արամուս, Բաշգյուղ, Քերփչու, Ողջաբերդ)։ Նրանք ուղղություն են վերցնում դեպի Քանաքեռ՝ հյուսիսային կողմից Երևանին հարվածելու համար։ Դաշնակցական բանդաներից մեկը, խնդիր ունենալով կտրել բոլոր տեսակի հաղորդակցությունը Երևանի և Ելենովկա—Դիլիջանի միջև, ուր գտնվում էր Կարմիր Բանակի ուժերի մի մասը, Բաշ-Գյառնիից շարժվում է դեպի Էլառ։ Նույն օրը այդ խումբը գրավում է Էլառը, Մհուբը և կտրում հեռախոսային կապը Երևանի ու Ելենովկայի միջև։ Բաշ-Գյառնիի շրջանից մեկ ուրիշ բանդա հարձակվում է Շոռբուլաղի վրա՝ խնդիր ունենալով գրավել այդ գյուղը և Երևանին հարվածել արևելյան կողմից։ Առաջին հարձակման ժամանակ Շոռբուլաղում գտնվող Կարմիր զորամասերի ուժեղ հարվածների տակ նրանք ետ են նահանջում դեպի Քերփչու։ Շուտով դաշնակները կրկին հարձակվում են Շոռբուլաղի վրա և փետրվարի 16-ի երեկոյան գրավում են այն։ Հաջորդ օրը, ուժեղ մարտերից հետո, հակառակորդը նորից ետ է շպրտվում Շոռբուլաղից։ Դարձյալ Բաշ-Գյառնիի շրջանից մի այլ բանդա փետրվարի 16-ին ուղղություն է վերցնում դեպի Վ. Աղբաշ, խնդիր ունենալով կտրել Երևանից դեպի Սովետական Նախիջևան տանող երկաթգիծը և Սովետական Հայաստանի մայրաքաղաքին հարվածել հարավարևելքից։ Նույն օրը երեկոյան դաշնակները գրավում են Ջահնաթլու գյուղը։

Փետրվարի 16-ին Աշտարակ—Էջմիածին—Երևան և Աշտարակ—Երևան ուղղություններով իրենց հարձակումն են սկսում Արագածի ստորոտում կենտրոնացած դաշնակցական բանդաները։ Նրանց խնդիրն էր գրավել Աշտարակը, Էջմիածինը, այնուհետև մի մասով շարունակել առաջխաղացումը դեպի Երևան, մյուս մասով

դեպի Ղլուխանլու—Աղհամզալու՝ կտրելու հաղորդակցությունը Երևանի և Դամարլուի միջև ու միանալու Բաշ-Գյառնիից դեպի Վ. Աղբաշ շարժվող ուժերին։

Փետրվարի 17-ին Աշտարակի և Էջմիածնի շրջաններն արդեն գտնվում էին խռովարարների ձեռքում։ Հակառակորդն սկսել էր սպառնալ Սովետական Հայաստանի մայրաքաղաքին։ Այդ բոլորը լսելով, Երևանում թաքնված դաշնակ-մաուզերիստներն ավելի մեծ աշխուժություն են ցուցաբերում։ Նրանք ուժեղացնում են հակասովետական ագիտացիան։

Մոլեգնող կոնտրռևոլյուցիային հարվածելու և մայրաքաղաքը պաշտպանելու համար, Երևանում գտնվող Կարմիր Բանակի զորամասերը և աշխատավորները, Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի ղեկավարությամբ, ձեռք են առնում մի շարք միջոցներ։ Կոմունիստներից և կոմերիտականներից կազմակերպվում է կոմունիստական ջոկատ, ստեղծվում է տեղական միլիցիան, փետրվարի 15-ին Երևանում իր աշխատանքներն ավարտած անպարտիական կարմիրբանակայինների առաջին կոնֆերանսի պատգամավորներից ու ռազմա-քաղաքական դպրոցի ունկնդիրներից կազմակերպվում է հատուկ ջոկատ։ Շահթախտից Երևան է մեկնում 178-րդ գունդը։ Զինաթափ են արվում դաշնակների ազդեցության տակ գտնվող սակրավոր զորամասերը։

Բայց հարձակման նախաձեռնությունը գտնվում էր խռովարարների ձեռքում։ Երբ դեռ շարունակվում էր Կարմիր Բանակի զորամասերի վերախմբավորումն ու դասավորումը Երևանում և նրա շրջակայքում, փետրվարի 17-ին թշնամին հյուսիսից և արևմուտքից արդեն շրջապատել էր մայրաքաղաքը։ Չնայած տեղի ունեցած կատաղի հարձակումներին, Շոռբուլաղի և Վ. Աղբաշի շրջակայքում փետրվարի 17-ին հակառակորդի ջոկատները ոչ միայն հաջողություններ չեն ունենում, այլև ետ են շպրտվում, տալով մեծ կորուստներ։ Նույն օրը վճռական մարտեր են տեղի ունենում Քանաքեռում։ Թշնամու դեմ մարտնչող կարմիր զորամասերին օգնելու նպատակով փետրվարի 17-ին Երևանից դեպի Քանաքեռ է մեկնում մի ջոկատ՝ Երմոլենկոյի հրամանատարությամբ։ Այդ ջոկատը Քանաքեռի տակ շրջապատվում է թշնամու կողմից և 4 ժամից ավելի մարտնչում է հակառակորդի դեմ։ Այդ անհավասար մարտում Երմոլենկոյի ջոկատը համարյա ամբողջությամբ ոչնչացվում է։ Հերոսաբար զոհվում է նաև ջոկատի հրամանատար Երմոլենկոն։

Փետրվարի 17-ին կատաղի մարտեր են սկսվում Երևանի ծայրամասերում՝ Կոնդի շրջակայքում և Հրազդան գետի կամուրջի համար։ Փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը դաշնակների բանդաներն այնքան են նեղացնում Երևանի օդակումը, որ նրանց ուժերի մի մասը Կոնդի և Նորքի կողմից թափանցում է քաղաք և միանում Երևանում գտնվող մաուզերիստներին։ Նրանք դրավում են մի շարք շենքեր։ Փետրվարի 18-ի վաղ առավոտյան Երևանի փողոցներում սկսվում են ուժեղ կռիվները։ Շատ տեղերում հրաձգությունը փոխվում է սվինամարտի։ Մի քանի ժամ տևող փողոցային այդ մարտերում կոմունիստները, կոմերիտականները, կարմիրբանակայիններն ու բանվորները ցույց են տալիս նվիրվածության ու հերոսության հրաշալի օրինակներ։ Քաղաքի գլխավոր փողոցներն ու շենքերը մի քանի անգամ անցնում են ձեռքից-ձեռք։ Երևանի պաշտպանությունն ամրացնելու համար Շահթախթից մեկնած 178-րդ գունդը «Աղատամարտ» զրահագնացքի հրամանատարի և մեքենավարի սաբոտաժի պատճառով ճանապարհին ուշանում է։ Սաբոտաժի հեղինակներն անմիջապես հայտնաբերվում և ոչնչացվում են։ Սակայն գունդը Երևան է հասնում մի քանի ժամ ուշացումով, այսինքն այն ժամանակ, երբ արդեն քաղաքի խոշոր մասը գտնվում էր թշնամու ձեռքում, իսկ Կարմիր Բանակի զորամասերը՝ իրենց հիմնական ուժերով սկսել էին կենտրոնանալ Երևանի երկաթուղային կայարանի շրջակայքում։ 178-րդ գնդի ուշացումը վճռական նշանակություն ունեցավ Երևանի անկման գործում։ Գնդի դալուց հետո տեղի ունեցան մի շարք ուժեղ մարտեր, նրա մի մասը Երևանի արևելյան բարձունքներից հետապնդելով դաշնակներին, հասավ մինչև Նորքի շրջակայքը։ Բայց արդեն ուշ էր, քաղաքի ստրատեգիական կարևոր կետերը գտնվում էին թշնամու ձեռքում։ Երևանի պաշտպանությունը վտանգված էր։

Նման պայմաններում Երևանում մնալը և այնտեղ հակառակորդի հետ մարտեր շարունակելը կարող էր կորստաբեր լինել։ Ուժերը պահպանելու, Սովետական Նախիջևանի հետ հաղորդակցության միակ միջոցը՝ Երևան—Ղամարլու—Ջուլֆա երկաթգիծը ձեռքից բաց չթողնելու և հետագա վճռական մարտերը շարունակելու նպատակով, Կարմիր Բանակի զորամասերը փետրվարի 18-ին թողնում են Երևանը և ետ քաշվում դեպի Ղամարլուի շրջանը։ Նրանց հետ էին ՀԿ(բ)Պ Կենտկոմը, Հայաստանի Ռևկոմը, ՀՍՍՌ մի շարք հիմնարկներ՝ իրենց աշխատակիցներով։ Այդ զորամասերն ունեին 3 շոգեքարշ, 60 վագոն, որից 11-ը բեռնված էր պարենով և ռազ-

մամթերքով։ Նույն օրը, երեկոյան, հասնելով Ղամարլու, նրանք միանում են այնտեղ գտնվող Հայկական առաջին հրաձիգ բրիգադային, որի կոմիսարն էր Լիպարիտ Մխչյանը։

Ստրատեգիական նկատառումներով ետ քաշվելով Ղամարլուից, փետրվարի 19-ին Կարմիր Բանակի զորամասերն ամրանում են Ղարաբաղլար— Դաշլու— Բեյուք-Վեդի — Ենգիջա— Կարալար— Բեշիկ-Վեդի հատվածում։

Սկսվում է Ղամարլու—Վեդիում մեկուսացած Կարմիր Բանակի զորամասերի՝ իր բացառիկ, հերոսական գործողություններով հարուստ 45-օրյա մարտերի շրջանը։ Նրանք ՌԿ(բ)Պ ԿԿ Կովկասյան Բյուրոյից և Ս. Օրջոնիկիձեից մարտական խնդիր էին ստացել՝ մինչև օգնության հասնելը պահպանել Սովետական իշխանությունը Հայաստանում։ Այդ զորքերի կոմիսարը գրում է. «Անձնապես ընկ. Սերգոյից... ստացել էինք ծածկագիր մարտական առաջադրանք՝ ինչ գնով էլ լինի պահել Սովետական իշխանությունը մինչև օգնության հասնելը»։

Փետրվարի 18-ին դաշնակցական բանդաների ձեռքումն էին գտնվում Երևանը, Էջմիածինի, Աշտարակի, Ապարանի, Ախտայի, Կոտայքի, Նոր-Բայազետի և Դարալագյազի շրջանները։ Երևանում կազմակերպվում է դաշնակցականների, այսպես կոչված, «նոր կառավարությունը»՝ «Հայրենիքի փրկության կոմիտեն», որի գլուխ կանգնում է դաշնակ ավանտյուրիստ Ս. Վրացյանը։ Փորձելով իրենց կոնտրռևոլյուցիոն գործունեությունը քողարկել «հայրենիքի փրկության» անվան տակ, օտարերկրյա իմպերիալիստների հլու կամակատար դաշնակ թափթփուկները, ժողովրդի այդ անարգ թշնամիները, հույս ունեին Հայաստանի աշխատավորներին խաբել և նրանց տանել իրենց հետևից։ Սակայն այդ խարդախությունը ևս չտվեց սպասելիք արդյունքը։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները պարզ ու հստակ տեսնում էին, որ «հայրենիքի փրկության» վարագույրի տակ թաքնված են դաշնակների կոնտրռևոլյուցիոն գործերը, Հայաստանը Սովետական Ռուսաստանից անջատելու, օտարերկրյա իմպերիալիստների դաղութ դարձնելու նրանց քաղաքականությունը։

Սովետական կարգերի դեմ մղվող պայքարում դաշնակների հետ ձեռք-ձեռքի իրենց ակտիվ մասնակցությամբ աչքի են ընկնում էսեռները, կադետները, սպեցիֆիկները, հնչակյանները և մյուս կոնտրռևոլյուցիոն տարանքները։ Այդ պարտիաները, 1921 թ. փետրվարի 25-ին Երևանում, դաշնակների նախաձեռնու-

թյամբ, հրավիրում են միացյալ խորհրդակցություն, որը քննության է առնում դաշնակներին օգնություն ցույց տալու հարցը և միջոցառումներ է մշակում այդ օգնությունը իրականացնելու համար։ Ամբողջ քաղաքացիական կոիվների ընթացքում նրանք զենքը ձեռքին պայքարում էին Սովետական իշխանության դեմ։

Կոնտրռևոլյուցիային մատուցած իր ծառայություններով ակտիվ դեր է խաղում այդ ժամանակ նաև Հայաստանի հոգևորականությունը։ Նա ծավալում է հակասովետական պրոպագանդա, կազմակերպում է զինված խմբեր, խոշոր նյութական միջոցներ է հատկացնում դաշնակցական մաուզերիստներին։

Դաշնակների կողմից գրավված վայրերում նորից ստեղծվում է այն կոշմարային դրությունը՝ թալանը, բռնությունները, կամայականությունը և տեռորը, որին վերջ էր տրված Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ։ Ամենուրեք բանտերը լցվում են կոմունիստներով, կոմերիտականներով և ռևոլյուցիոն բանվորներով ու գյուղացիներով։

Հայաստանում տեղի ունեցած կոնտրռևոլյուցիայի այդ մասնակի և ժամանակավոր հաջողությունները ոգևորում են իրենց հոգեվարքի վերջին օրերն ապրող վրացական մենշևիկներին, որոնք, ինչպես տեսանք, դաշնակներից պահանջում էին միանալ իրենց հետ և թիկունքից խփել բոլշևիկներին։

Խոսելով դաշնակների և մենշևիկների գրկախառնվելու մասին, Ս. Օրջոնիկիձեն ասում է. «Նոյ Ժորդանիան իր վերջին ճառերից մեկում հարձակվեց հայերի վրա և կոչ էր անում խաչակրաց արշավանք սկսել նրանց դեմ։ Բայց այդ նույն Նոյ Ժորդանիան մինիստր Սարախտարաշվիլու հետ միասին մյուս օրը սիրալիրություններ և փոխադարձ ողջույններ էին փոխանակում Երևանում այսպես կոչված. «Հայրենիքի փրկության կոմիտեի» գլուխ կանգնած դաշնակ Վրացյանի հետ, և խնդրում էին նրան խփել բոլշևիկների թիկունքին։ Իսկ Վրացյանն իր առաջին իսկ դիմումի մեջ, որտեղ նա մենշևիկներին հաղորդում էր իր սխրագործությունների մասին, խնդրում էր հագուստ և մթերապաշար»[1]։

Չնայած գործադրված բոլոր ճիգերին ու ջանքերին, սկսած կատաղի հակասովետական պրովոկացիաներից և վերջացրած բռնություններով ու տեռորով, դաշնակներին ու նրանց հետ գնացող մյուս կոնտրռևոլյուցիոն պարտիաներին չհաջողվեց հենարան գտնել գրավված շրջանների բանվորների ու աշխատավոր գյուղացիների

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 45։

մեջ։ Ամենուրեք աշխատավորությունը նրանց նկատմամբ ցույց տվեց իր զայրույթն ու ատելությունը և հանդես եկավ սովետական կարգերի ակտիվ պաշտպանությամբ։

Երբ սկսվեց ավանտյուրան, Ն. Ախտայի շրջանի Ռնդամալ և Քարվանսարա (այժմ Աթարբեկյան) գյուղերի աշխատավորներն իրենց պարտիզանական ուժերով համառ դիմադրություն ցույց տվեցին դաշնակների խմբերին, որոնք զինված էին գնդացիրներով և հրանոթներով։ Երկու-երեք օր անընդհատ ուժեղ կռիվներ են տեղի ունենում այդ գյուղերի համար։ Երբ դաշնակները գրավում են վերոհիշյալ գյուղերը, Ռնդամալի և Քարվանսարայի պարտիզաններն անձնատուր չեն լինում։ Նրանք, թվով 300 հոգի, անցնում են Դիմաշեն, ապա Սլենովկա՝ Կարմիր Բանակի զորամասերի կողմը[1]։

Թալինի շրջանի աշխատավոր գյուղացիները, չնայած դաշնակների գործադրած բոլոր միջոցառումներին, հրաժարվում են նրանց կռվող ուժեր տալ։ Այդ առթիվ Թալինի շրջանից դաշնակ ղեկավարներից մեկը 1921 թ. մարտի 25-ին հաղորդել է, որ շրջանի 8 գյուղերում, չնայած շրջանային կոմիտեն հրավիրել է «կրկնակի հրապարակային բացատրական ժողովներ օրվա մոմենտի մասին և կոչ է արել մասնակցելու ներկա հեղաշրջմանը, բայց դժբախտաբար այդ աշխատանքը մնացած է ապարդյուն։

Կոմիտեն նկատելով այդ անհաջողությունը, փոխեց իր աշխատանքի ձևը և իր ընկերներեն երկուքին, որոնք փափագ հայտնած էին կամավոր արձանագրվել և ճակատ մեկնել, որոշեց թույլ տալ, որպեսզի հրապարակ գան և կոչ անեն երիտասարդությանն իրենց հետևելու համար, բայց և այնպես այդ աշխատանքն անցավ ապարդյուն, որից հետո որոշվեց բռնի կերպով հավաքել 20—30 տարեկաններին և ուղարկել»[2]։ Այս մեթոդով նրանց հաջողվում է 8 գյուղից հավաքել միայն 41 «կամավորներ» և միլիցիայի զինված պահակներով ուղարկել Էջմիածին։ Չնայած դրան, 16 հոգի ճանապարհին փախչում են, տեղ են հասնում միայն 25 հոգի։

Էջմիածնի գավառի 1-ին շրջանի միլպետը 1921 թ. մարտի 18-ին նույն գավառի դաշնակ ղեկավարին գրել է, որ «Սամաղար գյուղի կամավորների կազմակերպելը եղավ, բայց այս գիշեր կեսից ավելը փախել են, ուստի խնդրում եմ դրսի ուժ ուղարկել անձամբ Սամաղար գյուղի համար»[3]։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 171—150, գ. 8, թ. 4։
[2] Նույն տեղում, ֆ. 2/38, գ. 31, թ. 171։
[3] Նույն ֆոնդ, գ. 17, թ. 10։

Թալինի շրջանի Գյոզլու գյուղի քահանան 1921 թ. մարտի 23-ին Էջմիածնի գավառի զինկավարությանը հաղորդել է, որ շրջանում «ամեն տեսակի հակակառավարական գործեր կկատարվեն, շատ տեղերում կառավարության հրամանները երբեք չեն հարգվեր և ըմբոստության փորձեր կըլլան կառավարության կողմե եկած պաշտոնյաներու հանդեպ։ Տեղական զինվորությունը... երբեք տրամադրություն չունի զինվորություն ընելու կամ պատերազմ գնալու, շատ անգամ զինվորներու կողմե առարկություն կըլլա, թե «չպիտենք պատերազմ երթանք, բայց ում դեմ կովենք, եթե ոչ մեր եղբայրներու և հարազատներուն դեմ»»[1]։

Չնայած դաշնակների արխիվները մեզ հասել են ոչ ամբողջությամբ[2], բայց մնացած սակավ նյութերի մեջ էլ կան բազմաթիվ այդպիսի փաստեր ու փաստաթղթեր, որոնք նույնպես ցայտուն կերպով ցույց են տալիս Հայաստանի աշխատավորների ատելությունը դեպի ավանտյուրիստները և սերը դեպի սովետական կարգերը։

Ժողովրդի այդպիսի վերաբերմունքի շնորհիվ դաշնակներին չհաջողվեց ընդարձակել գրաված տերիտորիաները և տարածել Սովետական իշխանությունը Հայաստանում։ Ղամարլուում, Վեդիում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Ղազախում Սովետական իշխանությունը կանգուն մնաց, որին շուտով միացավ նաև մենշևիկյան լծից ազատագրված Լոռին։

Աշխատավոր ժողովրդի մեջ չունենալով հենարան, դաշնակ ավանտյուրիստները դիմում են արտաքին օգնության։ Նրանք մեծ հույս էին դրել մենշևիկյան Վրաստանի վրա, սակայն ինչպես տեսանք, 1921 թ. փետրվարի 25-ին մենշևիկների իշխանությունը արդեն տապալված էր և Վրաստանում ծածանվում էր Սովետների Կարմիր դրոշը։ Դա ծանր հարված էր դաշնակ ավանտյուրիստներին։ Վրաստանի Կ(բ) Պ Կենտկոմի և Ռևկոմի օրգան «Կոմունիստը» (վրացերեն) իր առաջնորդողում անդրադառնալով այդ հարցին, նշել է. «Մենշևիկյան կառավարության պարտվելուց հետո Վրաստանում, խորհրդային ուժերով շրջապատված Երևանի «կղզին» տարածապալից դրության մեջ ընկավ։ Նրա բախտը վճռվեց այն ժամանակ, երբ քաղաքացիական պատերազմում պարտված Ժորդանիայի կառավարության անձնատուր լինելը փաստ էր դարձել»[3]։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 238, գ. 31, թ. 11—13։

[2] Ավանտյուրայի լիկվիդացման օրերին, դաշնակները իրենց արխիվների մի մասը այրեցին, ոչնչացրին, իսկ որոշ մասն էլ փախցրին իրենց հետ։

[3] Այս քաղվածքը մեջ է բերված «Կարմիր աստղի» № 33-ից (1921 թ., ապրիլի 9), որտեղ տպված է «Կոմունիստի» վերոհիշյալ առաջնորդողը։

Զզվալով իրենց համար ստեղծված ծանր դրությունը, Հայաստանի բանվորների ու գյուղացիների դեմ կռիվը շարունակելու համար, Ս. Վրացյանը դիմում է Թյուրքիայի օգնությանը։ Նա տեսակցություններ է ունենում Թյուրքիայի արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայի Երևանի ներկայացուցիչ Բահաէդդինի հետ։ 1921 թ. մարտի 1-ին վերջինիս միջոցով Թյուրքիայի ազգային ժողովի կառավարությանը Ս. Վրացյանը մի դիմում է ուղարկում, որի մեջ ասված է.

«Հայրենիքի փրկության կոմիտեն»... խնդրում է Թյուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությանը, հետևյալ ազգերի փոխադարձ շահերի ըստ կարելույն շուտ՝

1. Երևան վերադարձնել ռազմաճակատում գտնվող հայ զինվորական ռազմագերիներին։

2. Տալ՝ որոշ պայմաններով՝ հայ բանակին ռազմամթերք, առաջին հերթին ռուսական երեք գծանի հրացան կամ տաճկական մաուզերի փամփուշտներ, և կամ Ռոսի ու Լեբելի սիստեմի հրացաններ։

3. Հաղորդել մեզ, թե արդյոք ազգային մեծ ժողովի կառավարությունը հնարավոր է գտնում հասցնել Հայաստանին զինվորական օժանդակություն և եթե կարող է, ի՞նչ չափով ու եղանակով և ի՞նչ ժամանակամիջոցում։

Սույն դիմումն անելով՝ Հայաստանի կառավարությունը հիմնվում է այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնց հիմք է դրված Ալեքսանդրապոլի դաշնագրից (խոսքը 1920 թ. դեկտեմբերի 2-ի դաշնագրի մասին է — Ա. Հ.) և որոնք խանգարվել էին բոլշևիկների իշխանության ժամանակ»[1]։

Բացի դրանից, Ս. Վրացյանը մի քանի նամակներ է գրում Թյուրքիայի կառավարությանը՝ նրանից սպասվող օգնության և քաղաքական-տնտեսական կապերը ամրապնդելու մասին։

Ինչպես ցույց են տալիս բերված փաստերը, դաշնակ ավանտյուրիստները բացահայտ կերպով սողում էին թյուրքական զավթիչների ոտքի տակ — ընդդեմ Հայաստանի բանվորների ու գյուղացիների կենսական շահերի, ընդդեմ մեր երկրի ազատության և անկախության։

Հաստատելով սերտ հարաբերություններ դաշնակների հետ, քեմալական Թյուրքիան Ալեքսանդրապոլում ու նրա գավառում

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, Ֆ. 4/114, գ. 128, թ. 12։

ավելի է ուժեղացնում հալածանքները կոմունիստական կազմակերպությունների և տեղական բնակչության նկատմամբ։

Մյուս կողմից դաշնակները դիմում են անգլո-ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիստների ու Իրանի խանների օգնությանը։

Սակայն ոչ մի ուժ ավանտյուրիստներին փրկել չէր կարող հերոսական Կարմիր Բանակի և նրա թիկունքում կանգնած Հայաստանի բանվորների ու աշխատավոր գյուղացիների հուժկու հարվածներից։

Դաշնակների կողմից Երևանի և մյուս շրջանների դրավումը Հայաստանի աշխատավորության մեջ առաջացրեց բուռն զայրույթ։ Ամենուրեք տեղի ունեցան աշխատավորների միտինգներ, որտեղ ընդունված բանաձևերում դատապարտելով ավանտյուրիստների դավադրական գործունեությունը, նրանք որոշեցին ղենք վերցնել, դնալ ճակատ և Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ռևոլյուցիոն դատաստան տեսնել ժողովրդի թշնամիների նկատմամբ։

Քարվանսարա (Իջևան) գյուղում տեղի ունեցած աշխատավոր գյուղացիների միտինգի բանաձևում ասված է. «Քարվանսարայի աշխատավոր գյուղացիները փետրվարի 27-ի կիրակնօրյա իրենց միտինգում լսելով ղեկուցում Հայաստանում կատարվող դեպքերի մասին՝ հաստատ խոսք են տալիս ղենքը ձեռքից վայր չդնել մինչև Հայաստանում վերջնականապես հաստատվի բանվորների և գյուղացիների իշխանությունը. մենք խոսք ենք տալիս վճռական հարվածով ջախջախել հակահեղափոխական խմբապետների, կուլակների գլուխը, որպեսզի նրանք այլևս չերազեն իրենց նախկին դարշելի իշխանությունը վերականգնելու մասին։ Բոլորս մի մարդու պես կգնանք մեր կուսակցության (բոլշևիկների) հետևից՝ Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին վերջնականապես ազատելու համար թե՛ ներքին, և թե՛ դրսի հակահեղափոխական լծից։

Կեցցե՞ հեղափոխական բանվորների ու գուղացիների Կարմիր Բանակը։

Կեցցե՞ Խորհրդային Հայաստանը։

Կեցցե՞ Խորհրդային Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սերտ միությունը»[1]։

---

[1] «Կարմիր Աստղ», օրգան Վրաստանի Կոմպարտիայի Կենտկոմի և Ռևկոմի, № 11, Թիֆլիս, 11 մարտի, 1921։

Նույն շրջանի Թալա գյուղի աշխատավորների միտինգում ընդունված բանաձևում ասված է. «Մենք՝ Թալայի գյուղացիներս՝ լսելով զկուցում ներկա մոմենտի մասին, վճռեցինք միացած ուժերով կռվել դաշնակների բանդաների դեմ, թույլ չտալ, որ վերականգնվի նրանց իշխանությունը, որովհետև մեզ համար միակ ցանկալի իշխանությունը Խորհրդային իշխանությունն է։ Թող կորչեն աշխատավոր ժողովրդի թշնամիները։

Կեցցե՜ Խորհրդային Հայաստանը»[1]։

Ջարխեջ գյուղի աշխատավորների բանաձևը վերջանում է հետևյալ խոսքերով. «Մինչև վերջնական հաղթանակը կռվել խմբապետների և մաուզերիստների դեմ»[2]։

Փետրվարի 26-ին Քարվանսարա, Սև Քար, Աշաջուր և այլ շրջանների ու գյուղերի կոմունիստներից և անպարտիական աշխատավորներից արդեն ձևավորված էր պարտիզանական դումարտակը, որը նույն օրը մեկնում է Դիլիջան—Ելենովկա՝ օգնելու դաշնակների դեմ կռվող Կարմիր Բանակի զորամասերին։ Այդպես են վարվում նաև Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Ղամարլուի, Վեղիի, Ելենովկայի և մենշևիկյան լծից նոր ազատագրված Լոռվա բանվորներն ու աշխատավոր գյուղացիները։

Բաքվից եկած բանվորներից, Շամշադինի, Իջևանի, Նոր-Բայազետի, Դիլիջանի աշխատավոր գյուղացիներից կազմված պարտիզանական ջոկատը, որը ստեղծվեց մարտական գործողությունների ընթացքում և ուներ 500 մարտիկ, հերոսական դործ կատարեց Նոր-Բայազետի համար մղված կռիվներում։ Մարտի 15-ի փողոցային մարտերում ջոկատը համառորեն կռվեց դաշնակների դեմ և պատվով կատարեց իր մարտական խնդիրը՝ հակառակորդին դուրս շպրտելով քաղաքից։ Նոր-Բայազետի համար մղված այդ կռիվներում մեծ դեր կատարեցին նաև Ալեքսանդրովկայի, Ղշլաղի, Նորագյուղի և առանձնապես Ղուլալի գյուղերի աշխատավորներից կազմված պարտիզանական ջոկատները, որոնք հակառակորդին հարվածում էին թիկունքից։

Փետրվարյան ավանտյուրայի օրերին Ղարաքիլիսայում պարտիական Գավկոմի նախաձեռնությամբ երկաթուղային բանվորներից կազմակերպվում է պարտիզանական ջոկատ, որը անմիջապես

---

[1] «Կարմիր Աստղ», օրգան Վրաստանի Կոմպարտիայի Կենտկոմի և Ռևկոմի, № 11, Թիֆլիս, 11 մարտի, 1921։

[2] Նույն տեղում։

մեկնում է մասնակցելու Նոր-Բայազետի համար մղվող կռիվներին։ Մարտի 15-ին Նոր-Բայազետի փողոցային մարտերում այս ջոկատը ևս հերոսաբար պայքարում է թշնամու դեմ [1]։ Կարճ ժամանակից հետո թշնամին նորից է գրավում Նոր-Բայազետը։

Ինչպես նշեցինք, Սովետական Հայաստանի Ռևկոմը և պետական մի շարք հիմնարկներ, Երևանի անկումից հետո Կարմիր Բանակի զորամասերի հետ գտնվում էին Ղամարլու—Վեդի շրջանում, որը կտրված էր Հայաստանի սովետական մյուս շրջաններից և ընկած էր հակառակորդի օղակման մեջ։ Երկար ժամանակ ընդհատված էր սմեն տեսակի կապը այս զորամասերի և Ղարաքիլիսա—Դիլիջան—Ելենովկա ուղղություններով գործող 11-րդ բանակի զորամասերի ու պարտիզանական ջոկատների միջև։

Հայաստանի հյուսիսային գավառներում սովետական աշխատանքները գլխավորելու և կոնտրռևոլուցիայի դեմ պայքարը կազմակերպելու նպատակով 1921 թ. փետրվարի 26-ին Դիլիջանում կազմակերպվում է Դիլիջան—Ղարաքիլիսա գավառների Ռազմառևոլյուցիոն կոմիտե, որի գլուխ, որպես նախագահ, կանգնում է Համառուսական Արտակարգ Հանձնաժողովի Կովկասյան ռազմաճակատի լիազոր Գ. Աթաբեկյանը։ Նույն օրը այդ Ռևկոմը Գ. Աթաբեկյանի ստորագրությամբ հրատարակում է իր առաջին հրամանը, որտեղ ասված է. «Ռ. Հ. Կոմիտեի իրավասության սահմանները տարածվում են Դիլիջանի և Ղարաքիլիսայի գավառների, մենշևիկյան բռնապետ դահիճներից ազատագրված Լոռվա շրջանի և Նոր-Բայազետի Ելենովկա գավառամասի վրա։ Ռ. Հ. Կոմիտեի ազդեցությունը տարածվում է նաև այն շրջանների և գավառների վրա, որոնք ազատագրվում են Կարմիր Բանակի մասերի կողմից Ելենովկայի և Բաշ-Ապարանի ուղղությամբ։

Վերոհիշյալ գավառների, գավառակների և շրջանների իշխանության ներկայացուցիչներին հրամայվում է խիստ կերպով ղեկավարվել ՌՀԿ կարգադրություններով ու հրամաններով։

Այն բոլոր կարգադրությունները և հրամանները, որոնք չեն բխում ՌՀԿ կողմից, կատարման չեն ենթարկվում։

Տեղական իշխանությունները պետք է հիշեն, որ ներկա ստեղծված կացությունը շատ լուրջ է և պահանջում է լուրջ հեղափոխական ենթարկում (դիսցիպլինա) և բոլոր կոմունիստական

---

[1] Տես «Խորհրդային Հայաստան», 16 մարտի, 1926, Լ. Հովհաննիսյանի հիշողությունները 1921 թ. քաղաքացիական կռիվների մասին։

ուժերի լարումը՝ շուտափույթ կերպով վերջ տալու հակահեղափոխությանը և վերականգնելու Հայաստանում բանվորա-գյուղացիական Խորհրդային իշխանությունը»[1]։

Դաշնակների կոնտրռևոլյուցիոն խռովությունը արագ կերպով լիկվիդացնելու համար, ինչպես Ղամարլու—Երևան, նույնպես Ելենովկա—Նոր-Բայազետ, Ելենովկա—Ախտա—Երևան և Ղարաքիլիսա—Համամլու—Ապարան—Աշտարակ—Երևան ուղղություններով սկսվում են 11-րդ Կարմիր Բանակի 20-րդ դիվիզիայի զորամասերի, Հայաստանի Կարմիր Բանակի և պարտիզանական ջոկատների հարձակողական մարտական գործողությունները։

Ղամարլու—Վեդիում ամրացված Կարմիր Բանակի զորամասերը կատարում են իրենց ուժերի վերադասավորում։ Ամրացվում է կոմունիստական ջոկատը։ Կարմիր Բանակի շարքերը լրացվում են Ղամարլուի և Վեդիի աշխատավոր գյուղացիներով։

Խնդիր ունենալով ազատագրել Երևանը, Կարմիր Բանակի զորամասերը Ղամարլուի կողմից փետրվարի 24-ի լույս 25-ի գիշերն անցնում են հարձակման։ Մինչև փետրվարի 28-ը Վ. Աղբաշ—Ուլուխանլու (այժմ Մասիս) հատվածում Երևանի համար տեղի են ունենում համառ մարտեր։ Առաջ շարժվելով, Կարմիր Բանակի զորամասերը հասնում են մինչև Վ. Շենդավիթ, Աղջաղշլաղ և Չարբախ գյուղերը (որոնք Երևանից հեռու են 6—8 կիլոմետր)։ Խուճապահար նահանջելով, դաշնակները թողնում են մեծ թվով սպանվածներ, վիրավորներ, գերիներ և զգալի քանակությամբ ռազմամթերք ու պարեն։ Սակայն, օգտվելով այն հանգամանքից, որ Ելենովկայի և Ապարանի ուղղությամբ Կարմիր Բանակի զորամասերը դեռ չէին սկսել հարձակումը, դաշնակները իրենց ուժերը կենտրոնացնում են Ղամարլուի ճակատում և հասնում մասնակի հաջողությունների։ Կարմիր Բանակի զորամասերը մարտեր մղելով, ետ են քաշվում իրենց ելակետային դիրքերը (փետրվարի 28-ի գիշերը)։ Այդ մարտերի ժամանակ, փետրվարի 26-ին Վ. Աղբաշում հերոսաբար սպանվում է 2-րդ հրետանային գնդի հրամանատար Ֆիշելևիչը։

Կարմիր Բանակի զորամասերը նորից ամրանում են Կարաբաղլար—Բեյուկ-Վեդի—Ենգիջա — Խոր-Վիրապ — Թայթան գծում։ Նույն օրը հրապարակվում է Հայաստանի Կարմիր Բանակի հրա-

---

[1] ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, նյութեր 11-րդ բանակի վերաբերյալ, կալաթ 4, գ. 1, թ. 87։

մանատարի հրամանը, որտեղ գնահատելով փետրվարի 24—28-ի հերոսական մարտերը, ասված է.

«Սոանձին ընկերների հերոսությունը, նրանց ձգտումը դեպի առաջ, դեպի հաղթանակ, և իմ խնամքին հանձնված զորամասերի հավատը մոտ ապագայում վերջնական հաղթանակ ձեռք բերելու համար, զորամասերին մղում էր մի հաղթանակից դեպի մյուսը և միայն երկու կողմից կատարված խորը շրջանցումը ստիպեց մեզ ետ քաշվել և նորից տակտիկական տեսակետից ավելի ձեռնտու դիրքեր գրավել...»։

Դարալագյազում կենտրոնացած դաշնակցական բանդաները, խնդիր ունենալով հարվածել Ղամարլու—Վեդիում գտնվող Կարմիր Բանակի զորքերի թիկունքին և միանալ Երևանում գտնվող կոնտրռևոլյուցիոն ուժերին, մարտի 1-ին ուժեղ հարձակում են սկսում դեպի Վեդի՝ Ջանախչի—Ջինջրլու ուղղությամբ։ Սակայն առաջին իսկ հարձակման ժամանակ նրանք ետ են շպրտվում Սովետական նախիջևանի բանվորներից ու գյուղացիներից կազմված պարտիզանական ջոկատի՝ «Կարմիր Տարորի» ջախջախիչ հարվածներից։ «Կարմիր Տարորը», որը բաղկացած էր 400 պարտիզան-մարտիկներից, ետ շպրտելով այդ բանդաներին և գրավելով կարևոր ստրատեգիական վայրերը, մինչև վերջ հերոսաբար պաշտպանեց Ղամարլու—Վեդիի շրջանում ամրացած սովետական զորամասերի թիկունքը։ Դրանով նա դաշնակների Դարալագյազի բանդաներին զրկեց Երևանում գտնվող դաշնակցական ուժերին միանալու հնարավորությունից։

Մարտի 8-ին թշնամին, Երևանի կողմից, սեղմելով Կարմիր Բանակի զորամասերի ձախ թևը, հանկարծակի ուժեղ հարձակում է սկսում Քեչիկ-Վեդի գյուղի և Խոր-Վիրապի վրա։ Սակայն ենթարկվելով մարտական կոմիսար Լիպարիտ Մխչյանի ղեկավարած Հայաստանի Կարմիր Բանակի առաջին բրիգադի խիզախ հակագրոհներին, հակառակորդը մեծ կորուստներ կրելով նահանջում է։ Այդ մարտում ծանր կորուստներ են ունենում նաև Կարմիր Բանակի զորամասերը։ Սպանվում է հրետանու քաջարի պետ Սեմյոնովը, մահացու վիրավորվում է Կոմունիստական պարտիայի հավատարիմ զավակ Լիպարիտ Մխչյանը։ Այդ ծանր վերքից ապրիլի 16-ին նա մահանում է։

Մարտի 9-ին Ղամարլուում գտնվող Կարմիր Բանակի զորամասերը Թիֆլիսի և Բաքվի հետ վերականգնում են ռադիո-կապը, որը փետրվարյան ավանտյուրայի սկզբից ընդհատված էր։ Ռադիոն

հաղորդում է, որ 11-րդ բանակի ուժերը Ելենովկա—Ախտայի և Համամլու—Ապարանի ուղղություններով սկսել են հարձակումը և առաջխաղացումը դեպի Երևան։ Այդ լուրը մեծ ոգևորություն է առաջացնում Ղամարլու—Վեդիի հատվածում գտնվող սովետական զորքերի և պարտիզանների մեջ։ Չնայած ռազմամթերքի, պարենի, հագուստեղենի, կոշկեղենի սուր պակասին, հոգնածությանը, նրանք նորից սկսում են եռանդուն նախապատրաստությունը Երևանի վրա գրոհելու համար։

Երևանում, Կոտայքում, Ապարանում, Աշտարակում և Էջմիածնում պատսպարված դաշնակ-ավանտյուրիստների գրությունն այդ ժամանակ խիստ վատացել էր։ Նրանց օրերն արդեն հաշվված էին։ Ս. Օրջոնիկիձեն մարտի 9-ին Գրուզ—Կավրոստայի աշխատակցի հետ ունեցած զրույցում անդրադառնալով այդ ժամանակ Հայաստանում տիրող գրությանը, ասել է.

«Ներկա մոմենտում Հայաստանում գրությունն այսպես է.

Երևանը շրջապատված է կարմիր զորքերի օղակով։ Զորքերի առաջին խումբը գտնվում է Երևանից 18 վերստ հեռավորության վրա՝ Ղամարլուի ռայոնում, ունի երկու գրահապատ և բավական քանակությամբ գնդացիրներ։ Երկրորդ խումբը գտնվում է Ելենովկայի—Ներքին Ախտայի ռայոնում։ Երրորդ խումբը՝ Համամլու—Ղարաքիլիսայի ռայոնում։ Օղակը քանի գնում նեղանում է, և մոտ օրերս Վրացյանի երևանյան ավանտյուրան, առանց որևէ կասկածի, լիկվիդացիայի կենթարկվի»[1]։

Ելենովկայում գտնվող Կարմիր Բանակի զորամասերը, Ղարաքիլիսայի, Բաքվի, Ելենովկայի և Հայաստանի մյուս շրջանների բանվորներից ու գյուղացիներից կազմակերպված պարտիզանական ջոկատները, որոնց ղեկավարում էր Գ. Աթարբեկյանը, մարտի 12-ին նորից են հարձակում սկսում Ալեքսանդրովկա—Նոր-Բայազետ ուղղությամբ։ Նրանց խնդիր էր տրված աղատագրել Նոր-Բայազետը և հետ շպրտել հակառակորդին, թույլ չտալով նրան միանալու Երևանում գտնվող բանդաների հետ։ Ճանապարհին մի քանի տեղ ուժեղ մարտերի բռնվելով և թշնամու կատաղի դիմադրությունը հաղթահարելով, նույն օրը երեկոյան, կարմիր զորամասերը մտնում են Նոր-Բայազետ։ Դաշնակները շպրտվում են դեպի Երանոս, որտեղ վերադասավորելով իրենց ուժերը, մարտի 15-ի լույս 16-ի գիշերը կրկին հարձակվում են Նոր-Բայազետի վրա։ Քաղաքի

---

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 19։

շրջակայքում և փողոցներում մի քանի ժամ անընդհատ տեղի են ունենում ուժեղ կռիվներ, որոնք տեղ-տեղ փոխվում են սվինամարտի։ Թշնամու ուժերը մարտի 16-ին դարձյալ դուրս են շպրտվում Նոր-Բայազետից և նահանջում դեպի Երանոս—Ղարանլուղ (այժմ Մարտունի)։ Բայազետի համար մղվող կռիվներում խոշոր դեր խաղացին նույն քաղաքի և շրջանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիները, որոնք դաշնակներին հարվածում էին թիկունքից։

Ղամարլուի, Համամլու—Ապարանի և Ելենովկա—Ն. Ախտայի կողմերից սկսելով հարձակումը, Կարմիր Բանակի զորամասերը կոտրելով հակառակորդի կատաղի դիմադրությունը, առաջ են շարժվում դեպի Երևան։ Վեղի—Ղամարլուից համառորեն առաջ շարժվող Կարմիր Բանակի ուժերը մարտի 17-ին հասել և ամրացել էին Վ. Աղբաշ—Ուլուխանլու հատվածում։ Այդ օրը Ուլուխանլու կայարանի մոտ տեղի ունեցած մարտում հակառակորդի 4-րդ գնդի մի ամբողջ դիմարտակ անցնում է Կարմիր Բանակի կողմը և զենքն ուղղում ժողովրդի թշնամի դաշնակների դեմ։ Ելենովկա—Ն. Ախտա գծում Կարմիր Բանակի զորամասերը ուժեղ կռիվներից հետո մարտի 16-ին ազատագրում են Ռնդամալ, Քարվանսարա, Մաքրավանք, Աղվարա գյուղերը։ Համամլու—Ապարան ուղղությամբ նույնպես ազատագրվում են մի շարք գյուղեր։

Հակառակորդի շարքերում խուճապը և հուսալքությունը մեծ չափերի են հասնում։

Ինչպես տեսանք, Կարմիր Բանակի զորքերի և պարտիզանների վճռական գործողությունների շնորհիվ, հակառակորդը զրկված էր Նոր-Բայազետի վրայով Դարալագյազից և Զանգեզուրից օգնություն ստանալու հնարավորությունից։

Հաշվի առնելով, որ Երևանի ազատագրումն արդեն կանխորոշված էր և նրա համար մղվելիք հետագա կռիվներում կարող էր բազմաթիվ աշխատավորների անտեղի արյուն թափվել, Ս. Օրջոնիկիձեն դաշնակ ավանտյուրիստներին առաջարկում է անձնատուր լինել։ Մարտի 20-ին «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահի անունով Ս. Օրջոնիկիձեն ուղարկում է հետևյալ հեռագիրը. «Ինձ ներկայացան մի խումբ հայ ընկերներ և առաջարկեցին իրենց նախաձեռնությամբ դիմել ձեզ և առաջարկել, որ վերջ տրվի անիմաստ, աննպատակ և ժողովրդի համար կործանիչ պատերազմին։ Մենշևիկյան կառավարության և Խորհրդային իշխանության միջև կռիվը վերջացավ բանվորա-գյուղացիական իշխանության լրիվ հաղթանակով, ամբողջ Վրաստանում Խորհուրդների ճանաչումով...

...Ամենքի համար պարզ է, և ամենափոքր կասկածանքի անգամ ենթակա չի կարող լինել, որ հասել է բանվորա-գյուղացիական իշխանության տիրապետության ժամը ամբողջ Անդրկովկասում։ Ահա թե ինչու ես ընդունում եմ հայ ընկերների դիմումը և առաջարկում եմ ձեզ՝ անհապաղ դադարեցնել անհուսալի կռիվը՝ հիմք ընդունելով վերջնականապես զենքը վայր դնել...»[1]։

Ս. Օրջոնիկիձեի հանձնարարությամբ այդ օրերին Թիֆլիսից Երևան է մեկնում հայ ժողովրդի մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը՝ նույնպիսի առաջարկ անելու։ Սակայն այդ բոլորին դաշնակները բացասական պատասխան են տալիս։

Դրանից հետո, մարտի 25-ից սկսած, բոլոր կողմերից ծավալվում է Կարմիր Բանակի զորամասերի և պարտիզանական ջոկատների ուժեղ դրոհը դեպի Երևան։ Մարտի 26-ին Եկենովկա—Ախտա—Երևան ուղղությամբ Կարմիր Բանակի զորամասերը ազատագրում են Կարաջորան, Նուռնուս, Նովոնիկոլաևկա և Բեղխարար գյուղերը։ Մարտի 28—30-ին առաջ շարժվելով, նրանք հասնում են Էլար։ Էլար—Արամուս—Գյամրեզ գծի վրա տեղի են ունենում ուժեղ կռիվներ, որոնց ընթացքում կոտրելով հակառակորդի դիմադրությունը, կարմիր զորամասերը շարունակում են առաջխաղացումը դեպի Երևան։ Համամլու—Ապարան—Աշտարակ—Երևան ուղղությամբ Կարմիր Բանակի զորամասերը մարտի 26-ին ազատագրում են Ղաչաղան, Վարթենավ և Զոթուր գյուղերը. 27-ին, ուժեղ մարտերից հետո, նրանք ազատագրում են Սպիտակի (Փամբակի) լեռնանցքը և շարունակում առաջխաղացումը։ Մարտի 29-ին ազատագրում են Ապարանը, ապրիլի 1-ին՝ Աշտարակը։

Հյուսիսից և հյուսիս-արևմուտքից Կարմիր Բանակի այդպիսի ուժեղ դրոհը դաշնակներին հարկադրում է փախուստի ճանապարհ փնտրել։ Նրանք ցանկանում են ուղղություն վերցնել դեպի Դարալագյազ՝ Ղամարլու—Վեդիի վայրով։ Այդ նպատակով սկսում են կատաղի դրոհը Ղամարլու—Վեդիում գործող Կարմիր Բանակի զորամասերի վրա։ Միաժամանակ Թիկունքից՝ Դարալագյազից դաշնակցական բանդաները կրկին ուժեղ հարձակումներ են սկսում դեպի Երևան՝ օգնելու այնտեղի իրենց ուժերին։ Բայց այս անգամ ևս նրանք դրական արդյունքների չեն հասնում, հակահարված ստանալով, ետ են շպրտվում։

Մարտի երրորդ տասնօրյակում Վեդի—Ղամարլուում գտնվող Կարմիր Բանակի զորամասերի համար սկսվել էին ամենածանր

[1] «Կարմիր Աստղ», № 19, Թիֆլիս, 23 մարտի, 1921։

օրերը։ Վերջացել էին ռազմամթերքի, հանդերձանքի և պարենի պաշարները։ Այդ ծանր վիճակի մասին ռադիոն Արարատ կայարանից հաղորդում է Թիֆլիս՝ Ս. Օրջոնիկիձեին, որը նրանց օգնելու համար վճռական միջոցներ է ձեռք առնում։ Նրա ցուցումներով 1921 թ. մարտի 25-ին, կատարվում է սովետական ինքնաթիռի հերոսական թռիչքը Թիֆլիսից դեպի Արարատյան դաշտը։ Եղանակի աննպաստ պայմաններում անցնելով Հայաստանի լեռների ու կիրճերի վրայով, ինքնաթիռը հաջողությամբ վայրէջք է կատարում Արարատյան դաշտում— Արաքսի ափին, փայլուն կերպով կատարելով իր մարտական առաջադրանքը։ Վեդի—Ղամարլուում մարտնչող Կարմիր Բանակի զորքերի համար նա հասցնում է 47 կիլոգրամ (5000 հատ) ոսկի։[1] Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ցուցումներով Ս. Օրջոնիկիձեի կողմից կազմակերված այդպիսի օգնությունն էլ ավելի է բարձրացնում մարտիկների ու հրամանատարների ոգևորությունը։ Գործադրելով բոլոր միջոցները, մարտի 25-ից մինչև ապրիլի 2-ը անընդհատ տեղի ունեցած բոլոր մարտերում նրանք ետ են շպրտում հակառակորդի հարձակումները, ինչպես Երևանի, նույնպես Դարալագյազի կողմից և թույլ չեն տալիս, որ Երևանի ու Դարալագյազի դաշնակցական բանդաները միանան իրար հետ։

Երևանի տակ համառ կռիվներից հետո, քայքայելով հակառակորդի շարքերը և գլխովին ջարդելով նրան, ապրիլի 2-ին հերոսական 11-րդ բանակի զորամասերը և Հայաստանի բանվորներից ու գյուղացիներից կազմված պարտիզանական ջոկատները Բանաքեռի և Աշտարակի կողմից մտնում են Երևան։ Հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները դուրս են շպրտվում Սովետական Հայաստանի մայրաքաղաքից։ Կարմիր Բանակի զորամասերը ապրիլի 3-ին ազատագրում են Էջմիածինը։ Ապրիլի 4-ին Երևան են մտնում նաև Վեդի—Ղամարլուում գտնվող Հայաստանի Կարմիր Բանակի զորամասերը, որոնք շրջապատված լինելով թշնամու կողմից, 45 օր անընդհատ ամենածանր պայմաններում հերոսաբար մարտնչում էին հանուն Սովետական իշխանության։

Ապրիլի 6-ին «Իզվեստիա» լրագրում տպագրվում է Գ. Աթարբեկյանի հեռագիրը, ուր ասված է. «Երևան, 3 ապրիլի։ Այսօր հայ աշխատավոր մասսաների ջանքերով, Կարմիր Բանակի զորամասերի օժանդակությամբ, լիկվիդացվեց դաշնակցություն պարտիայի նոզկալի ավանտյուրան... Հայ գյուղացիները և բանվորները, ջախջախելով ավանտյուրիստների բանդա-խմբակները՝ դրավեցին Սո-

[1] „Заря Востока", № 178, 4 августа, 1923.

վետական Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևանը, վերջնականապես բարձրացնելով աշխատանքի կարմիր դրոշը։ Քաղաքի ամբողջ բնակչությունը հանդիսավոր կերպով դիմավորեց կարմիր ջոկատներին»[1]։

Երևանի և մյուս շրջանների աշխատավորությունն իր ազատարարին՝ հերոսական Կարմիր Բանակին դիմավորում է անհուն ցնծությամբ։

Դաշնակները թողնելով Երևանը, Աշտարակը, Էջմիածինը և Կոտայքը, Բաշ-Գյառնիի վրայով խուճապահար փախչում են դեպի Դարալագյազ։

«Հայրենիքի փրկության կոմիտեն» հափշտակում և իր հետ փախցնում է հայ ժողովրդի հարստությունն ու թանկարժեք իրերը։ Միայն Երևանի պետական գանձարանից նրանք կողոպտում են 750 միլիոն սովետական դրամանիշ և ոգալի քանակությամբ ոսկի[2]։ Դաշնակցական հրոսակախմբերը փախուստի ժամանակ թալանում և ավերում են իրենց ճանապարհին եղած բոլոր գյուղերը։

Հետապնդելով ջախջախված հակառակորդին, Կարմիր Բանակի զորամասերը ապրիլի 7-ին ազատագրում են Բաշ-Գյառնին։ Ապրիլի 9-ից մինչև 15-ը հակահեղափոխական բանդաներից ազատագրվում են նաև Ղարանլուղի, Բասարգեչարի և Դարալագյազի շրջանները։

Փետրվարյան կոնտրռևոլյուցիայի ջախջախումից և Հայաստանի աշխատավորության ու նրա հերոսական Կարմիր Բանակի հաջողություններից կատաղած, դաշնակցական բարբարոսներն ավելի ու ավելի դազանային ձևերով սկսեցին դատաստան տեսնել բանվորների, գյուղացիների և վերջիններիս շահերի իսկական պաշտպաններ կոմունիստների նկատմամբ։

Այդ բարբարոսություններից ամենապարզագույնն ու իր նմանը չունեցողը Տաթևի և դրան նախորդող դեպքերն են, որոնք տեղի ունեցան 1921 թ. ապրիլին։ Մարտի 25-ին, երբ Կարմիր Բանակը մոտենում էր Երևանին, դաշնակները Երևանի բանտից առանձնացնում և պահակային ուժեղ հսկողության տակ դեպի Բաշ-Գյառնի — Զանգեզուր են ուղարկում 63 ռևոլյուցիոն մարտիկների։ Դաշնակցական ճիվաղները որոշել էին ոչնչացնել այդ անվեհեր ռևոլյուցիոներներին։ Երևանից մինչև Տաթև այդ 63 մարտիկներին տանում են սված և կիսամերկ վիճակում։ «Ծաղրն ու ծանակն այն աստիճանի էր հասնում, որ նեթն բանտարկյալներից մեկն ու մեկը, ծա-

[1] „Известия ВЦИК", № 74, 6 апреля, 1921.

[2] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 128, թ. 3։

բավից տանջված, ցանկանում էր գետնից քիչ ձյուն վերցնել, թույլ չէին տալիս և, որպես հրամանները չկատարողների, թակում էին հրացանի կոթով»[1]։ Ռևոլյուցիոն մարտիկները շատ լավ գիտեին, որ դաշնակցական բանդիտներն իրենց առաջնորդում են դեպի մահ, սակայն գնում էին վստահ և աներեր, հաստատ համոզված լինելով, որ այն վեհ գործը, որի համար զոհում են իրենց կյանքը, շուտով հաղթանակելու է։

Ապրիլի 3-ին Բաշ-Գյառնիի մոտ դաշնակները ձորի ափից ցած են գլորում 3 հիվանդների, որոնք սովից ու շարչարանքից ուժասպառ, զրկված էին քայլելու հնարավորությունից։ Ապրիլի 5-ին Արմենկի դաշտում (Վեդիի շրջանում) սվինահար են անում Հայաստանի Կոմերիտմիության Կենտկոմի քարտուղար Արմենակ Բուդաղյանին և բանվոր Տ. Թաղիանոսյանին։

Մինչև Քեշիշքենդ հասնելը ճանապարհին նույն ձևով սպանում են կարմիր հրամանատար Ռ. Պողոսյանին և դինկոմ Ն. Օլթեցյանին։

Քեշիշքենդում ռևոլյուցիոն մարտիկների այս խմբին միացվում է 40 հոգուց բաղկացած մի նոր խումբ, բաղկացած այդ շրջանի ռևկոմների գերի վերցված նախագահներից, անդամներից և սովետական մյուս ակտիվ գործիչներից։ Ապրիլի 13-ին բանտարկյալներին հասցնում են Գնդեվազ գյուղը։ Դաշնակցական բարբարոսներն այստեղ 12 հոգու ժայռից ցած են գլորում։ Ապրիլի 14-ին Բազարչայում բանտարկյալների խումբն ավելանում է 100 գերի կարմիրբանակայիններով։ Դրանք այն 400 գերիների մնացորդներն էին, որ դաշնակցական հրոսակախմբերը վերցրել էին փետրվարի 13-ին Դարալագյազի վրա կատարած հանկարծակի հարձակման ժամանակ։ 300 հոգու նրանք ոչնչացրել էին՝ խոշտանգելով կամ սովի մատնելով։ Բանտարկյալներին տանելով դեպի Տաթև, Անգեղակոթում դաշնակները նրանցից սպանում են ևս 16 հոգու, Լծեն գյուղում՝ 17 հոգու և այլն։ Այսպիսով, 203 ռևոլյուցիոն մարտիկներից ճանապարհին ոչնչացվում են 91 հոգի, 2 հոգու հաջողվում է փախչել, իսկ մնացած 110 բանտարկյալները հասցվում են Տաթև։ Բանտարկյալներից 6 հոգու այստեղ հաջողվում է ազատվել, իսկ մյուս 104 ռևոլյուցիոն մարտիկները բանդիտ Նժդեհի կարգադրությամբ, ենթարկվելով անասելի խոշտանգումների ու տանջանքների, ցած են նետվում Տաթևի ժայռից։

Փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացիայից հետո դաշնակ-

[1] «Կոմունիստ», № 75, 28 ապրիլի, 1921։

ների ջախջախված ուժերի մնացորդները կենտրոնանում են Զանգեզուրում, ուր իշխում էր բանդիտ Նժդեհն իր հրոսակախմբերով։ Տեղի է ունենում «Հայրենիքի փրկության կոմիտեի» և Նժդեհի զինված ուժերի միացում։ Նրանք շարունակում են տեռորի ենթարկել, կեղեքել ու հարստահարել Զանգեզուրի աշխատավորությանը։

Օտարերկրյա իմպերիալիստները և Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն տարրերը մեծ հույս էին դրել Զանգեզուրում պատսպարված դաշնակցական բանդաների վրա։ Վերջիններիս ոգեշնչումով ու օգնությամբ Զանգեզուրում պատսպարված դաշնակները տենդորեն նախապատրաստվում էին նոր կռիվների՝ Հայաստանի բանվորների և գյուղացիների իշխանության դեմ։ Նրանք ջանք չէին խնայում Սովետական իշխանության հասցեին բազմատեսակ պրովոկացիոն լուրեր տարածելու, հակասովետական ագիտացիան ուժեղացնելու և Զանգեզուրի աշխատավորությանը մոլորեցնելու համար։ Սակայն Զանգեզուրի աշխատավորությունը սերտորեն կապված էր ընդհատակում գործող կոմունիստական կազմակերպությունների հետ, գնում էր նրա հետևից և հերոսաբար շարունակում պայքարը հանուն սովետական կարգերի։ Այդ պայքարն էլ ավելի մեծ թափ ու ծավալ է ստանում փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից հետո, երբ Զանգեզուրը Նախիջևանի, Դարալագյազի և Ղարաբաղի կողմից շրջապատված էր Կարմիր Բանակի զորամասերով։

Սովետական Հայաստանի դրությունը 1921 թ. ապրիլ—մայիս ամիսներին սկսել էր զգալի կերպով բարելավվել։ Ինչպես տեսանք, այդ ժամանակ Վրաստանում արդեն սովետական կարգեր էին հաստատված, թյուրքական օկուպացիոն զորքերը ետ էին շպրտվել Ալեքսանդրապոլից և նրա դավառից, երկաթուղային անարգել հաղորդակցություն էր հաստատված Վրաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի հետ, որտեղից ուղարկվող պարենային և զրամական օգնությունն արագ կերպով հասնելով տեղ, խոշոր չափով նպաստեցին Հայաստանի բանվորների ու գյուղացիների դրության բարելավմանը։

* * *

1921 թ. մայիսի կեսերից ՀՍՍՌ ժողկոմսովետը և 11-րդ բանակի հրամանատարությունը հատուկ պատվիրակության միջոցով Լենինահայաստանի «կառավարության» հետ բանակցություններ են սկսում՝ առանց կռիվների Զանգեզուրը Սովետական Հայաստանին միացնելու համար։ Սպասելով բարեհաջող արդյունքներ այդ բա-

նակցություններից, ինչպես և նկատի ունենալով գյուղատնտեսության քայքայված վիճակը, բանվորական ուժի խիստ պակասը գյուղում, ՀՍՍՌ Ժողկոմսովետը որոշում է ընդունում Կարմիր Բանակի շարքերում եղած որոշ հասակների զորացրման մասին: Մայիսի 20-ին սկսվում է այդ զորացրումը: Կարմիր բանակայինների մոտ կեսը տուն է վերադառնում՝ խաղաղ աշխատանքի: Սակայն այդ երկար չի տևում:

Դաշնակ ավանտյուրիստները մի կողմից մտնելով բանակցությունների մեջ, մյուս կողմից՝ դաղտագողի նախապատրաստվում էին Սովետական իշխանության վրա հանկարծակի հարձակվելու համար: Սկսված բանակցությունները նրանք ձգձգեցին մեկ ամսից ավելի, որի ընթացքում լրացնում և վերախմբավորում էին իրենց ուժերը:

Հունիսի 15-ին, երբ դեռ շարունակվում էին խաղաղ բանակցությունները երկու կողմերի ներկայացուցիչների միջև, դաշնակցական զինված բանդաները հանկարծակի հարձակում են գործում Դարալագյազի վրա: Այսպիսով, ժողովրդի թշնամիները նորից բորբոքում են քաղաքացիական պատերազմը, կրկին դառնալով մարդկային հազարավոր զոհերի և նյութական-կուլտուրական մեծ վնասների ու ավերումների պատճառ:

Դաշնակների հարձակման հետևանքով Կարմիր Բանակի զորամասերը ետ են քաշվում Դարալագյազում գրաված իրենց դիրքերից: Զավթելով Դարալագյազը, դաշնակներն անողոք դատաստան են տեսնում տեղի աշխատավոր գյուղացիության նկատմամբ, թալանում և ոչնչացնում են նրանց ամբողջ ունեցվածքը: Նրանք նույնիսկ պլաններ են մշակում կրկին անգամ Երևանի վրա հարձակվելու համար:

Դաշնակների ավազակային հարձակումը Դարալագյազի վրա՝ առաջ բերեց ժողովրդական մեծ ցասում: Սովետական Հայաստանի մայրաքաղաքում, գավառներում, շրջաններում և գյուղերում տեղի ունեցան աշխատավորների բազմամարդ միտինգներ: Ամենուրեք աշխատավորները միահամուռ կերպով որոշում են գենքը ձեռքին դուրս գալ և անողոք դատաստան տեսնել Զանգեզուրում բուն դրած մաուզերիստական բանդաների նկատմամբ, որոնք ծանր բեռի նման նստել էին Զանգեզուրի աշխատավորության վրին և խանգարում էին Սովետական Հայաստանի բանվորների ու գյուղացիների խաղաղ շինարարական աշխատանքները:

Հունիսի 18-ին հրապարակվում է Ժողկոմսովետի կոչը՝ ուղղը-

ված Հայաստանի աշխատավորությանը։ Այնտեղ ասված է, որ դաշնակցական ավանտյուրիստները, հարձակվելով Դարալագյազի վրա, ցանկանում են նորից բորբոքել բաղաքացիական կռիվները և տապալել Սովետական իշխանությունը։ Սակայն այդ նրանց չի հաջողվի։ Հայաստանի աշխատավորները կուռ շարքերով համախմբված Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության շուրջը, կջախջախեն ժողովրդի թշնամիներին և Զանգեզուրը կազատագրեն նրանց լծից[1]։

Նույն օրը Երևանում կայանում է աշխատավորների և կարմիրբանակայինների բազմահազար միտինգ, որը, միանալով ժողկոմսովետի կոչին, խոսք է տալիս գործադրել բոլոր միջոցները և արագացնել դաշնակցական բանդաների վերջնական ջախջախումը։ Այդ գործի իրականացման համար Երևանի աշխատավորությունն իր պատրաստակամությունն է հայտնում զենքը ձեռքին մեկնել ռազմահակատ։ Վաղարշապատի գավառի 6-րդ գավառամասի (Զանգիբասարի) հայ և ադրբեջանական գյուղացիների միտինգի բանաձևում ասված է. «...Մենք պատրաստ ենք ամեն զոհողություն անել և հարկ եղած աջակցությունը ցույց տալ Կոմունիստական կուսակցությանը և Խորհրդային իշխանությանը՝ վերջնականապես լիկվիդացիայի ենթարկելու ավազակների վերջին որջը»[2]։ Դիլիջանի աշխատավորների հունիսի 21-ի միտինգի բանաձևում ասված է. «Հարձակումը (Դարալագյազի վրա — Ա. Հ.) մի հարված է մեր թիկունքին այն ժամանակ, երբ մենք զբաղված ենք գաշտային աշխատանքներով։

...Մենք հայտարարում ենք, որ պատրաստ ենք ամեն բոպե զենքը ձեռներիս պաշտպանել Սովետական կառավարությունը. այս անգամ պետք է հաշիվներս մաքրենք մեր ոխերիմ թշնամիների հետ. մահ ավանտյուրիստներին, անխնա կռիվ հակահեղափոխության դեմ»[3]։

Նույնպիսի որոշումներ են ընդունում նաև մյուս գավառների, շրջանների և գյուղերի աշխատավորները։

Ստանալով Հայաստանի բանվորների և գյուղացիների ամեն տեսակի օգնությունը, Կարմիր Բանակի զորամասերը հունիսի 20-ին սկսում են հակագրոհը դեպի Զանգեզուր։

---

[1] Տես «Խորհրդային Հայաստան», № 106, 19 հունիսի, 1921։

[2] Հայկական ՍՍՌ Պետական Կենտր. Արխիվ, Ռևկոմի ֆոնդ, գ. 10, էջ 27։

[3] Նույն տեղում, ԺԿՍ-ի ֆոնդ, տուփ № 5, գ. 22, էջ 150—151։

Դաշնակների դարալագյազյան հարձակումից հետո ՀՍՍՌ Ռազմական գործերի ժողկոմ և Առանձին Կովկասյան Բանակի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ Ալ. Մյասնիկյանի և Երևանի ռազմական խմբավորման հրամանատար Վելիկանովի ստորագրությունները հրապարակված հրամանում ասված է.

«Կարմիր զինվորնե՛ր, հրամանատարնե՛ր և կոմիսարնե՛ր.

Զանգեզուրի լեռներում ապաստանած դաշնակները խարդախորեն հարձակում գործեցին Դարալագյազի մեր զորամասերի վրա։

...Ստույգ տեղեկությունների համաձայն, Զանգեզուրի ապստամբները վաղօրոք խորհրդակցություն են ունեցել մուսավաթիստների և ուրիշ կոնտրռևոլյուցիոներների հետ։ Նրանց նպատակն է տապալել Հայաստանում, ապա և ամբողջ Կովկասում Սովետական իշխանությունը։ Այդպիսով, Զանգեզուրը դարձել է ոչ միայն ավազակների բնակավայր, այլև համակովկասյան կոնտրռևոլյուցիայի օջախ։

Սովետական Կովկասը — այդ սովետական մարդարիտը — չի կարող թույլ տալ, որ Կովկասի կոնտրռևոլյուցիայի այս վերջին բունը՝ Զանգեզուրը, անպատիժ կերպով կարողանա խաղալ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աշխատավոր ժողովրդի ճակատագրի հետ։

Սովետական Հայաստանը, որը շահագրգռված է Զանգեզուրը իր մայր ռևոլյուցիոն ընտանիքի գիրկն ընդունելու և ազատելու երկիրը զանազան բախտախնդիրներից ու կոնտրռևոլյուցիոն կեղտոտ արատից, նորից կոչ է անում ձեզ զրոհ տալ, Զանգեզուրի մախնոյական դավանանական բայլին մահացու հարված հասցնել։

...Զանգեզուրի գյուղացիներին ցույց տվեք հոգատար և ուշադիր վերաբերմունք։ Աշխատեցեք նրանց ազատել նրանց շլինքին կապած բանդիտներից։ Եղեք անխնա դեպի թշնամին, դեպի բանդիտը։ Բայց չդիպչեք խաղաղ ժողովրդին, պահպանեցեք երկրում կարգ ու կանոն։ Ոչ թե զանգեզուրցին է մեր թշնամին, այլ նրա վզին նստած մախնոյական տզրուկը»[1]։

Այդ կոչը մեծ արագությամբ տարածվում է բանակում և ժողովրդի մեջ։ Նա խոշոր նշանակություն ունեցավ բանակի և ժողովրդի մարտական ոգին բարձրացնելու համար։ Աշխատավորները կրկին անգամ համոզվեցին, որ դաշնակներն են քաղաքացիական

---

[1] ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, պատմական մաս, 11-րդ բանակին վերաբերող նյութեր, կապուկ 4, գ. 5, թ. 124։

կոմիտեների հրահրողը, որ կատարելով օտարերկրյա ինտերվենտների կամքը, դաշնակները դարձել ու դառնում են հազարավոր զոհերի և հսկայական նյութական վնասների պատճառ, կտրելով հայ ժողովրդին իր խաղաղ շինարարական աշխատանքներից։

Եվ շուտով սկսվում է դրոհը Զանգեզուրում պատսպարված դաշնակցական բանդաների ոչնչացման համար, Զանգեզուրի ազատագրման համար։ Կարմիր Բանակի զորամասերի երևանյան խմբավորման դեպի Զանգեզուր սկսված դրոհը ծավալվում է երեք ուղղություններով— Վեդիից դեպի Քեշիշքենդ, Նախիջևանից դեպի Անդեղակոթ (Սիսիան) և Օրդուբադից դեպի Մեղրի։ Բացի դրանից, Նոր-Բայազետի կողմից հարձակում է սկսվում նաև Սելիմի լեռնանցքի վրա, որը գրավել էին դաշնակները վերջին հարձակման ժամանակ։ Դրոհի հենց առաջին օրերին երևանյան խմբավորումը ձեռք է բերում մեծ հաջողություններ։ Վեդիի կողմից հարձակվող զորքերը հունիսի 22—23-ին տեղի ունեցած ուժեղ մարտերում դաշնակներին ետ են շպրտում և ազատագրում Դարալագյազի գավառի մի շարք գյուղեր, հասնելով մինչև Բաշգյուղ—Քեշիշքենդ—Մալիշկա—Ենդիջա։ Նոր-Բայազետի կողմից հարձակվող Կարմիր Բանակի զորամասերը հունիսի 23-ին գրավում են Սելիմի լեռնանցքը։

Կարմիր Բանակի այդ առաջին հարվածներից դաշնակների զորքերը սաստիկ բարոյալքվում են։ Սկսվում է նրանց արագ քայքայումը։ Այդ գործում խոշոր դեր է խաղացել այն ագիտացիան, որը դաշնակների թիկունքում կազմակերպել էին ընդհատակում աշխատող կոմունիստները։

Շարունակելով հաղթական առաջխաղացումը, հունիսի 26-ին Կարմիր Բանակն ազատագրում է ամբողջ Դարալագյազը։ Նախիջևանի կողմից հարձակվող զորամասերը հունիսի 28-ին գրավում են Բիչանակի լեռնանցքը և հասնում մինչև Մաղրա, Շաղաթ և Անդեղակոթ գյուղերը։

Հունիսի 30-ին Սիսիանի ամբողջ շրջանից դաշնակցական բանդաները դուրս են շպրտվում։ Հուլիսի 2-ին Շուշիի կողմից դեպի Զանգեզուր (Գորիս) իր հաղթական դրոհն է սկսում նաև Կարմիր Բանակի Ղարաբաղ—Զանգեզուրյան խմբավորումը, որին Ղարաբաղի և Զանգեզուրի աշխատավորները ցույց են տալիս ամենալայն օգնություն։ Համառ և հերոսական մարտերից հետո նույն օրը Ղարաբաղ—Զանգեզուրյան խմբավորման առաջապահ զորամասերը մտնում են Գորիս։ Դրանից երկու ժամ հետո արևմտյան կողմից

Դորիս են մտնում նաև Երևանյան խմբավորման զորամասերը։ Դաշնակցական ջախջախված բանդաների մնացորդները ուղղություն են վերցնում դեպի Ղափան—Մեղրի։ Հետապնդելով խուճապահար նահանջող հակառակորդին, Կարմիր Բանակը հուլիսի 4-ին ազատում է Տաթևը, հուլիսի 7-ին հասնում է մինչև Ղափանի պղնձահանքերը, որտեղի բանվորությունը ակտիվ պայքար էր մղում դաշնակների դեմ։

Մի շարք մարտերից հետո Կարմիր Բանակի զորամասերը հուլիսի 13-ին մտնում են Մեղրի։ Ժողովրդի արյունարբու թշնամիների ջախջախված հրոսակախմբերն իրենց մնացորդներով վերջնականապես դուրս են շպրտվում Հայաստանի սահմաններից։

Զանգեզուրն ազատագրած Կարմիր Բանակի զորամասերի շտաբի 1921 թ. հուլիսի 16-ի հաղորդագրության մեջ ասված է. «Ամբողջ Զանգեզուրի վրա ծածանվում է սովետական դրոշը. վերջ է տրված դաշնակցական ավանտյուրային. կոնտրռևոլյուցիայից ազատված Զանգեզուրը սկսել է ստեղծագործական աշխատանքը՝ աշխատավորների իշխանությունն ամրապնդելու և դաշնակների կողմից քայքայված դյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը կարգավորելու համար»[1]։

Դաշնակցական բռնակալությունից ազատագրված Զանգեզուրի աշխատավորությունն իր ազատարար Կարմիր Բանակին դիմավորում է անսահման խանդավառությամբ։ Ազատագրված Զանգեզուրի աշխատավորները Սովետական Հայաստանի աշխատավորությանը և կառավարությանը ուղարկում են իրենց ողջույնը, որ ասված է.

«Դաշնակցական զազրելի լծից ազատագրված աշխատավորությունը եղբայրական ջերմ ողջույններ է ուղարկում Խորհրդային Հայաստանի աշխատավորներին և նրանց իսկական ներկայացուցիչ՝ Հայաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին ու պանծալի Կարմիր Բանակին։ Զանգեզուրի աշխատավոր գյուղացիությունն այսօրվանից իր բախտի անօրինումը վստահում է Խորհրդային իշխանությանը, լի հավատով կապիտալիզմից ըղկված հայ աշխատավորության լուսավոր ապագային։

Կեցցե՞ Խորհրդային Հայաստանը»[2]։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Ռոխիվ, ֆ. 113 124, գ. 22. թ. 48։
[2] Նույն տեղում, ֆ. 4 114, գ. 128, թ. 17։

Զանգեզուրի ազատագրումով ավարտվում են մոտ 6 ամիս տևող համառ քաղաքացիական կռիվները։ Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը սովետական կարգերի համար պսակվում է նշանակալից հաղթանակով։

Այդ կռիվների հաղթական ավարտումով և Զանգեզուրի ազատագրումով վերջնականապես լիկվիդացվում է կոնտրռևոլյուցիայի և օտարերկրյա ինտերվենտների վերջին հենարանը Անդրկովկասում։ Ռեսպուբլիկայի բանվորներն ու գյուղացիները հնարավորություն են ստանում ձեռնամուխ լինելու երկրի քայքայված տնտեսության վերականգնման մեծ աշխատանքներին, որոնք ընդհատված էին քաղաքացիական կռիվների հետևանքով։

Չնայած ծանր հետևանքներին, 1921 թ. քաղաքացիական կռիվները խոշոր նշանակություն ունեցան Հայաստանի բանվորներին և աշխատավոր գյուղացիներին ժողովրդի թշնամի դաշնակների, էսեռների, հնչակյանների, սպեցիֆիկների և մյուս կոնտրռևոլյուցիոն պարտիաների ու հոսանքների դեմ անհաշտ պայքարի ոգով դաստիարակելու տեսակետից, աշխատավորական մասսաներին՝ իրենց շահերի միակ պաշտպան Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության շուրջն է՛լ ավելի ամուր կերպով համախմբվելու տեսակետից։

Քաղաքացիական կռիվների ընթացքում ավելի ու ավելի ամրապնդվեց հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և ռազմական դաշինքը ռուս մեծ ժողովրդի հետ, անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների՝ վրացիների, ադրբեջանցիների և մյուս ժողովուրդների հետ։

Այդ կռիվների ռազմաճակատներում իրենց առաջին մարտական կոփվածությունն ստացան Սովետական Հայաստանի Կարմիր Բանակի երիտասարդ զորամասերը և բազմաթիվ հայ ռազմիկներ։

1921 թ. Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվներում իրենց առաջին մարտական կոփվածությունն են ստացել ներկայումս Բանակի գեներալ Իվան Քրիստափորի Բաղրամյանը, գեներալ-լեյտենանտ Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը, հրետանու գեներալ-մայոր Գեորգի Քրիստափորի Չայլախյանը, գնդապետ Սիմոն Գեորգի Զաքյանը և ուրիշները, որոնք 1941—1945 թթ. Հայրենական պատերազմի ժամանակ աչքի ընկան իրենց մարտական ծառայություններով։

Քաղաքացիական կռիվներում Սովետական Հայաստանի բանվորների ու գյուղացիների հաղթանակի պատճառներն են.

Նախ՝ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, նրա Կարմիր Բանակը պայքարում էին Կոմունիստական փառապանծ պարտիայի ղեկավարությամբ, կենսագործելով Վ. Ի. Լենինի ցուցումները։ Այդ պայքարն անմիջականորեն ղեկավարում էին Կոմունիստական պարտիայի տաղանդավոր գործիչներ Ս. Օրջոնիկիձեն և Ա. Ֆ. Մյասնիկյանը։

Երկրորդ՝ Հայաստանի աշխատավորները և Կարմիր Բանակը գիտեին, որ իրենք կռվում են արդար գործի համար, գիտեին, որ կռվում են հանուն սովետական կարգերի, հանուն իրենց Հայրենիքի ազատության և անկախության։ Նրանք գիտեին, որ այդ կռիվներն ուղղված են շահագործողների և օտարերկրյա սարկացնողների դեմ, նրանց հլու կամակատար դաշնակների, մենշևիկների, էսեռների, սպեցիֆիկների, հնչակյանների և մյուս կոնտրռևոլյուցիոն պարտիաների ու հոսանքների դեմ։

Երրորդ՝ այդ պայքարում հայ ժողովուրդը մենակ չէր։ Ռուս մեծ ժողովուրդը և նրա հերոսական Կարմիր Բանակը, ինչպես բոլոր փոքր ազգություններին, նույնպես և հայ ժողովրդին մեկնեց իր եղբայրական օգնության ազատարար ձեռքը։ Նա ամեն տեսակի օգնություն ցույց տալով հայ ժողովրդին, փրկեց նրան վերահաս կործանումից և կանգնեցրեց իսկական վերածնության ուղու վրա, սոցիալիզմի ուղու վրա։ «Սովետական իշխանության գոյությամբ, իրենց ազատագրմամբ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի աշխատավոր մասսաները ամբողջովին պարտական են Ռուսաստանին։ Եթե չլիներ Սովետական Ռուսաստանը՝ չէր լինի Սովետական Ադրբեջանը, Սովետական Վրաստանը, Սովետական Հայաստանը և մինչև այսօր էլ նրանք ընկած կլիներին անգլիական իմպերիալիզմի կրնկի տակ։

Միայն Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ, Ռուսաստանյան Կարմիր Բանակի հետ դաշինք կնքելով ադրբեջանական բանվորներն ու գյուղացիները, վրացական բանվորներն ու գյուղացիները, հայկական բանվորներն ու գյուղացիները ձեռք բերին իրենց ազատագրումը»[1]։

Չորրորդ՝ կոնտրռևոլյուցիայի դեմ մղած պայքարում Հայաստանի բանվորներն ու գյուղացիները վերջ տալով ազգային թշնամանքին ու ազգային ճնշմանը, է՛լ ավելի ամուր դաշինքի մեջ մտան Ադրբեջանի, Վրաստանի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների՝

---

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 111։

իրենց դարավոր եղբայրների հետ։ Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն ուժերը և նրանց վերջին փորձերը Հայաստանում ջարդ ու փշուր եղան՝ հանդիպելով այդ ժողովուրդների անխորտակելի ինտերնացիոնալ դաշինքին։ «...Կարելի է վստահությամբ ասել, որ ռուսական բանվորները չէին կարող հաղթել Կոլչակին ու Դենիկինին, իսկ Ադրբեջանական ու Հայկական ռեսպուբլիկաները չէին կարող ոտքի կանգնել առանց ազգային թշնամությունն ու ազգային ճնշումն իրենց տանը վերացնելու, առանց Արևմուտքի ու Արևելքի ազգությունների աշխատավոր մասսաների վստահության ու խանդավառության նրանց նկատմամբ»[1]։

Հինգերորդ՝ շնորհիվ Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության ճիշտ քաղաքականության, Հայաստանի բանվոր դասակարգին հաջողվեց քաղաքացիական կռիվներում ամուր դաշինքի մեջ մտնել շքավոր գյուղացիության հետ, իր կողմը գրավել միջակ գյուղացիությանը և նրանց հետ միասին պայքարել կոնտրռևոլյուցիայի դեմ։

Վեցերորդ՝ պատերազմի նպատակների ու խնդիրների ճշտության գիտակցությունը Կարմիր Բանակի շարքերում ամրապնդում էր կարգապահությունը և բարձրացնում նրա մարտունակությունը, որի շնորհիվ թշնամու դեմ մղած պայքարում բանակայինները հանդես էին բերում մասսայական հերոսություն։ Այդպիսի հերոսության օրինակ են Ղամարլու—Վեղիի շրջանում հակառակորդի կողմից շրջապատված Կարմիր Բանակի հայկական զորամասերի 45-օրյա մարտական գործողությունները։ Քաղաքացիական կռիվներում Կարմիր Բանակի զորամասերն ու պարտիզանական ջոկատները տվեցին բազմաթիվ հերոսներ, որոնք իրենց կյանքը զոհեցին հանուն Սովետական իշխանության, հանուն իրենց ժողովրդի ազատության և անկախության։ Այդ հերոսների թվումն են՝ հայկական առաջին հրաձիգ բրիգադի զինվորական կոմիսար Լիպարիտ Մրխչյանը, հայկական 2-րդ հրաձիգ գնդի հրամանատար գնդապետ Ֆիշիլևիչը, հայկական 2-րդ բրիգադի հրամանատար Երմոլենկոն, պարտիզանական ջոկատի հրամանատար Սուրեն Մակարյանը, Հայաստանի Կոմերիտմիության Կենտկոմի քարտուղար Արմենակ Բուդաղյանը, վաշտի հրամանատար Ռ. Պողոսյանը, զինկոմ Ն. Օլթեցյանը, շարքային մարտիկներ Սամվել Դարբինյանը, Գուրգեն Զախոյանը, Հակոբ Խաչատրյանը, Աղասի Ղարիբյանը և շատ ու շատ ուրիշները։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 23։

Յոթերորդ՝ Կարմիր Բանակը հաղթեց այն պատճառով, որ նա մինչև վերջ նվիրված ու հավատարիմ մնաց իր ժողովրդին, արժանացավ նրա անսահման սիրուն և վերջինիս կողմից ստացավ ամեն տեսակի օժանդակություն։ Կարմիր Բանակի թիկունքում բոլոր աշխատավորները ոտքի կանգնեցին՝ օգնելու նրան։ «Իսկ ի՞նչ է նշանակում ժողովրդի սերը դեպի իր բանակը։ Այդ նշանակում է, որ այդպիսի բանակը կունենա ամենաամուր թիկունք, որ այդպիսի բանակն անպարտելի է։

Ի՞նչ բան է բանակն առանց ամուր թիկունքի։ Ոչինչ։ Ամենամեծ բանակները, ամենալավ զինված բանակները չունենալով ամուր թիկունք, չունենալով թիկունքի կողմից, աշխատավոր բնակչության կողմից ցույց տրվող աջակցություն ու համակրանք, քայքայվել ու ոչնչացվել են։ Մեր բանակն աշխարհում միակն է, որը համակրանք ու օգնություն է վայելում բանվորների և գյուղացիների կողմից։ Դրա մեջ է նրա ուժը, դրա մեջ է նրա ամրությունը»[1]։

Ահա այն հիմնական պատճառները, որոնց շնորհիվ Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, նրա Կարմիր Բանակը, հաղթանակով դուրս եկան 1921 թ. քաղաքացիական կռիվներից և Սովետական հզոր Միության բոլոր աշխատավորների հետ միասին, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան երկրի քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքներին, կոմունիստական հասարակարգի կառուցման պատմական վիթխարի գործին։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 26—27։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1921—1925 թթ.)

1. ՈՒԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԴԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻՑ ՀԵՏՈ

1921 թ. գարնանը, փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացումից հետո, Հայաստանում նպաստավոր պայմաններ ստեղծվեցին տնտեսական խաղաղ շինարարության համար։ Կատարելով իր դերը, նույն թվականի մայիսին Հայաստանի Ռևկոմը վերակազմվում է Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի՝ Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ականավոր գործիչ Ալ. Մյասնիկյանի (Մարտունի) նախագահությամբ, որը ՌԿ(բ)Պ Կենտկոմի կողմից աշխատանքի էր ուղարկվել Հայաստան։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ են լինում երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքներին։

Ի՞նչ վիճակում էր Հայկական ՍՍՌ-ի ժողովրդական տնտեսությունը այն ժամանակ՝ ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի սկզբում։ Ինչպիսի՞ ժառանգություն էր մնացել հին կարգերից Սովետական իշխանությանը։

Հայաստանի ժողովրդական տնտեսությունը ծայրահեղ քայքայված վիճակում էր։ Ցարիզմի տիրապետության ժամանակ, վերջինիս գաղութային ռեժիմի հետևանքով, նա գտնվում էր զարգացման ցածր մակարդակի վրա։ Դաշնակների բուրժուա-նացիոնալիստա-

Դան մարիոնետային տիրապետության տարիներին, որպես արդյունք նրանց ավանտյուրիստական քաղաքականության, Հայաստանի տնտեսությունն է՛լ ավելի ետ էր գնացել ու քայքայվել։ Այդ տեսակետից բնորոշ են հետևյալ թվերը։ Հայաստանի ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը (1926—1927 թթ. անփոփոխ գներով) 1913 թ. եղել է 20,7 միլիոն ռուբլու, 1919 թ.՝ դաշնակների տիրապետության ժամանակ՝ 1,7 միլիոն ռուբլու։ Գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը 1913 թ. եղել է 65,8 միլիոն ռուբլու, 1919 թ.՝ 11,3 միլիոն ռուբլու [1]։

Հայաստանում տնտեսության գլխավոր ճյուղը՝ գյուղատնտեսությունը, որը քայքայման էր հասել 1914—1918 թթ. իմպերիալիստական պատերազմի տարիներին, հիմնովին կործանվեց դաշնակների տիրապետության ժամանակ։ Հսկայական չափով կրճատվել էին ցանքատարածությունները, խոպան էր մնացել մշակելի հողերի խոշորագույն մասը։ Հողի մշակությունը, որ կատարվում էր ամենահետամնաց գործիքներով, տալիս էր խիստ ցածր արտադրողականություն։ Գյուղատնտեսության այն ճյուղերը, որոնք արդյունաբերական նշանակություն ունեին (բամբակի մշակությունը, գինեգործությունը և անասնապահությունը) իրենց արտադրանքով նվազագույն չափերի էին հասել։

Նախասովետական շրջանում Հայաստանի արդյունաբերությունը ևս գտնվում էր ցածր մակարդակի վրա։ Եղած արդյունաբերական ձեռնարկությունները քայքայվել էին երկարատև պատերազմների հետևանքով։ Արդյունաբերական ձեռնարկություններից էին Ալավերդու և Զանգեզուրի պղնձահանքերը և գործարանները, որոնք օգտագործվում էին մեծ մասամբ ֆրանսիական կապիտալիստների կողմից։ Գինու-կոնյակի գործարանը, պրիմիտիվ տեխնիկայով սարքավորված կաշվի գործարանը, Երևանի մեխանիկական արհեստանոցը և մի քանի աննշան արհեստանոցներ— ահա նախասովետական Հայաստանի արդյունաբերությունը։ Արդյունաբերության այդ բոլոր ճյուղերը նույնպես կատարյալ անկման էին հասել։

Հայաստանի երկաթուղագիծը, որը Անդրկովկասյան երկաթուղու մի մասն էր հանդիսանում, ուժեղ չափով վնասվել էր։ Փչացել էին դծերը, կամուրջները, շոգեքարշերը, վագոնները, քայքայվել էր երկաթուղին սպասարկող ապարատը։ Ամենուրեք երկաթու-

[1] Социалистическое строительство Арм. ССР (1920—1940 гг.), изд. УНХУ, Ереван, 1940, стр. 25 и 27.

դային կայարաններում թափված էին փչացած ու վնասված շոգեքարշեր, վագոններ և երկաթուղային այլ գույք։ Միայն Ալեքսանդրապոլի կայարանում 1921 թ. մայիսին թափված էին վնասված, շարքից դուրս եկած բաղմաթիվ շոգեքարշեր և 160 վագոն։ Թյուրքական զորքերի վայրագությունների հետևանքով Ալեքսանդրապոլի դեպոն ամբողջովին ոչնչացվել էր, որի հետևանքով Հայաստանը զրկվել էր վնասված շոգեքարշերի ու վագոնների վերանորոգման հնարավորությունից։

Տնտեսության հիմնական ճյուղերի այդպիսի քայքայվածության և բնակչության ծայրահեղ աղքատության պայմաններում դժվար չէ պատկերացնել առևտրի, ապրանքաշրջանառության և երկրի ֆինանսական դրության վիճակը։ Վերականգնման շրջանի սկզբում, նոր տնտեսական քաղաքականության կիրառումով, նոր էր կազմակերպվում սովետական պետական առևտուրը։ Փոխանակության ենթակա ապրանքների խիստ պակասության և բնակչության գնողունակության անկման հետևանքով, այն հանդիպում էր մեծ դժվարությունների։ Կոոպերատիվ առևտուրը նույնպես նոր էր կազմակերպվում, հանդիպելով նույնպիսի դժվարությունների, ինչպես սովետական պետական առևտուրը։ Ապրանքաշրջանառության մեջ դեռևս զգալի տեղ էր գրավում մասնավոր առևտուրը։ Սովետական կառավարության հարկային և վարկային քաղաքականության շնորհիվ ամեն կերպ վարկ էր տրվում պետական և կոոպերատիվ առևտրին, իսկ մասնավոր առևտուրը սահմանափակվում էր։

Երկրի ֆինանսական դրությունը ևս խիստ ծանր էր։ Սովետական իշխանության հաստատման ժամանակ Հայաստանը «հեղեղված էր ահռելի չափերի հասնող թղթադրամներով — 340 միլիոն անդրկովկասյան բոնով և 11 միլիարդից ավելի հայկական չեկերով»[1] (դաշնակների կառավարության թղթադրամներով — Ա. Հ.)։ Սակայն այդ բոլորի արժեքը հավասար էր, կլոր թվով, միայն 353.000 մինչպատերազմյան ռուբլու[2]։ Դաշնակների փետրվարյան ավանտյուրայի հետևանքով ավելի էր ծանրացել երկրի ֆինանսական դրությունը։ Ինչպես տեսանք նախորդ գլխում, ավանտյուրիստ դաշնակները պարտություն կրելով, հափշտակել և իրենց հետ

---

[1] Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., ժողովածու, հրատարակություն ՀՍԽՀ կենտգործկոմի և ժողկոմխորհի, Երևան, 1926, էջ 161։

[2] Տես նույն տեղում։

արտասահման էին տարել պետական բանկում եղած վերջին հարստությունները։ Պետական գանձարանը փաստորեն դատարկ էր։

Երկրի տնտեսական ծանր կացությունը խիստ կերպով անդրադարձել էր բնակչության դրության վրա։ Հայաստանում զգացվում էր հացի, յուղի, մսի, աղի, մանուֆակտուրայի, կոշկեղենի և այլ առաջին անհրաժեշտության կենսամթերքների ու ապրանքների ծայրահեղ պակասություն։ Երկրում կար մոտ 200 հազար գաղթականություն և 50 հազար որբ։ Աշխատավոր բնակչությունը գտնվում էր ծայրահեղ աղքատ վիճակում. գործազրկությունը մեծ չափերի էր հասնում, արտադրական ձեռնարկները նոր-նոր էին սկսում աշխատել։ Բանվորների դրությունը բավականին ծանր էր։ Գյուղում աղքատությունը և կարիքը մասսայական բնույթ էին կրում։ Մթերքներով ապահովված էին միայն կուլակային և ունևոր տնտեսությունները, որոնք իրենց ունեցվածքը ամեն կերպ թաքցնում էին պետությունից։

Հին հասարակարգից ժառանգություն մնացած տնտեսական քայքայվածության հետևանքով 1921—1922 թվականներին Հայաստանում դեռևս շարունակվում էր սովը, որն ընդգրկել էր շատ շրջաններ։ Սովից տառապում էր ոչ միայն բազմահազար գաղթականությունը, այլև բնիկ ժողովուրդը։

Այդպիսի պայմաններում, 1921 թվականին Սովետական Հայաստանի մի շարք գավառներում բռնկվեցին համաճարակային հիվանդություններ։ Սովետական կառավարության ձեռք առած կտրուկ միջոցառումների շնորհիվ այդ համաճարակը արագությամբ լիկվիդացվում է։

Այդպիսի իրադրության մեջ Հայաստանի Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության առաջ խնդիր էր դրված ռեսպուբլիկան արագորեն դուրս բերել այդ վիճակից և սովետական մյուս ռեսպուբլիկաների հետ միասին ու նրանց օգնությամբ հաստատ կերպով առաջ տանել սոցիալիստական շինարարությունը։ Առաջնահերթ խնդիրներ էին գյուղատնտեսության, արդյունաբերության, տրանսպորտի վերականգնումը։

Բնորոշելով Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների անելիքները ժողովրդական տնտեսության վերականգնման համար մղվող պայքարում, 1921 թ. հուլիսի 6-ին ՎԿ(բ)Պ Թիֆլիսի կազմակերպության ընդհանուր ժողովում Ի. Վ. Ստալինը «Կոմունիզմի հերթական խնդիրները Վրաստանում և Անդրկովկասում» զեկուցման մեջ ասել է. «Այժմ, երբ մենք թևակոխել ենք

տնտեսական շինարարության նոր ժամանակաշրջանը, երբ մենք պատերազմից անցել ենք խաղաղ աշխատանքի, «ամեն ինչ պատերազմի համար» հին լոզունգը, բնականաբար, փոխարինվում է «ամեն ինչ ժողովրդական տնտեսության համար» նոր լոզունգով։ Այս նոր շրջանը կոմունիստներին պարտավորեցնում է բոլոր ուժերը նետել տնտեսական ճակատը, արդյունաբերության, գյուղատնտեսության բնագավառը, պարենային գործի, կոոպերացիայի, տրանսպորտային գործի մեջ և այլն։ Որովհետև առանց դրա չկա տնտեսական քայքայումը հաղթահարելու հնարավորություն»[1]։

Հայաստանի Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը մոբիլիզացրին Ռեսպուբլիկայի բանվորներին ու գյուղացիներին՝ այդ խնդիրների կենսագործման համար։ Քաղաքացիական կռիվների ավարտումից հետո, երբ նոր էին սկսված տնտեսության վերականգնման աշխատանքները, ՀԿ(բ)Պ Կենտկոմը հատուկ կոչ է ուղղում Հայաստանի Կոմունիստական պարտիայի բոլոր դավառային կոմիտեներին, պարտիայի բոլոր անդամներին։ «Շնորհիվ մեր ուժերի մաքսիմում լարման,— ասված է կոչում,— անսպառ եռանդի ու ինքնազոհության, հաղթանակով դուրս եկանք քաղաքացիական պատերազմից։ Ներկայումս, երբ պարզորեն ստեղծված է դադար, մեր առաջ ծառացած է երկրի տնտեսական ֆրոնտի կազմակերպման խնդիրը, որը պահանջում է մեզանից անկասկած գերագույն ճիգեր, ուժեր ու աշխատանքի մաքսիմում կենտրոնացում։ Ոչ մի աշխատանք մեզ համար ծանր չէ և նրա կյանքում կիրառելը դժվարին չի լինի...»[2]։

Կենտրոնական Կոմիտեի այդ կոչը պահանջում էր բարձրացնել ռևոլյուցիոն զգոնությունը, ամրապնդել երիտասարդ սովետական ապարատը իր բոլոր օղակներով, հայտնաբերել և ջախջախել օտարերկրյա իմպերիալիստների գործակալներին՝ դաշնակներին, մենշևիկներին, էսեռներին և մյուս կոնտրռևոլյուցիոն թափթփուկներին։ Պարտիայի այդ կոչին բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը պատասխանեցին աշխատանքային խանդավառությամբ։

Տեղական պարտիական կազմակերպությունները, գլխավորելով բանվորների և գյուղացիների աշխատանքային խանդավառությունը տնտեսության վերականգնման գործում, կարճ ժամանակամիջոցում հասան զգալի արդյունքների։ Պարտիական կազմակեր-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 5, էջ 99—100։

[2] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 40/113, գ. 22, թ. 97։

պությունների ծավալած աշխատանքի շնորհիվ աշխատավոր գյուղացիությունը ամուր կերպով համախմբվեց Սովետական իշխանության շուրջը։ 1921 թ. կեսերին, ռեսպուբլիկայի համարյա բոլոր գավառներում և շրջաններում հրավիրվում են աշխատավոր գյուղացիների համագումարներ, որոնք վճռականություն են արտահայտում նվիրված աշխատանքով ու պայքարով ամրապնդել երիտասարդ Սովետական իշխանությունը, ամեն կերպ նպաստել քայքայված տնտեսության վերականգնմանը։

1921 թ. հուլիսին տեղի ունեցած Բաշ-Գյառնիի շրջանի 50 գյուղերի գյուղացիների ներկայացուցիչների համագումարի բանաձևում ասված է. «Գիտակցելով այն պարզ ճշմարտությունը, որ աշխատավորության ու քրտինք թափող ռանչպարի հանգիստը, նրա անդորրությունը և կուլտուրական զարգացման գործը Խորհրդային իշխանության ամրապնդման մեջ է կայանում և դրանով միայն ապահովվում է գյուղացիության խաղաղ աշխատանքի ապարեզը, և որ այդ իրավակարգն իր ծոցից ծնված հարազատ իշխանությունն է, ուստի նա թև ու թիկունք պետք է դառնա այդ կառավարությանը և կհանդիսանա նրա ամենաուժեղ պատվանդանը։

Մեր անձնական եռանդով ու աշխատանքով կվերականգնենք մեր քայքայված երկիրը — կլծվենք շինարարության գործին մեր կառավարության ղեկավարությամբ։ Մենք չենք խնայի մեր ուժերը, մեր կուրծքը դեմ կտանք այն պահանջած ծանր ու անդուլ աշխատանքին, որով պիտի վերաշինվի և կենդանանա մեր հայրենիքը»[1]։

Այսպիսի որոշումներ են ընդունում նաև մյուս շրջաններում հրավիրված աշխատավոր գյուղացիների համագումարները։

1921 թ. մայիսի 21-ին հրավիրվում է Էջմիածնի գավառի գաղթականության համագումարը։ Արտահայտելով բազմաշարշար հայ ժողովրդի ձգտումները, համագումարը միահամուռ կերպով իր բանաձևում գրել է.

«Մենք ի լուր ամենքի հայտնում ենք.

1. Որ հետայսու մեր բոլոր ուժերը — մտավոր, ֆիզիկական թե նյութական — նվիրելու ենք ՀՍԽ Հանրապետությանը։

2. Միայն ՀՍԽ Հանրապետության հարատև գոյության ու ամրապնդման միջոցով Հայաստանի աշխատավորությունը կարող է իր իղձերն ու փափագները իրագործված տեսնել։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 6/138, գ. 3, թ.թ. 27—28։

3. Ներկա ՀՍԽ Հանրապետության ուժեղացման և տնտեսական զարգացման մեջ ենք մենք որոնում տաճկահայ աշխատավորներիս ընկերային ապահովության և նրա ապագա տենչերի իրագործումը։

Կեցցե՞ Հայաստանի աշխատավորությանը խաղաղ աշխատանքի հրավիրող Բանվորա-գյուղացիական Հայաստանի Սովետական կառավարությունը»[1]։

Տնտեսության վերականգնման համար մղվող պայքարի առաջին շրջանում գլխավոր հարցերը մնում էին պարենային դժվարությունների լիկվիդացումը, սովի վերացումը և բանվորության ու աշխատավորական մյուս շերտերի համար աշխատանքային նորմալ պայմանների ստեղծումը։

Սակայն Սովետական Հայաստանը միայն իր ուժերով և ներքին միջոցներով այդ անել չէր կարող։ Նրա սեփական ուժերն ու հնարավորությունները չէին բավարարում այդ հարցը լուծելու համար։ Պարենային դժվարության լուծման գործում Հայաստանը օգնության մեծ կարիք էր զգում։ Այդ օգնությունը նա կարող էր ստանալ միմիայն Սովետական Ռուսաստանից և մյուս եղբայրական սովետական ռեսպուբլիկաներից։

Մեր ժողովրդի և երկրի զարգացման բախտը սերտորեն կապված է աշխարհում առաջինը սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթական դրոշը բարձրացրած ռուսական հերոսական բանվոր դասակարգի բախտի հետ։ Ռազմական դաշինքի ամրապնդման հետ միասին, որը պահպանվեց, ավելի ամրապնդվեց հետագայում, տնտեսության վերականգնման համար մղվող պայքարում ավելի ու ավելի հրատապ էր դառնում սովետական ռեսպուբլիկաների միջև տնտեսական դաշինքի ամրապնդման հարցը, Սովետական Ռուսաստանի կողմից Հայաստանին ցույց տրվող օգնության հարցը։

Չնայած այն ժամանակվա իր ծանր դրությանը, Սովետական Ռուսաստանը Վ. Ի. Լենինի ցուցումներով, ինչպես մյուս բոլոր սովետական ռեսպուբլիկաներին, նույնպես Սովետական Հայաստանին ցույց է տվել ամենալայն տնտեսական-ֆինանսական անչափահանդիր օգնություն։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման դեռ առաջին օրերին, 1920 թ. դեկտեմբերի 12-ին, ընդունելով Հայաստանի Ռևկոմի անդամներին և լսելով նրանց զեկուցումը Ռեսպուբլիկայի

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 40c/113, գ. 22, թ. 107։

դրության մասին, Վ. Ի. Լենինը հայտարարել էր, որ Սովետական Ռուսաստանը բոլոր միջոցները կգործադրի Թյուրքիայի լծից Ալեքսանդրապոլն ու երկաթուղին ազատելու, ինչպես և Սովետական Հայաստանին ամեն կերպ օգնելու համար[1]։ Վ. Ի. Լենինի կողմից Հայաստանի Ռևկոմի անդամների ընդունելությունից հետո, 1920 թ. դեկտեմբերին, որպես առաջին նյութական օգնություն, Սովետական Ռուսաստանի Ֆինժողկոմատը Հայաստանին բաց է թողնում երկու միլիարդ ռուբլի սովետական թղթադրամ (ոսկու հաշվով 600 հազար ռուբլի), որը Ա. Մռավյանը նույն թվականի դեկտեմբերի կեսերին Մոսկվայից բերում է Երևան[2]։ Միաժամանակ Սովետական Ռուսաստանի Պարենավորման ժողկոմատն սկսում է Հայաստան ուղարկել մեծ քանակությամբ հացահատիկ, մանուֆակտուրա և այլ մթերքներ։

Գործիքների և սերմացուի պակասության հետևանքով 1921 թ. գարնանացանը Հայաստանում կանգնած էր ձախողման վտանգի առաջ։ Նկատի ունենալով այդ, Մոսկվայի բանվորներն այդ ժամանակ օգնության կարգով Հայաստան են ուղարկում մեծ քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ։ ՀԿ(բ)Պ Կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթը (հայերեն) Մոսկվայի բանվորների այդ օգնությունը այսպես է գնահատել. «Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Հայաստանի սերտ համերաշխության և համագործակցության մի փառավոր փաստ է այն նվերը, որը Մոսկվայի բանվորներն իրենց համեստ պահեստներից բաժին են բերում գյուղացիական Հայաստանին։

Հայաստանի աշխատավորությունն արդեն զգում է, որ իր թիկունքում կանգնած է վիթխարի Ռուսաստանի անհաղթելի ուժը և այդ հանգամանքը նոր եռանդ պիտի ներշնչի մեր բանվորագյուղացիությանը՝ տասնապատկելու իր ջանքերը շինարարության աշխատանքի ասպարեզում»[3]։

1921 թ. ապրիլին Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետը որոշում է մեկ և կես միլիոն ռուբլի (ոսկով) վարկ բաց թողնել Հայաստանին՝ նրա կարիքները բավարարելու համար[4]։

---

[1] Տես Հայաստանի Ռևկոմի անդամ Ա. Մռավյանի հիշողությունները, «Խորհրդային Հայաստան», № 272, 29 նոյեմբերի, 1925։

[2] Նույն տեղում։

[3] «Կոմունիստ», № 85, Երևան, 19 մայիսի, 1921։

[4] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 4 114, գ. 184ա, թ. 1։

1921 թ. մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը, Սովետական Ռուսաստանից, օգնության կարգով, Հայաստան է ուղարկվել դրամ — 2.545.000 ռ. ոսկով, զանազան տեսակի վառելանյութեր — 2.172.000 փութ, մանուֆակտուրա — 1.500.000 արշին, զինվորական զգեստներ — 18.000 կոմպլեկտ, հացահատիկ և ալյուր — 326.000 փութ, շաքար — 5000 փութ, ձուկ — 50.000 փութ, անասուն՝ գլխավորապես ձի — 1500 գլուխ, մի քանի հարյուր հազար կտոր գիրք, մեծ քանակությամբ տպագրական սարքավորում և գյուղատնտեսական գործիքներ[1]։ Ադրբեջանից Սովետական Հայաստան է ուղարկվել (առանց վճարի) 36.000 փութ վառելանյութ (նավթ, բենզին, մազութ և այլն)[2]։

1922 թ. փետրվարին, Հայաստանի Սովետների առաջին համագումարում Հայկական ՍՍՌ կառավարության հաշվետվության մեջ Ժողկոմսովետի նախագահ Ալ. Մյասնիկյանը նշել է, որ 1921 թ. ընթացքում Հայաստանը Ռուսաստանից ստացել է 3,5 միլիոն ռուբլի ոսկով[3]։ Նույն համագումարում արձանագրվել է, որ այդ ժամանակամիջոցում Ռուսաստանից Հայաստան են ուղարկվել 2.895.000 փութ կենսամթերքներ և զանազան ապրանքներ[4]։

Ռուս մեծ ժողովրդի և սովետական մյուս ժողովուրդների եղբայրական օգնությունը վճռական նշանակություն ունեցավ Սովետական Հայաստանի ծանր դրության բարելավման գործում։ Այդ օգնության շնորհիվ սկսվեց օրըստօրե լավանալ երկրի տնտեսական վիճակը։ Լիկվիդացվում էր սովն իր հետևանքներով։ Վերացվում էին համաճարակային հիվանդությունները։ Բանվորներն ու գյուղացիները նորմալ հնարավորություններ էին ստանում սոցիալիստական շինարարության խաղաղ աշխատանքների համար։

Ստեղծված էին անհրաժեշտ նախադրյալներ երկրի քայքայված տնտեսության վերականգնման աշխատանքները լայն մասշտաբներով ծավալելու համար։

2. ԱՆՑՈՒՄԸ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ. ԽԱՂԱՂ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օտարերկրյա ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմի տարիներին, ռազմական կոմունիզմի քաղաքականությունը միակ

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 184, թ. 71։
[2] Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., Ժողովածու, էջ 227։
[3] «Խորհրդային Հայաստան», № 26, 2 փետրվարի, 1922։
[4] Նույն տեղում, № 29, 5 փետրվարի, 1922։

ճիշտ քաղաքականությունը լինելով հանդերձ, պատերազմներն հաղթականորեն ավարտելուց հետո այն այլևս չէր համապատասխանում սովետական երկրի խաղաղ զարգացման նոր պահանջներին։

Քաղաքացիական պատերազմներն ավարտելուց հետո անհրաժեշտություն առաջացավ փոխելու այդ քաղաքականությունը, վերացնելու պարենամսնատրումը, թույլատրելու հացի ազատ առևտուրը և ծավալելու լայն ապրանքափոխանակությունը գյուղի և քաղաքի միջև։

«Գյուղացիական մասսան ընդհանուր առմամբ տեսավ և հասկացավ,— ասել է Վ. Ի. Լենինը պարտիայի 11-րդ համագումարում,— որ այդ ահագին ծանրությունները, որոնք դրվում են նրա վրա, անհրաժեշտ են, որպեսզի կարելի լիներ բանվորա-գյուղացիական իշխանությունը պաշտպանել կալվածատերերի դեմ, որպեսզի մեզ չխեղդեր կապիտալիստական արշավանքը, որը սպառնում էր խլել ռևոլյուցիայի բոլոր նվաճումները։ Բայց զորում չկարազդայնացված, սոցիալիզացիայի ենթարկված ֆաբրիկաներում, գործարաններում, սովխոզներում կառուցվող էկոնոմիկայի և գյուղացիական էկոնոմիկայի միջև» [1]։

Սովետական Ռուսաստանի բանվոր դասակարգը՝ կրելով քաղաքացիական պատերազմի հիմնական ծանրությունը, պատերազմն ավարտելուց հետո լծվեց խաղաղ տնտեսական շինարարության աշխատանքներին։ Սակայն ռազմական կոմունիզմի տարիներին նրա որոշ խավերի մեջ ևս դժգոհություններ էին առաջացել։ Արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասը չէր աշխատում, իսկ մյուս մասը աշխատում էր անկանոն։ Աշխատավարձը վճարվում էր ուշացումներով, կար գործազրկություն և աշխատանք հեշտությամբ չէր ճարվում, բանվորները զբաղվում էին տնայնագործությամբ։ Նման պայմաններում սկսեց թուլանալ պրոլետարիատի դիկտատուրայի դասակարգային բազան. բանվոր դասակարգը մասնատվում էր, բանվորների մի մասը գյուղ էր գնում, դադարում էր բանվոր լինելուց և ապադասակարգայնանում էր։ Սովի և հոգնածության հողի վրա սկսել էր հանդես գալ բանվորների մի մասի դժգոհությունը։ Թուլացել էր բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը։ Դասակարգային թշնամին ջանք չէր խնայում օգտագործելու Սովետական իշխանության ներքին դժվարությունները, գյուղացիության և բանվոր դասակարգի

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, Երևան, 1952, էջ 313—314։

որոշ շերտերի մեջ առաջացած դժգոհությունները։ Այդ հողի վրա էլ թշնամուն հաջողվեց Սովետական Ռուսաստանի, Ուկրաինայի և Անդրկովկասի որոշ ռայոններում բարձրացնել կոնտրռևոլյուցիոն խռովություններ (Կրոնշտադտում, Տամբովի նահանգում և այլն), որոնք, սակայն, արագությամբ լիկվիդացվեցին Կարմիր Բանակի կողմից։

Նման պայմաններում Կոմունիստական պարտիան իր Կենտրոնական Կոմիտեի, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ձեռնամուխ եղավ տնտեսական շինարարության բոլոր հարցերի վերաբերյալ նոր դիրքավորում մշակելուն, սովետական երկրի կյանքում նոր շրջադարձ կատարելուն։ Պարտիան սովետական ժողովրդին նախապատրաստում էր շրջադարձը անցկացնելու կազմակերպված ձևով և ուժերի մաքսիմալ լարումով՝ հաղթահարելով դժվարությունները։ Անհրաժեշտ էր փոխել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի տնտեսական հիմքերը։ Անհրաժեշտ էր վերականգնել խոշոր արդյունաբերությունը, լուծել արդյունաբերության էներգետիկ բազայի, առաջին հերթին երկրի էլեկտրիֆիկացիայի հարցը՝ ստեղծելով սոցիալիզմի նյութական հիմքեր։

1920 թ. մարտին ՌԿ(բ) Պարտիայի IX համագումարը քննության առնելով երկրի տնտեսական դրության բարելավման հարցը, նշել էր պարտիայի մերձավորագույն խնդիրներն այդ ուղղությամբ։ Համագումարում Վ. Ի. Լենինի կողմից առաջադրվում է երկրի միասնական տնտեսական պլանի հարցը, որի մեջ գլխավոր տեղը դրավում էր ամբողջ ժողովրդական տնտեսության էլեկտրիֆիկացիայի հարցը և որը Վ. Ի. Լենինն առաջադրում էր որպես 10—20 տարվա մեծ ծրագիր։ Դրա հիման վրա հետո մշակվեց ГОЭЛРО-ի[1] հայտնի պլանը։ Համագումարը առանձնապես նշել է պրոֆմիությունների մասնակցության անհրաժեշտությունը տնտեսական շինարարության գործում։ Վ. Ի. Լենինը պրոֆմիությունները գնահատում է որպես կոմունիստական դաստիարակության դպրոցներ, որպես կոմունիզմի դպրոցներ, որոնց խնդիրն է ակտիվ կերպով մասնակցել սոցիալիզմի կառուցման գործին, ամրապնդել դիտակցական կարգապահությունը և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։ Առանց պրոֆմիությունների ակտիվ մասնակցության, հնարավոր չէր լինի իրականացնել երկրի տնտեսության վերականգնման դժվարին աշխատանքները։

Հանդես գալով լենինյան դրույթների դեմ, ժողովրդի երիցս

[1] Государственная комиссия по электрификации России.

արգահատելի թշնամիներ Տրոցկին և Բուխարինը առաջարկում էին պրոֆմիություններում կիրառել միայն ռազմական և հարկադրանքի մեթոդներ, հրաժարվել համոզելու, գիտակցականորեն դաստիարակելու մեթոդից։

Պրոֆմիությունների հարցի շուրջը եղած դիսկուսիայում, հակահարված տալով տրոցկիստներին ու բուխարինականներին, պարտիան հաստատ կերպով գնում էր լենինյան ուղիով։

Հստակորեն նշելով բանվոր դասակարգի, նրա բազմամիլիոն մասսայական կազմակերպությունների՝ պրոֆմիությունների մասնակցության հարցը երկրի քայքայված տնտեսության վերականգնման գործում, Վ. Ի. Լենինը պարզ ու որոշակի կերպով տվեց նաև աշխատավոր գյուղացիության դերը այդ հարցում, նշելով, որ առանց նրա ակտիվ մասնակցության հնարավոր չէ տնտեսության վերականգնումը։ Կուտակված մեծ փորձի և երկրի դրության գիտական խորը վերլուծության հիման վրա ՌԿ(բ) Պարտիայի X համագումարի նախօրյակին (1921 թ. փետրվար) Վ. Ի. Լենինը գրեց գյուղացիության վերաբերյալ թեզիսների նախնական սևագիր ուրվագիծը, որում հիմնական գծերով տվեց ռազմական կոմունիզմի փոխարեն կիրառվելիք նոր տնտեսական քաղաքականության էությունը։

Այդ թեզիսներում ասված է.

«1. Բավարարել անպարտիական գյուղացիության ցանկությունը՝ մասնատրումը (ավելցուկները վերցնելու իմաստով) հացի հարկով փոխարինելու մասին։

2. Նվազեցնել այդ հարկի չափը անցյալ տարվա մասնատրման համեմատությամբ։

3. Հավանություն տալ հարկի չափը հողագործի ջանասիրությանը համապատասխանեցնելու սկզբունքին՝ հարկի %-ը հողագործի ջանասիրությունը բարձրացնելու դեպքում իջեցնելու իմաստով։

4. Ընդլայնել հողագործի կողմից իր հարկից ավելի մնացորդները տեղական տնտեսական շրջանառության մեջ օգտագործելու արտոնությունը, հարկը արագ և լրիվ մուծելու պայմանով»[1]։

1921 թ. փետրվարի 24-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի պլենումը հաստատում է Քաղբյուրոյի կողմից առանձնացված հատուկ հանձնաժողովի որոշման նախագիծը՝ պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելու մասին, որը մշակված էր Վ. Ի. Լենինի վերոհիշյալ ցուցումների հիման վրա։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 154։

Համկ(բ)Պ X համագումարը (1921 թ. մարտ) քննության առնելով Վ. Ի. Լենինի զեկուցումը, կարևորագույն որոշում ընդունեց պարենմասնատրումից պարենհարկին անցնելու մասին, նոր տնտեսական քաղաքականությանը անցնելու մասին։ Ռազմական կոմունիզմից դեպի նեպը կատարված շրջադարձի մեջ արտահայտվեց լենինյան քաղաքականության ամբողջ իմաստությունն ու հեռատեսությունը։

Համագումարը ընդունեց Վ. Ի. Լենինի բանաձևը պարենմասնատրումից պարենհարկին անցնելու մասին։ Բանաձևը նշում էր, որ պարենհարկը ավելի քիչ պետք է լինի, քան եղել է պարենմասնատրումը։ Պարենհարկը պետք է համապատասխանի գյուղացիական տնտեսությունների եկամուտներին (հաշվի առնելով բերքը, տնտեսության մեջ անձերի քանակը և այլն)։ Այդ հարկը լինելու էր պրոգրեսիվ հարկ։ Չքավոր գյուղացիական տնտեսությունները, մասամբ կամ ամբողջովին — կարող էին ազատվել պարենհարկից, իսկ քիչ կարողության տեր կամ միջակ տնտեսությունները հարկը վճարելու էին ցածր դրույքով։

Խոսելով նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու անհրաժեշտության մասին, համագումարում տված զեկուցման մեջ Վ. Ի. Լենինը նշել է, որ նեպկայումս գլխավոր հարցը հանդիսանում է խոշոր արդյունաբերության վերականգնումը, խափանված հարյուրավոր գործարանների ու ֆաբրիկաների գործարկումը և երկրի տարբեր մասերում ցրված պրոլետարիատի համախմբումը, միաձուլումը։ Վ. Ի. Լենինը միաժամանակ ցույց է տվել, որ խոշոր արդյունաբերության վերականգնումը, որից և կախված է ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերափոխման գործը, հնարավոր չէ առանց գյուղացիության մասնակցության, առանց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման, որը, ինչպես տեսանք, որոշ չափով թուլացել էր ռազմական կոմունիզմի տարիներին։

Դնելով պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելու անհրաժեշտությունը, Վ. Ի. Լենինը միաժամանակ նշել է. «Նախ՝ հարկավոր է շրջանառության որոշ ազատություն, ազատություն մասնավոր մանր տնտեսատիրոջ համար, իսկ երկրորդ՝ հարկավոր է ապրանքներ ու մթերքներ ձեռք բերել։ ...Շրջանառության ազատությունն առևտրի ազատությունն է, իսկ առևտրի ազատություն նշանակում է վերադարձ դեպի կապիտալիզմը»[1]։ Այնուհետև Վլա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 267։

դիմիր Իլյիչը ցույց է տվել, որ այդ կապակցությամբ հարկ կլինի թույլատրել մասնավոր արդյունաբերողներին մանր ձեռնարկություններ բաց անելու։ Այդ կնշանակեր հնարավորություն ստեղծել մասնավոր առևտրի և կապիտալի աշխուժացման համար։ Սակայն դրանից չպետք է վախենալ, որովհետև «Լենինը գտնում էր, որ ապրանքաշրջանառության որոշ աղատությունը գյուղացու մեջ կստեղծի տնտեսական շահագրգռվածություն, կբարձրացնի նրա աշխատանքի արտադրողականությունը և կհասցնի գյուղատնտեսության արագ բարձրացմանը, որ այդ հիման վրա կվերականգնվի պետական արդյունաբերությունը և դուրս կմղվի մասնավոր կապիտալը, որ, ուժեր ու միջոցներ կուտակելով, կարելի կլինի ստեղծել հզոր ինդուստրիա՝ սոցիալիզմի տնտեսական հիմքը, և ապա վճռական հարձակման անցնել կապիտալիզմի մնացորդները երկրում ոչնչացնելու համար»[1]։

Պարտիան գտնում էր, որ անցնելով նոր տնտեսական քաղաքականությանը, մենք թույլ ենք տալիս որոշ նահանջ՝ թիկունքն ամրապնդելու, ուժերը վերադասավորելու և կապիտալիստական էլեմենտների վրա ավելի լայն մասշտաբներով դրոհելու համար։ Այսպիսով նեպը ուներ երկակի բնույթ, մեկ կողմից որոշ, կարճատև նահանջ, կապիտալիստական տարրերի որոշ աշխուժացման թույլտվություն, իսկ մյուս կողմից՝ պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդում, պրոլետարիատի դիկտատուրայի ուժերի վերադասավորում՝ նոր հարձակման անցնելու, սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումն ապահովելու համար։

Ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականության անցման հիմքում ընկած էին այն արմատական փոփոխությունները հասարակության տնտեսական կառուցվածքում, որոնք տեղի ունեցան Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի շնորհիվ— ամբողջ խոշոր ու միջին արդյունաբերության ազգայնացումը, հողի ազգայնացումը և նրա օգտագործումը գյուղացիական լայն մասսաների կողմից, այդ կապակցությամբ գյուղի միջակացումը և այլն։

Գնահատելով նեպի էությունը, Ի. Վ. Ստալինը գրել է. «Նեպը պրոլետարական պետության հատուկ քաղաքականությունն է, որը

---

[1] ՀԱՄԿ(բ)Պ Պատմություն. Համառոտ դասընթաց, Երևան, 1950, էջ 345—346։

նկատի ունի կապիտալիզմի թույլատրումը, հրամանատարական բարձունքները պրոլետարական պետության ձեռքին գտնվելու պայմանով, նկատի ունի կապիտալիստական և սոցիալիստական տարրերի պայքարը, նկատի ունի սոցիալիստական տարրերի դերի աճումն ի վնաս կապիտալիստական տարրերի, նկատի ունի սոցիալիստական տարրերի հաղթանակը կապիտալիստական տարրերի դեմ, նկատի ունի դասակարգերի ոչնչացումը, սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը»[1]։

Եթե ռազմական կոմունիզմի տարիներին Կոմունիստական պարտիայի իմաստուն քաղաքականության կենսագործման շնորհիվ ամրապնդվեց մեր երկրի բանվոր դասակարգի և գյուղացիության ռազմա-քաղաքական դաշինքը և դրա հիման վրա ապահովվեց հաղթանակը ներքին ու արտաքին թշնամիների դեմ, ապա նոր տնտեսական քաղաքականությունը ապահովեց բանվոր դասակարգի և գյուղացիության ամուր տնտեսական դաշինքը, որը նոր խթան հանդիսացավ մեր երկրի հետագա առաջընթացին սոցիալիստական շինարարության ուղիով։

Այդ ժամանակ պարտիան առանձին սրությամբ առաջ քաշեց առևտրի հարցը, առևտուր անել սովորելու հարցը, առանց որի հնարավոր չէր ծավալել ապրանքաշրջանառությունը քաղաքի և գյուղի միջև, ամրացնել բանվորների և գյուղացիների տնտեսական դաշինքը, վերականգնել քայքայված արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը։

Տրոցկիստները, բուխարինականները և մյուս հակալենինյան տարրերը կատաղարար հանդես գալով Կոմունիստական պարտիայի գլխավոր դծի դեմ, նեպը համարում էին միայն նահանջ։ Պարտիան, Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ, վճռական հակահարված տալով տրոցկիստական-բուխարինական թափրիվուկներին, հաստատ կերպով իրականացրեց իր վերցրած նոր կուրսը, որը ապահովեց մեր երկրի արագ զարգացումը սոցիալիզմի ուղիով։

Կոմունիստական պարտիան նոր տնտեսական քաղաքականությունը համարելով կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում որպես միակ ճիշտ քաղաքականությունը, հատուկ սրությամբ ընդգծում է, որ այդ քաղաքականությունն ամենուրեք նույնությամբ, նույն մեթոդներով կիրառել հնարավոր չէ, որ յուրաքանչյուր դեպքում պետք է ելնել տվյալ ռեսպուբլիկայի

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 7, Երևան, 1949, էջ 402—403։

առանձնահատուկ պայմաններից, տնտեսական զարգացման աստիճանից, դրան համապատասխան դասակարգային փոխհարաբերություններից։

Այդ տեսակետից, ինչպես ամբողջ Անդրկովկասի, նույնպես և Հայաստանի կոմունիստների համար խոշորագույն նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի ծրագրային նամակը «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին»։ Այդ պատմական նամակում Վ. Ի. Լենինը հանճարեղ կերպով շարադրել է նոր տնտեսական քաղաքականության իրականացման կոնկրետ ուղիները Անդրկովկասում, որն այն ժամանակ իր զարգացման մակարդակով և մի շարք այլ պայմաններով տարբերվում էր Սովետական Ռուսաստանից։ Վ. Ի. Լենինը նշել է հետևյալ տարբերությունները. ա) Սովետական Ռուսաստանը միայնակ մի քանի տարի կռվել է Անտանտայի դեմ, ոչ մի տեղից չստանալով տնտեսական, քաղաքական և ռազմական օգնություն։ Իսկ Կովկասի սովետական ռեսպուբլիկաները այդպիսի օգնություն ստացել են Սովետական Ռուսաստանից։ բ) Կովկասյան սովետական ռեսպուբլիկաները, Սովետական Ռուսաստանի գոյության շնորհիվ, կարող են ոչ մի վախ չզգալ Անտանտայից, որի ձեռքերը դաղել է Սովետական Ռուսաստանը։ գ) Կովկասը է՛լ ավելի գյուղացիական երկիր է, քան Ռուսաստանը։ դ) Կովկասը կարող է է՛լ ավելի արագությամբ ապրանքափոխանակություն գլուխ բերել կապիտալիստական Արևմուտքի հետ։ Ընդգծելով, որ Կովկասը ավելի գյուղացիական երկիր է, քան Ռուսաստանը, Վ. Ի. Լենինը վերոհիշյալ նամակում գրում էր, որ Կովկասում Սովետական իշխանության պահպանման ու զարգացման համար, անցումը դեպի սոցիալիզմ իրականացնելու համար «...ամենից ավելի կարևոր է, որ Անդրկովկասի կոմունիստները հասկանան իրենց դրության, իրենց ռեսպուբլիկաների դրության յուրօրինակությունը, ի տարբերություն ՌՍՖՍՌ դրության ու պայմանների, հասկանան մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը»[1]։

Նամակում Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին ցուցում է տվել, որ տնտեսության վերականգնման աշխատանքները պետք է սկսել գյուղատնտեսությունից, ոռոգումից. «...Բոլոր ուժերով զար-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 402։

գացնել հարուստ երկրի արտադրողական ուժերը, սպիտակ ածուխը, ոռոգումը։ Ոռոգումը հատկապես կարևոր է հողագործությունն ու անասնապահությունը ինչ գնով էլ լինի բարձրացնելու համար»[1]։ Նամակում միաժամանակ ցույց է տրված Կովկասի ժողովուրդների եղբայրական անխախտ դաշինքի անհրաժեշտությունը՝ որպես գլխավոր պայման Սովետական իշխանության պահպանման, նրա հզորացման համար, դաշինք, որն անհնարին է բուրժուական տիրապետության ժամանակ։ «Ջերմագին ողջունելով Կովկասի սովետական ռեսպուբլիկաները,— գրել է Վ. Ի. Լենինը,— ես ինձ թույլ եմ տալիս հույս հայտնել, որ նրանց սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[2]։

Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով և ՌԿ(բ) Պարտիայի X համագումարի պատմական որոշումներով, Հայաստանի Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը 1921 թվականի գարնանից ձեռնամուխ եղան նոր տնտեսական քաղաքականության իրականացմանը։ Իսկ մինչև այդ Հայաստանում կիրառվում էր ռազմական կոմունիզմի քաղաքականությունը։

Նոր տնտեսական քաղաքականության անցնելու սկզբնական շրջանում տնտեսական շինարարության գծով ամենակարևոր և ամենագժվարին հարցերից մեկը 1921 թվականի գարնանացանի և բերքահավաքի ապահովման խնդիրն էր։ Չնայած սուղ պայմաններին, Սովետական իշխանությունը աշխատավոր գյուղացիների որոշ մասին տվեց սերմավարկ, գործիքներ և ֆինանսական օգնություն։ Բերքահավաքի ժամանակ Կարմիր Բանակի շատ զորամասեր օգնության գնացին աշխատավորական գյուղացիական տնտեսություններին։ Հայկական ՍՍՌ Ռազմական ժողովրդական կոմիսարը հատուկ հրաման է տալիս Կարմիր Բանակի զորամասերի կողմից աշխատավոր գյուղացիությանը օգնություն ցույց տալու մասին[3]։

1921 թ. հունիսի 24-ին հրատարակվում է Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի դեկրետը Հայաստանում պարենամատակարարումը պարենհարկով փոխարինելու մասին։ Ըստ այդ դեկրետի Սովետական Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի, որ զբաղվում էր հացահատիկի, տեխնիկական կուլտուրաների մշա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 403—404։

[2] Նույն տեղում, էջ 402։

[3] Տես Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 184, թ. 28—29։

դությամբ, ինչպես և մեղվաբուծությամբ, անասնապահությամբ, պարտավոր էր պետությանը վճարել պարենհարկ՝ պարենմասնատրման փոխարեն։ Պարենհարկը սահմանվեց նվազագույն չափով, որը նպատակ ուներ բարելավելու աշխատավոր գյուղացիության դրությունը և ապահովելու նրա շահագրգռվածությունը գյուղատնտեսության բարձրացման գործում։ Դեկրետը սահմանեց, որ պարենհարկը պետք է լինի պրոգրեսիվ։ «Սահմանված տուրքը պետք է լինի պրոգրեսիվ,— ասված է դեկրետում։— Նա պիտի հավաքվի իրեն մի որոշ տոկոս կամ բաժին տնտեսության ընդհանուր արտադրանքից, իսկ նրա չափը պիտի որոշվի բերքը հաշվարկելով և ապառողների թվով»[1]։ Պարենային հարկը տալուց հետո, գյուղացու տրամադրության տակ էր մնում կենսամթերքների ամբողջ ավելցուկը, որը նա կարող էր ազատ կերպով շուկա հանել։

Ինչպես տեսանք, մասնավոր առևտրի հետ միաժամանակ թույլատրվում էր մասնավոր մանր ձեռնարկների գոյությունը։ Սկսում է որոշ չափով աշխուժանալ մասնավոր առևտուրը, սպեկուլյացիան։ Ծավալվում է պայքարը նորի՝ սոցիալիզմի և հնի՝ կապիտալիստականի միջև։ Լենինյան հանճարեղ դրույթները նեպի մասին պարզորոշ կերպով կանխատեսում էին, որ այդ մրցման մեջ անպայմանորեն հաղթելու էր սոցիալիստականը։

Նոր տնտեսական քաղաքականության կիրառումով անհրաժեշտ պայմաններ ստեղծվեցին ինչպես բոլոր սովետական ռեսպուբլիկաների, այնպես և Սովետական Հայաստանի տնտեսության վերականգնման համար։ Տնտեսության բոլոր ճյուղերը, առանձնապես բայքայված գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն սկսեցին աշխուժանալ, ծավալվեցին Հայաստանի տնտեսական կապերը Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների, Սովետական Ռուսաստանի ու մյուս սովետական ռեսպուբլիկաների հետ։ Առևտրի, ապրանքափոխանակության աշխուժացումով ամրապնդվեցին գյուղի և քաղաքի կապերը, ստեղծվեցին անհրաժեշտ նախադրյալներ սոցիալիստական արդյունաբերության հետագա զարգացման համար։

Ալդպիսի պայմաններում անհրաժեշտություն զգացվեց Հայաստանում իրականացնելու վարչական վերաբաժանում։ Ժողկոմսովետի կողմից առանձնացված կառավարական հատուկ հանձնաժողովը մշակում է Հայաստանի վարչական բաժանման նախագիծը,

[1] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, Պետհրատ, Էջմիածին, 1921, պրակ 2-րդ, էջ 62։

որը 1921 թ. հուլիսի 20-ին հաստատվում է Ժողկոմսովետի կողմից։ Ըստ վարչական բաժանման դեկրետի, Սովետական Հայաստանը բաժանվեց 8 գավառի՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Ղարաքիլիսայի, Նոր-Բայազետի, Իջևանի, Լոռի-Փամբակի և Դարալագյազի։ Գավառներն իրենց հերթին բաժանվում էին գավառակների (շրջանների)։ Բոլոր այդ 8 գավառների մեջ մտնում էին 33 գավառակ։[1] Շուտով կազմակերպվում է նաև 9-րդ՝ Զանգեզուրի գավառը, որը նոր էր ազատագրվել դաշնակցական բանդաներից։ Վարչական այդպիսի բաժանումը սովետական ապարատն ավելի մոտեցրեց մասսաներին, այն դարձրեց ավելի ճկուն և օպերատիվ։ Դրանով իսկ ավելի լավ հիմքերի վրա դրվեց պետական ապարատի կապը աշխատավորական մասսաների հետ, նրանց ղեկավարությունը. ապահովվեց ռեսպուբլիկայի բանվորների և գյուղացիների ավելի լայն մասնակցությունը տնտեսության վերականգնման աշխատանքներին։

Գնալով ամրապնդվում էր Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների տնտեսական, քաղաքական և ռազմական դաշինքը։

1921 թ. ապրիլի 20-ին Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների՝ Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի միջև կնքվում է համաձայնագիր Անդրկովկասյան երկաթուղիների միավորման մասին։ Համաձայնագրի առաջին կետում ասված է. «Շահագործման ենթակա բոլոր երկաթուղիները, որ անցնում են Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի սոցիալիստական ռեսպուբլիկաների սահմաններում, միավորվում են անդրկովկասյան ռեսպուբլիկանների երկաթուղիների մեկ ընդհանուր ցանցի մեջ։

Անդրկովկասյան ռեսպուբլիկաների երկաթուղիների ամբողջ ցանցը,— ասված է համաձայնագրի երկրորդ կետում,— ղեկավարվում է անդրկովկասյան ռեսպուբլիկաների երկաթուղիների մեկ վարչությամբ, որի տեղը հանդիսանում է Թիֆլիսը և որի կոմիսարը մտնում է Անդրկովկասյան Ռեսպուբլիկաների Տնտեսական Խորհրդի մեջ ընդհանուր հիմունքներով»[2]։

Այդ համաձայնագիրը խոշոր չափով նպաստեց տնտեսական փոխհարաբերությունների հետագա ամրապնդմանը մի կողմից Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև, մյուս կողմից՝ այդ

---

[1] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2-րդ, Պետհրատ, Էջմիածին, 1921, էջ 83—84։

[2] Образование СССР, Сборник документов, 1917—1924 гг., под ред. Э. Б. Генкиной, Москва—Ленинград, 1949, стр. 271.

ռեսպուբլիկաների ու Սովետական Ռուսաստանի միջև։ Դրանից հետո արագ թափով սկսվում է Երևան—Ալեքսանդրապոլ երկաթգծի և Ալեքսանդրապոլի երկաթուղային դեպոյի վերանորոգումը, որը հնարավոր չէր կատարել միայն Սովետական Հայաստանի սուղ միջոցներով։ Վերականգնվում է երկաթուղային կանոնավոր երթևեկությունը Երևան—Թիֆլիս—Բաքու և Երևան—Ջուլֆա գծերով։

Դրանից կարճ ժամանակ հետո տեղի է ունենում Անդրկովկասյան երեք ռեսպուբլիկաների արտաքին առևտրի միավորումը։ Ապրանքների փոխանակումը, նրանց իրացումը արտաքին շուկայում միասնաբար և նպատակահարմար կատարելու համար Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի սովետական ռեսպուբլիկաները 1921 թ. հունիսի 2-ին Բաքվում կնքում են պայմանագիր արտաքին առևտրի միավորման մասին։ Պայմանագրում նշված է.

«1. Որպեսզի բոլոր արտաքին շուկաներում նպատակահարմար կազմակերպվի ապրանքների փոխանակումը և իրացման ենթարկվեն արտահանության բոլոր աղբյուրները, Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունները հաստատում են արտաքին առևտրի համար միավորված մի մարմին, որը կոչվում է «Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միություն արտաքին առևտրի համար»։ Միության կենտրոնն է Թիֆլիսը։

2. Միության բոլոր գործերը ղեկավարելու և կառավարելու համար պայմանավորվող հանրապետությունների հատուկ որոշումով ընտրվում է միասնական վարչություն»[1]։

Այնուհետև լիկվիդացվում են մաքսատները Անդրկովկասյան Սովետական ռեսպուբլիկաների, ինչպես նաև այդ ռեսպուբլիկաների ու Սովետական Ռուսաստանի միջև։

1921 թ. գարնանացանը ավարտելուց հետո, ռեսպուբլիկայում սկսվում են նախապատրաստական աշխատանքները պարենհարկի դանձման ուղղությամբ։ Հայաստանի Կոմունիստական պարտիան մեծ կարևորություն տալով այդ գործին, մոբիլիզացնում է բոլոր ուժերն ու հնարավորությունները՝ այն հաջողությամբ իրականացնելու համար։ Ագիտացիոն և պրոպագանդիստական աշխատանքի միջոցով գյուղացիությանը բացատրվում է նոր տնտեսական քաղաքականության իմաստը և նշանակությունը, պարենհարկի տարբերությունը պարենմատնատրումից, ցույց տալով Սովետական իշխանության հոգատարությունը գյուղատնտեսության վերականգ-

[1] «Խորհրդային Հայաստան», № 104, 12 հուլիսի, 1921։

նման ուղղությամբ, չքավոր և միջակ տնտեսությունների նկատմամբ։

Աշխատավոր գյուղացիությունը հասկանալով այդ, ավելի սերտ կերպով է համախմբվում Սովետական իշխանության շուրջը։

1921 թ. պարենային հարկի դանձման վերաբերյալ պաշտոնական հաղորդագրության մեջ ասված է. «Կուսակցական և պետական լավագույն ուժերը նվիրված են այժմ այդ գործի հաջող կատարմանը, որը ներկայացնում է հարվածային ֆրոնտ։ Գավառներում և գավառամասերում կազմված են համապատասխան հանձնախմբեր՝ պարենտուրքը կանոնավոր հավաքելու համար։

Գյուղացիության վերաբերմունքը դեպի պարենտուրքը միանգամայն լավ է։ Տուրքը գանձվում է առանց դժվարությունների։ Գյուղացիությունը լավ է ըմբռնել պարենտուրքի հաջող ավարտման անհրաժեշտությունը պետության համար»[1]։

1921 թ. նոյեմբերի 25-ին լույս է տեսնում Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի դեկրետը բամբակագործության մասին։ Երկրում բամբակագործությունը զարգացնելու նպատակով, դեկրետը վերացված է համարում բամբակի պետական մենաշնորհը և 1922 ու 1923 թվականներին բամբակագործներին ազատում է պարենտուրքից, նրանց թույլատրելով ընդհանուր նորմաներից դուրս ազատ հողաբաժիններ ունենալու, ինչպես նաև վարկային արտոնություններ է տալիս։

Նէպին անցնելու հենց առաջին շրջանում Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության ձեռք առած միջոցառումների շնորհիվ միջակ գյուղացիությունը վճռական շրջադարձ է կատարում դեպի Սովետական իշխանությունը։ Դրան խոշոր չափով նպաստեցին հետևյալ գործոնները. ա) Սովետական իշխանությունը կարողացավ վերջնականապես լուծել հողային հարցը, որի համար գյուղացիությունը երկար տարիներ պայքարել էր։ Նա աշխատավոր գյուղացիությանը ապահովեց հողով։ «Հոկտեմբերյան ռևոլյուցիան,— գրում է Ի. Վ. Ստալինը,— ոչնչացրեց հողի մասնավոր սեփականությունը, ոչնչացրեց հողի առուծախը, հաստատեց հողի ազգայնացում։ Այդ ի՞նչ է նշանակում։ Այդ նշանակում է, որ գյուղացին հաց արտադրելու համար բոլորովին կարիք չունի այժմ հող գնելու։ Առաջներում նա տարիներով միջոցներ էր կուտակում, որպեսզի հող ձեռք բերի, պարտքերի տակ էր ընկնում, ստրկության

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 184, թ. 34։

էր դիմում, միայն թե հող գնի»[1]; բ) Սովետական իշխանության հեռահեղական խաղաղասիրական քաղաքականությունը, որով աշխատավոր գյուղացիությունը հնարավորություն ստացավ զբաղվելու իր քայքայված տնտեսության վերականգնման աշխատանքներով։ գ) Նոր տնտեսական քաղաքականությանն անցնելով, Սովետական իշխանությունը կազմակերպեց ամենալայն օգնությունը աշխատավոր գյուղացիությանը։ Պետության կողմից գյուղացիներին տրվեց սերմացու, վարկ, գյուղատնտեսական գործիքներ և այլն։ դ) Պարենմատնատրման փոխարինումը պարենհարկով, այդ հարկի պրոգրեսիվ բնույթը։ Սովետական իշխանության հարկային քաղաքականությունն այնպիսին էր, որ գնալով, հարկի տեսակարար կշիռը գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ նվազում էր, հօգուտ աշխատավոր գյուղացիության։ ե) Գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների գների սովետական քաղաքականությունը, որի նպատակն էր ամրապնդել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

Սակայն ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի սկզբում գյուղատնտեսության զարգացմանը արգելակում էին մի շարք դժվարություններ։ Հայաստանում գյուղատնտեսությունը խիստ հետամնաց էր, մշակման գործիքները պրիմիտիվ էին, ցանքերը կատարվում էին առանց պարարտացման, առանց սերմազտման։ Ոռոգման սիստեմն ամբողջությամբ քայքայված էր։ Դրան համապատասխան էլ ստացվում էր ցածր բերք։ Ապրանքափոխանակությունը քաղաքի և գյուղի, ինչպես և առանձին շրջանների միջև թույլ էր։

Հաղթահարելով այդ դժվարությունները, գյուղը աստիճանաբար առաջ էր շարժվում։

Այդ ժամանակ Կոմունիստական պարտիան և Սովետական պետությունը նախապատրաստում էին գյուղատնտեսության զարգացման հետագա ուղիները, սոցիալիզմի հաղթանակը գյուղում ապահովելու միջոցառումները։

Այդ ուղին ուրվագծեց Վ. Ի. Լենինը 1923 թ. սկզբին «Կոոպերացիայի մասին» հայտնի հոդվածում, որը «Մեր ռևոլյուցիայի մասին» հոդվածի հետ միասին Ի. Վ. Ստալինը գնահատել է որպես Վ. Ի. Լենինի քաղաքական կտակը։ «Կոոպերացիայի մասին» պատմական հոդվածում Վ. Ի. Լենինը զարգացրեց, ավելի բարձր աստիճանի հասցրեց մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավո-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 12, Երևան, 1949, էջ 177—178։

ության մասին ուսմունքը, մարքսիզմի պատմության մեջ առաջին թեորիապես մշակեց և հանճարեղ կերպով հիմնավորեց պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճելուց հետո պրոլետարական ռևոլյուցիայի ամենադժվարին հարցերից մեկը՝ մանր ու միջին գյուղացիական տնտեսությունները խոշոր կոլեկտիվ արտադրության՝ սոցիալիզմի ռելսերի վրա փոխադրելու հարցը։

Վ. Ի. Լենինի «Կոոպերացիայի մասին» հանճարեղ հոդվածը հրապարակ եկավ այն ժամանակ, երբ արդեն ակնհայտ էին նոր տնտեսական քաղաքականության առաջին լուրջ հաջողությունները նրա կենսագործման մոտ երկու տարիների ընթացքում, երբ ավելի ամուր հիմքերի վրա էր դրվում գյուղի և քաղաքի կապը, երբ, չնայած դանդաղ, բայց հաստատ ու վճռական կերպով սկսված էր տնտեսական վերելքը մեր երկրում և այդ բոլորի շնորհիվ ավելի ու ավելի էր ամրանում, հզորանում պրոլետարիատի դիկտատուրան։

Վ. Ի. Լենինը հանճարեղ խորաթափանցությամբ կոոպերացիայի մեջ տեսնում էր արտադրության կազմակերպման այն միակ ձևը, որը Սովետական իշխանության պայմաններում կարող էր միլիոնավոր մանր ու միջին գյուղացիական տնտեսությունները տանել դեպի սոցիալիզմ։ «Հիրավի,— գրել է Վ. Ի. Լենինը,— պետության իշխանությունն արտադրության բոլոր խոշոր միջոցների վրա, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքում, այդ պրոլետարիատի դաշինքը բազմամիլիոն մանր ու մանրագույն գյուղացիների հետ, գյուղացիության նկատմամբ այդ պրոլետարիատի ղեկավարության ապահովումը և այլն,— մի՞թե սա այն բոլորը չէ, ինչ հարկավոր է, որպեսզի կոոպերացիայից, միմիայն կոոպերացիայից, որը առաջներում մենք քամահրում էինք որպես չարչիական, և որը որոշ տեսակետից իրավունք ունենք քամահրելու այժմ՝ նեպի օրով նույնպես, մի՞թե սա այն ամենը չէ, ինչ անհրաժեշտ է լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար։ Սա դեռևս սոցիալիստական հասարակության կառուցումը չէ, բայց սա այն ամենն է, ինչ անհրաժեշտ է և բավական այդ կառուցման համար» [1]։

Առաջադրելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հանճարեղ պլանը, Վ. Ի. Լենինը միաժամանակ նշում էր, որ ամբողջ բնակչությունը նրան մասնակից դարձնելու համար պահանջվում է մի ամբողջ պատմական ժամանակաշրջան՝ մեկ—երկու տասնամյակ, որ սոցիալիստական պետության կարևորա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 356։

գույն խնդիրն է ամեն կերպ պաշտպանել և խթանել բնակչության նոր, կոոպերատիվ կազմակերպման սկզբունքները, բազմակողմանիորեն նախապատրաստել այդ մեծագույն հեղաշրջումը։ Դրա համար անհրաժեշտ էր նախ և առաջ արագ կերպով վերականգնել իմպերիալիստական պատերազմի և քաղաքացիական կռիվների հետևանքով քայքայված ժողովրդական տնտեսությունը, ստեղծել հզոր սոցիալիստական ինդուստրիա, առանց որի անհնարին էր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։

Վ. Ի. Լենինը խոշոր նշանակություն էր տալիս ապրանքային արտադրությանը և գյուղի ու քաղաքի միջև ապրանքափոխանակության ծավալմանը, նրանց միջև դոդումը ամրապնդելուն։ Այդ հարցը մեր երկրում առանձնապես մեծ կարևորություն էր ստանում այն պատճառով, որ գյուղում Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո այն ժամանակ դեռևս առկա էին բազմամիլիոն մանր ու միջին արտադրողները, որի պատճառով Սովետական պետությունը չէր կարող արդյունաբերության միջոցների և գործիքների հանրայնացման ձևով հանրայնացնել նաև մանր ու միջին արտադրողների արտադրության միջոցները կամ հրաժարվել իշխանությունը դրավելուց, մինչև որ կապիտալիզմը քայքայեր միլիոնավոր մանր ու միջին արտադրողներին, ինչպես այդ պնդում էին որոշ վայ-մարքսիստներ[1]։ Գյուղացիության հետ միասին տապալելով շահագործողների տիրապետությունը և հաստատելով իր դիկտատուրան, մեր երկրի բանվոր դասակարգը ռևոլյուցիայի հաղթանակից հետո չէր կարող գյուղացիական մանր ու միջին շերտերի նկատմամբ գործադրել այնպիսի միջոցներ, ինչպիսիք գործադրել և գործադրում էր շահագործող դասակարգերի նկատմամբ, բռնագրավելով նրանց արտադրության միջոցները։ Մանր ու միջին արտադրողների աշխատավոր գյուղացիության նկատմամբ այդպիսի քաղաքականություն վարել, կնշանակեր խախտել պրոլետարիատի դիկտատուրայի դասակարգային հիմքերը՝ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, դրանով իսկ թուլացնել և կործանել այդ դիկտատուրան։ Կոմունիստական պարտիան չգնաց և չէր կարող գնալ այդ ուղիով, «...որովհետև այդ ուղին կխափաներ պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի ամեն մի հնարավորություն, գյուղացիությանը երկար ժամանակով կնետեր պրոլետարիատի թշնամիների լագերը»[2]։ Ռկ(բ) Պ Կենտկոմի, Վ. Ի. Լենինի

---

[1] Տես Ի. Վ. Ստալին, Սոցիալիզմի էկոնոմիկական պրոբլեմները ՍՍՌՄ-ում, Երևան, 1953, էջ 31—32։

[2] Նույն տեղում, էջ 32։

և Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ պարտիան մինչև վերջ մերկայացրեց ու ջախջախիչ հակահարված տվեց տրոցկիստներին, զինովևականներին և բոլոր նրանց, ովքեր փորձում էին ռևիզիայի ենթարկել պարտիայի գիծը դյուղացիության նկատմամբ, աստիճանական ու հետևողական աշխատանքով մանր ու միջին գյուղացիական տնտեսությունները կոոպերացնելու՝ զարգացման սոցիալիստական ուղու վրա դնելու մասին։ Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, միաժամանակ Կոմունիստական պարտիան դրեց և մինչև վերջ պաշտպանեց պրոլետարիատի դիկտատուրայի որոշ ժամանակաշրջանում ապրանքային արտադրության անհրաժեշտությունը՝ որպես մեր երկրի արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման, քաղաքի և գյուղի միջև կապի ամրապնդման կարևորագույն գործոններից մեկը։

Խոսելով իշխանության համար մղվող պայքարում և շահագործողների տիրապետությունը տապալելուց հետո պրոլետարիատի վերաբերմունքի մասին դեպի մանր ու միջին գյուղացիությունը և գյուղատնտեսության կոոպերացման ու պրոլետարիատի դիկտատուրայի որոշ ժամանակաշրջանում ապրանքային տնտեսության պահպանման անհրաժեշտության մասին, Ի. Վ. Ստալինը ասում է.

«Այդ հարցի պատասխանը տվել է Լենինը «պարենհարկի» մասին իր աշխատություններում և հռչակավոր «կոոպերատիվ պլանում»։

Լենինի պատասխանը համառոտակի հանգում է հետևյալին.

ա) բաց չթողնել իշխանությունը գրավելու համար բարենպաստ պայմանները, պրոլետարիատը պետք է գրավի իշխանությունը, չսպասելով մինչև այն մոմենտը, երբ կապիտալիզմը կկարողանա քայքայել մանր ու միջին անհատական արտադրողների բազմամիլիոն բնակչությանը.

բ) էքսպրոպրիացիայի ենթարկել արտադրության միջոցները արդյունաբերության մեջ և դրանք դարձնել համաժողովրդական սեփականություն.

գ) ինչ վերաբերում է մանր ու միջին անհատական արտադրողներին, ապա նրանց աստիճանաբար միավորել արտադրական կոոպերատիվներում, այսինքն՝ խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների մեջ.

դ) ամեն կերպ զարգացնել ինդուստրիան և կոլտնտեսությունները դնել խոշոր արտադրության ժամանակակից տեխնիկական

բաղայի վրա. ընդ որում ո՛չ թե էքսպրոպրիացիայի ենթարկել, այլ. ընդհակառակը, ուժեղ թափով առաջնակարգ տրակտորներ և այլ մեքենաներ մատակարարել նրանց.

Ե) իսկ քաղաքի և գյուղի, արդյունաբերության և գյուղատնտեսության էկոնոմիկական զոդման համար մի որոշ ժամանակով պահպանել ապրանքային արտադրությունը (փոխանակությունը առուծախի միջոցով), որպես քաղաքի հետ էկոնոմիկական կապերի՝ գյուղացիների համար միակ ընդունելի ձևը, և լայնորեն ծավալել սովետական՝ պետական ու կոոպերատիվ-կոլտնտեսային առևտուրը, ապրանքաշրջանառությունից դուրս մղելով բոլոր և ամեն տեսակ կապիտալիստներին»[1]:

Գյուղատնտեսության հետագա զարգացման վերաբերյալ ունենալով այդպիսի հստակ ծրագիր, Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը նեպի պայմաններում հաստատապես շարունակում էին արդյունաբերության և գյուղատնտեսության վերականգնման աշխատանքները, անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելով լենինյան կոոպերատիվ պլանի իրականացման համար:

Հայաստանի գյուղատնտեսության մեջ այդ ժամանակ սկիզբ է առնում արտադրական և վարկային կոոպերացիան: Կազմակերպվում են առաջին կոոպերատիվ ընկերությունները: Սովետական իշխանությունը գյուղատնտեսական բանկի միջոցով կոոպերացիայի մեջ ընդգրկված գյուղացիներին բաց էր թողնում վարկ՝ գյուղատնտեսական գործիքներ, սերմացու և լծկաններ ձեռք բերելու համար: Վարկ էր բաց թողնում նաև առանձին աշխատավորական տնտեսություններին, բայց միշտ առաջնությունը տրվում էր կոոպերացիային: 1923—1924 տնտեսական տարում Հայաստանում Գյուղատնտեսական բանկի բաց թողած վարկի 32,5 տոկոսը տրվել է գյուղատնտեսական կոոպերացիային, որի մեջ ընդգրկված էր աշխատավոր գյուղացիության միայն փոքրիկ մասը (մեկ տոկոսից էլ պակաս): Հետագա տարիներին ավելի ու ավելի է մեծանում պետական օգնությունը գյուղատնտեսական կոոպերացիային:

Առաջին խոշոր քայլերն են կատարվում առևտրական-սպառողական կոոպերացիայի ընդարձակման ուղղությամբ: Բոլոր կոոպերատիվները միավորվում են Հայկոոպի մեջ, որի առաջ խնդիր էր դրված ամեն կերպ նպաստել ապրանքափոխանակության ծավալմանը քաղաքի և գյուղի միջև, պայքարելով սպեկուլյացիայի դեմ:

[1] Ի. Վ. Ստալին, Սոցիալիզմի էկոնոմիկական պրոբլեմները ՍՍՌՄ-ում, էջ 32—34:

1921 թ. օգոստոսի 10-ին հրապարակվում է Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի դեկրետը տնայնագործությանը և մանր արդյունաբերությանը օժանդակելու միջոցառումների մասին։ Դրանով նոր պայմաններ են ստեղծվում տնայնագործության և տնայնագործական կոոպերացիայի զարգացման համար։ «Կոոպերատիվ միություններին,— ասված է դեկրետում,— ինչպես և մանր ձեռնարկություններին թույլատրվում է փոխադրել ու ապրանքներ վաճառել Հայաստանի Հանրապետության ամբողջ տերիտորիայում՝ իրենց արտադրած նյութերից»[1]։ Դեկրետը սովետական տեղական մարմինների վրա պարտավորություն էր դնում ամեն կերպ աջակցել տնայնագործներին, նրանց կոոպերատիվ միություններին իրենց արդյունաբերության համար անհրաժեշտ հումքի հայթայթման գործում, յուրաքանչյուր դեպքում առավելություն տալով կոոպերատիվ միություններին՝ մասնավոր արհեստավորների և ձեռնարկությունների համեմատությամբ։

Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետը 1921 թ. օգոստոսի 14-ի դեկրետով Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդին կից հիմնում է կոոպերացիայի, տնայնագործության և մանր արդյունաբերության Վարչություն։ Այդ Վարչության վրա խնդիր է դրվում նպաստել կոոպերացիայի, տնայնագործության և մանր արդյունաբերության զարգացմանը ռեսպուբլիկայում, այն ծառայեցնելով սոցիալիստական տնտեսության շահերին[2]։

Նկատի ունենալով կոոպերատիվ շարժման հաջողությունները և կարևոր դերը ժողովրդական տնտեսության վերականգնման գործում, Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետը, ի զարգացումն 1921 թ. հունիսի 3-ի դեկրետի, նոր դեկրետ է հրատարակում (նույն թվականի նոյեմբերի 24-ին) միասնական կոոպերացիայի մասին։ Դեկրետում ասված է.

«Հայաստանի կոոպերատիվ շինարարության հիմքում դնել միասնական կոոպերացիայի սկզբունքը, որ նկատի ունի համախմբել գյուղի և քաղաքի մանր աշխատավորական արտադրողներին, յուրացնելով սպառողական, գյուղատնտեսական ու արդյունաբերական կոոպերացիայի գործունեությունը»[3]։

Դեկրետը նախատեսում էր ամեն կերպ աջակցել մանր արտադրողներին կոոպերացիայի մեջ համախմբելուն, որի համար

---

[1] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, № 2, էջ 10։

[2] Տես նույն տեղում, № 4, էջ 28։

[3] Նույն տեղում, № 13, էջ 133։

հանձնարարվում է պետական կազմակերպություններին. ա) պատվերը տալ կոոպերատիվներին նրանց առավելություն տալով մասնավորի նկատմամբ, բ) պետական հում նյութից, արտադրական գործիքներից, սերմացուից, ինչպես նաև դրամական միջոցներից ավանսավորել կոոպերատիվ ընկերություններին, գ) մասնավոր անձանց նկատմամբ կոոպերատիվներին առավելություն տալ գործիքներ, շենքեր ձեռք բերելու և այլ խնդիրներում [1]։

Կոոպերատիվ շինարարությանն օժանդակելու, կոոպերացիայի սկզբունքները մասսայականացնելու ուղղությամբ, Կոմունիստական պարտիան քաղաքի և գյուղի բնակչության մեջ տանում էր լայն ագիտացիոն բացատրական աշխատանք։

Մինչև 1921 թ. հունիսը, Հայաստանի կոոպերատիվ առևտրի կենտրոնը՝ Հայկոոպը համարվում էր Պարենավորման Ժողկոմատի բաժիններից մեկը և դերազանցապես կատարում էր բաշխման ու մատակարարման դեր։ Նոր տնտեսական քաղաքականությանն անցնելուց հետո, Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի 1921 թ. հունիսի 3-ի և նոյեմբերի 24-ի դեկրետներով Հայկոոպը և մյուս կոոպերատիվ առևտրական կազմակերպությունները դառնում են ինքնուրույն և սկսում են ակտիվ գործարքներ առևտրի, փոխանակման և արտադրության գծով։ 1921 թ. վերջերին Հայաստանում կոոպերատիվ առևտրի ցանցը ընդգրկում էր 121 միավոր։

1922 թ. սեպտեմբերին կազմակերպվում է Հայպետառը (հետագայում վերանվանվեց Հայառ), որի առաջ խնդիր էր դրված միավորել Սովետական Հայաստանի ամբողջ պետական առևտուրը, լայնորեն ծավալել այն և աստիճանաբար շուկայից դուրս մղել մասնավոր առևտրականներին-սպեկուլյանտներին։

1921—1923 թվականներին Սովետական Հայաստանում զգալի աշխատանքներ են կատարվում ոռոգման ուղղությամբ։ Պետության ձեռնարկած միջոցառումների և այդ գործում աշխատավոր գյուղացիության ակտիվ մասնակցության շնորհիվ նախկինում գոյություն ունեցած ոռոգման ցանցն այդ ժամանակ հիմնականում վերականգնվում է։ Ռեսպուբլիկայում ոռոգելի տարածությունները 1922 թ. հասնում էին նախապատերազմյան ոռոգելի տարածությունների 90 տոկոսին։ 1922 թ. հոկտեմբերին սկսվել էր Շիրակի ջրանցքի շինարարությունը, որը այն ժամանակ Հայաստանի ամենախոշոր ջրանցքն էր լինելու։

---

[1] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, № 13, էջ 133։

Այդ տարիներին սկսվում են նաև Երևանի էլեկտրակայանի ընդարձակման և ռեսպուբլիկայում մի շարք նոր էլեկտրակայանների կառուցման նախապատրաստական աշխատանքները։ Զգալի քայլեր են կատարվում քայքայված արդյունաբերության վերականգնման ուղղությամբ։ Ռեսպուբլիկայում տնտեսական շինարարությանը զարկ տալու նպատակով 1921 թ. հոկտեմբերին Հայկական ՍՍՌ ժողկոմսովետին կից կազմակերպվում է Տնտեսական խորհրդակցություն, որը միավորում և ղեկավարում է ռեսպուբլիկայի բոլոր տնտեսական հաստատությունների գործունեությունը։ 1921—1922 թվականներին կարգի են բերվում և սկսում են աշխատել Երևանի Գինու-կոնյակի «Արարատ» գործարանը, երկու կաշեգործարանները և ուրիշ ձեռնարկություններ։ Սովետական Ռուսաստանից ստացված սարքավորումներով սկսում է ընդարձակվել տպագրական գործը։ 1922 թ. Իվանովո-Վոզնեսենսկ քաղաքի բանվորներից նվեր է ստացվում մի ամբողջ տեքստիլ գործարանի սարքավորում, որի բազայի վրա հիմնադրվում է Ալեքսանդրապոլի տեքստիլ գործարանը՝ հանդիսանալով Սովետական Հայաստանի արդյունաբերության նոր, առաջին խոշոր ձեռնարկություններից մեկը։ Նախապատրաստական աշխատանքներ են կատարվում կարգավորելու և գործարկելու Ալավերդու և Զանգեզուրի հանքերն ու պղնձաձուլական գործարանները։

1921 թ. Հայաստանում լայն չափով ծավալվում է պրոֆմիութենական կազմակերպությունների ցանցը և աշխատանքները։ 1921 թ. կեսերին Հայաստանի գավառներում արդեն կազմակերպվել էին պրոֆբյուրոներ, որոնք պրոֆմիությունների շարքերն էին ընդգրկել հազարավոր աշխատավորներ։ 1921 թ. օգոստոսին, ռեսպուբլիկայում պրոֆմիությունների մեջ էին ընդգրկված մոտ 16000 աշխատավորներ։ Դա մեծ ուժ էր, որը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հերոսական աշխատանք էր կատարում ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման համար։

Նույն թվականի օգոստոսի 20—24-ին Երևանում տեղի է ունենում Հայաստանի պրոֆմիությունների առաջին համագումարը, որին մասնակցում էին 198 դելեգատ։ Հակառակ տրոցկիստական թափթփուկների փորձերին, որոնք ցանկանում էին պրոֆմիությունները հակադրել պարտիային, համագումարը, վճռական հակահարված տալով նրանց, հայտնում է իր պատրաստակամությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ է՛լ ավելի մեծ ակտիվությամբ մասնակցելու սոցիալիստական շինարարության

գործին։ Պրոֆեսիոնալ և տնտեսական շինարարության վերաբերյալ իր մի շարք որոշումներով համագումարը կոնկրետ կերպով նշել է պրոֆմիությունների խնդիրները երկրի տնտեսության վերականգնման գործում։

Այդ համագումարից հետո պրոֆմիությունների աշխատանքները նոր թափ են ստանում։ Զգալի գործ է կատարվում պրոֆմիությունների ամրապնդման, նրանց անդամների կողմից դեպի աշխատանքը կոմունիստական վերաբերմունք ունենալու, աշխատանքային կարգապահության ամրապնդման բնագավառներում։ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ պրոֆմիություններն էլ ավելի ակտիվ կերպով լծվում են ժողովրդական տնտեսության վերականգնման գործին։

1921 թ. օգոստոսին Երևանում գումարվում է Հայաստանի Կոմունիստական Երիտասարդական Միության առաջին համագումարը, որը քննության է առնում նաև տնտեսական շինարարության Կոմերիտմիության մասնակցության հարցը։ Համագումարը նշում է Կոմերիտմիության խնդիրները ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման գործում։ Բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ Կոմերիտմիությունը, պրոֆմիությունները և մյուս հասարակական կազմակերպությունները մեծ աշխատանք են կատարում ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ։

Նոր տնտեսական քաղաքականության կիրառման շնորհիվ 1921 թ. վերջին արդեն որոշակի կերպով զգացվում էր սովետական ռեսպուբլիկաներում առաջացած տնտեսական բեկումը։ «Պարտիան տնտեսական ֆրոնտում բեկում առաջ բերեց։ Գյուղատնտեսությունը շուտով առաջ շարժվեց։ Արդյունաբերությունն ու տրանսպորտը ձեռք բերին առաջին հաջողությունները։ Սկսվեց զեռևս շատ դանդաղ, բայց հաստատ տնտեսական վերելք։ Բանվորներն ու գյուղացիները զգում և տեսնում էին, որ պարտիան ճիշտ ճանապարհի վրա է կանգնած»[1]։

Այդ բոլորի շնորհիվ գնալով ավելի էր ամրապնդվում դաշինքը բանվոր դասակարգի և գյուղացիության միջև, ուժեղանում էր պրոլետարիատի դիկտատուրան։

1921 թ. վերջերին հաստատ կերպով ամրապնդվեց նաև Սովետական Հայաստանի արտաքին դրությունը։

---

[1] ՀԱՄԿ(բ)Պ Պատմություն. Համառոտ դասընթաց, Երևան, 1950, էջ 349։

Քեմալական Թյուրքիան չհրաժարվելով Անդրկովկասի նկատմամբ իր նվաճողական ձգտումներից, ակտիվ փորձեր էր կատարում Անդրկովկասի նախկին բուրժուա-նացիոնալիստական «կառավարությունների»՝ դաշնակների, մուսավաթականների և մենշևիկների հետ կնքված պայմանագրերը գործողության մեջ պահելու ուղղությամբ։ Սովետական Հայաստանի նկատմամբ նա մեծ ջանքեր էր գործադրում իրագործելու 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում Թյուրքիայի և դաշնակների միջև կնքված պայմանագիրը։

Հայաստանի Սովետական կառավարությունը, հակառակ Թյուրքիայի կառավարության զավթողական պահանջներին, հրաժարվեց ճանաչելու Ալեքսանդրապոլի պայմանագիրը թե՛ իրավական և թե՛ փաստական առումով։ Սովետական Ռուսաստանի և Թյուրքիայի միջև 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված պայմանագիրը հաստատելով սովետա-թյուրքական սահմաններն Անդրկովկասում, դրկին անգամ ընդգծում էր Ալեքսանդրապոլի պայմանագրի անընդունելիությունը։

Այդ ժամանակ Սովետական Ռուսաստանի ներքին և միջազգային դրությունը ակնառու կերպով ամրապնդվել էր։ Արդեն ավարտվել էին քաղաքացիական կռիվները Սովետական պետության, նրա հերոսական Կարմիր Բանակի, սովետական ժողովրդի պատմական մեծ հաղթանակներով։ Սովետական Ռուսաստանի հաղթանակները քաղաքացիական կռիվներում ցույց տվեցին պրոլետարիատի դիկտատուրայի կենսունակությունն ու անպարտելիությունը։ Այդ հաղթանակով միաժամանակ ամրապնդվեց ինչպես բոլոր սովետական ռեսպուբլիկաների, նույնպես և Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների ներքին և միջազգային դրությունը։ Թյուրքիան ամեն կերպ ձգտում էր պայմանագիր կնքել Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների հետ առանձին-առանձին, ցանկանալով թելադրել նրանց իր կամքը։ Սակայն այդ ևս նրան չհաջողվեց։

Այդպիսի իրադրության մեջ 1921 թ. հոկտեմբերի 13-ին, Կարսում, Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ, մի կողմից Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի սովետական ռեսպուբլիկաների, մյուս կողմից Թյուրքիայի միջև կնքվում է պայմանագիր։ Պայմանագիրը ամբողջապես համապատասխանում էր նույն թվականի մարտի 16-ին Մոսկվայում Սովետական Ռուսաստանի և Թյուրքիայի միջև կնքված պայմանագրի սկզբունքնե-

ին։ «Թյուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությունը,— ասված է Կարսի պայմանագրի առաջին հոդվածում,— և Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի խորհրդային հանրապետությունների կառավարությունները համարում են ոչնչացված և ուժը կորցրած այն բոլոր դաշնագրերը, որոնք կապվել են (կնքվել են—Ս. Հ.) դաշնագրվող կողմերի տերիտորիաների վրա անցյալում գերիշխանություն բանեցնող կառավարությունների միջև այդ տերիտորիաների վերաբերյալ, նմանապես այն դաշնագրությունները, որոնք կապվել են երրորդ պետությունների հետ և որոնք վերաբերում են Անդրկովկասյան հանրապետություններին»[1]։

Կարսի պայմանագրով վերջնականապես ոչնչացված համարվեց Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-ի պայմանագիրը, որի վրա Թյուրքիան մեծ հույս ուներ։ Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասյան եղբայրական ռեսպուբլիկաների միասնական ուժով սանձահարվեցին Թյուրքիայի զավթողական տենդենցները։ «...Թյուրքիայի հետ միասնական պայմանագրի կնքելը մի ավելորդ անգամ ցույց է տալիս,— գրել է Ս. Օրջոնիկիձեն,— որ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը հանդես են գալիս որպես միասնական ամբողջություն, որպես մեկ միասնական եղբայրական ռեսպուբլիկա»[2]։

1921 թ. նոյեմբերին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները նախապատրաստվում էին տոնելու երկրում սովետական կարգերի հաստատման առաջին տարեդարձը։ Այդ կապակցությամբ ռեսպուբլիկայի բոլոր գավառներում, շրջաններում, քաղաքներում ու գյուղերում սկիզբ է առնում աշխատանքային խանդավառությունը։ Նույն թվականի նոյեմբերի 16-ին լույս է տեսնում Հայկական ՍՍՌ ժողովրդական Կոմիսարների Սովետի դեկրետը— նոյեմբերի 29-ը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման օրը, Հայաստանի բանվորների և գյուղացիների համաժողովրդական տոն հայտարարելու մասին։

Նոյեմբերի 29-ին Հայաստանի աշխատավորները մեծ խանդավառությամբ տոնում են իրենց ազատագրման առաջին տարեդարձը։ Ամենուրեք, բոլոր արտադրական ձեռնարկներում, հիմնարկներում, գյուղերում հրավիրվում են աշխատավորների ժողովներ, ուր նրանք ծանոթանում են Սովետական իշխանության գոյության առաջին տարում Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Հա-

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 184, թ. 53։

[2] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 109—110։

յաստանում ձեռք բերված հաջողություններին։ Հայաստանի աշխատավորների ոգին նրանց հետ միասին նշում են նաև եղբայրական սովետական ռեսպուբլիկաների բանվորներն ու գյուղացիները։

3. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԾԱՎԱԼՈՒՄԸ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ինչպես տեսանք, փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից հետո, 1921 թ. մայիսին Հայաստանի Ռևկոմը վերակազմվում է ՀՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի։ Կազմակերպման առաջին իսկ օրերից Ժողովրդական Կոմիսարների Սովետը ծավալուն աշխատանք է տանում Սովետական Հայաստանի քայքայված տնտեսության վերականգնման գործը կազմակերպելու և առաջ մղելու ուղղությամբ։ Խաղաղ տնտեսական շինարարության ծավալման կապակցությամբ 1921 թ. վերջերին առաջանում է ռևկոմները բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետներով փոխարինելու անհրաժեշտությունը։ Շնորհիվ իրենց կառուցվածքի և կազմակերպչական ճկունության, Սովետները էլ ավելի ամուր կապեր պետք է հաստատեին մասսաների հետ և, որպես իշխանության ամենադեմոկրատական օրգաններ, պետք է կազմակերպեին, գլխավորեին և առաջ մղեին աշխատավորների պայքարը պատերազմի վերքերը բուժելու, ծավալվող սոցիալիստական շինարարությունը գլխավորելու համար։ Անդրադառնալով այդ հարցին, Հայաստանի Ժողկոմսովետի նախագահ Ալ. Մյասնիկյանը նշել է. «Մեր աշխատանքի երկրորդ շրջանը տևել է հուլիսից մինչև աշուն (1921 թ.—Ա. Հ.), երբ թշնամիներին հաղթահարել էինք և ապահովությամբ կարող էինք շինարար աշխատանքի անցնել։ Բայց արդյունավետ աշխատանք կատարելու համար մենք կազմակերպված խորհրդային մարմիններ ու ապարատներ չունեինք, ուստի այս շրջանում պետական օրգանների կազմակերպման հարցն ամենահերթականն էր։ Այդ ժամանակ էր ահա, որ մենք դավառային հեղկոմների նախագահներին խորհրդակցության հրավիրեցինք, պարզեցինք դավառների ու կենտրոնի փոխհարաբերությունները, ինչպես և նախագծեցինք պետական մարմինների կազմակերպման գործը»[1]։

---

[1] *Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ։ Ֆ. 1/114, գ. 185, թ. 89 (ՀՍԽՀ Արտաքին Գործերի Ժողկոմատի ինֆորմացիոն բյուլետեն, 1921)։*

1921 թ. նոյեմբերի 19-ին հրապարակվում է ՀՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումը Սովետների ընտրությունները նախապատրաստող և անցկացնող ռեսպուբլիկական կենտրոնական հանձնաժողով կազմակերպելու մասին։ Այդ որոշման հիման վրա նման հանձնաժողովներ են կազմակերպվում նաև բոլոր գավառներում։ Նոյեմբերի 30-ին լույս է տեսնում դեպուտատների Սովետների ընտրության ժամանակավոր Կանոնադրությունը։ Կանոնադրությունը նախատեսում էր, որ գյուղերում, քաղաքներում, գավառամասերում և գավառներում իշխանության օրգանները հանդիսանում են Սովետները, որոնք հաշվետու են իրենց ընտրողների առաջ։ Համապատասխան դեպուտատների Սովետներն իրենց աշխատանքները (համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում) իրականացնում են գործադիր մարմինների՝ գյուղսովետի, քաղսովետի, գավառամասային Սովետի, գավառային Գործադիր Կոմիտեի և Կենտրոնական Գործադիր Կոմիտեի միջոցով։ Բացի ընտրությունների կարգից, Կանոնադրությունը տալիս էր Սովետների անելիքները, քաղաքացիների մասնակցության կարգը ընտրություններին և այլն [1]։

Վերոհիշյալ Կանոնադրության հիման վրա 1921 թ. դեկտեմբերին Սովետական Հայաստանի քաղաքներում, գյուղերում, գավառամասերում և գավառներում տեղի են ունենում դեպուտատների Սովետների ընտրությունները, որոնք անցնում են աշխատավորական մասսաների ակտիվ մասնակցությամբ։ Ամենուրեք ընտրությունները տալիս են լավագույն արդյունքներ։ Աշխատավորները սերտ կերպով համախմբվելով Կոմունիստական պարտիայի շուրջը, վճռական հակահարված են տալիս կուլակային-դաշնակցական տարրերին, որոնք չանք չէին խնայում ձախողելու Սովետների ընտրությունները։

1921 թ. դեկտեմբերի 27-ին, առաջինը Հայաստանում, բացվում է Ալեքսանդրապոլ քաղաքի դեպուտատների Սովետի նիստը։ Նիստը լսում է զեկուցումներ ընթացիկ մոմենտի և Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպման մասին։ Արձագանքելով Կոմունիստական պարտիայի և Բաքվի պրոլետարիատի կողմից առաջ քաշված հարցին՝ Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպման վերաբերյալ, քաղաքային Սովետի նիստն իր որոշման մեջ արտահայտում է Ալեքսանդրապոլի աշխատավորության միահամուռ կամքը ֆեդերացիայի ստեղծման անհրաժեշտության մասին։ Ջերմ մթ-

---

1 Տես ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, № 13, 1921, հոդվ. 87։

նոլորտում նիստին ողջունում են Կարմիր Բանակի ներկայացուցիչները, որոնք հայտարարում են, որ Կարմիր Բանակը պատրաստ է պահպանելու սոցիալիստական ռևոլյուցիայի նվաճումները թե՛ ներքին և թե՛ արտաքին թշնամիներից։

Երևան քաղաքի դեպուտատների Սովետի առաջին նիստը բացվում է 1922 թ. հունվարի 1-ին։ Մայրաքաղաքի Սովետի առաջին նիստը ողջունագրված հայ ժողովրդի անունից հատուկ կոչ է ուղղում բոլոր երկրների բանվորներին։ «Առաջին անգամ իր պատմության մեջ,— ասված է այդ կոչում,— հայ ժողովուրդը իսկական անկախություն ձեռք բերեց, աշխատավոր մասսաների անկախություն՝ իշխող դասակարգերի տնտեսական շահագործումից և քաղաքական ու բարոյական ճնշումից։ Մեր երկրի բանվորության և աշխատավոր գյուղացիության կյանքում նոր դարաշրջան բացվեց՝ հին աշխարհից հրաժարվելու և ինքնուրույն քաղաքական գոյության շրջան։ Նռանդուն մասսայական աշխատանք սկսվեց՝ նպատակ ունենալով վերականգնել քայքայված տնտեսությունը, ամուր հիմքերի վրա դնել խորհրդային իշխանությունը, տարածել կոմունիզմի վեհ դաղափարը։ Կարճ ժամանակամիջոցում, մի քանի ամիսների ընթացքում,— մեզ հաջողվեց մեր դիրքերն այնքան ամրապնդել և ժողովրդական լայն մասսաների մեջ այնպիսի վստահություն և համակրություն ձեռք բերել, որ երկրի ներսից մեզ որևէ վտանգ սպառնալ չի կարող... Աղքատ ու քայքայված մեր երկրում մենք հոգով արի ենք, չենք վհատվում, համարձակ ու եռանդուն կերպով նոր կյանք ենք ստեղծում, մեր կոմունիստական հասարակությունը կառուցում»[1]։ Այդ խոսքերում արտահայտված են Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության կամքն ու վճռականությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ սոցիալիստական շինարարությունը հաստատ քայլերով առաջ տանելու մասին։

Սովետը մայրաքաղաքի և ռեսպուբլիկայի բոլոր աշխատավորների անունից միահամուռ կերպով արտահայտվում է Անդրֆեդերացիայի կազմակերպման անհրաժեշտության օգտին։ «Անդրկովկասի երբ հանրապետությունները,— ասված է վերոհիշյալ կոչում,— Կոմունիստական կուսակցությունները և կառավարությունները վերջերս բանակցություններ են վարում Անդրկովկասի հանրապետությունները տնտեսապես միացնելու, նրանց ֆեդերացիա

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 184, թ.թ. 85—86։

ստեղծելու համար։ Երեք հանրապետությունների երկաթուղիները և արտաքին առևտուրն արդեն միացված են, մի կենտրոնից են կառավարվում։ Մոտիկ ապագայում կիրառվելու նրանց ֆինանսների, արտաքին քաղաքականության և զինվորական գործի միացումը։ Անդրկովկասյան ֆեդերացիայի մեծ շենքի հիմքը արդեն դրված է»[1]։

1922 թ. հունվարի 26—29-ը Երևանում գումարվում է Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի առաջին համագումարը։ Այստեղ քննության են առնվում ՀԿ(բ)Պ Կենտկոմի հաշվետվությունը, լսվում են զեկուցումներ համառուսական պարտիական կոնֆերանսի մասին, սովետական շինարարության և Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիայի, նոր տնտեսական քաղաքականության ու մի շարք այլ հարցերի մասին։ ՀԿ(բ)Պ Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ ընդունված բանաձևում համագումարը նշել է, որ Հայաստանի կոմունիստների շարքերը միասնական են և որ այդ հանգամանքը հիմք կծառայի Հայաստանի Կոմունիստական պարտիայի ապագա գործունեության համար՝ ապահովելով ռեսպուբլիկայի աշխատավորության պայքարի ղեկավարությունը սոցիալիզմի կառուցման գործում, ընդդեմ թշնամական ամեն տեսակի տարրերի՝ դաշնակների, նացիոնալիստների, սոցիալիստների և ուրիշների։ Համագումարի քննարկած հարցերի մեջ կարևորագույն տեղ է գրավում Ա. Մյասնիկյանի զեկուցումը սովետական շինարարության և Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիայի մասին։ Այդ զեկուցման առթիվ ընդունած որոշման մեջ համագումարը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջ մարտական խնդիր է դնում՝ առաջ տանել Անդրֆեդերացիայի կազմակերպման գործը, անողոք պայքար մղելով բուրժուա-նացիոնալիստական և հակալենինյան ամեն տեսակի հոսանքների դեմ։

Անդրֆեդերացիայի կազմակերպման ուղղությամբ կատարվող բոլոր աշխատանքների ավանդարդում էր գտնվում Բաքվի պրոլետարիատը, որն ուներ ինտերնացիոնալ պայքարի մեծ փորձ։ Դեռևս 1921 թ. ապրիլի 11-ին Բաքվի Սովետի նիստը լսում է Ս. Մ. Կիրովի և Ս. Օրջոնիկիձեի զեկուցումները Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների միավորման մասին։ Զեկուցումների առթիվ ընդունված բանաձևում ասված է. «Լսելով ընկ. ընկ. Օրջոնիկիձեի և Կիրովի զեկուցումները, Բաքվի և ռայոնական Սովետների ու Բաքու քաղաքի և նրա ռայոնների պրոլետարական կազմակերպություններ-

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ., ֆ. 4 114, գ. 184, թ. 86։

ի միացյալ նիստը գտնում է, որ ...միջազգային կապիտալիզմի նոր արշավանքի վտանգի հանդեպ, որը փորձում է Սովետական իշխանությունը պայթեցնել ներսից, անհրաժեշտ է սովետական բոլոր ռեսպուբլիկաների աշխատավորների ուժերի միավորում։

...Սովետական իշխանության շահերի համար անհրաժեշտ է Անդրկովկասում բոլոր սովետական ռեսպուբլիկաների տնտեսական միավորումը՝ ազգային ինքնուրույնության լիակատար պահպանության պայմաններում...

Կեցցե՞ Անդրկովկասյան ռեսպուբլիկաների Միությունը»[1]։

Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման ուղղությամբ Վրաստանի Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ծավալուն աշխատանքներ են տարվում նաև Սովետական Վրաստանում։ Կուռ շարքերով համախմբվելով Կոմունիստական պարտիայի շուրջը, Վրաստանի աշխատավորները վճռական պայքար են տանում վրացական նացիոնալիստների դեմ, որոնք դեմ էին Ֆեդերացիայի կազմակերպմանը։

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները Ս. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Կիրովի և Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ հաստատ կերպով առաջ էին գնում Ֆեդերացիայի ստեղծման ճանապարհով։

1922 թ. հունվարի 30-ից փետրվարի 4-ը Երևանում գումարվում է Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների առաջին համագումարը։ Իր քննած հարցերով և ընդունած որոշումներով համագումարը առանձնահատուկ տեղ է գրավում Սովետական Հայաստանի պատմության մեջ։ Համագումարը քննության է առնում հետևյալ հարցերը. 1. ՀՍՍՌ կառավարության հաշվետվությունը. 2. ՀՍՍՌ Կոնստիտուցիայի նախագծի քննումը և ընդունումը. 3. Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիա կազմակերպելու հարցը. 4. Տնտեսական քաղաքականության մասին. 5. Գյուղատնտեսության վիճակը. 6. Կոոպերացիայի մասին. 7. Պարենավորման ժողովրդական Կոմիսարիատի զեկուցումը. 8. Սոցիալական ապահովության դերը Հայաստանում. 9. Կարմիր Բանակի մասին. և 10. Հայաստանի Կենտգործկոմի ընտրությունը[2]։

---

[1] Образование СССР, Сборник документов 1917—1924 гг. Под ред. Э. Б. Генкиной, изд. АН СССР, Москва—Ленинград, 1946, стр. 270.

[2] *Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը, Պետհրատ, Երևան, 1922։*

Ռեսպուբլիկայի բոլոր աշխատավորների անունից համագումարը սրտագին ողջույնի և երախտագիտության խոսք է ուղղում Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահ Մ. Ի. Կալինինին, հանձին նրան՝ ռուս մեծ ժողովրդին, որի եղբայրական օգնության շնորհիվ հայ ժողովուրդը ձեռք բերեց իր ազատությունը և անկախությունը։ «Հայաստանի Խորհուրդների համագումարը առաջինն է,— ասված է ողջույն-դիմումում,— որ իրականացնում է երկրի իշխանությունը ամբողջ աշխատավորությանը հանձնելու փառավոր ժամը, հիացմունքով ու սիրով լի իր հայացքը, իր հոգու անկեղծ խոսքն է ուղղում բանվորա-գյուղացիական Ռուսաստանին։ Համագումարը գիտակցում է այն օգնությունը, որ Խորհրդային Ռուսաստանը ցույց է տվել մեր երկիրը Արևմտյան Եվրոպայի իմպերիալիստների ու նրանց ծառա դաշնակների լծից ազատելու գործում։ Համագումարը իր շնորհակալությունն է ուղղում Ռուսաստանի փառապանծ Կարմիր Բանակին, որը Հայաստանի մասսաներին աջակցեց Խորհրդային իշխանության կարմիր դրոշակը բարձրացնելու համար։

Իր ջերմ ողջույնն ուղղելով Ռուսաստանի Բանվորա-Գյուղացիական և կարմիր զինվորների պատգամավորական Խորհուրդների Կենտրոնական Գործադիր Կոմիտեին՝ Հայաստանի Խորհուրդների համագումարը Համառուսական ԿԳ Կոմիտեին հայտնում է Հայաստանի աշխատավորության կամքը— մենք մեր հաղթական դրոշակը բարձր կպահենք և ոչ մի ուժ այդ դրոշակը մեր ձեռքից խլել չի կարող»[1]։

Համագումարի աշխատանքներին մասնակցում էր և այնտեղ ելույթ ունեցավ Ս. Օրջոնիկիձեն, որին դեպուտատները դիմավորում են անսահման խանդավառությամբ։ Ջերմ մթնոլորտում Ս. Օրջոնիկիձեն Վրաստանի աշխատավորության անունից ողջույն է հաղորդում Սովետների Համահայաստանյան առաջին համագումարին ու վերջինիս միջոցով՝ ռեսպուբլիկայի բոլոր բանվորներին, գյուղացիներին և աշխատավոր ինտելիգենցիային։

Սովետական Հայաստանի կառավարության մեկ տարվա գործունեության մասին համագումարում զեկուցում է ժողկոմսովետի նախագահ Ալ. Մյասնիկյանը։ Զեկուցման մեջ վերլուծելով երկրի

---

[1] Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը, Պետհրատ, Երևան, 1922, էջ 148—149։

գրությունը, նա ցույց է տալիս, որ մեկ տարվա ընթացքում Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ռեսպուբլիկայում զգալի աշխատանքներ էին կատարված տնտեսության վերականգնման ուղղությամբ. սկսել էր աշխատել արդյունաբերական ձեռնարկությունների մի մասը, գյուղատնտեսության վերականգնումը աստիճանաբար առաջ էր գնում. նոր տնտեսական քաղաքականության կիրառումով ամրապնդվում էր բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը. գնալով բարելավվում էին աշխատավորության նյութական պայմանները, հատատ քայլերով առաջ էր գնում կուլտուրական շինարարությունը։

ՀՍՍՌ Կոնստիտուցիայի նախագծի մասին համագումարը լսում է Ա. Մռավյանի զեկուցումը։ Նա ցույց է տալիս Սովետական Հայաստանի Կոնստիտուցիայի էությունը՝ որպես նոր իշխանության նոր Կոնստիտուցիա, որն իր հիմքում ունի ՌՍՖՍՌ Կոնստիտուցիայի հիմնական դրույթները։ Զեկուցման վերջում նա կարդում է Կոնստիտուցիայի նախագիծը, որը, հոդված առ հոդված, դրվում է համագումարի քննարկմանը և ընդունվում միահամուռ կերպով։

Սովետների առաջին համագումարում ընդունված ՀՍՍՌ առաջին Կոնստիտուցիան (Հիմնական օրենքը) բաղկացած էր հինգ հատվածից, որոնց մեջ պարունակվում էր 12 գլուխ, 89 հոդվածով.

Կոնստիտուցիայի առաջին հատվածում տրված է Սովետական իշխանության հիմնական սկզբունքները։ Այնտեղ ասված է, որ կենտրոնում ու տեղերում ամբողջ իշխանությունը պատկանում է բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետներին, որ ռեսպուբլիկայում բոլոր աշխատավորները, անկախ ազգությունից ու դավանանքից, օգտվում են հավասար իրավունքներից, որ ռեսպուբլիկայի բոլոր աշխատավորների համար աշխատանքը պարտադիր է,— «ով չի աշխատում, նա չի ուտում»։

Կոնստիտուցիան օրենսդրականորեն ամրապնդեց 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթությունները։ Հողը, նրա ընդերքը, անտառները, բանկերը, երկաթուղիներն ու խոշոր արդյունաբերությունը հայտարարվեցին սոցիալիստական սեփականություն։ Շահագործող դասակարգի ներկայացուցիչները և ուրիշ աշխատանքով ապրողները զրկվեցին քաղաքական իրավունքներից։ Դրա փոխարեն Կոնստիտուցիան ապահովում էր բոլոր հնարավորությունները աշխատավորների քաղաքական ակտիվության բարձրացման համար— նիստեր, ժողովներ,

միտինգներ, ցույցեր կազմակերպելը, մամուլի օգտագործումը և այլն։ Եկեղեցին անջատվեց պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց։ Կոնստիտուցիան սահմանեց, որ ռեսպուբլիկայի բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության համար կստեղծվեն բոլոր հնարավորությունները ձրի կրթություն ստանալու համար։ Մերժելով ամեն տեսակի ազգային թշնամանքը, Կոնստիտուցիան հաստատեց, որ ռեսպուբլիկայի տերիտորիայում գտնվող բոլոր ազգությունների համար կստեղծվեն զարգացման լայն հնարավորություններ, որ հարևան բոլոր ժողովուրդների հետ կհաստատվեն բարի-դրացիական հարաբերություններ։

Կոնստիտուցիայում ձևակերպված է սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության գործում ռեսպուբլիկայի քաղաքացիների սրբազան պարտականությունը։ «Բանվորների և շտեմարանների գյուղացիների դասակարգային հեղափոխական դիկտատուրան ապահովելու և արտաքին ու ներքին հակահեղափոխությունից պաշտպանելու նպատակով,— ասված է նրա 9-րդ հոդվածում,— կազմվում է ՀՍԽՀ Կարմիր Բանակը, բոլորի համար պարտադիր դարձնելով զինվորական ծառայությունը»[1]։

Հաստատելով հին դատարանի վերացումը, Կոնստիտուցիան սահմանեց, որ սովետական կարգերում արդարադատության պաշտպանությունը հանձնարարվում է նոր, ժողովրդական դատարանին, որը պաշտպանելու է Սովետական պետության և աշխատավորների շահերը։

Երկրորդ հատվածը, որ ընդգրկում է 2-րդից 7-րդ գլուխները, նվիրված է Սովետական իշխանության կենտրոնական ու տեղական օրգաններին և նրանց ֆունկցիաներին։ Ըստ 12-րդ հոդվածի՝ ռեսպուբլիկայի իշխանության գերագույն օրգանը համարվում էր բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների Համահայաստանյան համագումարը։ Համագումարը ընտրում է Կենտրոնական Գործադիր Կոմիտե, որն իշխանության գերագույն օրգանն էր համարվում Սովետների համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում։ Նա հաշվետու էր Սովետների համագումարի առաջ, որը, ըստ Կոնստիտուցիայի, գումարվելու էր տարին մեկ անգամ։ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն կազմում

[1] ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրություն, Երևան, 1922, էջ 135։

էր ռեսպուբլիկայի կառավարությունը՝ Ժողովրդական Կոմիսարների Սովետը։ Կոնստիտուցիան սահմանում էր ռեսպուբլիկայի ժողովրդական կոմիսարիատները՝ Արտաքին գործերի, Ներքին գործերի, Հողագործության, Արդարադատության, Ժողովրդական լուսավորության, Ռազմական, Ֆինանսների, Պարենավորման, Արտաքին առևտրի, Սոցիալական ապահովության, Փոստ-հեռագրի, Առողջապահության, Բանվորա-գյուղացիական տեսչության, Աշխատանքի և Հաղորդակցության ճանապարհների։ Բացի թվարկված ժողովրդական կոմիսարիատներից, Կոնստիտուցիայի համաձայն ստեղծված էր Ժողովրդական Տնտեսության Գերագույն խորհուրդ, որի խնդիրն էր միավորել և ղեկավարել ժողովրդական տնտեսության բոլոր հիմնական ճյուղերը։

Կոնստիտուցիան սահմանեց, որ Սովետական իշխանության տեղական օրգաններն են՝ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների քաղաքային և գյուղական Սովետները, իսկ գավառներում՝ գավառային գործադիր կոմիտեները։ Այնտեղ ցույց են տրված այն ժամանակվա ընտրական նորմաները։ Սովետների գավառային համագումարի համար գյուղացիական վայրերի 1000 բնակչից ընտրվում էր մեկ պատգամավոր, իսկ քաղաքի 200 ընտրողներից մեկ պատգամավոր։ Ընտրական նման նորմաների սահմանումը ելնում էր քաղաքի և գյուղի բնակչության դասակարգային կազմից և նպատակ ուներ ապահովելու բանվոր դասակարգի ղեկավար դերը Սովետական իշխանության օրգաններում։

Կոնստիտուցիայի երրորդ հատվածը (8—10-րդ գլուխներ) խոսում է ընտրական իրավունքի և ընտրությունների կարգի մասին։ Չորրորդ հատվածը (11-րդ գլուխ) խոսում է բյուջեի մասին, իսկ հինգերորդ հատվածը (12-րդ գլուխ)՝ ռեսպուբլիկայի պետական դերբի և դրոշի մասին։

Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների առաջին համագումարը միահամուռ կերպով հաստատում է ռեսպուբլիկայի առաջին Կոնստիտուցիան, որը պրոլետարական դեմոկրատիզմի ամուր հիմքերը դրեց մեզ մոտ։

Համագումարում Անդրկովկասի ռեսպուբլիկաների ֆեդերացիայի կազմակերպման մասին ևս զեկուցումով հանդես է գալիս Ա. Մռավյանը։ Քննարկված հարցի մասին համագումարի կողմից միահամուռ կերպով ընդունված բանաձևում ասված է.

«Երեք Խորհրդային Հանրապետությունների, ուրեմն նաև Հայաստանի ինքնապաշտպանությունը իմպերիալիստական, հակահեղափոխական արշավանքներից, հրամայորեն թելադրում է եղբայրական երեք Հանրապետությունների ֆեդերացիան: Ֆեդերացիան ամուր կերպով կշաղկապի երեք Հանրապետությունները ու նրանց զինական ու դիմադրական կարողությունը կդարձնի զորավոր: Ֆեդերատիվ կապով միանալու անհրաժեշտությունը թելադրված է այլև Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ներքին հակահեղափոխության դեմ կռվելու պահանջից: ...Հանրապետությունների տնտեսական վերաշինության խնդիրները նույնպես հարկադրական անհրաժեշտություն են դարձնում ֆեդերացիան՝ իբրև տնտեսական շինարարական գործակցության հզոր միջոց:

...Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների առաջին համագումարը խանդավառությամբ է ընդունում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի Խորհրդային Հանրապետությունների ֆեդերացիայի հաստատված դաշնագիրը և հանձնարարում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեին՝ գործնական բոլոր միջոցները շտապորեն կատարել, ֆեդերացիան շուտով իրականացնելու համար»[1]:

Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների ֆեդերացիայի կազմակերպման մասին ընդունելով այդպիսի որոշում, համագումարը առաջնորդվեց Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությամբ: Կոմունիստական պարտիան և Սովետական պետությունը մեր երկրում ստեղծեցին բոլոր անհրաժեշտ նախադրյալները նախկինում ճնշված և հալածված ազգությունների վերածննդի, նրանց տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման համար: Սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում Կոմունիստական պարտիան խոշորագույն նշանակություն է տալիս բոլոր տեսակետներից սովերեն և իրավահավասար, իրենց սեփական կյանքը տնօրինող սովետական ժողովուրդների պետական դաշինքին և եղբայրական համագործակցությանը, որը ավելի ու ավելի է ամրապնդում սոցիալիստական հասարակարգի տնտեսական, քաղաքական և ռազմական հիմքերը՝ ընդդեմ ներքին և արտաքին թշնամիների:

Դրա գեղեցիկ օրինակը Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Ռեսպուբլիկան էր, որը ձևակերպվել էր Հոկ-

---

[1] ՀՍՍՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը, էջ 120:

տեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակից հետո (1918 թ. հունվարին), որպես ազգությունների հոժարակամ պետական միություն։ Նա արդեն պրակտիկ կերպով ցույց էր տվել Սովետական Ռուսաստանի ազգությունների միավորման ուժն ու հզորությունը։ Այդ միավորման և սովետական ժողովուրդների եղբայրական դաշինքի շնորհիվ, երիտասարդ Սովետական Ռուսաստանը կարողացավ հաղթանակով դուրս գալ բազմաթվային կռիվներից։

1919 թ. դեկտեմբերի 28-ին՝ Դենիկինի դեմ տարած հաղթանակի առթիվ Ուկրաինայի բանվորներին ու գյուղացիներին գրած իր նամակում, խոսելով ազգությունների կամավոր միության մասին, Վ. Ի. Լենինը ասել է. «Մենք ազգերի կամավոր միություն ենք ուզում, այնպիսի միություն, որը ո՛չմի բռնություն չթույլատրեր մի ազգի կողմից մյուսի վրա, այնպիսի միություն, որը հիմնված լիներ ամենալրիվ վստահության վրա, եղբայրական միասնության պարզ գիտակցության վրա, լիովին կամավոր համաձայնության վրա։ Այդպիսի միությունը չի կարելի միանգամից իրագործել, դրան հարկավոր է հասնել մեծագույն համբերությամբ և զգուշությամբ, աշխատելով, որպեսզի գործը չփչանա, որպեսզի անվստահություն չառաջանա, որպեսզի վերացվի այն անվստահությունը, որը մնացել է կալվածատերերի և կապիտալիստների դարավոր ճնշումից, մասնավոր սեփականության և դրա բաժանման ու վերաբաժանման համար եղած դարավոր թշնամանքից»[1]։

1921 թվականի ապրիլի 14-ին, Կովկասի կոմունիստներին գրած պատմական նամակում Վ. Ի. Լենինը հայտնում էր իր համոզմունքը Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաներից ազգային խաղաղության այնպիսի միություն ստեղծելու մասին, որը չի տեսնված և անհնարին է բուրժուական հասարակարգում։ Հետևողականորեն առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի Կոմունիստական կազմակերպությունները Ս. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Կիրովի և Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ ձեռնամուխ են լինում Անդրֆեդերացիայի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներին։ Հայաստանի Սովետների առաջին համագումարի վերևում հիշատակված բանաձևը՝ Անդրֆեդերացիայի կազմակերպման կապակցությամբ, այդ նախապատրաստական աշխատանքների վճռական կետերից մեկն էր Սովետական Հայաստանում։ Այդպիսի աշխատանքներ էին կատարվում նաև եղբայրական մյուս ռեսպուբլիկաներում։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 368։

1921 թ. վերջերին Անդրֆեդերացիայի կազմակերպման ուղղությամբ կատարվող նախապատրաստական աշխատանքներն արդեն մոտենում էին իրենց վերջին էտապին։ Նույն թվականի նոյեմբերի 3-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի պլենումը, որին մասնակցում էր ՌԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկեր Վ. Մ. Մոլոտովը, քննության է առնում Անդրֆեդերացիայի կազմակերպման հարցը և գտնում, որ այն պետք է իրականացնել, որովհետև դրա համար ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները։

Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպման անհրաժեշտության մասին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի պլենումի որոշումը նույն թվականի նոյեմբերի վերջերին ներկայացվում է ՌԿ(բ)Պ Կենտկոմի հաստատմանը։ Ծանոթանալով այդ որոշմանը, Վ. Ի. Լենինը Կենտկոմի Քաղբյուրոյի հաստատմանը ներկայացնելու նպատակով նոյեմբերի 28-ին կազմում է առաջարկի նախագիծ Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիա կազմակերպելու վերաբերյալ։ Վ. Ի. Լենինի կազմած նախագծում ասված է.

«1) Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիան համարել սկզբունքորեն բացարձակապես ճիշտ և անպայման իրագործման ենթակա, սակայն գործնականապես անհապաղ իրագործելու իմաստով վաղաժամ, այսինքն՝ պահանջում է որոշ ժամանակ քննարկման, պրոպագանդայի և սովետական եղանակով ներքևից անցկացնելու համար.

2) առաջարկել (Կովկասյան Բյուրոյի միջոցով) Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի Կենտրոնական Կոմիտեներին՝ ֆեդերացիայի հարցն ավելի լայնորեն դնել պարտիայի և բանվորական ու գյուղացիական մասսաների քննարկմանը, եռանդուն պրոպագանդա մղել ֆեդերացիայի օգտին և այն անցկացնել յուրաքանչյուր ռեսպուբլիկայի Սովետների համագումարների միջոցով. մեծ օպոզիցիա լինելու դեպքում ճշտորեն և ժամանակին տեղեկացնել ՌԿՊ Կենտկոմի Քաղբյուրոյին»[1]։

Անդրկովկասյան Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների ֆեդերացիայի կազմակերպման վերաբերյալ Վ. Ի. Լենինի կազմած այս նախագիծը նոյեմբերի 29-ին հաստատվում է Կենտկոմի Քաղբյուրոյի նիստում։

Դրանից հետո Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքները նոր

---

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 33, էջ 136։

թափ ու ավելի լայն ծավալ են ստանում, վերածվելով համաժողովրդական շարժման։ Այդ համաժողովրդական շարժման մեջ են ընդգրկվում Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի բոլոր աշխատավորները, որոնք կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ ամենուրեք իրենց հաստատ կամքն ու վճռականությունն են արտահայտում հօգուտ Անդրկովկասյան Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Ֆեդերացիայի կազմակերպման։

Անդրֆեդերացիայի կազմակերպման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքները դնում էին բուրժուա-նացիոնալիստական տարրերի կատաղի դիմադրության պայմաններում, որոնց դեմ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները Օրջոնիկիձեի ղեկավարությամբ անողոք պայքար ծավալեցին։ Բացի դաշնակցական, մենշևիկյան և մուսավաթական թափթփուկներից, որոնք ամեն կերպ փորձում էին ձախողել ֆեդերացիայի ստեղծումը և հրահրել ազգային ընդհարումներ, պարտիայի շարքերում ևս գտնվեցին մարդիկ, որոնք դեմ էին ֆեդերացիայի կազմակերպմանը։ Բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների երեք տարվա գոյությունը Անդրկովկասում (1918—1920 թթ.) և նրանց ագրեսիվ նացիոնալիստական քաղաքականությունը, որով Անդրկովկասի տարբեր ազգերի աշխատավորներին պատերազմի էին հանել միմյանց դեմ և ազգամիջյան կոտորածներ կազմակերպել, ստեղծելով ազգայնական թունոտ մթնոլորտ։

Անդրֆեդերացիայի կազմակերպման կապակցությամբ խոսելով նացիոնալիզմի ջախջախման անհրաժեշտության մասին, 1921 թ. հուլիսի 6-ին Վրաստանի Կոմունիստական պարտիայի Թիֆլիսի կազմակերպության ընդհանուր ժողովում տված «Կոմունիզմի հերթական խնդիրները Վրաստանում և Անդրկովկասում» զեկուցման մեջ Ի. Վ. Ստալինը նշել է. «...Գոյություն ունեն վերջին երկու-երեք տարում ստեղծված որոշ պայմաններ, որոնք խանգարում են այդպիսի միավորմանը, սպառնում են վիժեցնել այդպիսի միավորման փորձերը։ Ես խոսում եմ վրացական, հայկական, ադրբեջանական նացիոնալիզմի մասին, որը սարսափելի ուժեղացել է վերջին տարիներում Անդրկովկասի ռեսպուբլիկաներում և արգելակում է միավորման գործը»[1]։

1921 թ. դեսերին, երբ տեղի ունեցավ Անդրկովկասյան առ-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 106։

ցիալիստական ռեսպուբլիկաների երկաթուղագծերի և արտաքին առևտրի միավորումը, վրացական, հայկական և ադրբեջանական նացիոնալիստները հանդես եկան այդ միավորման դեմ, պնդելով, որ յուրաքանչյուր ռեսպուբլիկա անջատ կերպով պետք է գործի, որ այդ ռեսպուբլիկաների սահմաններում մաքսատներն ու վերահսկիչ կետերը պետք է պահպանել, որ երկաթուղագծերը և արտաքին առևտուրը չպետք է միավորել և այլն։ Դրանից հետո, երբ պրակտիկ կերպով դրվեց Անդրֆեդերացիան կազմակերպելու հարցը, նացիոնալիստներն ավելի կատաղի դիմադրությամբ հանդես եկան։ Վրացական նացիոնալ-ուկլոնիստները պնդում էին, որ Անդրֆեդերացիան չպետք է կազմակերպվի։ Հայկական և ադրբեջանական նացիոնալիստները նույնպես դեմ էին ֆեդերացիայի կազմակերպմանը, գտնելով, որ յուրաքանչյուր ռեսպուբլիկա անջատ կերպով պետք է կառավարվի։

Նացիոնալիստներից ոմանք էլ պնդում էին, որ պետք է վերականգնել նախկին երեք՝ Բիֆլիսի, Բաքվի, Երևանի նահանգները՝ Անդրկովկասյան միասնական կառավարության գլխավորությամբ։ Ի. Վ. Ստալինը խիստ կերպով քննադատել ու մերկացրել է նաև այդ ռեակցիոն տեսակետի կողմնակիցներին։ Այդ «...իմ կարծիքով ուտոպիա է,— ասում է Ստալինը,— այն էլ ռեակցիոն ուտոպիա, որովհետև նման նախագիծը, անկասկած, բխում է պատմության անիվը ետ շրջելու ցանկությունից։ Հին նահանգները վերականգնել և ազգային կառավարությունները Վրաստանում, Ադրբեջանում, Հայաստանում վերացնել — միևնույն է, թե վերականգնել հողի կալվածատիրական սեփականությունը և վերացնել ռևոլյուցիայի նվաճումները։ Դա ընդհանուր ոչինչ չունի կոմունիզմի հետ»[1]։

Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի կոմունիստական կազմակերպությունները ՌԿ(բ)Պ Կենտկոմի և նրա Կովկասյան Բյուրոյի ղեկավարությամբ ծավալուն պայքար են կազմակերպում նացիոնալ-ուկլոնիստների, մենշևիստների և ամեն տեսակի հակալենինյան հոսանքների դեմ և այդ պայքարում ջախջախելով նրանց, իրականացնում են Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպումը։

1922 թ. մարտին Անդրֆեդերացիայի կազմակերպման նախապատրաստական աշխատանքները բոլոր ռեսպուբլիկաներում ավարտված էին։ Նույն ամսի 12-ին գումարվում է Ադրբեջանի, Հա-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 108։

յաստանի և Վրաստանի սովետական ռեսպուբլիկանների Կենտրոնական Գործադիր կոմիտեների լիազոր կոնֆերանսը։ Այստեղ ընդունվում է պայմանագիր այդ երեք ռեսպուբլիկաների քաղաքական, տնտեսական ու ռազմական սերտ դաշինքի մասին, կազմակերպվում է նրանց պետական միությունը, որն ստանում է Անդրկովկասյան Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Ֆեդերատիվ Միություն անունը։ Առաջնորդվելով Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության սկզբունքներով, պայմանագիրը նախատեսում էր.

«1. Ռեսպուբլիկաների Միության բարձրագույն իշխանությունը հանդիսանում է ներկայացուցիչների լիազոր կոնֆերանսը, ներկայացուցիչներ, որոնք ընտրվում են հավասար թվով Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կառավարությունների կողմից։

2. Ներկայացուցիչների կոնֆերանսի գործադիր մարմինը հանդիսանում է Միության Սովետը, որի անդամներն ընտրվում և նշանակվում կոնֆերանսի կողմից։

3. Միության Սովետի իրավասության են անցնում՝ ռազմական գործերը, ֆինանսները, արտաքին քաղաքականությունը, արտաքին առևտուրը, հաղորդակցության ճանապարհները, ժողովրդական կապը, պայքարը կոնտրռևոլյուցիայի դեմ և տնտեսական-քաղաքական ղեկավարությունը դաշնադրվող ռեսպուբլիկաների սահմաններում»[1]։

Այս պայմանագրով հիմք դրվեց Անդրկովկասյան ֆեդերացիային։ Այդ ժամանակվանից սկսած մինչև 1922 թ. վերջերը, ֆեդերատիվ սովետական աշխատանքը ոչ միայն արդարացրեց երեք ռեսպուբլիկաների աշխատավորների սպասելիքները, այլև պրակտիկ կերպով ցույց տվեց ֆեդերացիայի կենսունակությունը և անհրաժեշտությունը։ Այդ փորձի հիման վրա խնդիր դրվեց ավելի լայնացնել Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների ֆեդերատիվ կապերը։

1922 թ. դեկտեմբերին Բաքվում գումարվում է բանվորների, գյուղացիների, կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների Անդրկովկասյան առաջին համագումարը։ Համագումարը լսում է Ս. Մ. Կիրովի զեկուցումը Անդրկովկասյան ֆեդերացիայի արտաքին և ներքին դրության մասին։ Ս. Օրջոնիկիձեն զեկուցում է Սո-

[1] Образование СССР, Сборник документов 1917—1924 гг., под редакцией Э. Б. Генкиной, Москва—Ленинград, 1949, стр. 288.

վետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միություն կազմակերպելու հարցի մասին։ Համագումարում քննության են առնվում նաև Միության Խորհրդի հաշվետվությունը, Անդրկովկասյան Ֆեդերացիայի Կոնստիտուցիայի հարցը, ինչպես նաև տնտեսական հարցեր։ Լսվում է զեկուցում Կարմիր Բանակի և Նավատորմի մասին և տեղի է ունենում Անդրկովկասյան Ֆեդերացիայի Գործադիր Կոմիտեի կազմի ու Սովետների Համամիութենական առաջին համագումարի դելեգատների ընտրություն։

Վերլուծելով սովետական ռեսպուբլիկաների միջազգային դրությունը, Ս. Մ. Կիրովը իր զեկուցման մեջ հարուստ փաստերով ցույց է տվել, թե ինչպես հաղթահարելով ներքին ու արտաքին դժվարությունները, Սովետական ռեսպուբլիկաները նոր տնտեսական քաղաքականության կենսագործումով դնալով ավելի ու ավելի ամրապնդվում էին, ապացուցելով իրենց կենսունակությունն ու մեծ ուժը, վճռական հակահարված հասցնելով կապիտալիստական պետությունների կողմից Սովետական երկրի դեմ թշնամական ամեն տեսակի գործողություններին։ Այժմ արդեն,— ասում էր Ս. Մ. Կիրովը,— կապիտալիստական պետությունները հարկադրված են լուրջ հաշվի առնել Սովետական ռեսպուբլիկաներին և փոխել իրենց տակտիկան դեպի այդ ռեսպուբլիկաները։ Ս. Մ. Կիրովի զեկուցման մեջ միաժամանակ նշված է, թե ինչպես կապիտալիստական երկրներում խորանում էին հակասություններն ու պայքարը, որոնց հետևանքով դնալով թուլանում էր կապիտալիստական ճակատը։

Սովետների Անդրկովկասյան առաջին համագումարում լսված զեկուցումները և նրանց առթիվ ընդունած որոշումները միահամուռ կերպով հաստատեցին, որ Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծումը լիակատար շափով արդարացրել է իրեն, որ ելնելով նրա գոյության ութ ամսվա փորձից, ավելի առաջ պետք էր դնալ Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների՝ Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի միջև եղած ֆեդերատիվ կապերի ընդարձակման ու ամրապնդման գործում։ Դրա հիման վրա էլ տեղի ունեցավ Անդրկովկասի ռեսպուբլիկաների Ֆեդերատիվ Միության վերածումը Անդրկովկասյան Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Ռեսպուբլիկայի, ամբողջապես պահպանելով նրա մեջ մտնող ռեսպուբլիկաների ինքնուրույնությունը։ Այսպիսով, Սովետների Անդրկովկասյան առաջին համագումարում ավարտվում է Անդրկովկասյան Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Ռեսպուբլիկա-

յի ձևավորման գործը։ Համագումարն ընտրում է Անդրֆեդերացիայի գերագույն օրգան՝ Անդրկովկասյան Կենտգործկոմը, որը պետք է ղեկավարեր Ֆեդերացիայի աշխատանքները մինչև Անդրկովկասյան Սովետների հաջորդ համագումարը։ Շուտով կազմվում է նաև Անդրկովկասյան Ֆեդերացիայի կառավարությունը՝ Ժողովրդական Կոմիսարների Սովետը։ Համագումարում ընդունված Կոնստիտուցիայի համաձայն, այն խնդիրները, որոնք հավասար չափով շոշափում էին Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի շահերը և այդպիսով այդ ռեսպուբլիկաները կապում, միացնում էին մի տնտեսական-քաղաքական միավորի մեջ, հանձնվեցին Անդրկովկասի Ֆեդերացիայի կառավարությանը։ Իսկ մնացած բոլոր խնդիրները՝ ներքին գործերը, արդարադատությունը, ժողովրդական լուսավորությունը, կուլտուրական շինարարությունը, առողջապահությունը, սոցիալական ապահովությունը և այլն մնացին առանձին ռեսպուբլիկաների ղեկավարությանը։

Անդրֆեդերացիան հենված էր նրա մեջ մտնող ռեսպուբլիկաների կամավոր համաձայնության, փոխադարձ վստահության և ինքնուրույնության վրա։ Նա ոչ միայն չէր կսկծում ժողովուրդների շահերին, այլև ամեն կերպ խթանում, պաշտպանում էր այդ ժողովուրդների զարգացումը, այն սերտորեն կապելով սոցիալիստական շինարարության հետ, բոլոր ժողովուրդների դասակարգային-ինտերնացիոնալ պայքարի հետ։

Անդրֆեդերացիայի ստեղծումը հանդիսացավ Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության խոշորագույն հաղթանակը։ Նրա կազմակերպումով նոր էջ բացվեց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սովետական ռեսպուբլիկաների պատմության մեջ։ Սովետական Ռուսաստանի եղբայրական օգնությամբ, մեր երկրի ժողովուրդների անխախտ բարեկամության պայմաններում Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների համատեղ աշխատանքն ու պայքարը նոր, մեծ թափ հաղորդեց սոցիալիստական շինարարությանը երկրամասում։ Լայն հեռանկարներ բացվեցին յուրաքանչյուր ժողովրդի տնտեսական ու կուլտուրական զարգացման համար։ Արագորեն սկսեց զարգանալ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։ Ջախջախվեցին բուրժուա-նացիոնալիստական տականքներն ու թշնամական այլ ուժերն ու նրանց փորձերը՝ խախտելու Անդրկովկասի ժողովուրդների՝ եղբայրական ինտերնացիոնալ դաշինքը, որը

Անդրֆեդերացիայի կազմակերպումով զարգացման նոր աստիճանի հասավ և է՛լ ավելի ամրապնդվեց։

Անդրֆեդերացիայի ստեղծումով վերացվեցին առանձին ռեսպուբլիկաներում գոյություն ունեցող դրամանիշները և հիմք դրվեց համեմատաբար ավելի կայուն վալյուտայի՝ Անդրկովկասյան դրամանիշներին։ Տեղի ունեցավ Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների ֆինանսական սերտ մերձեցում։

Մտնելով Անդրֆեդերացիայի մեջ, Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի սովետական ռեսպուբլիկաները, ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի, հետագայում՝ Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի ղեկավարությամբ հաստատ կերպով առաջ էին տանում սոցիալիստական շինարարության գործը, հանդիսանալով սովետական մեծ երկրի ամուր պատվանդանը նրա հարավ-արևելյան սահմաններում և օրինակ ցույց տալով իրենց ազատագրության համար պայքարող մյուս ժողովուրդներին։

4. ՍՍՌՄ–Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1922 թ. հոկտեմբերին Հեռավոր Արևելքում լիկվիդացվում է օտարերկրյա իմպերիալիստների ռազմական ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմի վերջին ռազմաճակատը։ Հերոսական Կարմիր Բանակը ջախջախում և մեր Հայրենիքից դուրս է շպրտում ճապոնական ինտերվենտներին և նրանց սպիտակգվարդիական ծառաներին։ Երիտասարդ Սովետական Ռուսաստանը այդ կռիվներից դուրս է գալիս պատմական հաղթանակներով։

Դրանից անմիջապես հետո ամբողջ ծավալով դրվում է տնտեսական լայն շինարարություն, սովետական բոլոր ռեսպուբլիկաների ուժերի միավորման, ամբողջ երկրի քայքայված տնտեսության վերականգնման հարցը, որին, ինչպես տեսանք, Կոմունիստական պարտիան ու Սովետական պետությունը ձեռնամուխ էին եղել նոր տնտեսական քաղաքականության անցումով։

Սոցիալիստական շինարարության հետագա առաջընթացը պահանջում էր սովետական բոլոր ժողովուրդների դաշինքի հետագա ամրապնդում, նրանց միասնական աշխատանքն ու պայքարը սոցիալիստական շինարարության դժվարությունների հաղթահարման համար, ներքին և արտաքին թշնամիների դեմ պայքարը հաջողությամբ շարունակելու համար։ «Սոցիալիզմը կառուցելու համար հարկավոր էր միավորել բոլոր ժողովրդական ուժերը։ Հարկավոր էր կազմակերպել երկրի ամուր պաշտպանությունը։ Հարկավոր

էր ապահովել մեր Հայրենիքի բոլոր ազգությունների բազմակողմանի զարգացումը»[1]։

Սովետական երկրում ամենուրեք Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ժողովրդական լայն շարժում է ծավալվում ռեսպուբլիկաների միավորման, Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմակերպման համար։ Այդպիսի շարժումը իր սկիզբն էր առել Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո և մինչև 1922 թվականը անցել էր զարգացման երկու փուլ։ Ինչպես նշում է Ի. Վ. Ստալինը, առաջին փուլն ընդգրկում է 1918—1921 թվականները, երբ ներքին կոնտրռևոլյուցիոն ուժերի և օտարերկրյա ինտերվենտների դեմ մղվող պայքարում տեղի ունեցավ սովետական ռեսպուբլիկաների ռազմական դաշինքը, որը ապահովեց թշնամու ջախջախումը և Սովետական իշխանության հաղթական երթը։ Երկրորդ փուլն ընդգրկում է 1921 թ. վերջերը—1922 թ. սկիզբը, երբ սկսվեց սովետական ռեսպուբլիկաների դիվանագիտական դաշինքը Սովետական Ռուսաստանի գլխավորությամբ, որի շնորհիվ վճռական հակահարված տրվեց արևմուտքի կապիտալիստներին Ջենովայի և Հաագայի կոնֆերանսներում[2]։

Մինչև Ջենովայի կոնֆերանսի բացումը, 1922 թ. փետրվարի 22-ին Մոսկվայում կնքվել էր ութ սովետական ռեսպուբլիկաների՝ Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Բելոռուսիայի, Ուկրաինայի, Խորեզմի, Բուխարայի և Հեռավոր-Արևելյան ռեսպուբլիկայի համաձայնությունը Սովետական Ռուսաստանի հետ, որով այդ ռեսպուբլիկաները իրենց լիազորությունները հանձնել էին

---

[1] Համ(ք)Պ Պատմություն. Համառոտ դասընթաց, Երևան, 1950, էջ 351։

[2] Ջենովայի կոնֆերանսը (1922 թ., ապրիլ—մայիս) հրավիրվեց տնտեսական և ֆինանսական հարցերի շուրջը։ Այստեղ արևմուտքի կապիտալիստները ամեն միջոց գործադրեցին հարկադրելու Սովետական Ռուսաստանին վճարել ցարական Ռուսաստանի բոլոր պարտքերը և փոխառությունները, օտարերկրյա նախկին տերերին վերադարձնել Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո ազգայնացված բոլոր ձեռնարկությունները, վճարել պատերազմական բոլոր վնասները սկսած 1914 թ. և այլն։ Կոնֆերանսում սովետական դելեգացիան հակահարված տվեց Անտանտայի իմպերիալիստներին և չընդունեց նրանց պահանջները։

Ջենովայի կոնֆերանսի որոշմամբ նույն թվականի հուլիսին Հաագայում հրավիրվեց եվրոպական երկրների նոր կոնֆերանս։ Նա պետք է լուծեր Ջենովայի կոնֆերանսի չլուծված հարցերը Սովետական Ռուսաստանի վերաբերյալ, որը նորից արժանացավ սովետական դելեգացիայի հակահարվածին։

ՌՍՖՍՌ-ին՝ Ջենովայի կոնֆերանսում հանդես գալու նաև իրենց շահերի պաշտպանությամբ։ Այսպիսով, օտարերկրյա իմպերիալիստներին հակահարված տալու նպատակով կնքվեց սովետական ութ անկախ ռեսպուբլիկաների հայտնի համաձայնությունը ՌՍՖՍՌ-ի հետ, որը հանդիսացավ այդ ռեսպուբլիկաների դիվանագիտական միավորումը։

Սակայն, սովետական ռեսպուբլիկաների հետագա զարգացումը և նոր պայմանները ցույց տվեցին, որ դաշինքի այդ ձևերն անբավարար են, որ անհրաժեշտ է է՛լ ավելի ընդլայնել նրանց դաշինքը։ Այդ կապակցությամբ 1922 թ. վերջերից սկսվում է սովետական ռեսպուբլիկաների միավորման նպատակով ծավալված համաժողովրդական շարժման նոր՝ երրորդ փուլը, երբ պետք է տեղի ունենար Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության ստեղծումը, Միություն, որը հենվելու էր իր մեջ միավորվող բոլոր ռեսպուբլիկաների ու ժողովուրդների լիակատար իրավահավասարության վրա։ Այդ շարժումը աննախընթաց խանդավառությամբ ծավալվեց Ռուսաստանում, Անդրկովկասում, Ուկրաինայում, Բելոռուսիայում և սովետական մյուս ռեսպուբլիկաներում։ Պարտիական ժողովներում, դեպուտատների Սովետներում, աշխատավորական լայն ժողովներում քննության է առնվում այդ հարցը և ամենուրեք աշխատավորները արտահայտում են իրենց վճռական կամքը սովետական ռեսպուբլիկաների պետական միավորման համար։

1922 թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 3-ը Երևանում տեղի է ունենում Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների Սովետների երկրորդ համագումարը։ Համագումարը ամփոփում է ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ ձեռք բերված առաջին հաջողությունները։ Լսվում են ՀՍՍՌ Ժողկոմսովետի, Հողժողկոմատի, Պարենժողկոմատի և Ֆինժողկոմատի զեկուցումները։ Նշելով ժողովրդական տնտեսության վերականգնման գործում առաջին հաջողությունները, համագումարը որոշում է ամեն կերպ նպաստել գյուղատնտեսության զարգացմանը, առաջ մղել ոռոգման գործը, կառուցել նոր ջրանցքներ, ծավալել բամբակագործությունը, այգեգործությունը և այլ կուլտուրական բույսերի մշակությունը։ Համագումարը հատուկ ուշադրություն է նվիրում նաև անասնապահության զարգացմանը, անասունների ցեղի աղնվացմանը և ապրանքայնության բարձրացմանը։

Հայաստանի Սովետների երկրորդ համագումարում քննություն է առնվում նաև ՍՍՌՄ-ի կազմակերպման հարցը և միաձայն որոշում է ընդունվում հաստատել Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրկովկասյան ֆեդերացիայի միջև դաշինք կնքելու մասին որոշման նախագիծը։

Անհրաժեշտ էր օգնել գյուղացիական տնտեսությանը, զարգացնել արդյունաբերությունը, բարելավել հաղորդակցության և կապի միջոցները, կարգավորել ֆինանսական հարցերը։ Անհրաժեշտ էր վերականգնել տնտեսությունը, իսկ «մեր սովետական ռեսպուբլիկաներից ոչ մեկը չէր կարող իր տնտեսությունը վերականգնել իր սեփական ուժերով։ Այս հանգամանքն առանձնապես զգալի է այժմ,— ասել է Ի. Վ. Ստալինը 1922 թ. նոյեմբերին,— երբ սովետական ռեսպուբլիկաներն առաջին անգամ քաղաքացիական պատերազմի լիկվիդացիայից հետո լրջորեն ձեռք զարկեցին տնտեսական հարցերի լուծմանը և այստեղ, աշխատանքի ընթացքում, առաջին անգամ զգացին առանձին ռեսպուբլիկաների մեկուսացած ջանքերի ամբողջ անբավարարությունը, այդ ջանքերը միավորելու և ռեսպուբլիկաների տնտեսական միավորման՝ որպես արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը իսկապես վերականգնելու միակ ուղու ամբողջ անխուսափելիությունը»[1]։

Ինչպես տեսանք, բանվորների, գյուղացիների, կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների Անդրկովկասյան առաջին համագումարը լսելով Ս. Օրջոնիկիձեի զեկուցումը ՍՍՌՄ կազմակերպման մասին, ընդունում է բանաձև, որը նույնպես ՍՍՌՄ-ի կազմակերպումը համարում է հասունացած ու անհրաժեշտ հարց։ Համագումարն ընտրում է դելեգատներ Սովետների Համամիութենական առաջին համագումարի համար։ 1922 թ. դեկտեմբերին Մոսկվայում տեղի է ունենում Սովետների Համամիութենական առաջին համագումարը, որին մասնակցում են ՌՍՖՍՌ-ի, ՈՒՍՍՌ-ի, ԱՍՖՍՌ-ի և ԲՍՍՌ-ի դելեգատները։ Համագումարի օրակարգում կար երկու հարց. 1. ՍՍՌՄ-ի կազմակերպման Դեկլարացիայի և Պայմանագրի քննարկումը և 2. ՍՍՌՄ-ի կենտգործկոմի կազմի ընտրությունը։

Առաջին հարցի առթիվ համագումարը լսում է Ի. Վ. Ստալինի զեկուցումը՝ «Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միություն կազմելու մասին»։ Իր զեկուցման մեջ Ի. Վ. Ստալինը

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 156։

նշում է, որ համագումարի բացման օրը Սովետական իշխանության պատմության մեջ բեկումնային օր է, որովհետև համագումարը սովետական ռեսպուբլիկաներին միավորում է մեկ միասնական միութենական պետության մեջ։ Այդ միավորման շնորհիվ միասնական Սովետական պետությունը ոչ միայն խոշոր չափով ամրապնդելու էր իր գոյությունը, այլև դառնալու էր և իրոք դարձավ միջազգային լուրջ ուժ։ Ամփոփելով Սովետական իշխանության գոյության հինգ տարվա արդյունքները, Ի. Վ. Ստալինը ցույց է տվել, որ այդ ժամանակամիջոցում Սովետական իշխանությունը անցել է զարգացման երկու էտապ։ Առաջինը՝ քաղաքացիական կռիվների էտապն էր, երբ ստեղծելով Կարմիր Բանակը, Սովետական իշխանությունը կարողացավ ջախջախել ներքին և արտաքին թշնամիներին։ Երկրորդ էտապը՝ տնտեսական քայքայվածության դեմ պայքարելու էտապն է, երբ հիմք է դրվում ՍՍՌՄ-ին։ Համագումարի բացման օրը — 1922 թ. դեկտեմբերի 30-ը — Ի. Վ. Ստալինը գնահատեց որպես նոր Ռուսաստանի հաղթանակի օր՝ ընդդեմ հին Ռուսաստանի։ Զեկուցման վերջում Ի. Վ. Ստալինը կարդում է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միություն կազմելու Դեկլարացիան և Պայմանագիրը, որոնք համագումարի կողմից ընդունվում են մեծ խանդավառությամբ։

Դեկլարացիայում ընդգծված է, որ ՍՍՌՄ-ն իրավահավասար ժողովուրդների կամավոր Միություն է, յուրաքանչյուր ռեսպուբլիկայի համար ապահովված է Միությունից ազատորեն դուրս գալու իրավունքը, Միության մեջ կարող են մտնել գոյություն ունեցող, ինչպես և ապագայում կազմակերպվելիք սովետական ռեսպուբլիկաները, որ այդ Միությունն ամեն կերպ կնպաստի բոլոր ժողովուրդների զարգացմանը։

Պայմանագրի համաձայն Ռուսաստանի Ֆեդերացիան, Ուկրաինան, Բելոռուսիան և Անդրկովկասյան Ֆեդերացիան միավորվում են մեկ միութենական պետության մեջ — Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության մեջ։ Պայմանագիրը բաղկացած է 26 կետից. այնտեղ շարադրված են ՍՍՌՄ-ի կազմակերպման սկզբունքները։ Այդ պայմանագիրը հանդիսացավ Սովետական Միության ապագա՝ 1924 թվականին ընդունված Կոնստիտուցիայի հիմքը։

ՍՍՌՄ-ի կազմակերպումը իրականացվեց վելիկոռուսական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ մղված անողոք պայքարում։ Վելիկոռուսական շովինիզմն արտահայտում էր տապալ-

ված վելիկոռուսական բուրժուազիայի ձգտումները՝ վերականգնել իր նախկին արտոնությունները մյուս ժողովուրդների նկատմամբ, սերմանել անվստահություն սովետական ժողովրդի մեջ, դրանով իսկ թուլացնել և քայքայել պրոլետարիատի դիկտատուրան։ Տեղական նացիոնալիզմն արտահայտում էր առաջներում ճնշված ազգերի բուրժուազիայի ձգտումը՝ քայքայել սովետական ժողովուրդների ինտերնացիոնալ դաշինքը, կործանել Սովետական իշխանությունը և հաստատել անջատ-անջատ բուրժուական պետություններ։ Տրոցկիստական-բուխարինական թափթփուկները ևս պայքարում էին ՍՍՌՄ-ի ստեղծման դեմ, Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության դեմ։ Կոմունիստական պարտիան Վ. Ի. Լենինի և նրա աշակերտ ու գինակից Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ, անողոք պայքար տանելով բուրժուական տարրերի, թևքումների և հոսանքների դեմ, մինչև վերջ նրանց մերկացրեց ու ջախջախեց և հանձինս ՍՍՌՄ-ի ապահովեց սովետական բոլոր ռեսպուբլիկաների պետական անխախտ դաշինքը և համագործակցությունը։

Սովետական Միության կազմակերպումը Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության նոր, խոշորագույն հաղթանակն էր, որը սովետական բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և կուլտուրական զարգացման, մեր երկրում սոցիալիզմի կառուցումը հաջողությամբ առաջ տանելու գործում պատմական նշանակություն ունեցավ և ունի։

Հետագայում, 1936 թվականին, ՍՍՌՄ-ի նոր Կոնստիտուցիայի նախագծի մասին տված զեկուցման մեջ Ի. Վ. Ստալինը բնութագրել է ՍՍՌՄ-ի կազմակերպման ժամանակաշրջանի դժվարությունները և ՍՍՌՄ-ի ստեղծման նշանակությունը։ «Դա այն ժամանակաշրջանն էր,— գրել է Ի. Վ. Ստալինը,— երբ հարաբերությունները ժողովուրդների միջև դեռ, ինչպես հարկն է, չէին կարգավորված, երբ վելիկոռուսների նկատմամբ եղած անվստահության մնացուկները դեռ չէին անհետացել, երբ կենտրոնախույս ուժերը դեռևս շարունակում էին գործել։ Հարկավոր էր այդ պայմաններում կարգավորել ժողովուրդների եղբայրական համագործակցությունը տնտեսական, քաղաքական ու ռազմական վերադարձ օգնության հիման վրա, միավորելով նրանց որպես մեկ միութենական բազմազգ պետություն։ Սովետական իշխանությունը չէր կարող չտանել այդ գործի դժվարությունները։ Նա ուներ իր

առջև բազմազգ պետությունների անհաջող փորձերը բուրժուական երկրներում։ Նա ուներ իր առջև հին Ավստրո-Հունգարիայի ձախողված փորձը։ Եվ, այնուամենայնիվ, նա դիմեց բազմազգ պետություն ստեղծելու փորձին, որովհետև նա գիտեր, որ սոցիալիզմի հիմքի վրա առաջացած բազմազգ պետությունը պետք է դիմանա բոլոր ու ամեն տեսակ փորձություններին»[1]։

ՍՍՌՄ Սովետների 2-րդ համագումարում, 1924 թ. հունվարին, հաստատվեց ՍՍՌՄ-ի առաջին Կոնստիտուցիան։ Դա բազմազգ Սովետական պետության Կոնստիտուցիան էր, որը ստեղծված էր համապատասխան սովետական երկրի այն ժամանակվա էկոնոմիկայի ու դասակարգային փոխհարաբերությունների։ Ինչպես ցույց է տվել Ի. Վ. Ստալինը, այն ժամանակ մեր արդյունաբերությունը, առանձնապես ծանր արդյունաբերությունը, աննախանձելի պատկեր էր ներկայացնում։ Արդյունաբերության մեջ սոցիալիստական սեկտորը կազմում էր 80 տոկոս, կապիտալիստական հատվածը՝ 20 տոկոս։ Ավելի անհրապույր պատկեր էր ներկայացնում գյուղատնտեսությունը, որը այն ժամանակ հիշեցնում էր անհատական գյուղացիական մանր տնտեսությունների մի անծայրածիր օվկիանոս, միջնադարյան հնաոճմնաց տեխնիկայով։ Այդ օվկիանոսում իրրև առանձին կետեր ու փոքրիկ կղզիներ գոյություն ունեին կոլտնտեսություններ և սովխոզներ, որոնք դեռևս թույլ էին և մեր ժողովրդական տնտեսության մեջ փոքրիշատե լուրջ նշանակություն չունեին։ Իսկ կուլակը դեռևս պահպանում էր իր ուժը։ Այն ժամանակ Կոմունիստական պարտիան ու Սովետական պետությունը տանում էին ոչ թե կուլակության վերացման, այլ նրա սահմանափակման քաղաքականություն։ Ապրանքաշրջանառության մեջ սոցիալիստական հատվածը կազմում էր մոտ 50—60 տոկոս, իսկ ամբողջ մնացած ասպարեզը գրավված էր վաճառականների, սպեկուլյանտների և այլ մասնավորների կողմից[2]։

Ինչպես ՍՍՌՄ-ի, նույնպես և միութենական և ավտոնոմ բոլոր սովետական ռեսպուբլիկաների Կոնստիտուցիաներն իրենց հիմքում դրել էին պրոլետարիատի դիկտատուրայի պաշտպանությունը և ամրապնդումը, կապիտալիստական էլեմենտների ճնշումը, մարդու կողմից մարդու շահագործման վերացումը, բոլոր ազ-

---

[1] Ի. Վ. Ստալին, Լենինիզմի հարցերը, Հայպետհրատ, Երևան, 1953, էջ 675—676։

[2] Տես նույն տեղում, էջ 669—670։

գությունների միջև եղբայրական անխախտ դաշինքի հաստատումը, հանուն կոմունիստական հասարակարգի կառուցման։

1924 թ. ընդունված Կոնստիտուցիայով ՍՍՌՄ գերագույն օրգանը համարվում էր Սովետների Համամիութենական համագումարը, իսկ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում՝ ՍՍՌՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն։ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն բաղկացած էր երկու պալատներից՝ Միության Սովետից և Ազգությունների Սովետից։ Ազգությունների Սովետի կազմում ռեսպուբլիկաները, Կոնստիտուցիայի համաձայն, ունեին հավասար քանակությամբ ներկայացուցիչներ։ Ընտրելու և ընտրվելու իրավունք ունեին 18 տարին լրացած սովետական բոլոր քաղաքացիները, անկախ սեռից, դավանանքից, ռասայից, ազգությունից և նստակեցությունից։ Ընտրական իրավունքից զրկվում էին շահագործողները, առևտրականները, հոգևորականները, նախկին ոստիկանները, ժանդարմները և դատարանով քաղաքական իրավունքից զրկվածները։

1925 թ. մարտին հրավիրվում է Հայաստանի Սովետների 4-րդ համագումարը, որը լրացումներ և փոփոխություններ է կատարում Սովետների 1-ին համագումարում ընդունված ՀՍՍՌ-ի Կոնստիտուցիայի մեջ։ Այնտեղ ավելացվում է նոր հոդված (14-րդ), որը խոսում է Սովետական Հայաստանը Անդրֆեդերացիայի միջոցով ՍՍՌՄ-ի կազմի մեջ մտնելու մասին. «Կապիտալիստական օղակի հանդեպ մի խորհրդային ճակատ ստեղծելու և բոլոր Խորհրդային Հանրապետությունների հետ սերտ եղբայրական աշխատակցության հիման վրա սոցիալիստական շինարարությունը և ազգային զարգացման ազատությունն ապահովելու նպատակով,— ասված է այնտեղ,— Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը, Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության և Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հետ կազմում են Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն, իսկ վերջինիս միջոցով, որպես նրա իրավահավասար մասը՝ միանում են Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության, Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության, Ուկրաինայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության, Թուրքմենստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության և Ուզբեկստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության·

հետ և կազմում են մի միացյալ պետություն՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն»[1]։

Սկսվում է Սովետական պետության զարգացման և հզորացման շրջանը։ Սովետական Հայաստանը, ինչպես և բոլոր սովետական ռեսպուբլիկաները, տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման համար ավելի լայն հնարավորություններ են ստանում։

Մեծ հաջողությամբ առաջ էր գնում ժողովրդական տնտեսության վերականգնումը։

5. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ն ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇՐՋԱՆԻ ՎԵՐՋՈՒՄ

Սովետական Միության արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և ժողովրդական տնտեսության մյուս բոլոր ճյուղերի վերականգնման ուղղությամբ 1921—1923 թվականներին զգալի հաջողություններ էին ձեռք բերվել։ Այդ հաջողությունների հիման վրա բարելավվում էին բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության նյութական պայմանները։ «1921 թվականից սկսած ցանքերի տարածությունն զգալիորեն մեծացել էր, գյուղացիական տնտեսությունն ավելի ու ավելի էր ամրապնդվում։ Աճում և զարգանում էր սոցիալիստական արդյունաբերությունը։ Թվով զգալիորեն աճել էր բանվոր դասակարգը։ Աճել էր աշխատավարձը։ Բանվորներն ու գյուղացիներն սկսել էին ավելի հեշտ ու ավելի լավ ապրել, քան 1920—1921 թվականներին»[2]։

Ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ ձեռք բերված այդ առաջին հաջողություններին զուգընթաց, այնուամենայնիվ, դեռևս կային մի շարք դժվարություններ. ամբողջությամբ վերցրած, ժողովրդական տնտեսությունը դանդաղ էր աճում։ Արդյունաբերությունը դեռ չէր հասել նախապատերազմյան մակարդակին։ Նրա արտադրանքը չէր բավարարում երկրի աճող պահանջները։ 1923 թ. վերջերին Սովետական Միությունում կար մոտ մեկ միլիոն գործազուրկ։ Առևտրի զարգացումը գնում էր ընդհատումներով, որովհետև արդյունաբերական ապրանքների գները զգալի չափով բարձր էին, իսկ գյուղատնտեսական մթերքների գները՝ ցածր։ Դրա հետևանքով ապրանքափոխանակությունը քաղաքի և

---

[1] ՀՍՍՀ Խորհուրդների չորրորդ համագումարը, սղագրական հաշվետվություն, Երևան, 1926, էջ 232։

[2] Համ(բ)Պ Պատմություն. Համառոտ դասընթաց, Երևան, 1950, էջ 356։

գյուղի միջև դժվարությունների առաջ էր կանգնել։ Այդպիսի պայմաններում, դնալով ընկնում էր սովետական ռուբլու արժեքը։ Այս գործում ևս Սովետական պետությանը խոշոր վնասներ պատճառեցին տրոցկիստները, բուխարինականները, առևտրական կազմակերպություններում խցկված նեպմաններն ու թշնամական մյուս տարրերը։ Տրոցկիստ Պյատակովը, որն այն ժամանակ ղեկավար աշխատանք էր կատարում ՍՍՌՄ Ժողովրդական Տնտեսության խորհրդում, տնտեսական օրգաններին դիրեկտիվ էր տվել՝ որքան կարելի է ավելի շահույթ կորզել արդյունաբերական ապրանքներից, անդուսպ կերպով բարձրացնելով այդ ապրանքների գները։ Բարձր գներով արդյունաբերական ապրանքները դանդաղ էին իրացվում։ Դրա հետևանքով տնտեսական կազմակերպությունների մի մասը կանգնել էր ֆինանսական բարդությունների առաջ և դժվարանում էր վճարել բանվորների աշխատավարձը, որը իր հերթին բանվորների մեջ առաջացնում էր դժգոհություն։ Առավել հետամնաց բանվորները մի քանի ֆաբրիկաներում լքում էին աշխատանքը [1]։ Սովետական Հայաստանում ևս այդ դժվարություններն իրենց զգացնել էին տալիս և արգելք էին հանդիսանում ժողովրդական տնտեսության վերականգնման ճանապարհին։

Վճռական հակահարված տալով տրոցկիստներին, բուխարինականներին, նեպմանական տարրերին և մյուս թշնամիներին, Կոմունիստական պարտիան իր Կենտրոնական Կոմիտեի ղեկավարությամբ մոբիլիզացրեց Սովետական Միության բանվոր դասակարգին և շքավոր ու միջակ գյուղացիությանը՝ հաղթահարելու այդ դժվարությունները։

Սովետական ժողովրդի անձնուրաց աշխատանքի ու հերոսական պայքարի շնորհիվ 1923—1925 թվականներին ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքները ավելի ու ավելի մեծ արդյունքներ են տալիս։ Այդպիսի արդյունքներ են ստացվում նաև Սովետական Հայաստանում։ 1923 թ. վերջերին (դեկտեմբերի 4—8-ը) Երևանում գումարված Սովետական Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների 3-րդ համագումարը, որը քննության առնելով տնտեսական շինարարության վերաբերյալ հարցերը՝ կառավարության հաշվետվությունը, գյուղատնտեսության վիճակը, ռեսպուբլիկայի ֆինանսական դրությունը, կոոպերացիայի հարցը և

[1] ՀամԿ(բ)Պ Պատմություն. Համառոտ դասընթաց, Երևան, 1950, էջ 357։

այլն, նշեց, որ նախորդ տարիների համեմատությամբ, 1923 թվականին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության բոլոր գծերով զգալի առաջխաղացում է տեղի ունեցել։

Այդ ժամանակ խիստ վատացել էր Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության կազմակերպիչ, աշխատավոր մարդկության հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինի առողջությունը։ Մեր սովետական մեծ երկրի բոլոր ծայրերից, ինչպես և աշխարհի բոլոր մասերից, բանվորները, գյուղացիները և աշխատավոր ինտելիգենցիան անընդհատ նամակներ ու հեռագրեր էին ուղղում Մոսկվա՝ Վ. Ի. Լենինին՝ ցանկանալով նրան առողջություն, հայտնելով իրենց նվիրվածությունը մեր մեծ առաջնորդին, նրա ստեղծած փառապանծ պարտիային և Սովետական պետությանը։

Հայաստանի Սովետների 3-րդ համագումարը արտահայտելով ռեսպուբլիկայի ամբողջ աշխատավորության կամքը, Վ. Ի. Լենինին ուղարկում է հեռագիր, ուր ասված է.

«Ընկեր Լենինին.

Հայաստանի խորհուրդների երրորդ համագումարը բոցավառ ողջույն է ուղարկում համաշխարհային հեղափոխության մեծ ղեկավարին։ Հարևան ժողովուրդների հետ խաղաղ հարաբերություններ հաստատելու մասին Հայաստանի Հեղկոմին տված Ձեր առաջին հրահանգին հավատարիմ, բանվորա-գյուղացիական Հայաստանն ամրապնդել է սերտ եղբայրական կապեր հարևանների հետ և խաղաղ պայմաններում բուժում է իր վերքերը։ Երկրի տնտեսությունը վերականգնելու գործի համար բանվորների և գյուղացիների գործադրած ճիգերը արդեն տվել են բավարար արդյունքներ։ Ներկա երրորդ համագումարը կնշի Խորհրդային Հայաստանի տնտեսության և կուլտուրայի բարձրացման հետագա ուղիները։

Սպասում ենք, որ դուք շատ շուտով վերադառնաք խորհրդային նավի ղեկավարմանը։

Համագումարի Նախագահություն» [1]։

Գնալով, Վ. Ի. Լենինի առողջությունը վատանում էր։ 1924 թ. հունվարի 21-ին Վ. Ի. Լենինը վախճանվում է։ Այդ մեծագույն կորուստ էր Կոմունիստական պարտիայի, սովետական ժողովրդի և ամբողջ առաջավոր մարդկության համար։ Հունվարի 21-ի լույս 22-ի գիշերը հրավիրվում է Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կենտկոմի պլենումը, որը Վ. Ի. Լենինի մա-

[1] «Խորհրդային Հայաստան» № 272, 9 դեկտեմբերի, 1923։

վան առթիվ հատուկ դիմում է ուղղում պարտիային և բոլոր աշխատավորներին։ Հայտնելով մեծ առաջնորդի մահվան մասին, Կենտկոմը կոչ է անում էլ ավելի կուռ շարքերով համախմբվել Վ. Ի. Լենինի ստեղծած մարտական պարտիայի շուրջը, հաղթական կիրպով և առանց երերումների առաջ ընթանալ կոմունիստական հասարակարգի կառուցման ուղիով։ «Մեր ուսուցչի մահը, այդ մեծ հարվածը,— ասված է դիմումում,— էլ ավելի ուժեղ կերպով կհամախմբի մեր շարքերը։ Համերաշխ մարտական շարքերով մենք գնում ենք արշավանքի ընդդեմ կապիտալի, և աշխարհում ոչ մի ուժ չի կարող խանգարել մեր վերջնական հաղթանակին։

...Պարտիան երկաթյա քայլերով առաջ կգնա։ Որովհետև նա Լենինյան պարտիա է։ Որովհետև նա դաստիարակվել, կոփվել է մարտերում։ Որովհետև նրա ձեռքումն են այն ավանդները, որ նրան թողել է ընկեր Լենինը»[1]։

Գիտակցելով ծանր կորուստը և արձագանքելով Կոմունիստական պարտիայի Կենտկոմի կոչին, Սովետական Միության բանվոր դասակարգը և ամբողջ աշխատավորությունն էլ ավելի կուռ շարքերով համախմբվեցին Կոմունիստական պարտիայի, նրա Լենինյան Կենտկոմի շուրջը։ «Յուրաքանչյուր գիտակից բանվոր սգի այդ օրերին կշռադատեց իր վերաբերմունքը դեպի Կոմունիստական պարտիան, որն իրականացնում է Լենինի պատգամները։ Պարտիայի Կենտկոմում ստացվում էին անպարտիական բանվորների հազարավոր ու հազարավոր դիմումներ, որոնցով նրանք խնդրում էին իրենց ընդունել պարտիայի մեջ։ Կենտկոմն ընդառաջեց առաջավոր բանվորների այդ շարժմանը և հայտարարեց առաջավոր բանվորների մասսայական ընդունում պարտիայի մեջ, հայտարարեց Լենինյան կոչ դեպի պարտիական շարքերը։ Պարտիայի շարքերը եկան նոր տասնյակ-հազարավոր բանվորներ։ Գալիս էին նրանք, ովքեր պատրաստ էին իրենց կյանքը տալու պարտիայի գործի համար, Լենինի գործի համար»[2]։ Լենինյան կոչի օրերին Կոմունիստական պարտիայի շարքերն անցան 240 հազար բանվորներ։ Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը ևս իր ավելի քան 2000 լավագույն ներկայացուցիչներով խտացրեց Կոմունիստական պարտիայի շարքերը։

---

[1] КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, ч. 1, 1953, стр. 806.

[2] ՀԱՄԿ(բ)Պ Պատմություն. Համառոտ դասընթաց, Երևան, 1950, էջ 361։

Հունվարի 26-ին բացվում է Սովետների Համամիութենական երկրորդ համագումարի սգո նիստը։ Այստեղ Ի. Վ. Ստալինը՝ մեծ Լենինի արժանավոր աշակերտը և մարտական զինակիցը սիրելի առաջնորդի շիրիմի առաջ տալիս է պատմական երդումը, մեր ժողովրդի և պարտիայի երդումը։ Կոմունիստական պարտիայի և սովետական ժողովրդի անունից Ի. Վ. Ստալինը Վ. Ի. Լենինի շիրիմի առաջ երդվեց պատվով կատարել մեծ առաջնորդի պատգամները պարտիայի անդամի կոչումը բարձր պահելու, պարտիայի միասնությունը աչքի լույսի պես պահպանելու, պրոլետարիատի դիկտատուրան և նրա հիմքը՝ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը ամրապնդելու, Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունը ամրացնելու և ընդլայնելու, սոցիալիստական Հայրենիքի արթուն պահապան Կարմիր Բանակը հզորացնելու, Կոմունիստական Ինտերնացիոնալի սկզբունքներին հավատարիմ մնալու մասին։ Պարտիայի լենինյան Կենտրոնական Կոմիտեի գլխավորությամբ պարտիան և սովետական ժողովուրդը, վստահ իրենց ուժերին, ձեռնամուխ եղան այդ պատմական երդման կենսագործմանը, լենինյան ավանդների իրականացմանը։

Օգտվելով Վ. Ի. Լենինի հիվանդությունից և ապա նրա մահվանից, միջազգային իմպերիալիզմի գործակալները՝ տրոցկիստները, բուխարինականները և մյուս կոնտրռևոլյուցիոն տականքները ակտիվացան, նպատակ ունենալով քայքայել Կոմունիստական պարտիան, կործանել Սովետական պետությունը։ Սակայն այդ նրանց չհաջողվեց։ Կոմունիստական պարտիան և սովետական ժողովուրդը ջախջախիչ հարվածներ հասցրին այդ ստոր թշնամիներին։

Մեծ Լենինի հիշատակը հավերժացնելու և նրա ավանդները կենսագործելու համար ամբողջ երկրի բանվոր դասակարգը, չքավոր ու միջակ գյուղացիությունը և աշխատավոր ինտելիգենցիան էլ ավելի ծավալեցին իրենց ստեղծագործ աշխատանքը։

Սովետական Հայաստանի մայրաքաղաքում, ռեսպուբլիկայի բոլոր գավառներում, շրջաններում, գործարաններում և հիմնարկ-ձեռնարկություններում հրավիրվում են բազմահազար աշխատավորների սգո միտինգներ, ուր արտահայտելով իրենց կսկիծը սիրելի առաջնորդի մահվան առթիվ, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները միաժամանակ ցուցաբերում են իրենց կամքն ու վճռականությունը՝ մեծ Լենինի ավանդները մինչև վերջ կենսագործելու համար։

1924 թ. հունվարի 23-ին Երևանում տեղի ունեցած աշխատավորության համաքաղաքային սգո միտինգում ընդունված բանաձևում ասված է. «Երևանի բանվորները, կարմիրբանակայինները և աշխատավորության լայն մասսաները խորը ցնցված են մեր ուսուցիչ և ղեկավար Վ. Ի. Լենինի մահվան բոթով։

...Հաղթանակի միասնական կամքով ու շարքերի խտությամբ Խորհրդային Միության... բանվորներն ու գյուղացիները կամրացնեն խորհրդային ու պրոֆմիութենական բոլոր կազմակերպությունների հիմքերը, որ կոչված են իրագործելու թանկագին ուսուցչի մտքերն ու ավանդները»[1]։

Վ. Ի. Լենինի հիշատակը հավերժացնելու նպատակով Հայկական ՍՍՌ Կենտգործկոմը 1924 թ. հունվարին որոշում է ռեսպուբլիկայի մայրաքաղաքում կանգնեցնել Վ. Ի. Լենինի մոնումենտ-արձանը, որի շուրջը հետագայում ձևավորվում է Լենինի անվան հրապարակը։ Այդ ժամանակ ընդունված Կենտգործկոմի մյուս որոշմամբ Ալեքսանդրապոլ քաղաքը վերանվանվում է Լենինական։ Այդ որոշումները ռեսպուբլիկայի աշխատավորության կողմից ընդունվում են մեծ խանդավառությամբ։

Վ. Ի. Լենինի ավանդները կենսագործելու բուռն ձգտումով, Սովետական Հայաստանի աշխատավորությունը, Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ, հաստատ կերպով առաջ էր տանում ժողովրդական տնտեսության վերականգնման գործը, որը նոր ծավալ ու արագ տեմպեր էր ստացել Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմակերպման շնորհիվ։

Հայաստանի բանվոր դասակարգը, չքավոր ու միջակ գյուղացիությունը և աշխատավոր ինտելիգենցիան, 1925 թվականին հասել էին խոշոր հաջողությունների, հիմնականում ավարտելով ժողովրդական տնտեսության վերականգնումը։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության վերականգնման տեմպերի ու արդյունքների մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը։ Հայաստանում 1922 թ. ցանքերի ընդհանուր տարածությունը եղել է 97 հազար հեկտար։ Հետագա տարիներին արագ կերպով աճելով, 1925 թ. ցանքատարածությունները հասել էին 295,7 հազար հեկտարի, որից 255,2 հազար հեկտարը հացահատիկ, 22,85 հազար հեկտարը տեխնիկական կուլտուրաներ և 17,6 հազար հեկ-

---

[1] «Խորհրդային Հայաստան», № 20, 25 հունվարի, 1924։

տարը կարտոֆիլ ու բանջարանոցային կուլտուրաներ[1]։ Ինչպես ցույց են տալիս թվերը, 1922 թ. համեմատությամբ 1925 թ. Հայաստանում ցանքատարածությունները եռապատկվել էին, մոտենալով 1913 թ. մակարդակին։ Ցանքատարածությունների ընդարձակման զուգընթաց, այդ ժամանակաշրջանում Սովետական Հայաստանում զգալի աշխատանքներ էին կատարվել ոռոգման սիստեմի վերականգնման և մի շարք նոր ջրանցքների շինարարության ուղղությամբ։ 1923 թ. ավարտվում է Էջմիածնի ջրանցքի շինարարությունը, որն ունի 21 կիլոմետր երկարություն և ոռոգում է 1000 հեկտարից ավելի հողամաս։ 1924 թ. ավարտվում է Էվջիլարի ջրանցքի կառուցումը՝ 14 կիլոմետր երկարությամբ, որը ոռոգում էր 1500 հեկտար հողամաս։ 1925 թ. ավարտվում է Շիրակի ջրանցքի շինարարությունը, որն ունի 30 կիլոմետր երկարություն, 10.000 հեկտարից ավելի հողամաս ոռոգելու կարողությամբ։ Ավարտված էր Արազդայանի ջրանցքի վերանորոգումը, որը ոռոգում է 1200 հեկտար հողամաս։ Այդ բոլորի շնորհիվ զգալի չափով ավելացել էր ջրովի հողերի տարածությունը։ Ջրաշինարարական աշխատանքների ծավալումը և ագրոտեխնիկական միջոցառումների կիրառումը զգալի չափով նպաստեցին բերքատվության բարձրացմանը։

Հաջողությամբ առաջ էր գնում նաև անասնապահության վերականգնումը, որը, իր ընդհանուր գլխաքանակով մոտենում էր 1913 թ. մակարդակին։

Գյուղատնտեսության վերականգնման զուգընթաց, գնալով բարելավվում էր գյուղական շքավորության դրությունը։ Գյուղացիական տնտեսությունների միջից վերացվում էր ցանքագրկությունը։ Չքավոր տնտեսությունների մի մասը դառնում էր միջակ։ Բարելավվում էր միջակ գյուղացիների վիճակը։ Սակայն գյուղում տեղի ունեցող դասակարգային տեղաշարժերը դրանով չէին սահմանափակվում։ Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում, երբ որոշ հնարավորություններ էին ստեղծվել կապիտալիստական տարրերի աշխուժացման համար, ունևոր, միջակ տնտեսություններից շնչին չափով աճում էին կուլակային տնտեսությունները։

Սովետական գյուղում տեղի ունեցող շերտավորումը տրամադծորեն հակառակն էր կապիտալիստական գյուղի շերտավորմանը։

---

[1] Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., Ժողովածու, էջ 113 և Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода, Ереван, 1928, стр. 27.

ՀամԿ(բ) պարտիայի XV համագումարը գյուղում կատարվող աշխատանքի վերաբերյալ իր բանաձևում այդ մասին նշել է. «Քննարկելով սոցիալ-դասակարգային տեսակետից, գյուղատնտեսության զարգացման պրոցեսը տվյալ մոմենտում բնութագրվում է սոցիալիստական և կապիտալիստական տենդենցների պայքարով։ Այդ պայքարն իր կնիքն է դնում գյուղի շերտավորման պրոցեսի վրա, որը մեր պայմաններում ունի խիստ բնորոշ առանձնահատկություններ»[1]։ Ըստ նույն բանաձևի, այդ առանձնահատկությունները հետևյալներն են եղել. եթե կապիտալիստական զարգացումը տեղի ունի միջակ գյուղացիության թուլացման, ծայրախմբերի — չքավորության ու կուլակության աճման պայմաններում, ապա մեզ մոտ, ի հակադրություն կապիտալիստական զարգացման, տեղի ուներ չքավորության կրճատման և միջակության աճման պրոցես։ Այդ առանձնահատկությունները անխուսափելիորեն բխում էին տվյալ մոմենտում պրոլետարիատի դիկտատուրայի տնտեսական զարգացման բնույթից։ Նեպի պայմաններում կապիտալիստական տարրերը գյուղում ևս աշխուժացել էին և ցույց էին տալիս կատաղի դիմադրություն Սովետական իշխանության բոլոր ձեռնարկումներին։ Դասակարգային պայքարը արտահայտվում էր ավելի ակնհայտ և սուր կերպով։ Բուխարինականները և տրոցկիստները, որպես կուլակային-կապիտալիստական տարրերի իդեոլոգներ, այդ պայքարում ամեն կերպ փորձում էին ձախողել Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության միջոցառումները։ Օգտագործելով ամեն կարգի թափթփուկներին, նրանք պայքարում էին Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի լենինյան գծի դեմ։

Բուխարինականները ամեն կերպ փորձում էին կոծկել գյուղում տեղի ունեցող շերտավորումը և կուլակության աճման փաստը, նվազեցնելով կապիտալիստական էլեմենտների վտանգը։ Իսկ տրոցկիստները ուռճացնում էին կուլակության և կապիտալիստական մյուս տարրերի՝ նեպմանների, սպեկուլյանտների վտանգը։ Ժխտելով բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ, տրոցկիստները կրկնում էին նեպը միայն նահանջ լինելու մասին իրենց հին դրույթը, որը դատապարտվել էր Կոմունիստական պարտիայի կողմից նեպին անցնելու հենց առաջին շրջանում։ Նման հար-

---

[1] КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов, ч. II, 1953, стр. 353.

ցադրումներով թե՛ մեկ, և թե՛ մյուս հոսանքը միևնույն նպատակն էին հետապնդում՝ քայքայել և խորտակել պրոլետարիատի դիկտատուրան։

Կոմունիստական պարտիան լենինյան Կենտրոնական Կոմիտեի ղեկավարությամբ մերկացնելով և վճռական հակահարված տալով թե՛ «աջ» և թե՛ «ձախ» թեքումներին, ճիշտ կերպով դնահատեց նեպի պայմաններում գյուղում կատարվող դասակարգային շերտավորումը և դրանից հանեց անհրաժեշտ հետևություններ իր հետագա գործունեության համար։

Սոցիալիստական տնտեսության հաջողությունները անհանդգստացնում էին սովետական կարգերի ներքին և արտաքին թշնամիներին։ Նրանք ոչ մի ջանք չէին խնայում ձախողելու Սովետական իշխանության առաջընթացը դեպի սոցիալիզմ։ Մեր արդյունաբերության, տրանսպորտի մեջ և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում նրանք կազմակերպում էին վնասարարություն, սաբոտաժ։ Նեպի առաջին տարիներին կուլակները և մյուս կոնտրռևոլյուցիոն ուժերը բանդիտական ելույթներ էին կազմակերպում սովետական կարգերի դեմ։

Սակայն թշնամու կողմից Սովետական իշխանության դեմ մղվող պայքարը միայն դրանով չէր սահմանափակվում։ Նա բանդիտական-տեռորիստական ակտեր էր կազմակերպում պարտիական-սովետական ակտիվ աշխատողների դեմ։ Այդպիսի բանդիտական-տեռորիստական ակտերից մեկն էր 1925 թ. հուլիսի 26-ին Վաղարշապատի գավառի Սամաղարի գավառակի Ներքին Աղջաղալա գյուղում դաշնակցական-կուլակային թափթփուկների կողմից նույն գյուղի Սովետի քարտուղար Մանուկ Խուշոյանի տեռորիստական սպանությունը։ Մ. Խուշոյանը գյուղի ակտիվ աշխատող էր։ Բացի գյուղսովետի քարտուղարությունից, նա զբաղվում էր ուսուցչությամբ և ընտրված էր գյուղի փոխադարձ օգնության կոմիտեի նախագահ։ Ն. Աղջաղալա գյուղում այն ժամանակ դեռևս պարտիական կազմակերպություն չկար, իսկ ակտիվ աշխատողները շատ քիչ էին։ Օգտվելով դրանից, դաշնակցական-կուլակային տարրերը այստեղ ավելի ակտիվություն էին ցուցաբերում։ Որպես Սովետական իշխանությանը նվիրված քաղաքացի և ակտիվ ու զգոն աշխատող, Մ. Խուշոյանը նկատում է, որ գյուղում Սովետական իշխանության թշնամիներն իրենց ստոր գործերով ամեն կերպ փորձում են դիմադրել Սովետական իշխանության ձեռնարկումներին, պրովոկացիոն միջոցներով դժգոհություն սերմանել գյուղացիների մեջ՝

Սովետական իշխանության նկատմամբ։ Որպես այդ գյուղի ամենաակտիվ սովետական աշխատողը, Մ. Խուշոյանը իր շուրջը համախմբելով գյուղի աշխատավորներին, մերկացնում է թշնամու արարքները և անհաշտ պայքար տանում նրանց դեմ։

Այդ պատճառով էլ դաշնակցական-կուլակային թափթփուկները որոշում են տեռորիստական ակտ կազմակերպել Մ. Խուշոյանի դեմ, որը և կատարում են 1925 թ. հուլիսի 26-ի գիշերը՝ սպանելով նրան։ Այդ տեռորիստական ակտի կազմակերպիչներն ու ղեկավարները եղել են դաշնակցական-կուլակային տարրերը։

1926 թ. հոկտեմբերի 8—19-ը Երևանում տեղի է ունենում այդ սպանության կազմակերպիչների ու մասնակիցների դատավարությունը։ Սովետական արդարադատությունն իր արժանի պատիժն է տալիս Մ. Խուշոյանի տեռորիստական սպանության կազմակերպիչներին ու մասնակիցներին։

Պարտիական-սովետական ակտիվ աշխատողների դեմ դասակարգային թշնամու և նրա գործակալների կողմից այդպիսի տեռորիստական ակտեր են կազմակերպվում նաև ռեսպուբլիկայի մի քանի այլ վայրերում (Բասարգեչար, Դարալագյազ և այլն), ակտեր, որոնց կազմակերպիչները նույնպես հայտնաբերվում և սովետական արդարադատության կողմից պատժվում են։

Դասակարգային թշնամին փորձում էր օգտագործել նաև սովետները, կոոպերատիվ կազմակերպությունները, գյուղատնտեսական վարկային ընկերությունները և այլն։ Սովետների, ինչպես նաև կոոպերատիվ ու մյուս կազմակերպությունների ընտրություններն անցնում էին սուր դասակարգային պայքարի պայմաններում։ Կուլակային-կոնտրռևոլյուցիոն տարրերը գործադրում էին ամեն միջոց՝ թափանցելու այդ կազմակերպությունների մեջ։ Այդ պայքարում աշխատավորական մասսաները համախմբելով Կոմունիստական պարտիայի շուրջը, վճռական հարվածներ են հասցնում թշնամուն։ Սակայն որոշ շրջաններում, ուր այդ պայքարը տեղական աշխատողների կամ կազմակերպությունների կողմից թերագնահատվում էր և անհրաժեշտ չափով չէր ղեկավարվում, թշնամին վարպետորեն օգտվում էր դրանից։ Թաքնվելով սովետական կարգերի բարեկամի կամ լոյալության քողի տակ, թշնամուն որոշ դեպքերում հաջողվում էր սողոսկել սովետները, կոոպերացիայի ցանցը և սովետական այս կամ այն օրգանները իր քայքայիչ, հակասովետական գործը կատարելու համար։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Սովետական

երկրում նոր տնտեսական քաղաքականության կիրառումը սոցիալիզմի արտաքին և ներքին թշնամիների որոշ մասի կողմից այն ժամանակ գնահատվեց որպես մի քաղաքականություն, ըստ որի կոմունիստները «էվոլյուցիա» և ներքին «վերասերում» են կատարում դեպի կապիտալիզմը, նահանջելով ռևոլյուցիայի նվաճումներից։ Այդ ուղղությունը կոչվում էր սմենովեխականություն, որի իդեոլոգն էր ռուսական սպիտակգվարդիական Ուստրյալովը[1]։

1922 թ. մարտին, ՌԿ(բ) պարտիայի XI համագումարում ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի քաղաքական հաշվետվության մեջ Վ. Ի. Լենինը պարտիական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրեց սմենովեխականության վտանգի դեմ ուժեղ պայքար մղելու հարցի վրա։ «Ես ուզում էի այս կապակցությամբ (այսինքն նէպի սկզբում թույլ տրված նահանջը կանգնեցնելու կապակցությամբ— Ս. Հ.) շոշափել այն հարցը,— ասել է Վ. Ի. Լենինը,— թե ի՞նչ է բոլշևիկների նոր տնտեսական քաղաքականությունը՝ էվոլյուցիա՞, թե՞ տակտիկա։ Այդպես դրին հարցը սմենովեխականները, որոնք, ինչպես դուք գիտեք, ներկայացնում են էմիգրանտական Ռուսաստանում պատվաստված մի հոսանք, մի հասարակական-քաղաքական հոսանք, որի գլուխ կանգնած են խոշորագույն կադետական գործիչները, նախկին կոլչակյան կառավարության մի քանի մինիստրները— մարդիկ, որոնք այն համոզմանն են եկել, թե Սովետական իշխանությունը ռուսական պետություն է կառուցում, և այդ պատճառով էլ հարկավոր է գնալ նրա հետևից։

...Թշնամին ասում է դասակարգային ճշմարտությունը, մատնանշելով այն վտանգը, որ կանգնած է մեր առաջ։ Թշնամին ձգտում է, որ այդ վտանգն անխուսափելի դառնա։ Սմենովեխականներն արտահայտում են հազարավոր ու տասնյակ հազարավոր ամեն տեսակ բուրժուաների կամ սովետական ծառայողների, մեր նոր տնտեսական քաղաքականության մասնակիցների տրամադրությունը։ Դա հիմնական և իրական վտանգ է։ Եվ այդ պատճառով էլ այդ հարցի վրա պետք է դարձնել գլխավոր ուշադրությունը. իսկապես, ո՞վ կհաղթի»[2]։

Սմենովեխականությունն իր արտահայտությունը գտավ նաև օտարերկրյա կապիտալիստներին ծառայագրված, հայ ժողովրդի

---

[1] Նրանք ունեին իրենց օրգան „Смена Вех" ամսագիրը, որի էջերում այդպիսի դաղափարների պրոպագանդա էին անում։ Այդտեղից էլ առաջացավ այդ հոսանքի անունը՝ սմենովեխականություն։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 336—337 և 339։

կատաղի թշնամի դաշնակների և մյուս կոնտրռևոլյուցիոն ուժերի մոտ, որոնք նույնպես, ինչպես ռուսական սպիտակգվարդիականները, հույս էին դրել Սովետական իշխանության վերասերման և Հայաստանում կապիտալիզմի վերականգնման վրա։ Հայկական սմենովեխականության խտացած արտահայտությունը հանդիսացավ ոչ անհայտ դաշնակցական Հ. Բաջաղնունու «Դաշնակցությունն այլևս անելիք չունի» գիրքը, որի առաջադրած գաղափարները իր ժամանակին Կոմպարտիայի կողմից մերկացվեցին ու ջախջախվեցին։ Սոցիալիստական տնտեսության արագընթաց զարգացումը և Սովետական պետության հզորացումը ջարդ ու փշուր արեցին սմենովեխականների հույսերը մեր երկրում կապիտալիզմի վերականգնման մասին, Սովետական պետության վերասերման մասին։

Սովետական կարգերի կատաղի թշնամիները քաղաքում ստանալով բանվոր դասակարգի վճռական հակահարվածը, իրենց ուշադրությունը կենտրոնացրել էին գյուղի վրա՝ հույս ունենալով օգտագործել գյուղացիության մեջ եղած դժգոհ և տատանվող տարրերին, նրանց բարձրացնել սովետական կարգերի դեմ։ Այդ թշնամիների ուշադրությունը կենտրոնացված էր այն բանի վրա, որպեսզի գյուղում կատարվող քայքայիչ աշխատանքի միջոցով վիժեցնեն բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, խախտեն պրոլետարիատի դիկտատուրայի հիմքերը և կործանեն այդ դիկտատուրան։ Այդ ևս նրանց չի հաջողվում, որովհետև գյուղի աշխատավորությունը սերտ կերպով համախմբվելով Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության շուրջը, վճռական հակահարված է տալիս թշնամուն ու ջախջախում նրանց։

Գյուղում աշխատանքները բարելավելու և դասակարգային թշնամուն հակահարված տալու նպատակով Կոմունիստական պարտիան խնդիր դրեց մեծ աշխատանք ծավալել գյուղում անպարտիական ակտիվից բազմաքանակ կադրեր ստեղծելու, նրանց բոլշևիզմի ոգով դաստիարակելու համար։ Անհրաժեշտ էր, օգնության կարգով, քաղաքից գյուղ ուղարկել ստուգված և փորձված կադրեր, աշխուժացնել սովետների աշխատանքը, բարձրացնել այդ աշխատանքի որակը, բացահայտել գյուղում կատարվող աշխատանքի թերությունները և լիկվիդացնել դրանք։ Այդ նպատակով 1924 թ. հոկտեմբերին ՌԿ(բ)Պ Կենտկոմը հրավիրում է գյուղական բջիջների քարտուղարների խորհրդակցություն, «Պրավդա» թերթում անց է կացվում գյուղական կոմբջիջների աշխատանքի ստուգատես։

Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության

կողմից գործադրվեցին մի շարք կարևոր միջոցառումներ չքավոր ու միջակ գյուղացիությանն օգնելու նպատակով։ Տեղական սովետների համար ստեղծվեց տեղական կայուն բյուջե, որին հատկացվեց գյուղատնտեսական հարկի $^1/_3$ մասը։ 1924 թ. օգոստոսին տեղի ունեցավ արդյունաբերական ապրանքների մեծածախ գների իջեցում։ 1925 թ. պակասեցվեց գյուղատնտեսական հարկը՝ հօգուտ չքավոր և միջակ գյուղացիական տնտեսությունների։

Չքավոր գյուղացիությանը համախմբելու և գյուղում դասակարգային թշնամուն ավելի ուժեղ հակահարված տալու նպատակով, ՌԿ(բ)Պ Կենտկոմի 1925 թ. Հոկտեմբերյան պլենումի որոշմամբ գյուղում կազմակերպվեցին չքավորական խմբեր։ Ինչպես նշում է Ի. Վ. Ստալինը, չքավորական խմբերի կազմակերպումը նպատակ ուներ վերացնել չքավորության փոշիացածությունը, նրան հնարավորություն տալ Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության օգնությամբ կազմակերպվելու որպես ինքնուրույն քաղաքական ուժ, հանդիսանալով պրոլետարիատի դիկտատուրայի համար ամուր հենարան գյուղում կուլակի դեմ մղվող պայքարում, միջակ գյուղացիության համար մղվող պայքարում[1]։

Ինչպես Սովետական բոլոր ռեսպուբլիկաներում, այնպես էլ Հայկական ՍՍՌ-ում այդ միջոցառումների անշեղ կենսագործումը չքավոր ու միջակ գյուղացիությանն է՛լ ավելի համախմբեց Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության շուրջը։ Այդ միջոցառումները խոշոր նշանակություն ունեցան կուլակության և մյուս բոլոր կոնտրռևոլյուցիոն ուժերի դեմ մղված պայքարում, գյուղատնտեսության վերականգնումը մինչև վերջ հասցնելու գործում։

1924 թ. մայիսին Երևանում գումարվում է ՀԿ(բ) պարտիայի 3-րդ համագումարը, որը քննության է առնում գյուղում կատարվող աշխատանքի վիճակը, կոոպերացիայի և ներքին առևտրի հարցը, երիտասարդության մեջ տարվելիք աշխատանքների մասին և մի շարք այլ հարցեր։ Համագումարի ընդունած որոշումները գյուղատնտեսության և կոոպերացիայի մասին զգալի չափով նպաստեցին ռեսպուբլիկայի գյուղում տարվող աշխատանքների բարելավմանը, չքավոր ու միջակ գյուղացիությանը ավելի սերտ կերպով համախմբելով Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության շուրջը։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 7, էջ 367։

1924 թ. մայիսին, Ռկ(բ) պարտիայի XIII համագումարը, առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, առաջադրեց գյուղը կոոպերացնելու լոզունգը։ Միաժամանակ համագումարը որոշում ընդունեց աշխատավոր գյուղացիությանը տրվող ձեռնտու վարկի միջոցներն ու հնարավորություններն ընդլայնելու, այդ բնագավառից էլ վաշխառուներին դուրս մղելու մասին։

Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ պրոլետարիատի պետությունը անհրաժեշտ նախադրյալներ էր ստեղծում անհատական տնտեսությունների և հետամնաց տեխնիկայի վրա հենված գյուղը սոցիալիստական ռելսերի վրա դնելու համար, կապիտալիստական տարրերի դեմ նոր գրոհ սկսելու համար։

1924—1925 թվականներին Սովետական Հայաստանում զգալի տեղաշարժեր էին կատարվել գյուղատնտեսական կոոպերացիայի գծով։ 1924 թ. ՀՍՍՌ Ժողկոմսովետի Տնտեսական խորհրդակցության որոշմամբ այդ ժամանակ կազմակերպվում է Հայաստանի Գյուղկոոպկենտրոնը, որի առաջ խնդիր է դրվում ապահովել պարտիայի և կառավարության որոշումների իրականացումը գյուղատնտեսության կոոպերացման ուղղությամբ։ Նա պետք է շրջանի և միջակ գյուղացիությանը միավորեր կոոպերացիայի տարբեր ձևերի մեջ, նրանց վարկավորեր և օգներ անհրաժեշտ ինվենտարով ու այլ միջոցներով (մեքենաներ, սերմացու, պարարտանյութ և այլն) և ամեն կերպ նպաստեր գյուղում արտադրական կոոպերացիայի զարգացմանը, նրա ամրապնդմանը։

1924 թ. օգոստոսի 30-ին հրապարակվում է Հայկական ՍՍՌ Կենտգործկոմի և Ժողկոմսովետի դեկրետը գյուղատնտեսական կոոպերացիայի մասին։ Դեկրետի առաջին կետում ասված է. «ՀՍԽՀ սահմաններում գյուղատնտեսությամբ կամ նրա հետ կապված արհեստներով զբաղվող բոլոր քաղաքացիներին, որոնք համաձայն ՀՍԽ Հանրապետության Սահմանադրության, վայելում են խորհուրդներում ընտրելու և ընտրվելու իրավունք, թույլատրվում է կազմել կոոպերատիվ միություններ»[1]։ Այնուհետև դեկրետով սահմանված է այդ միությունների խնդիրները՝ կոոպերատիվ հիմունքներով կատարել գյուղատնտեսության արտադրության կազմակերպումը, գործիքների, սերմացուի, պարարտանյութի, աղնվացեղ անասունների և այլ միջոցների հայթայթումը, հողերի բարելավու-

---

[1] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, 1924, № 11, հոդված 43։

մը և այլն։ 1924 թ. սեպտեմբերին Հայաստանում գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ ընդգրկված էին գյուղացիական տնտեսությունների 6,11 տոկոսը [1]։ Նույն ամսին Երևանում գումարվում է Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների առաջին համագումարը, ուր Գյուղկոոպկենտրոնի փոխարեն ձևավորվում է այդ կոոպերատիվների միությունը՝ Հայգյուղկոոպը և ընտրվում է նրա վարչությունը։ Մշակվում է Հայգյուղկոոպի Կանոնադրությունը, որը նախատեսում էր «կազմակերպել գյուղատնտեսական կոոպերատիվներ, որոնց միջոցով մտցնել գյուղատնտեսական մշակույթի կատարելագործված ձևեր, պատրաստել գյուղական տնտեսության համար անհրաժեշտ իրեր, գյուղական տնտեսությունը մատակարարել արտադրության միջոցներ, վերամշակել և վաճառահանել գյուղատնտեսական մթերքներ և գործադրել գյուղատնտեսության արտադրողականությունը բարձրացնող այլ միջոցներ»[2]։

Պարտիական կազմակերպությունների գլխավորությամբ, սովետական ապարատի և Հայգյուղկոոպի կատարած աշխատանքների շնորհիվ, գնալով գյուղում կոոպերացիան ծավալվում և ամրապնդվում էր։ Նրա ձևերն էին՝ կաթնատնտեսական արտելը, գյուղատնտեսական խառը, վարկային, այգեգործական, մեղվաբուծական, ծխախոտագործական, բամբակագործական, շերամապահական ընկերությունները և այլն։ Դրանք գյուղատնտեսական կոոպերացիայի պարզ ձևերն էին, որոնք ուղի էին հարթում կոոպերացիայի ավելի բարձր ձևերին անցնելու համար։

Ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում Սովետական Հայաստանում զգալի աշխատանքներ են կատարվել նաև սովխոզների շինարարության գծով։ Չորս սովխոզներ ստեղծվել էին Սովետական իշխանության հաստատման առաջին շրջանում՝ պետականացված խոշոր կալվածքների բազայի վրա։ Առաջին սովխոզը կազմակերպվել էր Երևանի մոտ, որը իր բնույթով այգեգործական էր։ 1925 թ. նրա այգիների տարածությունը կազմում էր մոտ 70 հեկտար։ Երկրորդ սովխոզը կազմակերպվել էր Կոտայքի շրջանում։ Սա ուներ հացահատիկային և այգեգործական բնույթ։ 1923 թ. այս սովխոզում սկսվում է ծխախոտի լավագույն տեսակների մշակությունը, որը տալիս է բավականին հաջող

---

[1] Տես Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., Ժողովածու, էջ 270։
[2] Նույն տեղում, էջ 271։

արդյունք։ Նրա փորձի հիման վրա Կոտայքի շրջանում և ապա ռեսպուբլիկայի մի շարք այլ շրջաններում ծավալվում է ծխախոտի մշակությունը։ 1925 թ. այս սովխոզի մշակելի հողերի տարածությունը հավասար էր 110 հեկտարի։ Սովխոզն ուներ նաև Հայաստանում առաջին ցեղական խոզաբուծարանը։ Երրորդ սովխոզը ստեղծվել էր Էջմիածնի շրջանի Փարաքար գյուղի մոտ։ Այն ժամանակ նա Հայաստանի ամենամեծ սովխոզն էր, 500 հեկտարից ավելի վարելահողերի տարածությամբ։ Այս սովխոզը զբաղվում էր մի քանի կուլտուրաների մշակությամբ, որոնցից գլխավորներն էին հացահատիկը, բամբակը, բրինձը, իսկ այգեգործությունը այդ սովխոզում այն ժամանակ դեռևս ոչ մեծ տեսակարար կշիռ ուներ։ Չորրորդ սովխոզը կազմակերպվել էր Լոռվում։ Նա հիմնականում այգեգործական-պտղաբուծական սովխոզ էր, որի հողերի տարածությունը հասնում էր 220 հեկտարի։ Այս սովխոզներն իրենց գործունեությամբ և կազմակերպված աշխատանքներով օրինակ էին ցույց տալիս աշխատավոր գյուղացիությանը։

Արդյունաբերության վերականգնման ուղղությամբ ևս աշխատանքներն ավելի լայն ճակատով սկսվում են 1923 թվականից։ Հնի վերականգնման զուգընթաց, սկիզբ է առնում մի շարք նոր ճյուղերի շինարարությունը։

Ըստ արդյունաբերության առանձին ճյուղերի, այդ վերականգնումն ընթացել է հետևյալ կերպ.

Պղնձի արդյունաբերությունը, որը նախապատերազմյան շրջանում տալիս էր Հայաստանի ամբողջ արդյունաբերության արտադրանքի 60 տոկոսը, իմպերիալիստական պատերազմի և դաշնակների ռիրապետության տարիներին ամբողջովին քայքայվել էր։ Սովետական իշխանության հաստատումից հետո մինչև 1924 թվականը հնարավոր չեղավ այն գործի դնել։ 1924 թ. կեսերից սկսվում են Ղափանի և Ալավերդու պղնձահանքերի և պղնձաձուլական գործարանների վերականգնման աշխատանքները։ Ղափանի պղնձաձուլական գործարանը սկսում է պղնձի ձուլումը։ Ալավերդում մինչև այդ գործարկվել էին պղնձարդյունաբերության օժանդակ ճյուղերը— ծծմբաթթվի, աղաթթվի, ծծմրաքարի, պղնձի արջասպի և քիմիական այլ նյութերի մշակումը, իսկ 1924 թվականից սկսվում է պղնձի ձուլումը։ Սկսվում են աշխատանքները Շամլուղի հանքերի վերականգնման համար։ Պղնձաձուլական գործարաններին սպասարկելու համար վերականգնվում են նաև որոշ էլեկտրական շարժիչներ։ Ալավերդու հանքերի վերականգնման համար

1924—1925 տնտեսական տարում Համամիութենական բյուջեից բաց է թողնվում 1.010.000 ռուբլի, որը խոշոր չափով նպաստում է պղնձարդյունաբերության վերականգնմանը։ Աճում է բանվորների թիվը, վերականգնվում և բարեկարգվում են բանվորական բնակարանները։

Չնայած այս բոլորին, Սովետական Հայաստանի արդյունաբերության այս գլխավոր ճյուղը վերականգնման շրջանում չկարողացավ հասնել նախապատերազմյան մակարդակին։ Եթե 1913 թ. Հայաստանում արտադրվել է 5.580 տոննա կարմիր պղինձ, ապա 1925—1926 տնտեսական տարում արտադրվել է միայն 801 տոննա[1]։ Դրա գլխավոր պատճառն այն էր, որ պղնձարդյունաբերության վերականգնումն սկսվեց բավականին ուշ։ Հետագա զարգացման արագ տեմպերը կարճ ժամանակամիջոցում ապահովեցին պղնձարդյունաբերության վերականգնումը և անցումը նախապատերազմյան մակարդակից։

Սովետական Հայաստանի արդյունաբերության կարևոր ճյուղերից մեկը հանդիսացող գինու-կոնյակի արտադրության գծով մինչև 1924 թվականի նոյեմբերը աշխատում էր միայն «Արարատ» գործարանը (նախկին Շուստովի գործարանը)։ Այդգործության ծավալման և բերքի ավելացման շնորհիվ, 1923—1924 թվականներին այդ միակ գործարանը չէր ապահովում հումքի վերամշակումը։ 1924 թ. գործարկվում են Ղամարլուի (այժմ Արտաշատի) գինու գործարանը, Դավալուի գինեգործական բաժանմունքը և որոշ չափով ընդարձակվում է «Արարատ» գործարանը. 1925—1926 տնտեսական տարում գինու արտադրությունն արդեն անցել էր նախապատերազմյան մակարդակից։ 1913 թ. Հայաստանում արտադրվել է 1.884,3 հազար լիտր գինի, իսկ 1925—1926 տնտեսական տարում՝ 2.233,8 հազար լիտր գինի[2]։ Կոնյակի և սպիրտի արտադրությունը մոտենում էր նախապատերազմյան մակարդակին։

1924 թ. վերանորոգվում և ընդարձակվում են Երևանի երկու կաշեգործարանները, որոնց արտադրանքը գնալով ավելանում էր, մոտենալով նախապատերազմյան մակարդակին։

Էլեկտրոէներգիայի արտադրությունը վերականգնման շրջանի վերջում՝ 1925—1926 տնտեսական տարում, նախապատերազմյան

---

[1] Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода, стр. 33.

[2] Նույն տեղում։

Հրջանի համեմատ ոչ միայն վերականգնվել, այլև ավելացել էր 3,5 անգամ։

Այդ բոլորին զուգընթաց, ինչպես նշեցինք, հիմնվել էին արդյունաբերության մի շարք նոր ճյուղեր, որոնք նախասովետական Հայաստանում գոյություն չեն ունեցել։ Այդ ճյուղերն էին՝ պեմզայի, կարբիդի և տեքստիլ արդյունաբերությունը։

Հայաստանի խոշոր արդյունաբերության արտադրանքը 1925—1926 տնտեսական տարում հավասար է եղել նախապատերազմյան արտադրանքի 74,4 տոկոսին։ Իսկ ամբողջ արդյունաբերության արտադրանքը 1925 թ. հասել էր 1913 թ. արդյունաբերության արտադրանքի 75,5 տոկոսին։

Հաջող կերպով առաջ էր գնում նաև երկաթուղային տրանսպորտի վերականգնումը։ 1922 թ. համեմատ, 1925 թ. վագոնների վերականգնումն ավելացել էր 3,8 անգամ, շոգեքարշերը՝ 5,2 անգամ։ Վերանորոգվել էին հին գծերը և քայքայված շատ կամուրջներ։ Երկաթուղային տրանսպորտն իր աշխատանքներով արդեն կարողանում էր ապահովել օրըստօրև ավելացող փոխադրումների պահանջները։ Զգալի չափով ավելացել էր վագոնների և շոգեքարշերի քանակը։

1925 թ. մարտին Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների 4-րդ համագումարը լսում է Ժողովրդական Տնտեսության Խորհրդի զեկուցումը ռեսպուբլիկայի արդյունաբերության և տրանսպորտի վերականգնման ընթացքի մասին։

Զեկուցման առթիվ ընդունած որոշման մեջ համագումարը նշել է, որ խոշոր աշխատանքներ են կատարված արդյունաբերության և տրանսպորտի վերականգնման և նոր ճյուղերի ստեղծման գործում։

Իր որոշման մեջ համագումարը կառավարության առաջ խնդիր է դնում նոր թափով զարգացնել Ղափանի և Ալավերդու պղնձարդյունաբերությունը, լայնացնել պեմզայի արտադրությունը, ուժեղ թափով շարունակել Լենինականի մանվածքային գործարանի կառուցումը, ընդարձակել գինու, կոնյակի և սպիրտի արտադրությունը, արագացնել Երևանի և Լենինականի հիդրոէլեկտրակայանների կառուցումը, ընդարձակել կաշվի արդյունաբերությունը, Երևանի մեխանիկական գործարանը և այլն։

Հայաստանի Կ(բ)Պ 4-րդ համագումարը (1925 թ. դեկտեմբեր) ամփոփելով ժողովրդական տնտեսության վերականգնման ար-

դյունքները ռեսպուբլիկայում, այդ մասին իր ընդունած բանաձևում նշել է. «Կոմունիստական կուսակցության տնտեսական քաղաքականությունը մեր երկրում առաջ բերեց տնտեսական վերելք։ ...Ընթացիկ տարում մեր տնտեսությունն ընդհանուր առմամբ ավարտեց իր վերականգնման պրոցեսը։ Տնտեսության բարձրացումը առաջադրում է մեզ արագացնելու ժողովրդական տնտեսության արտադրողական ուժերի զարգացումը. ներկայումս կուսակցության համար իր ամբողջությամբ դրված է այն խնդիրը, որ ավելացվեն մեր տնտեսության մեջ սոցիալիստական էլեմենտները ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում, որի համար համագումարը առաջարկում է ձեռք առնել մի շարք տնտեսական ձեռնարկումներ»[1]։ Այդ խնդիրները մեծ հաջողությամբ կենսագործվում են հետագա տարիներին։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հաղթահարելով վերականգնման շրջանի դժվարությունները, Սովետական Միության բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը իրենց անձնվեր աշխատանքով 1924—1925 թվականներին հասել էին խոշոր հաջողությունների։ Այդ տնտեսական տարում Սովետական կառավարությունը 385 միլիոն ռուբլի էր ներդրել կապիտալ շինարարության մեջ։ Գյուղատնտեսությունը մոտեցել էր նախապատերազմյան մակարդակին, տալով նրա 87 տոկոսը։ Արդյունաբերությունը տալիս էր 1913 թ. արտադրանքի երեք քառորդը։ Մեծ հաջողությամբ իրագործվում էր երկրի էլեկտրիֆիկացիան։ Զգալի նվաճումներ էին ձեռք բերված էկոնոմիկայում կապիտալիստական մնացորդների դեմ մղվող պայքարի ասպարեզում։ 1921—1925 թվականներին Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվել է 25,77 միլիոն ռուբլի[2]։

Ժողովրդական տնտեսության մեջ հաստատ կերպով ամրապնդվում էին սոցիալիստական սիստեմի իշխող դիրքերը։

Ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ Սովետական Հայաստանում, մեծ հաջողություններ էին ձեռք բերված Սովետական պետական և կոոպերատիվ առևտրի, ապրանքաշրջանառության ծավալման գործում։ Չորս տարվա ընթացքում՝ 1922—1923 տնտեսական տարվանից մինչև 1925—1926 տնտ-

---

[1] ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, 1925, գործեր, Ֆ 1, գ. 1, թ. 336։

[2] Տես Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода, стр. 39. Ереван, 1926 и Соц. Стр. Арм. ССР, стр. 19.

-ական տարին, Սովետական Հայաստանում մանրածախ առևտուրը աճել էր ավելի քան յոթ անգամ։ Այդ նույն ժամանակամիջոցում մասնավոր առևտրի տեսակարար կշիռը մանրածախ առևտրի մեջ 86 տոկոսից իջել էր 45,9 տոկոսի [1]։ Մեծածախ առևտուրը ևս արագ կերպով առաջ էր գնում, որի մեջ իշխող դիրքերը պատկանում էին պետական և կոոպերատիվ սեկտորին։

Ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի վերականգնմանը, ապրանքաշրջանառության ծավալմանը և աշխատավորական մասսաների նյութական դրության բարելավմանը զգալի չափով խանգարում էր միասնական և կայուն դրամի բացակայությունը ՍՍՌՄ-ում։ Այն դրամական ռեֆորմը, որ տեղի էր ունեցել 1923 թ. սկզբներին Անդրկովկասում՝ Անդրֆեդերացիայի կազմակերպումից հետո (որով վերացվեցին Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների առանձին դրամները և սահմանվեց Անդրկովկասյան միասնական դրամ), ճիշտ է, որոշ չափով բարելավեց դրությունը, սակայն նա քիչ փոփոխություններ մտցրեց երկրամասի տնտեսական կյանքում։ Կայուն չէր դրամի վիճակը նաև սովետական մյուս ռեսպուբլիկաներում։

1924 թ. սկզբներին անհրաժեշտություն առաջացավ ամբողջ Սովետական Միությունում դրամական ռեֆորմ անցկացնել, որը խոշոր չափով պետք է նպաստեր սովետական ռեսպուբլիկաների ֆինանսական դրության ամրապնդմանը, երկրի տնտեսական կյանքի և աշխատավորների նյութական-կենցաղային պայմանների բարելավմանը։ Միաժամանակ տնտեսական հաշվարկի միջոցով նա լայն հնարավորություններ պետք է ստեղծեր նորանոր կուտակումների և սոցիալիստական շինարարության հետագա լայն ծավալման համար։ Սովետական պետության և բանվոր դասակարգի հետ միասին նոր դրամական ռեֆորմով շահագրգռված էին նաև մանր արտադրողները — գյուղացիությունը, արհեստավորները, որովհետև կայուն դրամի գոյությունը կնպաստեր նրանց մոտ եղած ավելցուկների անարգել իրացմանը, ապրանքայնության բարձրացմանը։

Մյուս կողմից դրամական ռեֆորմը վճռական հարված էր սոցիալիզմի թշնամիներին՝ սպեկուլյանտներին և կուլակներին։ Սպեկուլյանտները, օգտվելով մինչև ռեֆորմը եղած դրամի ընկնող կուրսից, տարբեր մեքենայություններով սպեկուլյացիա էին կատարում, իսկ կուլակները կողոպտում էին չքավոր և միջակ գյու-

---

[1] *Տես ՀՍԽՀ Կառավարության զեկուցումը Անդրկենտգործկոմի 8-րդ նստաշրջանում, Երևան, 1926, էջ 52։*

զացիությանը։ Ահա թե ինչու նրանք ամեն կերպ փորձում էին խանդարել և ձախողել դրամական ռեֆորմը։ Նրանց շահերի արտահայտիչ տրոցկիստները բացարձակ կերպով հանդես եկան դրամական ռեֆորմի դեմ, պահանջելով, որ չերվոնեցի կողքին գոյություն ունենան հին դրամները, որոնք մեծ չափով կուտակված էին նեպմանական և կուլակային տարրերի մոտ։

Վճռական հարվածներ տալով սոցիալիզմի բոլոր թշնամիներին, Սովետական իշխանությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ 1924 թ. կեսերին անցկացրեց դրամական ռեֆորմ։ Ամբողջ Սովետական Միության մեջ վերացվեցին հին դրամները։ Սահմանվեց միասնական կայուն վալյուտա-չերվոնեցը։ Միաժամանակ պարտիայի Կենտկոմի և կառավարության որոշմամբ տեղի ունեցավ լայն ապառման ապրանքների գների իջեցում։ Նշվեցին նոր միջոցառումներ սովետական և կոոպերատիվ առևտրի հետագա ընդարձակման և առևտրի բնագավառից կապիտալիստական էլեմենտներին դուրս մղելու համար։

Սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում տեղի ունեցող վերելքը և դրամական ռեֆորմը, խոշոր չափով բարելավեցին բանվորների, աշխատավոր գյուղացիների և ինտելիգենցիայի նյութական-կենցաղային պայմանները։ Բանվորների և գյուղացիների նյութական դրության բարելավման հիման վրա խոշոր չափով աճեց մասսաների քաղաքական ակտիվությունը։ Ամրապնդվեց պրոլետարիատի դիկտատուրան։ Աճեց Կոմունիստական պարտիայի հեղինակությունն ու աղդեցությունը։

1921—1925 թվականներին արդյունաբերության և տնտեսական շինարարության ծավալման ղուգընթաց, Սովետական Հայաստանում ղգալի չափով ավելացել էր բանվորների և ծառայողների թիվը։ Արդյունաբերության և շինարարության մեջ 1922 թ. աշխատում էին 2152 բանվոր-ծառայող, 1925 թ. հոկտեմբերին այդ թիվը հասել էր 8082-ի։ Տրանսպորտի և կապի բնագավառում բանվոր-ծառայողների թիվը նույն ժամանակամիջոցում 3111-ից հասել էր 4620-ի, մտավոր աշխատանքով զբաղվողների թիվը 7808-ից հասել էր 10164-ի։ Ամբողջությամբ վերցրած, Հայաստանի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում աշխատող բանվոր-ծառայողների թիվը (բացի գյուղատնտեսությունից) 1922 թ. 14.183-ից 1925 թ. հասել էր 23.828-ի[1]։ Բերված թվերը ցույց են տալիս, որ

[1] Տես Աշխատանքը Հայաստանում վիճակագրական տեղեկատու, 1923—1927 թթ., հրատ. Համխ-ի, ԿՎՎ և ԱշխԺԿ-ի, 1927, էջ 2—3։

ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին ամենից ավելի աճել էր արդյունաբերության և շինարարության մեջ աշխատող բանվոր-ծառայողների քանակը (մոտ 4 անգամ), իսկ ամբողջությամբ վերցրած բանվոր-ծառայողների քանակն ավելացել էր մոտ երկու անգամ։ Այդպիսի աճումը տեղի էր ունեցել մեկ կողմից գործաղրկության վերացման, մյուս կողմից գյուղից քաղաք եկած նոր աշխատողների հաշվին։

Բանվոր-ծառայողների քանակի այդպիսի աճման զուգընթաց, ռեսպուբլիկայում զգալի չափով ավելացել էր աշխատավարձի ֆոնդը, որը 1923 թ. 1,5 միլիոն ռուբլուց 1926 թ. սկզբին հասել էր 15 միլիոն ռուբլու։ Աշխատավորների նյութական բարեկեցության լավացման գործին խոշոր չափով նպաստեցին Սովետական պետության կողմից աշխատավորների ապահովագրական գումարների ավելացումը, աշխատանքի պայմանների լավացումը, ինչպես նաև առողջապահության բնագավառում ներդրված խոշոր գումարները։

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության արագընթաց վերականգնումը և սովետական շինարարության առաջին հաջողությունները ռեսպուբլիկայում փայլուն կերպով ցույց տվեցին, որ Սովետական կարգերի հաղթանակի շնորհիվ հայ ժողովուրդը ձեռք բերելով իր ազատությունն ու անկախությունը և դառնալով իր Հայրենիքի իսկական տերը, Սովետական Միության բազմազգ և բազմամիլիոն ժողովուրդի հարազատ ընտանիքում կերտում էր իր երջանիկ ապագան։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման և որպես դրա անմիջական արդյունք տնտեսական ու քաղաքական կյանքում տեղի ունեցած արմատական վերափոխությունների շնորհիվ հին, բուրժուական հայ ազգի փլատակների վրա սկսվեց նոր, սոցիալիստական հայ ազգի ծագումն ու կազմավորումը։ Խոսելով Սովետական երկրում հին, բուրժուական ազգերի լիկվիդացման ու նրանց փլատակների վրա նոր, սոցիալիստական ազգերի ծագման ու զարգացման մասին, Ի. Վ. Ստալինը ասում է. «...Բուրժուական ազգերի լիկվիդացումը նշանակում է ոչ թե ընդհանրապես ազգերի լիկվիդացում, այլ միմիայն բուրժուական ազգերի լիկվիդացում։ Հին, բուրժուական ազգերի փլատակների վրա ծագում և զարգանում են նոր, սոցիալիստական ազգեր, որոնք անհամեմատ ավելի համախմբված են, քան ամեն մի բուրժուական ազգ, որովհետև նրանք դերծ են բուրժուական ազգերին մաշող անհաշտելի դասակարգա-

յին հակասություններից և անհամեմատ ավելի համաժողովրդական են, քան որևէ բուրժուական ազգ»[1]։

Եթե հին, բուրժուական հայ ազգը, ինչպես և մյուս բոլոր հին ազգերը ծագել ու զարգացել են բուրժուազիայի և նրա նացիոնալիստական պարտիաների ղեկավարությամբ, որոնք այդ ազգերին հրահրել են միմյանց դեմ, նրանց մեջ սերմանել և արմատավորել են թշնամանք ու ատելություն, նրանց պատերազմի են քաշել կամ թալանել, ոչնչացրել են մյուս ազգերին, ապա նոր, սոցիալիստական ազգերը, այդ թվում նաև սոցիալիստական հայ ազգը, ծագել ու ձևավորվում էր պրոլետարիատի և նրա ավանգարդի՝ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, որի ազգային քաղաքականության հիմքում ընկած է ազգերի և ռասաների սուվերեն իրավահավասարության, նրանց ազատության ու եղբայրության անխախտ դաշինքի, փոխադարձ վստահության և փոխադարձ օգնության գաղափարը, ինտերնացիոնալիզմի գաղափարը՝ ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի։ Բանվոր դասակարգը և նրա ավանգարդը՝ Կոմունիստական պարտիան հանդիսանում են այն ուժը, որ ամրակցում է այդ նոր, սոցիալիստական ազգերին և ղեկավարում է նրանց։

Ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, նույնպես և Սովետական Հայաստանում ժողովրդական տնտեսության վերականգնումը տեղի ունեցավ Սովետական պետության զարգացման առաջին փազի սկզբում։ Այդ փազն ընդգրկում է պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումից մինչև շահագործող դասակարգերի լիկվիդացումն ընկած ժամանակաշրջանը։ Տվյալ ժամանակաշրջանում ամբողջ Սովետական պետության հիմնական խնդիրն էր,— ինչպես նշել է Ի. Վ. Ստալինը,— ճնշել տապալված դասակարգերի դիմադրությունը, կազմակերպել երկրի պաշտպանությունն ինտերվենտների հարձակումից, վերականգնել արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, պայմաններ նախապատրաստել կապիտալիստական էլեմենտների լիկվիդացման համար։ Այդ խնդիրներին համապատասխան մեր Սովետական պետությունն ուներ երկու հիմնական ֆունկցիա՝ տապալված դասակարգերի ճնշումը երկրի ներսում և երկրի պաշտպանությունը արտաքին հարձակումից։ Բացի դրանից, կար նաև մի երրորդ ֆունկցիա, որը, սակայն, տվյալ ժամանակաշրջանում դեռ լուրջ զարգացում չէր ստացել։ Այդ սովետական պետական օրգանների տնտեսական-կազմակերպչական և կուլտուրական դաստիարակչական աշխատանքն էր։

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 387։

Հանդիսանալով սոցիալիստական հասարակության վերնաշենքի վճռական էլեմենտներից մեկը, Սովետական պետությունը, որպես սոցիալիստական հասարակության հիմնական ու գլխավոր կազմակերպող ուժը, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ կատարել ու կատարում է հսկայական դեր։ Նրա ձեռքումն է կենտրոնացված երկրի քաղաքական, տնտեսական միասնական ղեկավարությունը։ Նա իր հսկայական կազմակերպական դերը մեծ հաջողությամբ իրականացրել և իրականացնում է հզոր պետական ապարատի միջոցով, աշխատավորների դեպուտատների սովետների, մինիստրությունների, գիտա-կուլտուրական հիմնարկությունների, մամուլի և մյուս օղակների ու կազմակերպությունների միջոցով։

Գնահատելով Սովետական պետության առանձնահատուկ դերը սոցիալիստական էկոնոմիկայի ստեղծման և նրա հարաճուն զարգացման գործում, «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության մեջ Ի. Վ. Ստալինը գրում է. «Սովետական իշխանության առանձնահատուկ դերը բացատրվում է երկու հանգամանքով՝ առաջին, նրանով, որ Սովետական իշխանությունը պետք է ոչ թե փոխարիներ շահագործման մի ձևը մյուս ձևով, ինչպես այդ տեղի ուներ հին ռևոլյուցիաներում, այլ պետք է լիկվիդացներ ամեն մի շահագործում. երկրորդ, նրանով, որ երկրում սոցիալիստական տնտեսության պատրաստի սաղմերի իսպառ բացակայության պատճառով նա պետք է, այսպես ասած, «դատարկ տեղում» ստեղծեր տնտեսության նոր, սոցիալիստական ձևեր։

Այդ խնդիրը անշուշտ դժվարին էր և բարդ, նախադեպեր չունեցող։ Այնուամենայնիվ Սովետական իշխանությունը պատվով կատարեց այդ խնդիրը»[1]։

Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ ամեն մի հասարակական-էկոնոմիկական ֆորմացիա ունի իրեն հատուկ հիմնական էկոնոմիկական օրենքը, որը որոշում է տվյալ ֆորմացիայի բուն էությունը։ Ըստ որում այդ հիմնական օրենքը, ինչպես և էկոնոմիկական զարգացման մյուս օրենքները, քաղաքատնտեսության օրենքները, ոչ թե ստեղծվում են մարդկանց կողմից, այլ «օբյեկտիվ օրենքներ են, որոնք արտացոլում են տնտեսական զարգացման՝ մարդկանց կամքից անկախ տեղի ունեցող պրոցեսը»[2]։

---

[1] Ի. Վ. Ստալին, Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում, Հայպետհրատ, Երևան, 1953, էջ 17—18։

[2] Գ. Մալենկով, Հաշվետու զեկուցում պարտիայի XIX համագումարին ՀամԿ(բ)Պ կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, Երևան, 1952, էջ 128։

Պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակի շնորհիվ մեր Երկրում կապիտալիստական սիստեմի ու նրա էկոնոմիկական օրենքների վերացմամբ և տնտեսության սոցիալիստական սիստեմի ստեղծմամբ կապիտալիզմի էկոնոմիկական օրենքները մեզ մոտ իրենց տեղը զիջեցին հասարակության զարգացման նոր, ավելի բարձր աստիճանի՝ սոցիալիզմի էկոնոմիկական օրենքներին։

Մեր երկրի ժողովրդական տնտեսության արագ վերականգնման, սոցիալիստական շինարարության ծավալման և նրա հետագա մեծագույն հաղթանակների գործում վճռական նշանակություն է ունեցել և ունի Սովետական պետության կողմից արտադրության գործիքների ու միջոցների հանրայնացումը, դրանք ամբողջ սովետական ժողովրդի սեփականություն դարձնելը։ Այդ պատմական ակտով մեր երկրում լիակատար ասպարեզ ստացավ արտադրողական ուժերի բնույթի արտադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության էկոնոմիկական օրենքը։

Սոցիալիզմի հիմնական էկոնոմիկական օրենքը, որը ձևակերպել է Ի. Վ. Ստալինը, մեր երկրում գործողության մեջ է մտել Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ շրջանից։ Այդ օրենքի էական դծերն ու պահանջներն են «ամբողջ հասարակության նյութական և կուլտուրական հարաճուն պահանջմունքների առավելագույն բավարարման ապահովում՝ բարձրագույն տեխնիկայի բազայի վրա սոցիալիստական արտադրության անընդհատ աճման և կատարելագործման միջոցով»[1]։ Ի. Վ. Ստալինը միաժամանակ ձևակերպել է ժամանակակից մոնոպոլիստական կապիտալիզմի հիմնական էկոնոմիկական օրենքը, որի գլխավոր դծերն ու պահանջներն են հանդիսանում «կապիտալիստական առավելագույն շահերի ապահովում՝ տվյալ երկրի բնակչության մեծամասնության շահագործման, քայքայման ու աղքատացման միջոցով, ուրիշ երկրների, հատկապես հետամնաց երկրների ժողովուրդների ստրկացման ու սիստեմատիկ կողոպտման միջոցով, վերջապես, պատերազմների և ժողովրդական տնտեսության ռազմականացման միջոցով, որոնք օգտագործվում են ամենաբարձր շահույթներ ապահովելու համար»[2]։

---

[1] Ի. Վ. Ստալին, Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՍՌ-ում, էջ 93։

[2] Նույն տեղում, էջ 89—90։

Ինչպես հայտնի է, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո հնարավոր չեղավ մեր երկրում կապիտալիզմը միանգամից լիկվիդացնել։ Կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանը մեզ մոտ տևեց մոտ երկու տասնամյակ, որը հարուստ է զարգացող սոցիալիզմի և տապալված, բայց միանգամից չոչնչացված կապիտալիզմի միջև տեղի ունեցած սուր պայքարով։

ՍՍՌՄ-ում կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանը բնորոշ է եղել տարբեր կացութաձևերի առկայությամբ։ Ինչպես ցույց է տվել Վ. Ի. Լենինը, այն ժամանակ մեր երկրում դեռևս գոյություն ունեին հինգ կացութաձև՝ նատուրալ, ապրանքային արտադրություն, մասնավոր կապիտալիզմ, պետական կապիտալիզմ և սոցիալիստական կացութաձև։ Առաջատար կացութաձևը հանդիսանում է սոցիալիստականը, որը ստեղծվել է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո։ Արտադրության միջոցների հանրայնացումը, որը հենց առաջին իսկ շրջանում իրականացվեց պրոլետարիատի դիկտատուրայի կողմից և սկսեց վճռական դեր կատարել ժողովրդական տնտեսության մեջ, նշանակում էր, որ մոնոպոլիստական կապիտալիզմի հիմնական էկոնոմիկական օրենքը մեզ մոտ կորցրել էր ուժը, իր տեղը զիջելով սոցիալիզմի հիմնական էկոնոմիկական օրենքին։ Այդպիսով, սոցիալիզմի հիմնական էկոնոմիկական օրենքը սկսեց գործողության մեջ մտնել Սովետական պետության գոյության առաջին իսկ շրջանից։ Բայց քանի որ ՍՍՌՄ-ում այն ժամանակ դեռևս գոյություն ուներ հինգ կացութաձև, այդ պատճառով էլ սոցիալիզմի հիմնական էկոնոմիկական օրենքը ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին, ինչպես և կապիտալիզմից սոցիալիզմին անցման հետագա ժամանակաշրջանի որոշ էտապում իր գործողության համար դեռևս լայն ասպարեզ չստացավ։ Սոցիալիստական շինարարության բուռն ծավալման զուգընթաց, սոցիալիզմի հիմնական էկոնոմիկական օրենքը աստիճանաբար ավելի ու ավելի ուժ էր ստանում իր գործողությունների համար։ Իսկ հետագայում, սոցիալիզմի լիակատար հաղթանակի շնորհիվ նա գործողության մեջ մտավ իր ամբողջ ուժով։

Ժողովրդական տնտեսության վերականգնման ու նրա հետագա զարգացման գործում կարևորագույն նշանակություն է ունեցել և ունի ժողովրդական տնտեսության պլանաչափ (պրոպորցիոնալ) զարգացման էկոնոմիկական օրենքը։

Ի. Վ. Ստալինը ցույց է տալիս, որ այդ օրենքը կարող է հարկ եղած էֆեկտը տալ միայն այն դեպքում, երբ կա որոշակի խնդիր և երբ ժողովրդական տնտեսության պլանավորումը և զարգացումը բխում է այդ խնդրից։ Առաջնորդվելով այդ պահանջներով և Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ճիշտ կերպով պլանավորելով ամբողջ երկրի, բոլոր ազգային ռեսպուբլիկաների, այդ թվում նաև Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման գործը, Սովետական պետությունը կարողացավ հաջողությամբ իրականացնել այն և մեր երկիրը կանգնեցնել զարգացման մի նոր էտապի՝ սոցիալիստական ինդուստրացման էտապի առաջ։

* * *

Նվաճողական-իմպերիալիստական պատերազմների զոհ դարձած և իրենց Հայրենիքից հեռացած հարյուր հազարավոր հայ աշխատավորներ, որոնք շահագործվում ու տառապում էին կապիտալիստական տարբեր երկրներում՝ մեծ ուշադրությամբ հետևում էին Սովետական Հայաստանի զարգացման ու նոր սոցիալիստական կյանքի կառուցման ընթացքին։ Չնայած ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակների ու մյուս կոնտրռևոլյուցիոն ուժերի ամեն տեսակի հակասովետական պրոպագանդային, կապիտալիստական երկրներում գտնված հայ աշխատավորության խոշոր մասը, Հայաստանում սովետական կարգերի հաստատման հենց սկզբից, մեծ խանդավառությամբ ողջունում է ազատագրված Սովետական Հայաստանին և նրա առաջին հաջողությունները, իր պատրաստակամությունն է հայտնում սիրելի Հայրենիքում մասնակից դառնալու սոցիալիստական շինարարության մեծ գործին։ Այդ ժամանակվանից արտասահմանյան հայության մեջ ծավալուն շարժում է սկսվում Հայրենիք վերադառնալու համար։

Սովետական Հայաստանի կառավարության անունով Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի տարբեր երկրներում գտնվող հայ աշխատավորության կողմից բազմաթիվ դիմումներ ու նամակներ են ուղարկվում՝ Սովետական Հայաստան վերադառնալու թույլտվություն ստանալու համար։

«Մենք, համաշխարհային պատերազմի և դրամատեր պետությանց նենգամիտ քաղաքականության զոհերս,— ասված է ՀՍՍՌ Կառավարության անունով ուղարկված դիմումներից մեկում,— քաջ

համոզված ենք, որ վերջնական ու ապահով բնակության համար միակ հարմար վայրն է Հայաստանը, որ օժտված է ներկայիս աշխատավորության շահերը պաշտպանող և ընկերավարական օրենսդրությամբ օժտված վարչությամբ մը։

Մեր քայքայված բույներուն տեղ նորերը կառուցելու, մեր քայքայված տնտեսությունը վերականգնելու միակ հնարավորությունն ու միջոցը մենք կգտնենք այն, որ հաստատվենք Հայաստանի մեջ և հոն ապրինք որպես պարկեշտ ու աշխատավոր քաղաքացիներ, մասնակցելով վերաշինության ընդհանուր գործին։ Այս խոր համոզումով ահա կդիմենք ձեզ, որպեսզի բարյացակամ տրամադրությամբ մը նկատի առնեք մեր դիմումը և տաք մեզ անհրաժեշտ արտոնություն մտնելու Հայաստան»[1]։

Սեբաստիայի հայ աշխատավորության 1924 թ. դիմումի մեջ, որն ուղարկված է ՀՍՍՌ Ժողկոմսովետի անունով, ասված է. «Ստորագրյալ ընիկ սեբաստացի և շրջանի հայրենակիցներս, կյանքի բնական պահանջմունքին ու զմեզ շրջապատող քաղաքական և տնտեսական պայմաններեն հարկադրված Ձեզի կուգանք ներկայացնելու մեր խնդիրքը որպես Ձեզ և Ձեր սկզբունքներու և աշխարհայացքներուն հավատարիմ մշակներ ու զավակներ։ Գիրկը դալ կրաղձանք Խորհրդային Հայաստանի,— այս է մեր խնդրանքը, որոշումը և անհուն բաղձանքը։

Հիացած ենք Ձեր 4 տարիներու կատարած հսկայական գործերով...

Կողջունենք այն հոյակապ աշխատանքը, որ հիացում պատճառած է ոչ միայն Ձեր զավակներուն, այլ ամբողջ աշխարհին»[2]։

Տասնյակ հազարավոր հայեր բուռն ցանկություն են հայտնում ազատվել կապիտալիստական շահագործումից և վերադառնալ Հայրենիք, մասնակից լինել սոցիալիստական շինարարությանը։ Սովետական Կառավարության կողմից այդ հարցը շուտով ստանում է իր դրական լուծումը։ Արտասահմանյան հայ աշխատավորությունն սկսում է առաջին ներգաղթը դեպի Սովետական Հայաստան։ Չնայած մի շարք դժվարություններին, ներգաղթը իրականացվում է հաջող և կազմակերպված։

1921—1925 թվականներին կապիտալիստական տարբեր երկրներից Սովետական Հայաստան են ներգաղթել ավելի քան 25.000

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 40c/113, գ. 367, թ. 62։
[2] Նույն ֆոնդ, գ. 252, թ. 101։

հայ աշխատավորներ [1]։ Ներգաղթածները տեղավորվում են գլխավորապես Երևանում, Էջմիածնում, Վեդիում, ինչպես նաև Լենինականում։ Ստանալով հող և աշխատանք, իրենց հայրենի օջախում, նրանք դառնում են սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցներ։

6. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1921—1925 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սովետական Միության Կոմունիստական պարտիան միշտ էլ մեծագույն ուշադրություն է դարձրել կուլտուրական շինարարության վրա, այն դիտելով որպես կոմունիզմի համար մղվող պայքարի ամենակարևոր հարցերից մեկը։ «Սովետական բանվորա-գյուղացիական ռեսպուբլիկայի մեջ լուսավորության գործի ամբողջ դրվածքը ինչպես քաղաքական-լուսավորական բնագավառում առհասարակ, այնպես էլ հատկապես արվեստի բնագավառում,— գրել է Վ. Ի. Լենինը,— պետք է տոգորված լինի պրոլետարիատի դասակարգային պայքարի ոգով՝ հանուն նրա դիկտատուրայի նպատակների հաջող իրագործման, այսինքն՝ հանուն բուրժուազիայի տապալման, հանուն դասակարգերի ոչնչացման, հանուն մարդու կողմից մարդու ամեն տեսակ շահագործման վերացման»[2]։

Այդպիսի խոշորագույն տեղ տալով կուլտուրական շինարարության հարցին կոմունիզմի համար մղվող պայքարում, Վ. Ի. Լենինը միաժամանակ նշել է բանվոր դասակարգի և նրա ավանդարդի՝ Կոմունիստական պարտիայի դերը այդ շինարարության գործում։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը լուսավորությունը, կրթությունը և մասսաների քաղաքական դաստիարակությունը դիտում են որպես նոր մարդկանց՝ կոմունիստական հասարակություն կառուցող, բազմակողմանիորեն զարգացած մարդկանց ձևավորման միասնական, անբաժանելի պրոցես։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան մարքսիզմի հաղթանակն էր նաև իդեոլոգիայում։ Նա ստեղծեց բոլոր անհրաժեշտ պայմանները սոցիալիստական կուլտուրայի հարատև զարգացման համար, կրթությունը, գիտությունը, արվեստը բարձր հիմունքների վրա դնելու, դրանք ժողովրդական լայն մասսաների շահերին ծառայեցնելու համար, մարքսիզմ-լենինիզմի գաղափար-

---

[1] Տես Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., ժողովածու, էջ 30, և Հայկական ՍՍՌ Պետական կենտր. Արխիվ, ֆ. 40 c 113, գ. 494, թ. 7։

[2] Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 31, Երևան, 1952, էջ 388։

ները աշխատավորական մասսաների սեփականություն դարձնելու և կյանքում կենսագործելու համար։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի առաջին իսկ օրերից, որպես կուլտուրական շինարարության առաջնահերթ խնդիրներ տվյալ ժամանակաշրջանում, մեր պարտիան Սովետական պետության և աշխատավորական մասսաների առաջ խնդիր դրեց ոչնչացնել բուրժուա-կալվածատիրական հին ապարատը նաև կուլտուրական բնագավառում և դրա փոխարեն ստեղծել նոր, սովետական ապարատ, նախորդ սերունդների առաջավոր կուլտուրական նվաճումները դարձնել ժողովրդական լայն մասսաների սեփականություն և բազմակողմանի, հետևողական ու սիստեմատիկ աշխատանք ծավալել նյութական, կուլտուրական ու հոգևոր նոր արժեքներ ստեղծելու, այն հարաճուն կերպով զարգացնելու համար։

Այդ նպատակն էին հետապնդում Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո Սովետական կառավարության հրատարակած դեկրետները՝ մամուլի, ժողովրդական լուսավորության, անգրագիտության վերացման, գեղարվեստական հիմնարկների և դրադարանների ազգայնացման, դրքային ֆոնդի և գիտական արժեքների պահպանության ու կուլտուրական շինարարության մյուս հարցերի վերաբերյալ։ Անշեղ կերպով առաջնորդվելով այդ դեկրետներով, Սովետական Ռուսաստանի կառավարությունը 1917—1920 թվականներին հսկայական աշխատանք էր կատարել կուլտուրական շինարարության բնագավառում։

Կուլտուրական շինարարության գործում Սովետական Ռուսաստանի կուտակած չորսամյա հարուստ փորձի հիման վրա Սովետական Հայաստանի կառավարությունը իր գոյության առաջին իսկ օրերից արմատական ձեռնարկումներ է կատարում ռեսպուբլիկայում կուլտուրական շինարարությունը կազմակերպելու և ծավալելու ուղղությամբ։ Առաջնահերթ խնդիրներ են դառնում դպրոցական ցանցի, կուլտուր-լուսավորական հիմնարկների, մամուլի, հրատարակչական գործի և մյուս բոլոր կուլտուրական հաստատությունների արմատական վերակառուցումը, այդ բոլորը աշխատավորական մասսաների կոմունիստական դաստիարակության հզոր միջոց դարձնելը։

Սովետական Հայաստանի կառավարությունը հիմնովին ոչնչացնում է դպրոցական ցանցի ղեկավարման հին ապարատը, դպրոցը անջատում է եկեղեցուց և օրենքով արգելում է այնտեղ կրո-

նական առարկաների դասավանդումը[1], հոգևորականներին զրկում է դպրոցներում դասավանդելու իրավունքից[2]։ Կառավարության դեկրետով ապզայնացվում են հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկությունները[3]։

Սովետական Հայաստանի կառավարությունը նյութական բավականին դժվարին պայմաններում, ձեռնամուխ է լինում նոր, սովետական դպրոցի կազմակերպման և նրա աշխատանքների ամրապնդման գործին։ Լիկվիդացնելով դպրոցական ցանցի ղեկավարման հին ապարատը, դպրոցը անջատելով եկեղեցուց, վերացնելով այնտեղ կրոնական առարկաների դասավանդումը, Սովետական Հայաստանի կառավարությունը դպրոցը շահագործող դասակարգերի շահերին ծառայելու գործիքից դարձրեց ժողովրդական լայն մասսաներին սպասարկելու, նրանց կուլտուրական-քաղաքական մակարդակը բարձրացնելու, կոմունիստական հասարակակարգի ակտիվ ու գիտակից կառուցողներ պատրաստելու կարևորագույն միջոց։

Դրանով իսկ մեզ մոտ սկիզբ է առնում ժողովրդական կրթության գործը, երիտասարդ սերնդի կոմունիստական դաստիարակության, աշխատավորական լայն մասսաների կրթության, նոր կյանքի կառուցման ասպարեզում նրանց ստեղծագործական նախաձեռնության և ակտիվության բարձրացման գործը։ Նոր, սովետական դպրոցի խնդիրները հանճարեղ կերպով բնորոշել է Վ. Ի. Լենինը 1919 թվականին, ՌԿ(բ)Պ ծրագրի նախագծում, որտեղ ասված է.

«Ժողովրդական լուսավորության բնագավառում ՌԿՊ-ն իրեն խնդիր է դնում մինչև վերջ հասցնել դպրոցը բուրժուազիայի դասակարգային տիրապետության գործիքից այդ տիրապետության խորտակման գործիք դարձնելու, հավասարապես և հասարակության դասակարգային բաժանումը լիակատար ոչնչացնելու գործը, որ սկսվել է 1917 թվականի Հոկտեմբերյան ռևոլյուցիայից։ Դպրոցը պետք է դառնա պրոլետարիատի դիկտատուրայի գործիք, այսինքն՝ ոչ միայն ընդհանրապես կոմունիզմի սկզբունքների հաղորդիչ, այլև պրոլետարիատի իդեական, կազմակերպական, դաստիարակող ազ-

---

[1] Տես ՀԽՍՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1921, էջ 43։

[2] Տես նույն տեղում, էջ 44։

[3] Տես նույն տեղում, էջ 16։

դեցության հաղորդիչ աշխատավոր մասսաների կիսապրոլետարական և ոչ-պրոլետարական շերտերին՝ շահագործողների դիմադրության լիակատար ճնշման և կոմունիստական կարգի իրականացման համար»[1]։

Լենինյան այդ ցուցումների հիման վրա ռեսպուբլիկայում հաստատ կերպով առաջ էր գնում նոր կազմակերպված ժողովրդական կրթության գործը, որը իր վրա էր կենտրոնացրել ամբողջ սովետական հասարակայնության ուշադրությունը։

Չնայած նյութական-ֆինանսական մեծ դժվարություններին, Հայաստանում ծավալուն աշխատանք սկսվեց տարրական, ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների կազմակերպման ուղղությամբ։ 1914—15 ուսումնական տարում Հայաստանում եղել են 446 տարրական, 6 ոչ լրիվ միջնակարգ և 7 միջնակարգ դպրոցներ՝ 34.739 սովորողներով և 1146 ուսուցիչներով[2]։ Դաշնակների տխրահռչակ տիրապետության ժամանակ՝ նրանց ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով փակվեց եղած դպրոցների մեծ մասը։ 1919 թ. Հայաստանում մնացել էր միայն 166 դպրոց՝ 18.600 աշակերտով։ Այդ դպրոցներն էլ գտնվում էին ծայրահեղ քայքայված վիճակում։ Հայաստանում Սովետական իշխանության հաստատման առաջին շրջանում 1921—22 ուսումնական տարում մասսայական դպրոցների թիվը ռեսպուբլիկայում հասնում էր 506-ի, 1923—24 ուսումնական տարում՝ 640-ի, իսկ 1925—26 ուսումնական տարում՝ 758-ի[3]։ Այդ դպրոցներում ընդգրկված աշակերտների թիվը 1921—22 ուսումնական տարում եղել է 47.462, 1923—24 ուսումնական տարում՝ 58.508, իսկ 1925—26 ուսումնական տարում՝ 76.989[4]։

Այսպիսով, ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի վերջում, 1925—26 ուսումնական տարում, նախապատերազմյան շրջանի համեմատությամբ տարրական, ոչ լրիվ և միջնակարգ դպրոցների քանակը ավելացել էր մոտ 63 տոկոսով, իսկ նրանցում ընդգրկված աշակերտների թիվը՝ ավելի քան երկու անգամ։ 1919 թվականի համեմատությամբ այդ նույն ուսումնական

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, Երևան, 1951, էջ 146։

[2] Социалистическое строительство Арм. ССР (1920—1940 гг.), Ереван, 1940, стр. 108, 109 и 112.

[3] Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., ժողովածու, Երևան, 1926, էջ 292։

[4] Տես նույն տեղում։

տարում Հայաստանում եղած դպրոցների թիվը ավելացել էր ավելի քան 4,5 անգամ, ներանցում սովորողների թիվը՝ 4 անգամ։

Ի հակադրություն նախկին դպրոցի, որը սովորողներին տալիս էր սահմանափակ գիտություն և պատրաստում էր շահագործող դասակարգերին հլու սպասարկուներ, սովետական դպրոցը՝ առաջնորդվելով մարքսիստական-լենինյան գաղափարներով և դրանց հիման վրա կազմակերպված նոր ծրագրերով, աշխատավորական մասսաների երեխաներին դաստիարակում է կոմունիստական ոգով։

Կառավարության որոշմամբ դասավանդումը դպրոցում սկսվեց տեղի ունենալ մայրենի լեզվով [1]։ Սահմանվեց ձրի ուսուցում։ Դրանով ավելի լայն հնարավորություն տրվեց բանվորների, գյուղացիների և աշխատավորական մյուս շերտերին ու նրանց երեխաներին բարձրացնելու իրենց կուլտուրական մակարդակը, դառնալու սոցիալիստական հասարակակարգի ակտիվ կառուցողներ։

Դպրոցական ցանցի այդպիսի ընդարձակումը, ձրի ուսուցման սահմանումը, մայրենի լեզվով դասավանդելը Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության խոշորագույն հաղթանակներից մեկն էր մեզ մոտ։

1921 թվականի հունիսից ռեսպուբլիկայում հիմնադրվում է Պատանի կոմունարների (պատկոմների) կազմակերպությունը, (1922 թ. պիոներական), որը սկսում է խոշոր դեր կատարել պատանեկության մեջ ուսուցման և ֆիզիկական դաստիարակության գործը լավ կազմակերպելու, դպրոցում գիտակցական կարգապահությունը ամրապնդելու, պատանեկության դպրոցական և արտադպրոցական աշխատանքները բարելավելու, դպրոցին և ուսուցչությանը օգնելու գործում։ Պիոներական կազմակերպության աշխատանքները կատարվում էին Կոմերիտմիության անմիջական ղեկավարությամբ, համառ պայքար մղելով նաև սկաուտիզմի դեմ։

Նոր, սովետական դպրոցը իր խնդիրը կարող էր հաջողությամբ իրականացնել միայն այն դեպքում, եթե ապահովված լիներ անհրաժեշտ քանակությամբ և որակյալ ուսուցչական կազմով, եթե ուսուցչությունը, դպրոցի այդ հիմնական ու վճռական ուժը, հասկանար Սովետական իշխանության պատմական դերը և ակտիվ կերպով ընդգրկվեր սոցիալիստական շինարարության մեջ։

Սակայն Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ շրջանից զգացվում էր մանկավարժական կադրերի

[1] Տես ՀԽՍՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2-րդ. Պետհրատ, Էջմիածին, 1921, էջ 20։

խիստ պակաս։ Հին կադրերի որոշ մասը դեռևս տատանվում էր, իսկ մի մասը թշնամաբար էր տրամադրված Սովետական իշխանության նկատմամբ։ Այդ պատճառով էլ, հենց սկզբից, Սովետական իշխանությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում մանկավարժական կադրերի ընտրության, նրանց որակի բարձրացման ու դաստիարակության գործի վրա։ Թշնամական տարրերը զրկվում են դպրոցներում դասավանդելու իրավունքից, իսկ մյուս մասի հետ դաստիարակչական լուրջ աշխատանքներ են սկսվում։ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները միաժամանակ մերկացնում և վճռական հակահարված են հասցնում դասակարգային թշնամու՝ դաշնակների, կուլակների և մյուս տականքների մեքենայություններին, որոնց նպատակն էր քայքայում առաջացնել ուսուցչության մեջ, նրան ուղղել Սովետական իշխանության դեմ, դրանով իսկ կազմալուծել նոր, սովետական դպրոցը։

Խոսելով ուսուցչական կադրերի և նոր մանկավարժության խնդիրների մասին, 1918 թ. հունիսի 5-ին Վ. Ի. Լենինն ասել է. «Չի կարելի սահմանափակվել ուսուցչական նեղ գործունեության շրջանակներով։ Ուսուցչությունը պետք է միաձուլվի աշխատավորների ամբողջ պայքարող մասսայի հետ։ Նոր մանկավարժության խնդիրն է՝ ուսուցչական գործունեությունը կապել հասարակության սոցիալիստական կազմակերպման խնդրի հետ»[1]։

Առաջնորդվելով լենինյան այդ ցուցումով, Հայաստանի բոլշևիկները ՌԿ(բ)Պ Կենտկոմի և Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի ղեկավարությամբ 1921—1925 թթ. ծավալուն աշխատանք են տանում ուսուցչական կադրերի պատրաստման ուղղությամբ, նրանց սոցիալիստական շինարարությանը, երիտասարդ սերնդի կոմունիստական դաստիարակությանը ակտիվ մասնակիցներ դարձնելու ուղղությամբ։ Սերտորեն համախմբվելով Սովետական իշխանության և Կոմունիստական պարտիայի շուրջը, ռեսպուբլիկայի ուսուցչական կադրերը բոլոր ուժերով լծվում են կոմունիստական հասարակության կառուցման մեծ գործին։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին մասսայական դպրոցների արագ աճման զուգընթաց, խոշոր չափով աճում են նաև ուսուցչական կադրերը։ Ինչպես տեսանք, 1914—15 ուսումնական տարում Հայաստանի դպրոցներում աշխատել են 1146 ուսուցիչ։ 1921—22 ուսումնական տարում Սովետական

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, Երևան, 1951, էջ 556։

Հայաստանում աշխատող ուսուցչության թիվը հասնում է 1081-ի, իսկ 1925—26 ուսումնական տարում այն արդեն հասել են 2232-ի [1]։ Այսպիսով, 1925—26 ուսումնական տարում, նախապատերազմյան շրջանի համեմատությամբ, Սովետական Հայաստանում ուսուցչության թիվը կրկնապատկվել էր։ Ըստ որում ուսուցչական աշխատանքի առաջ էին քաշվել որոշ քանակությամբ նոր կադրեր՝ բանվորներից ու գյուղացիներից։

Սակայն այս բնագավառում այն ժամանակ կային լուրջ դժվարություններ։ Աչքի էր ընկնում այն փաստը, որ մանկավարժական կադրերի միայն չնչին մասը ուներ բարձրագույն կրթություն։ Նրանց զգալի մասը ուներ միջնակարգ կրթություն, իսկ որոշ մասը՝ թերի միջնակարգ[2], որը խոշոր չափով հարվածում էր դասավանդման որակին։

Այդ բացը որոշ չափով լրացնելու նպատակով Հայաստանի Սովետական կառավարությունը 1921—1925 թթ. կազմակերպում է մի շարք դասընթացներ՝ ուսուցիչների վերապատրաստման նպատակով։ Այդ թվականների ընթացքում ռեսպուբլիկայում 2004 ուսուցիչներ սովորում են վերապատրաստման կուրսերում[3]։

Եղած ուսուցչական կադրերին մասնագիտական միջնակարգ ու բարձրագույն կրթություն տալու և նորերը պատրաստելու նպատակով Սովետական կառավարությունը խոշոր ուշադրություն է դարձնում մանկավարժական տեխնիկումների և բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպման գործի վրա։ 1923—24 ուսումնական տարում մանկավարժական տեխնիկումներ են բացվում Երևանում, Լենինականում և Ստեփանավանում։ Բացի այդ՝ միջնակարգ դպրոցների վերջին դասարաններում դասավանդվում էին մանկավարժական առարկաներ։ Միջնակարգ դպրոցների շրջանավարտների զգալի մասը ևս ուղարկվում էր մանկավարժական աշխատանքի։

1921—22 ուսումնական տարում Երևանում և Լենինականում բացվում են ինդուստրիալ տեխնիկումներ, որոնց առաջ խնդիր էր դրված պատրաստել միջին որակի տեխնիկական կադրեր։

Արտադրության մեջ աշխատող բանվորներին միջնակարգ կրթություն տալու նպատակով 1923 թվականին Երևանում և Լենինականում բացվում են բանվորական ֆակուլտետներ (բանֆակներ).

---

1 Տես Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., ժողովածու, էջ 293։

2 Տես նույն տեղում։

3 Տես նույն տեղում, էջ 294։

որոնցում հենց սկզբից ընդգրկվում է ռեսպուբլիկայի այդ երկու արդյունաբերական կենտրոնների բանվոր երիտասարդության զգալի մասը։ 1925—26 ուսումնական տարում Երևանի բանֆակում սովորում էին 370, Լենինականի (նախկին Ալեքսանդրապոլի) բանֆակում՝ 320 հոգի [1]։ Հետագա տարիներին բանֆակների և նրանցում սովորողների քանակը ավելի է մեծանում։ Բանֆակները խոշոր դեր են կատարում բանվոր երիտասարդությունից ազգային կադրեր՝ բանվորական ինտելիգենցիա պատրաստելու գործում, կադրեր, որոնք հետագայում ավելի կատարելագործվելով, ակտիվ դեր են կատարում ռեսպուբլիկայում արտադրական-տեխնիկական աշխատանքներում, գիտության և կուլտուրայի բնագավառում, պարտիական և պետական ապարատում։

Սովետական կառավարության ջանքերով 1921 թվականի հունվարի 21-ին իր աշխատանքներն է սկսում Երևանի Պետական համալսարանը՝ ռեսպուբլիկայի առաջին բարձրագույն դպրոցը։ Սկզբնական շրջանում համալսարանն ուներ երկու ֆակուլտետ՝ բնագիտական և հասարակագիտական-գրական։ 1922 թվականին այնտեղ սովորում էր 490 հոգի [2]։ Կազմակերպման առաջին շրջանում Համալսարանը կանգնած էր մի շարք լուրջ դժվարությունների առաջ։ Պակասում էին ուսման-արտադրական հարմարությունները, ֆինանսական միջոցների մեծ պահանջ էր զգացվում, բարձրագույն դպրոցի համար չկար ազգային լեզվով գրականություն, բարձր որակի պրոֆեսորա-դասախոսական կազմի մեծ պակաս էր զգացվում և այլն։

Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության հոգատարության ու ձեռք առած լուրջ միջոցառումների շնորհիվ աստիճանաբար հաղթահարվում են այդ դժվարությունները։ Գնալով, ավելի ընդարձակվում և ամրապնդվում էին Երևանի Պետական համալսարանի աշխատանքները։ Նրա շուրջն էին համախմբվում ռեսպուբլիկայի լավագույն գիտական կադրերը։ Բացի դրանից, կառավարության հրավերով սովետական մյուս ռեսպուբլիկաներից համալսարանում մշտական աշխատանքի են գալիս մի շարք լավագույն մասնագետներ։

Այդ ժամանակվանից սկսած Երևանի Պետական համալսարանում իրենց գիտական-ստեղծագործական և մանկավարժական

---

[1] Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., ժողովածու, էջ 327։

[2] ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարիատների հաշվետվությունը 1920—1922 թթ., էջ 134։

աշխատանքներն են ծավալում Հ. Մանանդյանը, Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, որի շնորհիվ հետագայում նրանք դառնում են անվանի գիտնականներ։

Անդրկովկասյան ֆեդերացիայի և ՍՍՌՄ-ի կազմակերպման, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնության և ժողովրդական տնտեսության հաջող վերականգնման շնորհիվ դնալով բարելավվում է Հայկական ՍՍՌ ֆինանսական-տնտեսական վիճակը։ Դրան զուգընթաց՝ արագ կերպով աճում են Պետական համալսարանի ֆինանսական միջոցները և ուսումնա-արտադրական հնարավորությունները։ Աճում է նաև համալսարանի ֆակուլտետների, ուսանողության և պրոֆեսորա-դասախոսական կազմի քանակը։ Ուսուցումը աստիճանաբար դրվում է ավելի բարձր հիմքերի վրա։

1925—26 ուսումնական տարում Համալսարանն ուներ հետևյալ չորս ֆակուլտետները՝ գյուղատնտեսական, տեխնիկական, բժշկական և հասարակագիտական։ Վերջինիս մեջ մտնում էին պատմա-գրական, իրավաբանական և մանկավարժական բաժինները [1]։ Այդ ուսումնական տարում Համալսարանի բոլոր ֆակուլտետներում սովորում էր 1195 ուսանող [2]։ Պրոֆեսորա-դասախոսական կազմի քանակը 104 էր, որից 10-ը պրոֆեսորներ էին։

1925—26 ուսումնական տարում Երևանի Պետական համալսարանը տալիս է իր առաջին շրջանավարտները, թվով 37 հոգի, որից 15-ը գյուղատնտեսական, իսկ 22-ը հասարակագիտական ֆակուլտետից [3]։

Հանդիսանալով ռեսպուբլիկայի գիտական կադրերի պատրաստման ու գիտական մտքի կենտրոնը, Երևանի Պետական համալսարանը խոշոր դեր է կատարում գիտական նոր կադրերի պատրաստման և սովետական գիտության տարածման գործում։ Նա հանդիսացել է այն հիմքը, որից հետագայում աճեցին ռեսպուբլիկայի մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ գյուղատնտեսական, բժշկական, մանկավարժական, պոլիտեխնիկական ինստիտուտները։

Այդ շրջանում Սովետական կառավարությունը ֆինանսական խոշոր միջոցներ է ներդնում ժողովրդական լուսավորության գործում։ Այսպես, 1921—22 ուսումնական տարում ՀՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի գծով ծախսվել է

---

1 Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., ժողովածու, էջ 305։

2 Նույն տեղում, էջ 306։

3 Նույն տեղում, էջ 307։

540.305 ռուբլի՝ ոսկով, 1923—24 ուսումնական տարում՝ 2.150.256 ռուբլի [1]։ Այդ նշանակում է, որ 1921—22 ուսումնական տարվա համեմատությամբ 1923—24 ուսումնական տարում ռեսպուբլիկայում ժողովրդական լուսավորության մեջ ներդրված գումարները ավելացել էին մոտ երկու անգամ, իսկ 1925—26 ուսումնական տարում՝ չորս անգամ։

Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ՝ տնտեսական, քաղաքական կապերի ամրապնդման զուգընթաց, գնալով ավելի ու ավելի են ամրապնդվում նաև կուլտուրական կապերը սովետական ռեսպուբլիկաների միջև։ Այդ գործում ևս առաջատար դերը պատկանում է ռուս մեծ ժողովրդին, որը ինչպես բոլոր ազգային ռեսպուբլիկաներին, նույնպես և Սովետական Հայաստանին մեծ օգնություն է ցույց տալիս կուլտուրական շինարարության գործում։ Այդ օգնությունը արտահայտվում էր մի կողմից ֆինանսական-նյութական միջոցներով, գրականությամբ, դպրոցական պիտույքներով և այլն, մյուս կողմից՝ ռուսական առաջավոր կուլտուրայի բարերար ազդեցությամբ, որը նպաստում էր ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի արագ զարգացմանը Հայաստանում։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիների հենց սկզբից Սովետական Հայաստանի երիտասարդության որոշ մասը գործուղվում է Մոսկվա, Լենինգրադ և Սովետական Ռուսաստանի այլ քաղաքները, ինչպես նաև սովետական մյուս ռեսպուբլիկաները՝ բարձրագույն կրթություն ստանալու համար։ Ավարտելով իրենց ուսումը, նրանք վերադառնում են Սովետական Հայաստան և ակտիվ դեր են կատարում ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման, սովետական դիտության, տեխնիկայի ու կուլտուրայի զարգացման գործում։

1921 թվականի դեկտեմբերին Երևանում հիմնադրվում է Սովետական Հայաստանում առաջին երաժշտական ուսումնական հաստատությունը՝ երաժշտական ստուդիան։ Աճելով և ամրապնդվելով, կարճ ժամանակամիջոցում նա ձեռք է բերում զգալի հաջողություններ, իր շուրջը համախմբելով լավագույն երաժշտագետներին։ Կառավարության որոշմամբ 1923—24 ուսումնական տարում այդ երաժշտական ստուդիայի հիման վրա կազմակերպվում է

[1] Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., ժողովածու, էջ 313։

Երևանի Պետական Կոնսերվատորիան՝ ռեսպուբլիկայի երկրորդ բարձրագույն ուսումնական հաստատությունը։

Կոնսերվատորիայի կազմակերպումը մի նոր հաղթանակ էր ազատագրված հայ ժողովրդի կուլտուրական կյանքում։

Կոնսերվատորիայից բացի, այդ ժամանակ Սովետական Հայաստանում կազմակերպվում են մի շարք այլ երաժշտական հաստատություններ՝ կուլտուրայի տան համերգային բյուրոն, ռեսպուբլիկայի Ռադիո-հաղորդման կոմիտեի երաժշտական բաժինը, Լենինականի երաժշտական ստուդիան և այլն, որոնք, Կոնսերվատորիայի հետ միասին, խոշոր դեր են կատարում սովետահայ երաժշտական կուլտուրայի զարգացման, այն աշխատավորական լայն մասսաների սեփականությունը դարձնելու գործում։

1921—1925 թվականներին Սովետական Հայաստան են դալիս երաժշտական ինտելիգենցիայի նշանավոր դեմքեր՝ Ա. Սպենդիարովը, Ռ. Մելիքյանը, Ն. Տիգրանյանը, Սպ. Մելիքյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Օ. Տեր-Գրիգորյանը, Ա. Մանուկյանը և ուրիշներ, որոնք ստեղծագործական նոր վերելք են ապրում, խոշոր չափով նպաստելով սովետահայ երաժշտական կուլտուրայի զարգացմանը։ Մյուս կողմից, հանձինս Երևանի Կոնսերվատորիայի և Մոսկվայի ու Լենինգրադի կոնսերվատորիաների[1], խոշոր աշխատանք է ծավալվում հայկական երաժշտական նոր կադրերի աճեցման, նրանց ստեղծագործական աշխատանքների ծավալման ուղղությամբ։

Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության շնորհիվ ստեղծագործ հայ ժողովուրդը նոր հնարավորություններ է ստանում զարգացնելու, առաջ տանելու իր արվեստը, այն ծառայեցնելու կոմունիստական հասարակության կառուցման շահերին։ Այս շրջանից նոր, ավելի մեծ թափով իրենց ստեղծագործական աշխատանքներն են ծավալում անվանի նկարիչներ Մ. Սարյանը, Ս. Աղաջանյանը, Փ. Թերլեմեզյանը և մյուսները։

1923 թվականին կազմակերպվում է Երևանի Գեղարվեստական տեխնիկումը։ ՀՍՍՌ [illegible] մասվետի որոշմամբ 1925 թվականին հիմնադրվում է Գիտ[illegible]ն և արվեստի ինստիտուտը։

1922 թվ[illegible] 7-ին՝ Հոկտեմբերյան սոցիալիստական Մե[illegible]յուցիայի 5-րդ տարեդարձի օրը, Երևանում բաց-

---

[1] Այդ տարիներին, ինչպես և հետագայում, մեծ քանակությամբ հայ երիտասարդներ սո[illegible]ում էին և այժմ էլ սովորում են Մոսկվայի, Լենինգրադի կոնսերվատ[illegible]ներում և երաժշտական այլ հաստատություններում։

վում է Պետական հանրային գրադարանը [1], որը հետագայում վերանվանվում է Ալ. Մյասնիկյանի անվան։ Այդ ժամանակ նրանում եղած գրքերի ընդհանուր քանակը հավասար էր 50.000-ի [2], իսկ 1925 թվականին արդեն այնտեղ կար ավելի քան 200 հազար անուն գիրք [3]։ Այդ գրադարանը դառնում է ռեսպուբլիկայի կարևորագույն կուլտուրական կենտրոններից մեկը, որից մեծ չափով օգտվում է երիտասարդությունը։ Ըստ պաշտոնական տվյալների, այն ժամանակ, միջին հաշվով, օրական 300—400, իսկ ամիսը՝ 9—10 հազար մարդ էր հաճախում Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանը [4]։

Մասսայական գրադարաններ են կազմակերպվում նաև Լենինականում, Ղարաքիլիսայում, Նոր Բայազետում, Դիլիջանում և մի շարք այլ խոշոր կենտրոններում։

Այդ տարիներին շարունակվում էր Մատենադարանի (որը այն ժամանակ դեռևս գտնվում էր Էջմիածնում) ունեցած ձեռագրերի և պատմական խոշոր արժեք ներկայացնող մյուս ֆոնդերի կարգավորումն ու հարստացումը նոր, կարևոր նյութերով, որոնք ձեռք էին բերվում ինչպես ռեսպուբլիկայի տարբեր վայրերից, նույնպես և սովետական մյուս ռեսպուբլիկաներից, հատկապես Սովետական Ռուսաստանից, մասամբ նաև Սիբիրի հայերից։ Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարիներից Մատենադարանը զգալի օգնություն է ցույց տալիս ձեռագրերի ուսումնասիրությամբ զբաղվողներին։

1921 թվականին հիմնադրվում է Երևանի Պետական թանգարանը, որը արագ կերպով աճում և հարստանում է նոր նյութերով և էքսպոնատներով։ 1925 թվականին թանգարանն ուներ հնագիտական, ազգագրական, պատմական-գրական, ռևոլյուցիոն և գեղարվեստական բաժիններ [5]։ Այդ տարիներին թանգարանը զգալի աշխատանք է կատարում կուլտուրական արժեքների հավաքման, պահպանման և նրանց ցուցադրման ուղղությամբ, հանդիսանալով մայրաքաղաքի կարևոր կուլտուրական հիմնարկներից մեկը։

Սովետական Հայաստանի կառավարության որոշմամբ 1923 թվականի ապրիլին կազմակերպվում է Հայկական ՍՍՌ Պետական

---

[1] Տես ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարիատների 1922—1923 թթ. հաշվետվությունը, էջ 233։
[2] Նույն տեղում, էջ 234։
[3] Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., ժողովածու, էջ 314։
[4] Նույն տեղում։
[5] Նույն տեղում։

կինոն։ Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի հայտնի դրույթով, ըստ որի գեղարվեստի բոլոր ճյուղերից մեզ համար ամենակարևորը կինոն է, Պետական կինոն ձեռնամուխ է լինում աշխատավորության կինոսպասարկումը կազմակերպելու և լայնորեն ծավալելու գործին։

Երևանում հիմնադրվում են երկու կինո-թատրոն («Նաիրի» և «Պրոլետար»)։ Կինո-թատրոններ են կազմակերպվում նաև Լենինականում, Կիրովականում, Դիլիջանում, Նոր Բայազետում, Ստեփանավանում և Գորիսում։ Բացի դրանից, սիստեմատիկ կերպով կինո-նկարներ են ցուցադրվում Երևանի, Լենինականի և մյուս գավառների բանվորական ակումբներում, որոնց թիվը այն ժամանակ հասնում էր 13-ի։ Այսպիսով, ռեսպուբլիկայում աշխատավորության կինո-սպասարկման գործը նոր, հաստատուն հիմքերի վրա է դրվում, որը հետագա տարիներին է՛լ ավելի է ծավալվում։

Ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի վերջին տարիներին Հայաստանի Պետական կինոն, որը 1924 թվականի ապրիլից վերանվանվում է Պետլուսկինո, սկսում է արտադրել առաջին կինոնկարները, որոնց մեջ հիշատակության արժանի է «Նամուս» կինոնկարը (ըստ վիպասան Շիրվանզադեի համանուն վեպի)։

Մինչև սովետական կարգերի հաստատումը՝ Հայաստանում կազմակերպված թատրոն չի եղել։ Ներկայացումները կրել են ոչ սիստեմատիկ ու պատահական բնույթ, որոնք կազմակերպվել են կամ սիրողներից ստեղծված տեղական խմբերի կամ ուրիշ վայրերից եկած այս կամ այն դերասանական խմբերի կողմից։ Ինչպես կուլտուրական բնագավառի բոլոր հարցերը, նույնպես և թատրոնը, անմատչելի է եղել աշխատավորության համար, մեծ մասամբ նրանք ծառայել են շահագործող դասակարգերին թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ իրենց խնդիրներով։

Սովետական իշխանության հաստատումով ստեղծվեցին բոլոր անհրաժեշտ պայմանները թատերական արվեստի զարգացման, ժողովրդի ծոցից դուրս եկած տաղանդավոր դերասանների աճման, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական թատերական արվեստի ստեղծման համար, արվեստ, որը կոչված է ծառայելու կոմունիստական հասարակության կառուցմանը, նոր, սովետական մարդկանց կոմունիստական դաստիարակության մեծ գործին։

ՀՍՍՌ Ժողկոմսովետի որոշմամբ 1921 թվականի օգոստոսին Երևանում հիմնադրվում է ռեսպուբլիկայում առաջին Պետական թատրոնը, որը հետագայում կոչվում է նշանավոր դրամատուրգ Գ. Սունդուկյանի անվամբ։ Կազմակերպման առաջին իսկ շրջանից

թատրոնն իր շուրջն է համախմբում տարբեր վայրերում ցրված լավագույն դերասանական ուժերը՝ Հ. Արելյան, Վ. Փափազյան, Ա. Ոսկանյան, Մ. Մանվելյան, և մյուսները։ Հանձին Երևանի Պետական թատրանի, ստեղծվում է Սովետական Հայաստանի արվեստի կարևոր օջախներից մեկը, որը խոշոր աշխատանք է կատարում աշխատավորության կուլտուրական սպասարկման, նրա կուլտուրական աճման գործում։ 1921—1925 թվականների ընթացքում Երևանի Պետական թատրոնը մայրաքաղաքի և ռեսպուբլիկայի մյուս շրջանների աշխատավորների համար տվել է 482 ներկայացում, որոնց ներկա են եղել 164 հազար հոգի [1]։ Գ. Սունդուկյանի, Ա. Շիրվանզադեի, Դ. Դեմիրճյանի պիեսներին զուգընթաց թատրոնը այդ տարիներին բեմադրել է ռուսական և եվրոպական կլասիկների մի շարք գործեր։

Սովետահայ գրականության ձևավորումը և զարգացումը տեղի է ունենում ռուսական սովետական գրականության բարերար ազդեցությամբ։

Այս շրջանի սովետահայ գրականության նշանավոր դեմքերն են եղել Հ. Հակոբյանը, Հ. Թումանյանը, Հ. Հովհաննիսյանը, Շ. Կուրղինյանը, Դ. Դեմիրճյանը, Մ. Արաղին, Ստ. Զորյանը, Ե. Չարենցը, Ա. Վշտունին, Ենկո-Ապերը և ուրիշները, որոնք իրենց գրական գործունեությունը սկսել էին նախքան սովետական կարգերի հաստատումը։ Սովետական կարգերի հաստատումով այս գրողների համար ստեղծագործական նոր հնարավորություններ ստեղծվեցին։ Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին. երիտասարդ սովետական գրողներից իրենց ստեղծագործություններով աչքի են ընկնում Ն. Զարյանը, Գ. Սարյանը, Հմ. Սիրասը, Սարմենը և ուրիշները։

Մեզ մոտ սկիզբ է առնում պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանի գրականությունը, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական նոր, սովետահայ գրականությունը, որի հիմնադիրն է եղել բոլշևիկ գրող Հ. Հակոբյանը։ Հայ ժողովրդի պատմական զարգացման որոշ հարցերը և շահագործողների տիրապետության, հատկապես օտարերկրյա իմպերիալիստների վարձկան դաշնակների տիրապետության ժամանակ Հայաստանի աշխատավորության ծանր վիճակը դառնում են մեր գրողների ստեղծագործությունների թեման։ Սովետահայ գրողները իրենց մի շարք

---

[1] Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., ժողովածու, էջ 318։

նոր ստեղծագործություններով արտացոլում են սոցիալիստական շինարարության ընթացքը ռեսպուբլիկայում (Հ. Հակոբյանի «Բոլշևիկ է Շիր-կանալը», Ն. Զարյանի «Ջրանցքի կապույտ երկրում» ժողովածուն, Գ. Սարյանի «Շիրակի հարսանիքը» պոեմը, Սարմենի «Դաշտերը ժպտում են» բանաստեղծությունների շարքը և այլն)։

Սովետահայ գրականության հիմնադիր Հ. Հակոբյանն իր ստեղծագործություններով հաջողությամբ արտացոլում է նաև տընտեսական շինարարությունը եղբայրական սովետական ռեսպուբլիկաներում («Վոլխովստրոյ» պոեմը)։

Սովետահայ գրողները պատկերում են բանվոր դասակարգի աշխատանքային սխրագործությունները, աշխատավոր մասսաների քաղաքական և կուլտուրական վերելքը, նրանց ակտիվացումը դյուղում, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ սոցիալիզմի թշնամիների դեմ մղվող պայքարի առանձին հարցերը, Կոմերիտմիության, պիոներական կազմակերպության աշխատանքները և այլն։ Այդ հարցերին զուգընթաց, սովետահայ գրականության հիմնական թեմաներից մեկն է դառնում 1920—1921 թվականներին Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվների ժամանակ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Հայաստանի բանվորների և գյուղացիների մղած հերոսական պայքարը՝ ընդդեմ ժողովրդի թշնամի դաշնակների, ներքին մյուս կոնտրռևոլյուցիոն ուժերի և ամերիկյան, անգլիական, ֆրանսիական ու այլ երկրների իմպերիալիստների, որոնք բոլոր միջոցներով օգնում էին այդ կոնտրռևոլյուցիոն թափթփուկներին (Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված» բանաստեղծությունը և այլն)։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին հրապարակ են գալիս նաև սովետահայ գրողների մի շարք դրամատիկական գործեր, ինչպես, օրինակ՝ Ան. Վարդանյանի «Պարտիզանները», Լ. Սաղաթելյանի «Մի կտոր հողի համար», Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազարը» և այլն։

Այդ տարիներին ձևավորվում է նաև սովետահայ ժողովրդական բանահյուսությունը, հրապարակ են գալիս արժեքավոր մի շարք ժողովրդական ստեղծագործություններ, այդ թվում՝ «Լենին փաշա» նշանավոր վիպերգը, որտեղ ցույց է տրված ժողովրդի անսահման վստահությունը, սերն ու նվիրվածությունը իր մեծ ազատարարի նկատմամբ։

Սովետահայ գրականության ձևավորումը և նրա հետագա զարգացումը տեղի է ունեցել թշնամական իդեոլոգիայի և նրա կրողնե-

րի դեմ մղված վճռական պայքարում։ Գրականության բնագավառում ևս գործում էին քողարկված թշնամական տարրեր, որոնք հետագայում մինչև վերջ մերկացվեցին և դուրս շպրտվեցին սովետական գրողների շարքերից։ Նրանք ամեն կերպ ձգտում էին քայքայել սովետական գրականությունը, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, ձախողել Կոմունիստական պարտիայի քաղաքականության կենսագործումը գրականության, կուլտուրական շինարարության և ամբողջությամբ վերցրած՝ սոցիալիզմի կառուցման գործում։

Այդ թշնամիների դեմ մղված պայքարում՝ Հայաստանի բոլշևիկները, Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի ղեկավարությամբ, ձեռք բերեցին վճռական հաջողություններ։

Այդ պայքարում կարևորագույն նշանակություն ունեցավ ՌԿ(բ)Պ Կենտկոմի 1925 թվականի հունիսի 18-ի ծրագրային բանաձևը «Պարտիայի քաղաքականության մասին գեղարվեստական գրականության բնագավառում», որը հրապարակվեց «Պրավդա» թերթում նույն թվականի հուլիսի 1-ին։ Այդ կարևոր փաստաթղթում հանրագումարի էին բերված նախորդ տարիների ընթացքում սովետական գրականության համար մղված պայքարի արդյունքները և ցույց էր տրված այն ուղին, որով ընթանալով, հետագայում պետք է էլ ավելի ծավալվեր ու զարգանար սովետական գեղարվեստական գրականությունը ամբողջ սովետական երկրում։

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում պետության կողմից կազմակերպված հրատարակչական գործ գոյություն չի ունեցել։ Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ շրջանից մեծ անհրաժեշտություն դարձավ կազմակերպելու հրատարակչական գործը, այն վերցնելով պետության ձեռքը, տպագիր խոսքի միջոցով օգնելու աշխատավորական մասսաների կոմունիստական դաստիարակությանը, սոցիալիզմի կառուցմանը։

ՀՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշմամբ 1921 թվականի հուլիսին կազմակերպվում է ռեսպուբլիկայի Պետական հրատարակչությունը (Պետհրատը), որը հրատարակում է բազմաթիվ գրքեր։ 1921 թվականից մինչև 1925 թվականի վերջերը Հայկական ՍՍՌ Պետական հրատարակչության գծով լույս են տեսել 356 անուն քաղաքական, դիտական, գեղարվեստական գրքեր և դասագրքեր՝ մոտ երկու միլիոն օրինակ ընդհանուր տիրաժով[1]։

Սովետական կարգերի հաղթանակով մարքսիզմ-լենինիզմի

[1] Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., ժողովածու, էջ 321։

կլասիկների աշխատությունների պրոպագանդան դարձավ պետական խոշորագույն նշանակություն ունեցող գործ։ Մարքսիզմի կլասիկների աշխատությունները բանվորների և գյուղացիների սեփականություն դարձնելու նպատակով, Հայաստանի Պետհրատը ձեռնամուխ է լինում Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի աշխատությունների հրատարակմանը մայրենի լեզվով։ Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններից հայերեն լեզվով լույս է տեսել ավելի քան 70 անուն աշխատություն։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների հրատարակումը մայրենի լեզվով, վճռական նշանակություն ունեցավ Սովետական Հայաստանի աշխատավորության կոմունիստական դաստիարակության, նրա քաղաքական ակտիվության բարձրացման, դասակարգային թշնամու և նրա ամեն կարգի գործակալների՝ բուրժուական նացիոնալիստների, տրոցկիստների, զինովևականների, բուխարինականների և մյուս թափթփուկների դեմ մղվող պայքարում։

Կոմունիստական. պարտիայի ղեկավարությամբ Հայաստանի Սովետական կառավարությունը, իր հաստատման առաջին իսկ օրերին ռեսպուբլիկայում օրենքից դուրս հայտարարելով կոնտրռևոլյուցիոն մամուլը և ազդայնացնելով տպարանները, ձեռնամուխ է լինում նոր, սովետական մամուլի կազմակերպման և ամրապնդման գործին։ 1920 թվականի դեկտեմբերի սկզբից Երևանում սկսվում է հայերեն լեզվով լույս տեսնել ՀԿ(բ)Պ Կենտրոնական և Երևանի Կոմիտեների ու ՀՍՍՌ Ռևկոմի օրգան «Կոմունիստ» (հայերեն լեզվով) օրաթերթը, որը 1921 թվականի հունիսից վերանվանվում է «Խորհրդային Հայաստան», իսկ 1940 թվականից՝ «Սովետական Հայաստան»։

1921 թվականի ընթացքում Սովետական Հայաստանի մայրաքաղաքում և տարբեր գավառներում հայերեն լեզվով լույս են տեսել 23 անուն նոր թերթեր և 2 անուն նոր ամսագրեր, 1922 թվականին՝ 12 անուն նոր թերթեր և 4 անուն նոր ամսագրեր, 1923 թվականին՝ 6 անուն նոր թերթեր և 7 անուն նոր ամսագրեր, 1924 թվականին՝ 5 անուն նոր թերթեր և 5 անուն նոր ամսագրեր, 1925 թվականին՝ 3 անուն նոր թերթեր և 4 անուն նոր ամսագրեր[1]։

---

[1] Տես Հայոց պարբերական մամուլը, լիակատար ցուցակ հայ լրագրության (1794—1934), կազմեց Գարեգին Լևոնյան, Երևան, 1934, էջ 111—135։

Այսպիսով, 1921—1925 թվականներին Սովետական Հայաստանում հայերեն լեզվով հրատարակվել են 49 անուն թերթեր և 22 անուն ամսագրեր բազմահազար տիրաժով։

Մայրենի լեզվով այդպիսի մեծ քանակությամբ թերթերի և ամսագրերի հրատարակումը հնարավոր եղավ միայն Սովետական իշխանության հաղթանակի, Կոմունիստական պարտիայի Լենինյան-ստալինյան իմաստուն ազգային բաղաքականության կենսագործման շնորհիվ։

Այդպիսի մեծ մասշտաբի հրատարակությունների համար Սովետական Հայաստանը այն ժամանակ չուներ անհրաժեշտ նյութական բազա՝ պոլիգրաֆ արդյունաբերություն, թուղթ և այլն։ Այս հարցերում ևս հայ ժողովրդին մեծագույն եղբայրական օգնություն է ցույց տալիս ռուս մեծ ժողովուրդը, Սովետական Ռուսաստանի կառավարությունը՝ Հայաստան ուղարկելով մեծ քանակությամբ տպագրական սարքավորում, թուղթ և այլն։

Վ. Ի. Լենինը սովետական մամուլին կոչ էր անում ամեն կերպ մերկացնել և խարազանել կապիտալիզմի մնացորդները, ծավալուն պայքար մղել նրանց դեմ, պաշտպանել և պրոպագանդել նորը, կոմունիստականը, բազմակողմանիորեն տարածել առաջավոր փորձը, ամբողջ ժողովրդական մասսաների սեփականություն դարձնել առաջավոր մարդկանց հերոսությունը [1]։ Նա սովետական մամուլի առաջ վճռական խնդիր է դրել՝ ակտիվ կերպով պայքարել աշխատանքային կարգապահության ամրապնդման, աշխատավորական մասսաների մեջ դեպի աշխատանքը նոր վերաբերմունք ցուցաբերելու, դրա կոնկրետ արտահայտությունը հանդիսացող սոցիալիստական մրցությունը. բազմակողմանիորեն ծավալելու և այդ գործում մասսաներին մոբիլիզացնելու համար։

Խոսելով բոլշևիկյան մամուլի խնդիրների մասին, դեռևս 1901 թվականին Ի. Վ. Ստալինը առանձնահատուկ կերպով ընդգծել է մարքսիստական լրագրի մշտական և ամուր կապի անհրաժեշտությունը մասսաների հետ։ «Թերթի ամենաառաջին պարտականությունն է,— գրել է Ի. Վ. Ստալինը,— որքան կարելի է մոտ կանգնել բանվորական մասսային, հնարավորություն ունենալ շարունակ ազդելու նրա վրա, լինել նրա գիտակից ու ղեկավար կենտրոնը» [2]։

Կոմունիստական պարտիայի կողմից սովետական մամուլի առաջ դրված այդ կարևորագույն խնդիրների կենսագործման ուղ-

---

[1] Տես Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, Երևան, 1951, էջ 109։

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 8։

ղությամբ ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին սովետահայ պարբերական մամուլը նշանակալից աշխատանք է կատարել։ Նա սիստեմատիկաբար պրոպագանդել է մարքսիզմ-լենինիզմի դաղափարները, Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության որոշումները, մեր պարտիայի դեկավարությամբ մերկացրել է ժողովրդի թշնամիներին, բացահայտել է մեր աշխատանքներում եղած թերությունները ու սխալները, ծավալել է անհաշտ պայքար հնի մնացորդների դեմ, նպաստել է աշխատանքային կարգապահության ամրապնդմանը։ Մամուլը լայնորեն նպաստել է ռեսպուբլիկայի աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործին, մասնակցել է ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքներին։ Այդ ուղղությամբ առանձնապես աշքի ընկնող դործ են կատարել «Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Աշխատանք» [1], «Ավանդարդ» [2], և «Բանվոր» [3] թերթերը։

Ռեսպուբլիկայում ժողովրդական տնտեսության վերականգնման, սոցիալիստական շինարարության ծավալման, մայրենի լեզվով մեծ բանակությամբ քաղաքական դրականության հրատարակման և պարբերական մամուլի լայն ծավալման դոստիգնեցյ, զարդացման նոր, ավելի բարձր շրջան է մտնում հայոց լեզուն՝ ռուսական առաջավոր կուլտուրայի և ռուսաց լեզվի բարերար ազդեցությամբ։

Ժողովրդի կուլտուրական զարդացման դործում անհրաժեշտ և դլխավոր նախադրյալը հանդիսանում է դրագիտությունը, դրականության, արվեստի, պատմության իմանալը, մարքսիզմ-լենինիզմի ամենազոր և անհաղթահարելի թեորիային տիրապետելը։

ՍՄԿ պարտիան բազմիցս ընդգծել է, որ միայն կուլտուրական մարդը կարող է հանդիսանալ առաջավոր թեորիայի կրողը, այդ թեորիայով զինված՝ կոմունիստական հասարակակարգի համար ակտիվ պայքարողը։ Միայն կուլտուրական մարդը կարող է ճիշտ կերպով դնահատել և օդտագործել ժամանակի ֆակտորը, իր աշխատանքում հասնել բարձր արտադրողականության։ Դրան հասնելու

---

[1] Օրդան Հայաստանի Արհեստակցական Միությունների Խորհրդի, լույս է տեսել 1922—1926 թվականներին։

[2] Օրդան ՀԼԿԵՄ Կենտկոմի, սկսել է լույս տեսնել 1923 թվականից։

[3] Օրդան ՀԿ(բ)Պ Լենինականի Դավկոմի և Դավգործկոմի, սկսել է լույս տեսնել 1923 թվականից։

գործում մեծագույն արդելք էր հանդիսանում հին կարգերից ժառանգված անգրագիտությունը, խավարը և հետամնացությունը։ «Սովետական իշխանությունը դիտեմ,— ասել է Ի. Վ. Ստալինը 1920 թվականի նոյեմբերին,— որ խավարը ժողովրդի առաջին թշնամին է»[1]։ Այդ պատճառով էլ, ինչպես բոլոր մյուս ռեսպուբլիկաներում, նույնպես և Հայաստանում, սովետական կարգերի հաստատումից հետո, կուլտուրական շինարարության ամենահիմնական հարցերից մեկը հանդիսացավ ժողովրդի միջից անգրագիտության վերացումը, խավարի և կուլտուրական հետամնացության վերացումը։

Սովետական կարգերի հաստատման առաջին շրջանում Հայաստանի բնակչության մոտ 60 տոկոսը անգրագետ էր։ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ռեսպուբլիկայում ծավալուն աշխատանք է սկսվում անգրագիտության վերացման ուղղությամբ։ 1921 թվականի սեպտեմբերի 21-ին Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ հրատարակվում է ՀՍՍՌ ժողկոմսովետի դեկրետը ռեսպուբլիկայում անգրագիտությունը վերացնելու մասին։ Այդ դեկրետի համաձայն 16—50 տարեկան հասակ ունեցող բոլոր անգրագետ և կիսագրագետ քաղաքացիները, ներառյալ նաև կարմիր բանակայինները, պարտավոր էին սովորել հատուկ դպրոցներում՝ լիկկեյաններում, գրագիտական խմբակներում, երեկոյան դպրոցներում և այլ օղակներում։ Այդ ցանցում առաջին հերթին պետք է ընդգրկվեին բանվորները ու գյուղացիները։ Լիկկեյաններում ու գրագիտական այլ խմբակներում սովորողների աշխատանքային օրը ուսուցման ընթացքում կրճատվում է երկու ժամով՝ պահպանելով ամբողջ աշխատավարձը։ Չնայած տնտեսական-ֆինանսական մի շարք դժվարություններին, Հայաստանի Սովետական կառավարությունը խոշոր միջոցներ է ներդնում անգրագիտության վերացման գործում։ Պարտիական ու սովետական ապարատից, Կոմունիստական պարտիայի անդամներից ու կոմերիտականներից մոբիլիզացվում են լավագույն ուժեր՝ անգրագիտության վերացման ճակատում աշխատելու համար։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ձեռք առած լուրջ միջոցառումների շնորհիվ՝ ռեսպուբլիկայի ամբողջ հասարակայնության, հատկապես ուսուցչության և ինտելիգենցիայի ուշադրությունը կենտրոնացվում է այդ

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 440։

կարևորագույն գործի վրա։ Անկրագիտության վերացման աշխատանքները գլխավորելու և կազմակերպված հունի մեջ դնելու նպատակով ռեսպուբլիկայում ստեղծվում է «Կորշի անգրագիտությունը ընկերությունը», որը գավառներում ուներ իր բաժանմունքները։

1922—23 ուսումնական տարում ռեսպուբլիկայում կար 316 լիկկայան՝ 6403 սովորողներով և 322 ուսուցիչներով[1]։ Մեկ տարի հետո՝ 1923—24 ուսումնական տարում լիկկայանների թիվը հասնում է 429-ի՝ 8499 սովորողներով և 398 ուսուցիչներով[2]։ Բացի լիկկայաններից, արագ կերպով աճում էին նաև կիսագրագիտության վերացման և երեկոյան դպրոցները։ 1925—26 ուսումնական տարում Սովետական Հայաստանում արդեն գործում էին 535 լիկկայան՝ 17439 սովորողներով, 46 կիսագրագիտական դպրոց՝ 1385 սովորողներով, չորս երեկոյան դպրոց՝ 890 սովորողներով[3]։ Այդ ժամանակ ավելի քան 500 ուսուցիչներ եռանդուն կերպով աշխատում էին անգրագիտության և կիսագրագիտության լիկվիդացման բնագավառում։

Այդ բոլորին զուգընթաց, ռեսպուբլիկայում, մեծ չափով ծավալվում է կուլտուր-լուսավորական հիմնարկների ցանցը։ 1925 թվականին Հայաստանում կար 328 խրճիթ-ընթերցարան, 37 ակումբ, 207 գրադարան, 13 թատրոն և 16 կինո։ Այդ հիմնարկները ևս կուլտուր-լուսավորական բնույթի խոշոր աշխատանքներ էին կատարում։

Հազարավոր ու տասնյակ հազարավոր աշխատավորներ՝ դառնալով գրագետ և բարձրացնելով իրենց կուլտուրական մակարդակը, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ է՛լ ավելի ակտիվ և արդյունավետ կերպով շարունակում էին իրենց աշխատանքն ու պայքարը ժողովրդական տնտեսության վերականգնման, սոցիալիստական էկոնոմիկայի ստեղծման համար։

1921—1925 թվականներին Սովետական Հայաստանում սկրսված կուլտուրական ռևոլյուցիան, աշխատավորական մասսաների մեջ դեպի լուսավորությունն ու գիտությունը սկսված այդ վերելքը է՛լ ավելի լայն ճակատով շարունակվում է հետագա տարիներին։

Ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի վերջում կուլտուրական շինարարության բնագավառում խոշոր հաջո-

---

1 Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ., Ժողովածու, էջ 300,

2 Նույն տեղում,

3 Նույն տեղում։

գությունները էին ձեռք բերվել նաև մյուս ազգային ռեսպուբլիկաներում, ամբողջ Սովետական Միության մեջ։

Սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում, այդ թվում նաև ժողովրդական կրթության գործում ձեռք բերված հաջողությունների հիման վրա, 1925 թվականին մեր պարտիան և Սովետական իշխանությունը աշխատավորության առաջ նոր, կարևորագույն խնդիր են դնում՝ անհրաժեշտ պայմաններ ստեղծել ամբողջ երկրում պարտադիր նախնական կրթություն անցկացնելու համար, այդ գործը դիտելով որպես խոշորագույն ռեֆորմ և խոշորագույն հաղթանակ մեր երկրի կուլտուրական, քաղաքական և տնտեսական կյանքում։ Ի. Վ. Ստալինը 1925 թվականին գրել է «Այդ, ընկերնե՛ր, խոշորագույն ռեֆորմ է։ Նրա կիրառումը խոշորագույն հաղթանակ կլինի ոչ միայն կուլտուրական, այլև քաղաքական ու տնտեսական ճակատներում։ Այդ ռեֆորմը պետք է բազմ ծառայի երկրի խոշորագույն վերելքի համար»[1]։

Հետագա տարիներին է՛լ ավելի լայն ծավալով շարունակելով կուլտուրական շինարարությունը ամբողջ երկրում, Կոմունիստական պարտիան և Սովետական իշխանությունը մեծ հաջողությամբ կատարում են մեր պարտիայի առաջադրանքը՝ իրականացնելով ո՛չ միայն պարտադիր նախնական կրթությունը, այլև ձեռնամուխ լինելով յոթնամյա և միջնակարգ պարտադիր կրթությանը։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի առաջին իսկ օրվանից Կոմունիստական պարտիան ղեկավարեց և հաղթական կերպով առաջ տարավ ինչպես սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառները, նույնպես և կուլտուրական շինարարությունը, լայնորեն զարկ տալով ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացմանը բոլոր ազգային ռեսպուբլիկաներում, այդ թվում նաև Սովետական Հայաստանում։

* * *

Ավարտվում էր ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնումը։ Մեր երկրի արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքը հասնում էր նախապատերազմյան մակարդակին։ Սակայն այդ մակարդակը դեռևս հետամնաց երկրի մակարդակ էր։ Կոմունիստական պարտիան և Սովետական պետությունը

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 7, էջ 180։

չէին կարող բավարարվել դրանով։ Անհրաժեշտ էր ավելի առաջ գնալ։

Փոխվել էր միջազգային իրադրությունը։ Կապիտալիստական երկրներում սկսվել էր ժամանակավոր, մասնակի ստաբիլիզացիան։ Գերմանիայում, Բուլղարիայում, Իտալիայում, Հունգարիայում, Լեհաստանում և մի շարք այլ երկրներում ճնշվել էր ռևոլյուցիոն շարժումը։ Ռևոլյուցիան կապիտալիստական երկրներում ձգձգվում էր։ Սակայն ժամանակավոր ստաբիլիզացիան չվերացրեց կապիտալիզմի հակասությունները, որոնք գնալով սրվում էին։ Նախապատրաստվում էր նոր ճգնաժամ։

Մեր երկրում ևս տեղի ուներ ստաբիլիզացիա, որը նման չէր կապիտալիստական երկրների ստաբիլիզացիային։ Սովետական երկրի ստաբիլիզացիան նշանակում էր նրա քաղաքական ու տնտեսական հզորության նոր աճում, նոր նախադրյալների ստեղծում սոցիալիստական շինարարության ուղղությամբ, հետագա է՛լ ավելի արագ առաջընթացի համար։ Նման պայմաններում ամբողջ սրությամբ դրվեց մեր շինարարության հեռանկարների հարցը, Սովետական Միության մեջ սոցիալիզմի կառուցման հարցը։

Սովետական Միության Կոմունիստական պարտիան իր Կենտրոնական Կոմիտեի, Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ, հաշվի առնելով Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի և կապիտալիստական շրջապատման պայմաններում սովետական երկրում սոցիալիստական շինարարության առաջին տարիների փորձը, հրատակ կերպով ուրվագծեց Սովետական Միության հետագա զարգացման ուղին։ Պարտիան պաշտպանեց ու զարգացրեց Վ. Ի. Լենինի հայտնի դրույթները կապիտալիստական շրջապատման պայմաններում մեկ, առանձին վերցրած երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության մասին։ Ի. Վ. Ստալինը ցույց տվեց, որ մեկ երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության մասին խոսելիս, անհրաժեշտ է տարբերել այդ հարցի երկու կողմերը՝ ներքին և միջազգային։ Ներքին կողմ ասելով պետք է նկատի ունենալ սոցիալիզմ կառուցող երկրի ներսում դասակարգերի միջև տեղի ունեցող փոխհարաբերությունները։ Միջազգային կողմ ասելով, պետք է նկատի ունենալ հարաբերությունները սոցիալիզմ կառուցող երկրի՝ Սովետական Միության և կապիտալիստական երկրների միջև։ Հիմնավորելով ՍՍՌՄ-ում սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը, Ի. Վ. Ստալինը ցույց տվեց, որ մեր երկրի բանվոր դասակարգը և գյուղացիությունն իրենց սեփական ուժերով կարող են

տնտեսապես հաղթահարել երկրում եղած բուրժուազիային, վերացնել ներքին հակասությունները և իրականացնել լիակատար սոցիալիստական հասարակություն։ Ինչ վերաբերում է խնդրի մյուս կողմին՝ սոցիալիզմ կառուցող երկրի և կապիտալիստական երկրների միջև գոյություն ունեցող հակասություններին, ապա այդ հնարավոր է վերացնել մի շարք կապիտալիստական երկրներում պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակով։ Քանի դեռ գոյություն ունի կապիտալիստական շրջապատում, ինտերվենցիայի վտանգն անխուսափելի է։ Հնարավոր ինտերվենցիային հակահարված տալու համար սոցիալիզմ կառուցող երկիրն է՛լ ավելի պետք է ուժեղացնի բանվոր դասակարգի դիկտատուրան, նրա զինված ուժերը և երկրի պաշտպանության այլ միջոցները։

«Բայց դրանից հետևում է,— ասված է ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթացում,— որ ՍՍՌՄ-ում սոցիալիզմի հաղթանակը, որն արտահայտվում է տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկվիդացիայով և տնտեսության սոցիալիստական սիստեմի կառուցմամբ, այնուամենայնիվ չի կարող համարվել վերջնական հաղթանակ, քանի որ օտարերկրյա զինված ինտերվենցիայի և կապիտալիզմի restավրացիայի փորձերի վտանգը մնում է չվերացված, քանի որ սոցիալիզմի երկիրը մնում է այդպիսի վտանգից չապահովված։ Օտարերկրյա կապիտալիստական ինտերվենցիայի վտանգը ոչնչացնելու համար պետք է ոչնչացնել կապիտալիստական շրջապատումը»[1]։

Սովետական Միությունում լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու հնարավորության մասին այդ դրույթը հանդիսացավ Կոմունիստական պարտիայի 14-րդ կոնֆերանսի (1925 թ. ապրիլ) հայտնի բանաձևի հիմքը, որը սոցիալիզմի կառուցման հնարավորությունը մեր երկրում հաստատեց որպես պարտիայի օրենք, որը պարտադիր է պարտիայի բոլոր անդամների համար։

Պարտիան առանձնահատուկ սրությամբ դրեց մեր երկրում սոցիալիզմի կառուցման գործում, բանվոր դասակարգի ղեկավարությամբ, գյուղացիության մասնակցության անհրաժեշտությունը, առանց որի սոցիալիզմի կառուցումը հնարավոր չէր։

Մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի մասին պարտիայի այդ դրույթները շշմեցուցիչ տպավորություն թողեցին տրոցկիստների,

[1] ՀամԿ(բ)Պ Պատմություն. Համառոտ դասընթաց, Երևան, 1950, էջ 369։

բուխարինականների և հակալենինյան մյուս բոլոր տարրերի վրա։ Կատաղաբար հանդես գալով պարտիայի դծի դեմ, տրոցկիստները ժխտում էին բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, գյուղացիությանը դիտում էին որպես բանվոր դասակարգի հակառակորդ, թերագնահատում էին մեր երկրի բանվոր դասակարգի սեփական ուժերը և առաջ քաշեցին մենշևիկյան «պերմանենտ ռևոլյուցիայի թեորիան», ժխտելով սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը ՍՍՌՄ-ում։ Բուխարինականները առաջ քաշեցին սոցիալիզմի մեջ բուրժուազիայի խաղաղ ներաճման իրենց «թեորիան», որը լրացրին «հարստացեք» լոզունգով։ Այդ լոզունգը նշանակում էր սովետական երկրում ազատ կերպով զարկ տալ կապիտալիզմի զարգացմանը, ստեղծելով պայմաններ կապիտալիստական կարգերի ռեստավրացիայի համար։

Կոմունիստական պարտիան, հավատարիմ լենինյան դաղափարներին, մինչև վերջ մերկացրեց ու ջախջախեց տրոցկիստներին, բուխարինականներին և մյուս բոլոր թշնամիներին, Սովետական Միությունը աներեր կերպով առաջ տանելով սոցիալիզմի հաղթանակի ուղիով։

Այդ գործում պատմական նշանակություն ունեցան պարտիայի XIV համագումարի որոշումները։ Համագումարը տեղի ունեցավ ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի վերջում՝ 1925 թ. դեկտեմբերին։ Նրա աշխատանքներն ընթացան ներպարտիական լարված պայքարի պայմաններում։

Համագումարում Կենտրոնական Կոմիտեի քաղաքական հաշվետվությունը տվեց Ի. Վ. Ստալինը։ Իր զեկուցման մեջ Ի. Վ. Ստալինը խորը վերլուծության ենթարկեց Սովետական Միության միջազգային և ներքին դրությունը, տվեց նրա զարգացման և ամրապնդման վառ պատկերը, սոցիալիստական էկոնոմիկայի հաջողությունների ծավալումը, այդ հաջողությունների հիման վրա մեր երկրի միջազգային դրության ամրապնդումը։ Համագումարը նշեց, որ շնորհիվ սովետական սիստեմի առավելությունների, կարճ ժամանակամիջոցում կարողացանք մեր արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը հաջողությամբ վերականգնել։ Չնայած ձեռք բերված հաջողություններին, համագումարը նշեց, որ այն ժամանակ մեր երկիրը դեռևս շարունակում էր մնալ հետամնաց, ագրարային երկիր։ Պարտիայի առաջնահերթ խնդիրն էր մեր երկիրը ագրարային հետամնաց երկրից դարձնել հզոր ինդուստրիալ երկիր,

կապիտալիստական երկրներից տնտեսապես անկախ երկիր, որի համար կային բոլոր պայմաններն ու հնարավորությունները։

Համագումարում պարտիայի գլխավոր գծի դեմ հանդես եկան զինովևականները, տրոցկիստները և մյուս թշնամիները, որոնք խմբավորվել էին «նոր օպոզիցիայի» մեջ։ Նրանք առաջարկում ու կատաղաբար պաշտպանում էին Սովետական Միության ստրկացման պլանը, ըստ որի մեր երկիրը պետք էր թողնել հետամնաց, անզեն ու թույլ երկիր, որպես կապիտալիստական երկրներին հումքի մատակարարող և այնտեղից մեքենայական սարքավորում ներմուծող երկիր։

Համագումարը մինչև վերջ մերկացրեց ու ջախջախիչ հարվածներ հասցրեց տրոցկիստական-մենշևիկյան այդ կապիտուլյանտներին, իր պատմական որոշումներով «...հաղթանակի հեռանկար տվեց պարտիային և հենց դրանով էլ պրոլետարիատին զինեց անխորտակելի հավատով դեպի սոցիալիստական շինարարության հաղթանակը»[1]։

Իր զարգացման հետագա շրջանում Սովետական Միությունը, Կոմունիստական պարտիայի, նրա լենինյան Կենտրոնական Կոմիտեի ղեկավարությամբ՝ անշեղ կերպով ընթացավ այդ ուղիով։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 8, Երևան, 1949. էջ 104։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Երկու խոսք	3
Գլուխ առաջին—Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում	5—68
1. *Իրադրությունը Հայաստանում Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո (1917 թ. հոկտեմբեր—1918 թ. հունիս)*	7
2. *Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը Սովետական իշխանության հաղթանակի համար (1918-1920 թթ.)*	30
3. *Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում*	53
Գլուխ երկրորդ—Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921 թվականի հեղափոխական կռիվներում	69—129
1. *Սոցիալիստական շինարարության առաջին քայլերը*	69
2. *Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թվականին. Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը այդ կռիվներում*	81
Գլուխ երրորդ—Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության վերականգնման խաղաղ աշխատանքի անցնելու ժամանակաշրջանում (1921—1925 թթ.)	131—241
1. *Ռեսպուբլիկայի դրությունը քաղաքացիական կռիվներից հետո*	131
2. *Անցումը նոր տնտեսական քաղաքականության. խաղաղ շինարարության առաջին հաջողությունները*	139
3. *Սովետական շինարարության հետագա ծավալումը. Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպումը*	163
4. *ՍՍՌՄ-ի կազմակերպումը*	180
5. *Ժողովրդական տնտեսության վերականգնման ընթացքը. Հայկական ՍՍՌ-ն վերականգնման շրջանի վերջում*	188
6. *Կուլտուրական շինարարությունը Սովետական Հայաստանում 1921—1925 թվականներին*	216

Պատ. խմբագիր՝ Ե. ԽԱԼԵՑԱՆ
Հրատ. խմբագիր՝ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ Կոնտրոլ սրբագրիչ՝ Ժ. ԱԴՈՆՑ

ՎՖ 11527 ԽՀԽ 136 Հրատ. 1031 Պատվեր 206 Տիրաժ 5000

Հանձնված է արտադրության 14/IV 1954 թ.։ Ստորագրված է տպագրության 28/VII 1954 թ.։ Հաշվ.-հրատ. 12,05 մամ., տպագրական 15 1/8 մամ.։
Գինը 7 ռ. 20 կ., կազմը 2 ռ.։

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ. տպարան, Երևան, Աբովյան 124։

[924]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220034246

ЦЕНА
А $\frac{\text{П}}{34246}$